

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ



Կ ա գ մ ե ց

Գ. ՂԱԶԱՐԵԱՆ

(Արևաբանական «Արարատ» տնտեսություն)



Պ.Ա.ՂԱՐԵԱՊՈՑ

Տպարան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

1905

636
Ղ-15


24 SEP 2010

36
-15
WS

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ



Կ ա զ մ ե ց

Գ. ՂԱԶԱՐԵԱՆ

(Ա.հասպած «Արարատ» ամսագրից)



Վ.Ս.ՂԱՐԵԱՊՈՒՆ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1905

22-47-22

ՀԻՎԳԻՈՒՅՈՒՄՆԵՐ

ՀԻՎԳԻՈՒՄՆԵՐ

Дозволено цензурою 25 Октября 1904 г. Тифлисъ.

(ԲՐԻՏԱՆԻԱՆ ԵՄՊԻՐԻԱԿԱՆ ԵՐԱՐԱՆՈՒԹՅԱՆ)



4747-55

Ա. Մեծ եղջիւրաւոր անասունները.

Ընդհանուր տեսութիւն — Յուլի. — Կով. — Եզ. . . 1-8

Բ.

Կերը.

Կերը. Կաթնատու կովերի կերը. — Աշխատող եզների ու կովերի կերը. — Մսացու մեծ եղջիւրաւոր անասունների կերը. 8-31

Գ.

Ծնունդ.

Ծնունդ. — Կովի յղութիւնը. — Հորթերի խնամելը. 31-46

Դ.

Մեծ եղջիւրաւոր անասունների սարիք որոշելու միջոց. 46-49

Ե.

Ձրի տեսակն ու կարեւորութիւնը. 49-51

Զ.

Կար.

Կարի բաղադրիչ մասերը. — ձարագ. — Պանրածին. — Սպիտ կամ կաթնային սպիտակուց. — Կաթնաշաքար. — Աղեր կամ մոխիր. — Դալ. — Կարի գործարան. — Կարի որակի եւ քանակի վերայ ազդող պատճառներ. — Անհատական կողմը. — Ցեղը. — Կաթնաբերութեան շրջանը կամ տեւականութիւնը. — Կերը. — Հողը եւ նորա համապատասխան բուսականութիւնը. — Կովի տարբեր բացութեայ շարժումները, կլիման, օդի տաքութիւնն եւ մաքրութիւնը, մարմնի մաքրութիւնը եւ այլն. — Կով կթելու չափն ու ժամանակը. — Մաքրութեան նշանակութիւնը կարեւորութեան մեջ. — Կիրք. — Կար քանակը եւ փոխադրութիւնը. — Կար չափելու եղանակները. — Կարի պակասութիւնները. — Կապոյտ կաթ. — Կարմիր կաթ. — Գեղին կաթ. — Կաշտուն կաթ. — Գառը կաթ. — Թթուած կաթ. — Աւազակառն կաթ. — Աղ կաթ. — Մահացու տարաբանակ հիւանդութիւններ առաջացնող կաթ. Կարի ստուգելը, պատուարացումը, ստեղծացումը եւ հակափուտ նիւթերի գործարարութիւնը. — Կարի բրուցիւնը եւ նորա նետագոտելն ու խառնախելը. — Կարի

խաչափի աստիճանները.—երես չքաշած կաթ.—երես քաշած կաթ:—Ի՞նչպէս պէտք է իմանալ, քե կարի հետ այլ եւ այլ ճիւղեր են խառնած:—Հուլ եւ եփած կարի սարքերու քիւր: 51—109.

Է.

Կարից սեր գասելը.

Կարից սեր գասելու բնութեանը պայմանները.—Կաթի յատկութիւնը և նրանում եղած ճարպը.—Կաթի տաքութիւնը.—Ժամանակի ազդեցութիւնը.—Կաթի բարձրութիւնը և ամանները ձեւը:—Կարից սեր գասելու այլ եւ այլ եղանակներ.—Բնական կամ հասարակ եղանակով կաթից սեր զատելը.—Կենդանախոյս զօրութեամբ սեր զատելը.—Սերգասիչ մեքենաներ կամ սեպարատորներ.—Այլ և այլ սերզատիչներ:—Սերգասիչների գների, այլ եւ այլ սխառմների, արդիւնքի եւ չափի աղիւսակը.—Սերզատիչների մասեր փոխելը.—Սերզատիչի իւր.—Սերզատիչների հետ վարուելու գլխաւոր կանոնները.—Թէ ամէն անգամ սերզատիչներով որքան ժամանակ պէտք է աշխատել.—Ի՞նչպէս պէտք է սերզատիչ մեքենայ ընտրել.—Սերզատիչների տուած օգուտը: 110—126.

Ը.

Կարագ.

Լաւ կարագ ստանալու գլխաւոր պայմանները.—Առողջ կաթից սեր քաշելը.—Սերի տաքութեան աստիճանը.—Խնոցու մէջ եղած սերի քանակութիւնը.—Սերի թանձրութիւնը.—Կարագի հասակների մեծութիւնը.—Խնոցու շարժումների արագութիւնը:—Լաւ խնոցու յատկութիւնները:—Խնոցիների տեսակները.—Հողտէյնի խնոցի.—Լեֆելզի խնոցիներ.—Գեւիտի ամերիկական ճօճացող խնոցի.—Վելտորիա խնոցի:—Ի՞նչպէս պէտք է խնոցի բնութիւնը:—Ի՞նչպէս պէտք է նախապատրաստել խնոցի գործածութեան համար:—Կարագ քաշելը:—Կարագ պատրաստելու այլ եւ այլ պատկանելիքներ.—Կողպարներ.—Կարագի ճմլիչ գործիք կամ մամուլ.—Փոքրիկ թիակներ կարագի համար.—Կարագի տակառներ.—Կարագին գոյն տալու ներկ.—Մագաղաթ:—Կարագ պահելու ու աղիլը:—Կարագ հալելը:—Կարից դուրս եկած կարագի փանալութիւնը:—Կարագի արտադրութիւնը.—Ճրագակալուած կարագ.—Փշրուող կարագ.—Մարմարեղանակերպ կարագ.—Դառը կարագ.—Սպիտակ պինդ կարագ.—Այլ և այլ հոտ ու համ ունեցող կարագ:—Ի՞նչպէս պէտք է լաւացնել փչացած կարագը կամ իւրը:

ՄԵԾ ԵՂՁԻՒՐԱԻՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ

Ա.

Ընտանի կենդանիներն ապրում և բազմանում են մարդու ձեռքի տակ, նորա հսկողութեան ներքոյ: Ներկայումս գոյութիւն ունին մինչև 50 տեսակ զանազան ընտանի կենդանիներ: Մի կողմ թողնելով միւս տեսակները, այստեղ կաշխատենք նկարագրել միմիայն ամենախաբեղողներից երկրագործի յոյս և անբաժան ընկեր՝ խոշոր եղջերաւոր անասունների կեանքը իւր բոլոր կողմերով.

Նախնական մարդը ընտանի անասունների հետ այնպէս չէր վարուում, ինչպէս այժմ: Նա պաշտպանում էր իւր անասուններին միմիայն արտաքին թշնամիների յարձակումներից, քաղցից և պատասպարում վատ եղանակներից, իսկ այժմ մարդը իրեն սեփականատէր, ուշք է դարձնում նոյն իսկ ամենաչնչին երեւոյթների վերայ. ներկայումս մարդը ընտանի կենդանիներն է անում ոչնչացնել, իսկ սերունդը բազմացնելու համար ընտրում է ամենաառողջ և ընտիր տեսակները, մի քանիսի համար նշանակում է մի տեսակ կեր, միւսների համար մի այլ տեսակ, մի ձագին մի կերպ է խնամում, միւսին մի ուրիշ կերպ և այլն. մի խօսքով ներկայումս կամենում է ընտանի անասուններից մի արհեստանոց կամ գործարան կազմել, որտեղից կարողանայ ստանալ իւր ուղածին պէս այս կամ այն օգտակար բերքը, արդիւնքը:

Ժամանակի ընթացքում մարդուս ղէպի իւր անասուններն ունեցած վերաբերմունքը զգալի կերպով փոխուեց. նորա պատճառը գլխաւորապէս ազդեանակութեան խիտ բազմանալն էր, երբ անունդի մեծ կարիք զգալով, աշխատեց օգտուել ընտանի անասուններից:

Մարդիկ ընտանի անասուններ պահում են երկու նպատակով. կամ իրենց այս կամ այն պահանջներին գոհացում տալու և կամ բազմացնելու համար: Շատ անգամ միևնոյն կենդանին յեշտալ երկու նպատակների համար էլ կարող է ծառայել, այ-

սինքն կարելի է և աշխատեցնել, ինչպէս այդ կամենում է ինքը տաւարատէրը և միևնոյն ժամանակ սերունդ բաղմացնել:

Խոշոր եղջիւրաւոր անասունները մարդ կարող է օգտուել զանազան միջոցներով. կամ, իբրև շարժող ոյժ, այսինքն իբրև բեռնակիր կամ լծկան և կամ ինչպէս վերեն ասացինք, կարող է ոտանալ այս կամ այն կարևոր արդիւնքը: Առաջին նպատակի համար գործադրուող կենդանին կոչուում է ածխասաւոր, իսկ երկրորդը՝ արդիւնաբեր: Մեղանում, հայերևս մէջ, մեծ եղջիւրաւոր անասուններից իբրև աշխատաւոր ճանաչուած է եղը, դոմէշը: Կան նաև այնպիսի երկրներ, ուր կովերին և մատակներին (քածեր) ևս լծում են թեթև բեռ քաշելու համար, բայց այս լաւ բան չէ, որովհետև որքան ուղում է թեթև լինել աշխատանքը, այնուամենայնիւ նրանց կաթը կպակասի, նրանք ֆիզիքապէս կտկարանան և շատ ուրիշ վնասներ կյառաջանան: Արդիւնաբեր անասուններին մէջ կան այնպիսիները, որոնց տուած արդիւնքը միմիայն միան է. նշանակում է այդպիսիները կենդանութեան ժամանակ հազիւ թէ որ և է օգուտ կարողանան տալ, մինչդեռ կան այնպիսիները, որոնք իրենց ամբողջ կեանքի ընթացքում աալիս են մարդուն այս կամ այն բերքը՝ կաթ, լուր, պանիր և այլն: Բացի այս բերքերից, երկրագործը, իւր արտերը կանոնաւոր մշակելու, պարարտացնելու համար, պարտաւոր է ընտանի անասուններ պահել՝ նրանցից աղբ ստանալու համար, թէպէտ շատ անգամ անուղղակի կերպով ստացուած այդ գանձը մեր գիւղացիները բացի վաւելու համար արաւ պարարտաւորաց, ուրիշ ոչ մի բանի չեն գործածում:

Խոշոր եղջիւրաւոր անասունները բաղմատեսակ են լինում: Այդ տեսակներն յառաջացնող պատճառները շատ շատ են, որոնցից գլխաւորը տարբեր տեսակի եղջիւրաւոր անասունների զուգաւորութիւնն է: Փոփոխութիւն յառաջացնելու մէջ պահատ դեր չեն խաղում նաև զանազան երկրների կլիման, սնունդը և պահպանութեան եղանակը: Տեսակները զանազանութիւնը շատ պարզ նկատուում է հէնց նոյն իսկ նոցա մարմնի կազմուածքի տարբեր ձևից ու մեծութիւնից, տուած կաթի թէ քանակութեամբ և թէ յատկութեամբ տարբեր լինելուց և նոյնպէս մարմնի ճանրութիւնից: Կան 10—50 լի. ճանրութեամբ կովեր:

Թէպէտ հայերն ևս, մանաւանդ Կովկասում, շատ տեսակ խոշոր եղջիւրաւոր անասուններ են պահում, բայց ընդհանրապէս նոցա մէջ ամենից շատ տարածուածը հասարակ տեսակն է, որ շատ դիմացկուն է. այդ երեւում է նրանից, որ շատ անգամ նոքա ամբողջ օրերով ցրտի փակ են մնում և պառկում նոյն իսկ

ուռած դետնի վերայ առանց փուլածքի, որը հալչում է նոցա մարմնի տարութեան ազդեցութիւնից և յետոյ մինչև ծնիները խրում դորա մէջ: Այսպիսի պայմաններում կենդանին ոչ միայն դեռ շարունակում է ապրել, այլ նաև բաղմանում և կաթ է տալիս: Եթէ մեր դիւղերում տարածուած եղջիւրաւոր անասուններին լաւ կերակրեն և բարեյաջող պայմանների մէջ դնեն, շատ կարճ ժամանակուայ մէջ նոցա տուած թէ կաթի քանակութիւնը և թէ մարմնի քաշը կբարձրանայ. մանաւանդ եթէ մեր այդ հասարակ կովերը զուգաւորուեն ընտիր, ազնիւ ցեղի ցուլերի հետ, բացի վերոյիշեալ օգուտներից, կստացուի նաև լաւ սերունդ: Բայց որպէս զի սերունդը բոլորովին բարեփոխուի, ազնուանայ, որպէս զի ապագայում խիստ կաթնոտ կովեր, լաւ աշխատող եղներ ստացուեն, պէտք է որ կովն ևս ընտիր տեսակից լինի:

Յուլ. Ղաւ և ազնիւ ցեղի խոշոր եղջիւրաւոր անասուններ ունենալու համար, պէտք է պահել ազնիւ և ընտիր տեսակի ցուլ, որովհետև կենդանիները իրենց յատկութիւնները մեծ մասը հօրից են ստանում և ուրեմն պէտք է ցուլը լաւ պահուի, կանոնաւոր սնունդ ստանայ, որ կարողանայ տարեկան 70—100 ազնիւ սերունդ յառաջացնել: Կրկնում ենք, որ ցուլը պէտք է անպատճառ յառաջացած լինել լաւ, առողջ և ուժեղ սերունդից, որպէս զի իւր ի ծնէ ստացած, ժառանգած լաւ յատկութիւնները ճշտութեամբ կարողանայ հաղորդել յաջորդ սերունդին և այդպիսով ծնունդները աղնուանան: Յուլը պէտք է լինել աւելի խոշոր, յազթանդամ, ուժեղ, գեղեցիկ կազմուածքով, կարճ գլխով, լայն ճակատով, երկար և մազոտ ականջներով, սև, ուղիղ և երկար եղջիւրներով, մեծ, պայծառ և սև աչքերով և սրամիտ ու կատաղի նայուածքով. դունչը պէտք է լինի մեծ, քիթը կարճ և ուղիղ, վիզը լայն և հաստ, ուժեղ և խիտ միաններով. բունը երկար, կուրծքը և որովայնը լայն, թիկունքի (մէջքի) ստորին մասը պնդակաղմ, սրունքը մեծ և մոտ, պոչը երկայն և մազոտ, մանաւանդ ծայրը և ամբողջ մարմնը կարմրագոյն. առաջին ոտները աւելի ուժեղ պէտք է լինին և ունենան լայն և ամուր յօդեր. յետին ոտներն ևս պէտք է ամուր կազմութիւն ունենան և լաւ դասաւորուած լինին, քայլերն արագ և ազատ, համարձակ:

Եթէ ցուլը մանր տեսակիցն է, խոշոր չէ, մինչև երկու տարեկան հասակը չպէտք է թողնել կովերի մէջ. մինչդեռ խոշոր տեսակի ցուլը ծնելուց 1 1/2 տարի յետոյ կարելի է: Երբեք

չպէտք է ցուլին վաղ թողնել նախը կողերը հետ, որովհետեւ վաղ մերձաւորութիւնը օգտակար չէ կարող լինել: Երեստ մատաղ անասունները սովորաբար մանր սերունդ է յառաջանում: Մերձաւորութիւնը համար ամենայարմար և լաւ հասակը համարում է երրորդ, չորրորդ և հինգերորդ տարիները, որնց յետոյ կենդանին թուլանում է և անդօր է դառնում:

Ամէն մի անասնատիրոջ պարտականութիւնն է աշխատել իւր անասունները ազնուացնել, որն համար, կրկնում ենք, պէտք է ունենալ ընտիր ցուլեր: Ահա այս նպատակն աչքի առաջ ունենալով գիւղացիներնց մի քանիսը միասին կամ ամէն մի գիւղական հասարակութիւն կարող է որոշ դումար վող վեր գալով գիւղականասի կամ անասնապահութիւննց լաւ հասկացող մէկէ ձեռքով կամ խորհրդով մէկ կամ մի քանի, նայած կարիքին, ազնիւ ցեղի պատկանող ցուլեր գնել: Գնելու կամ տանը եղած հորթերնց ցուլեր հասցնելու համար պէտք է ուշադրութիւն գործնել, որ նորա համապատասխան լինին իւրեանց սպառազ կոչմանը, որն համար կարեւոր է միշտ աչքի առաջ ունենալ վերեւում յիշուած կանոնները, որոնց մէջ ամեննց կարեւորն այն է, որ հորթը ազնիւ ցեղնց, այն է լաւ ցուլնց և կովնց յառաջացած լինի:

Կով. Ամէն մի կովատէր մի որոշ նպատակ ունի և պէտք է աշխատի անպատճառ իւր այդ նպատակին հասնել: Նպատակը կարող է լինել կովնց միմիայն կաթ քստանալը (մանաւանդ, երբ կաթը լաւ գնով է վաճառուում) և կամ իւր, պանիւր պատրաստելը, երկիրը մշակելու համար աշխատաւոր եղ հասցնելը, իբրև մտացու՝ եզ, կով գերացնելը, սերունդ յառաջացնելու կամ ծախելու համար հորթեր մեծացնելը և այլն: Բայց որպէս զի ամէն մի կով օգտակար, արգիւնաւոր և վերջապէս նպատակայարմար լինի, պէտք է որ բացի ցուլնց, ինչպէս վերեւն յիշեցինք, նա ևս յառաջացած լինի ազնիւ ցեղնց, որպէս զի կարողանայ ոչ միայն արգիւնաւոր լինել իւր տիրոջ համար, այլ և, որ ամենագլխաւորն է և էականը, առողջ, ուժեղ և ընտիր սերունդ յառաջացնել: Աւել կովերի մարմնի ձևը և ցեղական արտաքին առանձնայատկութիւնները հետեւեալներն են. կենդանու մարմնի մասերի ներդաշնակութիւնը, այսինքն առաջին մասը՝ կուրծքը, միջին մասը՝ որովայնը և յետին մասը՝ դաւակը պէտք է երկարութեամբ միմեանց հաւասար լինեն, գլուխը պէտք է լինի երկար, ախանջներն ևս նոյնը, եզերները բարակ, քնքոյշ և ուղիղ, աչքերը մեծ-մեծ և արտայայտիչ, վիզը երկար և բարակ,

թիակներն աւելի բարակ քան ցուլինը և ունենան բաւականին զօրեղ միաններ. կուրծքը պէտք է լինի լայն և տակառած, այսինքն առաջնի կողմնց մինչև որովայնի կէս մասը պէտք է աստիճանաբար ուռած, բարձրացած լինի, իսկ այնտեղնց մինչև ածուկները նոյն աստիճանաւորութեամբ ցածրացած. մէջքը պէտք է լինի ուղիղ, բունը երկար և լայնածաւալ, դաւակը լայն և բարձր, պոչը կանոնաւոր, բարակ. կաշին քնքոյշ և նուրբ մաղերով ծածկուած. ամբողջ կաղմուածքը քնքոյշ պէտք է լինի. ոտները բաւականին բարակ, լայն և լաւ կանոնաւորուած յօդերով: Բացի այդ ընդհանուր յաճախ խաբուսիկ նշաններնց, կաթնոտ կովերը պէտք է ունենան երկար և լայն, մերկ և քնքոյշ մանրիկ մաղերով ծածկուած ստինք, որ կթելուց առաջ ձգուած, ուռած է լինում, իսկ կթելուց յետոյ իջած, թարշամած: Շօշափելիս ստինքը պէտք է ճարպոտ երևայ: Վերջապէս շատ դէպքերում կաթնոտ լինելու ամենալաւ նշանն է համարուում «կարի հայելին» (МОЛОЧНОЕ ЗЕРКАЛО)¹: Ինչպէս ստինքը՝ նոյնպէս և ամբողջ մարմնի վերայի մաղերը ուղղուած են լինում դէպի ներքեւ բայց ստինքի, շէքի և ածուկների միջև եղած ծալքերի վերայի մաղերը ուղղուած են լինում միշտ դէպի վերեւ. այնտեղ, ուր այդ մաղերը հանդիպում են դէպի ցած ուղղուած մաղերին, ստացւում է մի երեզ, որը շրջապատում է մի տարածութիւն, որ կոչւում է «կարի հայելի»: Որքան մեծ լինի հայելին, այնքան աւելի կաթնոտ կլինի կովը: Բայց պէտք է ասել, որ այս դէպքում ևս բացառութիւն է լինում: Կովի կաթնոտութեան ամենալաւ շրջանը 4—8 տարեկան հասակն է, շատ քիչ դէպքերում միայն մինչև 10 տարեկան:

Այս բոլոր նշանները այնքան էլ հաստատուն փաստ լինել չեն կարող կովի կաթնոտութեան. ամեննց լաւ և գիւրին միջոց համարուում է ուղղակի կովին կթելը:

Ամէն մի կովատէր պէտք է առաջնորդուի այն սկզբունքով, որ լաւ է պահել մի հատ լաւ, ազնիւ ցեղի պատկանող խոշոր կաթնոտ կով, որ տալիս է տարեկան մօտաւորապէս 250 վեզրօ կաթ, քան երկու հասարակը, որ միասին կարող են տալ միայն 250 վեզրօ:

Իսկապէս լաւ կաթնոտ կովը նա է, որ տարեկան տալիս է իւր մարմնի քաշից հինգ անգամ աւելի կաթ: Սովորաբար ընդունուած է, որ լաւ կովը երկու գրուանքայ խոտից և կամ

1. Գեմուկի եղանակով:

նոյնչափ աննդարար նիւթեր պարունակող մի ուրիշ կերպ պատ-
րաստում է մի գրուանքայ կաթ:

Սովորաբար ծնելու օրից մի քանի ժամանակ յետոյ (ճիշտը
որոշելը դժուար է) կովի կաթը սկսում է պակասել, որովհետեւ
մօտաւորապէս երկրորդ, երրորդ ամիսներում կովը նորից յղա-
նում է: Առհասարակ յղի մնալուց յետոյ կան կովեր, որոնց
կաթը աստիճանաբար է պակասում, կան կովեր, որոնց կաթը
արագ կերպով և կան այնպիսիները, որոնց կաթը հէնց ուղղակի
յղանալուց յետոյ անմիջապէս դադարում է: Եթէ կովը յղա-
ցած չէ, բայց սկսել է պակասեցնել իւր կաթը, այդ նշան է
նորա գերանալու, նա այլ ևս առատ կաթ չի տայ, հետեւապէս
և նրան պէտք է համարել անպէտքացած:

Պէտք է միանգամ ընդ միշտ կանոն դարձնել, որ մանր
տեսակի երկու տարեկանից և խոշոր տեսակի 1 1/2 տարեկանից
փոքր երկնջը երբէք ցուլի չգայ:

Գիւղացիները և առհասարակ եղջիւրաւոր անասունների
տէրերը չպէտք է անարգել կերպով թողնեն կովը կամ երկնջը
ամէն մի պատահական ցուլի մօտ, այլ նախ պէտք է ուշադրու-
թիւն դարձնեն, որ ցուլը բացի աղնիւ ցեղի պատահանելուց, իւր-
արտաքին ձևով և յատկութեամբ (իւր ցեղին յատուկ) աւելի
նման լինի աճեցման համար իրենց ընտրած երկնջին: Խիստ ընտ-
րութիւն պէտք է անել նաև երկնջները մէջ և այդ նպատակի
համար ընտրել պէտք է այնպիսիները, որոնք աչքի են ընկնում
վերեւում յիշուած մարմնի արտաքին ձևերով և ցեղական ա-
ռանձնայատկութիւններով:

Եզ. Վաղ հասակում (մինչև 1/2 տարեկան հասակը) եղնե-
րին ներքինացնում են, կռտում են, որպէս զի երբ նա երկու
տարեկան լինի՝ աշխատեցնեն: Այս հասակից փոքր եղին չպէտք
է աշխատեցնել, որովհետեւ մեծանալուն շատ արգելք կարող է
լինել: Շատ տեղերում եղը աւելի ձեռնաու է աշխատութեան
համար, քան ձին. սորա պատճառները հետեւեալներն են. ա) եզ
պահել, խնամելը աւելի հեշտ է. բ) եզի գինը համեմատա-
բար ձիուց աւելի արժան է. սանձի, և այլ սարքերի ծախք չու-
նի. գ) եղներկց աւելի մեծ քանակութեամբ աղը է ստացւում
և այդ աղբով կարելի է պարարտացնել ամենայն տեսակ հող,
մինչդեռ ձիու աղբը մի քանի տեսակ հողերի համար վնասակար
է ճանաչուած. դ) եղը մանր աշխատութեան աւելի զիմացող է
և համբերող. նա աւելի քիչ է վնասւում, աւելի քիչ հիւան-
դութեանց ենթակայ է, քան ձին. ե) աշխատութեան համար

անպէտք ճանաչած եղներին կարելի է դարձեալ մեծ դնով վաճա-
ռել, միայն թէ հարկաւոր է առաջուց լաւ կերակրել, գիրացնել,
որով վատ աշխատաւոր կենդանուց կտացուի լաւ մտացու եզ:

Լաւ և ընտիր աշխատաւոր եղը պէտք է ունենայ երկար և
ճանր գլուխ, մտտ և չափաւոր երկարութեամբ վիզ, բարձր
տրցակ (ճակատի քանքիւլ), լաւ զարգացած կուրծք. առհասա-
րակ կրծոսկրը ողնաշարից որքան ցած լինի ընկած և կամ որքան
խորը լինի կուրծքը, այնքան մեծ կլինի այն տարածութիւնը,
ուր թորերն են տեղաւորուած և այնքան աւելի եղը պէտքա-
կան կլինի աշխատանքի: Հաստատուն և համարձակ քայլերի հա-
մար անհրաժեշտ են լայն կուրծք, հաստ, ոսկրոտ և ուղիղ
դրուած ոտներ՝ ծնկի լայն յօդերով և մեծ ու լայն կճղակնե-
րով. վերջերը անպէտք համարուած եղներին մտացուի համար
լաւ կերակրելու ժամանակ ուշադրութիւն պէտք է դարձնել, որ
նորա ունենան լաւ մտացու անասունի կադմուածքի վայելուչ
ձև. այսպէս, օրինակ. լայն դաւակի ոսկր և այլն:

Եզի կատարած աշխատութեան չափը հաշուի առնելիս,
սովորաբար ընդունում են, որ հորիզոնական ուղղութեամբ քա-
շելիս նա առանց նեղուելու տանում է մի բեռ, որ իւր սեփա-
կան մարմնի քաշին է հաւասար՝ մօտաւորապէս 25—30 փ.:
Իւրաքանչիւր աշխատութեան միջոցին եթէ եղը 2 1/2—3 ժամ
հանգստութիւն վայելէ, այն ժամանակ ամբանը կարող է օրա-
կան 10 ժամ աշխատել, դարնանը և աշնանը՝ 8 ժամ, իսկ ձմե-
րանը՝ 7 ժամ (հաշուելով տարուայ մէջ 160—250 աշխատանքի
օրեր): Շատերը երկիւղ կրելով եղների սաստիկ յօգնածութիւնից,
աշխատեցնում են նրանց փոխ առ փոխ. բայց այդ միջոցը թանկ է
նստում, որովհետեւ այդպիսի դէպքում ստիպուած կլինին թուով
երկու անգամ աւելի տաւար պահել: Պէտք է ասել որ այս-
պիսի վարմունքը ոչ մի անհրաժեշտութիւն չի ներկայացնում,
եթէ միայն, ինչպէս վերին ասացինք, եղներին հանգստութեան
որոշ ժամանակ տրուի երեկոյի և առաւօտուայ միջոցում, որ-
պէս զի այդպիսով հեշտութեամբ թթուածին հաւաքուի կենդա-
նու մարմնի մէջ՝ հետեւեալ օրուայ աշխատութեան ժամանակ
ծախսելու համար:

Եթէ եղներն աշխատում են գութան կամ բեռ քաշելով,
որի ծանրութիւնը նոցա մարմնից երկու անգամ աւելի է, այն
ժամանակ մի րոպէում 150—170 ստնաչափ կամ մի ժամում
2 1/2—3 վերստ տարածութիւն հաղել անց կենան, թէպէտ եր-
բեմն բացառիկ դէպքում այդ տարածութիւնը հասնում է մին-
չև 6 և նոյն իսկ 7 վերստի: Եղը կարող է մինչև անգամ շարժել

աւելի մեծ ծանրութիւնս մինչև իսկ իւր կենդանի քաշից 15—20 անգամ աւելի, բայց այդպիսի ծանրութիւնը նրան ուժասպառ է անուամբ և նորա մարմնի կազմուածքի վերայ հիւժող, մաշող ազդեցութիւն ունենում:

Իբրև աշխատաւոր կենդանի եղը պէտք է իւր 4—15 տարեկան հասակը բայց աւելի արդիւնաբեր է նորա աշխատանքը 5—10 տարեկան հասակում:

Նոյնընկեր ընտրում են սպիւնընկեր լուծերի օգնութեամբ, որոնք լինում են երկու տեսակ՝ վրի, որ շատ տարածուած է մեղա- նում և գլխի կամ եղջիւրները, որ տարածուած է արևմտեան եւրոպայում: Անպայման աւելի նպատակայարմար է վերջին տեսակը:

Բ.

Կերք. Ամէն մի դիւրացու և ամէն մի անասնատիրոջ պարտականութիւնն է հողս տանել իւր անասունները կերի մասին, որն համար կարելի է պահպանել մի քանի կանոններ: Պէտք է հողալ, որ կենդանին ձմեռուայ համար ունենայ բաւական քանակութեամբ կեր, որ լաւ, հասած ու զօրեղ լինի. իսկ յի կովերինը բացի դրանցից նաև դիւրամարս: Ընդհանրապէս կերը պէտք է լինի մարուր, որ սիրով ուտեն. մզլած, ներսուած և վտած նիւթերը պէտք է դուրս թափել և այլն:

1. Կովկասի գիւղական ժողովուրդը անասնապահութեան մասին շատ քիչ տեղեկութիւններ ունի, նա շատ է մնացել, չի իմանում, որ անասնապահութիւնը երկրագործութեան մի կարեւոր միջոց է, չի իմանում, որ նա պակաս շահաւէտ է հողագործութիւնից. նա անասուններ խնամել չգիտէ. աւելի դժբախտ վիճակի մէջ են գտնուում եզներն ու կովերը: Մեր գիւղացիները կովից պահանջեցիսեմ մեծ քանակութեամբ կար, բայց երբէք կանոնաւոր կերպով խնամ չեն տալու, չեն մշտնապէս նոսր կերի մասին. կարծում են, քէ միմիայն չոր դարձան ուտեցնելով կարող են իւրեանց պահանջածը ստանալ: Ստիպում են շատ անգամ խնայ եզներին անհարկ անասնապահով, երբեմն միջոց ձկնկերը ցելի մէջ 40—60 փ. ծանրութեամբ բեռ քաշել հին, բոլորովին անյարմար եւ նոյն իսկ անասունների համար վնասակար սայլով, բայց կանոնաւոր կերակրելու անուշանելու մասին շատ քիչ են հոգս տանում: Երբեմն անասունների ձմեռան միակ կերը չոր յարդն է միայն, այն էլ այնքան քիչ են տալիս, որ խոզները շատ անգամ քաղցած են մնում: Այսպիսի պայմաններում շատ պարզ է կարճատև եւ մանաւանդ յի կովերի վիճակը. նոսր անոթ չեն բերում այնքան սնունդ, որ կարողանան քէ

Ինչպէս ամէն մի կենդանու, նոյնպէս և մեծ եղջիւրաւոր անասունները կերը պէտք է իւր մէջ պարունակէ աննորարար նիւթերը մի ուրիշ քանակութիւն: Եղջիւրաւոր անասունները կերը բաղկացած է լինում մի քանի հիմնական սննդարար նիւթերից: Նիւթ է չորացնելով կերը միջոց հեռայնները ջրային մասերը, կամ նայ միայն չոր նիւթը: Այդ չոր նիւթի այն մասը, որ սպառում է, կուտում է նորա գործարանաւոր բաղադրել մասը, իսկ այրուելուց յետոյ իբրև փոշի մնացած մասը կուտում է հանրային կամ անգործարանաւոր: Չոր նիւթի ինչպէս առաջին, նոյնպէս և երկրորդ բաղադրել մասերը անպատճառ պէտք է բաւական քանակութեամբ լինին կենդանու կերի մէջ, որովհետև նորա մարմնը բաղկացած է նոյնպիսի գործարանաւոր և անանգործարանաւոր կամ հանրային նիւթեր, որովհետև զործարանաւոր և անգործարանաւոր կամ հանրային նիւթեր, որովհետև կենդանու կեանքի և արդիւնաբերութեան համար միևնոյն նշանակութիւնը չունին: Այդ պատճառով այն աղիւսակները մէջ, որ ցոյց է տրուում իւրաքանչիւր կենդանու համար որոշուած օրական սննդարար նիւթերի քանակութիւնը, խօսուում է ոչ թէ զործարանաւոր սննդարար նիւթերի մասին ընդհանրապէս, այլ առանձնապէս նոյն մասին, որոնք պարունակում են իւրեանց մէջ բարակածին (азоты), այսինքն բարակային նիւթեր և կամ՝ ընդհանրապէս, որոնք չեն պարունակում բարակածին (այսպէս օրինակ, միս կարող է ստացուել միայն առաջիններէն՝ բարակային

իւրանց մարմնին եւ քէ իւրեանց արգանդում եղած հորթին սնուցանել, որի պատճառով էլ այդպիսիները նախ՝ որ դժուարածին են լինում եւ երկրորդ՝ որ ծնում են քոյլ կազմուածով հորթեր: Գուցէ շատերը տեսած լինին մեր գիւղերում ձմեռները միմիայն դարձնում եւ այն էլ ոչ կուտ վարով կերակրուած անասունների ցարալի վիճակը, որով շատ անգամ չեն կարողանում նսած տեղից վեր կենալ, պէտք է պոչերից բռնելով վեր բարձրացնել:

Վերջապէս մեր գիւղացիներն եւս պէտք է մի քիչ սրափուեն եւ հետեւեն Եւրոպայի գիւղացիների օրինակին, որով ոչ միայն դարձան են տալիս եղջիւրաւոր անասուններին, այլ նաեւ յոս ու շատ ուրիշ բաւական նիւթեր: Եւ անաւանդիկ կանոնաւոր եւ սննդարար նիւթերով կերակրելուն, նոսր կովերն անհամեմատ աւելի շատ կար են տալիս՝ քան մեր կովերը, նոսր կենդանեաց քաղցր գգալի կերպով աւելի է (որեւմէն միս աւելի են տալիս) քան մերը: Այնպէս օրինակ, նոսր մի եզր կամ կովը քաշում է (ծանրութիւնը) մինչև 40—50 եւ երբեմն դեռ աւելի՝ 60 փ., միջոցաւ մերը՝ 15 փ. նոսր մի կովը օրական 3 վեդրո կար կարող է տալ, իսկ մերը ամենաշատը մի վեդրո: Այս բոլորը գիւղաւորապէս շատ եւ սննդարար կեր տալու եւ կանոնաւոր խնամելու հետեւանքն է:

նիւթերից): Առհասարակ կենդանին գործարանաւոր նիւթերէ այդ խմբերից միայն մէկն ու մէկով կերակրուելով ապրել անկարող է: Աղիւսակներէ մէջ բոլոր ոչ բորակային սննդարար նիւթերը միասին չեն դասաւորուած լինում. նոքա բաժանուած են լինում երեք մեծ խմբերէ՝ ճարպ, ածխածրածին (углеводъ), ինչպէս օրինակ փայտանիւթ և այլն և միւս մնացած ոչ բորակային նիւթեր: Այս խմբերը պէտք է առանձին առանձին նշանակել, որովհետեւ ճարպը սննդարարութեան տեսակէտից միւսներէից աւելի զօրեղ է: Սյուպիսի աղիւսակները անուանում են սննդառութեան չափեր (КОРМОВЫЯ НОРМЫ): Սովորաբար սննդառութեան չափերի մէջ բորակային նիւթերէ տեղ գործ է ածւում յաճախ «սպիտակուց» անունը, որովհետեւ այդ նիւթերէ մէջ սպիտակուցը ամենաթանկագինն է, կարեւոր և միևնույն ժամանակ ամենամեծ սննդարար բաղադրիչ մասն է կազմում: Միւս բորակային նիւթերէ սննդարարութիւնը կամ կատակածելի է և կամ վնասակար: Կերէ յեշեալ նիւթերէ մի մասն է միայն մարմինը իւրացնում, իսկ միւս մասերը անցնում են կենդանիներէ աղիքներէ միջով և ոչ մի փոփոխութեան չեն ենթարկուած, ուրեմն և իբրև սննդարար նիւթ ոչ մի նշանակութիւն չունեն:

Կերերը կարելի է չորս կարգի բաժանել. գլխաւոր, զօրեղ, օժանդակ և լրացուցիչ:

Գլխաւոր կոչւում է այն կերը, որ միւսներէ հետ համեմատած աւելի մեծ քանակութեամբ է սրւում կենդանիներին: Գլխաւոր կերը իւր մէջ պէտք է պարունակէ կենդանու մի անդամուայ (փում) համար որոշուած կերի պարունակած սննդարար նիւթերէ գոնէ կէս մասը:

Զօրեղ կերի նշանակութիւնն այն է, որ կարողանայ լրացնել գլխաւոր կերի պակասը՝ բայց եթէ գլխաւոր կերը իւր մէջ բաւականաչափ սննդարար նիւթեր է պարունակում, այն ժամանակ զօրեղ կերը աւելորդ է գործ ածել:

Օժանդակ կերը գոր է ածւում նոքա համար, որ կերի ծաւալը մեծանայ, որով նախ՝ մեղմանում է բորակային կերի չափազանց զօրեղ ներգործութիւնը և երկրորդ՝ թանգ չի նստում այլ ևս կենդանիներին կերակրելը:

Լրացուցիչ կերը ծառայում է նոքա համար, որ ընդհանուր կերի մէջ որ և է սննդարար նիւթի պակասութիւնը լրացուի և կամ նոքա համար, որպէս զի կենդանու վրայ որ և է ազդեցութիւն յառաջացնէ:

Իւրաքանչիւր տեսակ խոտակեր ընտանի կենդանիներէ համար համապատասխան կեր կայ:

Խոշոր եղջիւրաւոր անասուններէ գլխաւոր կերն է՝ մարգագետնի կամ հարսի խոտը, գարնանացանի գարմանը, բազուկը (ճակնեղ — КОРМОВАЯ СВЕКЛА), կարոֆֆիլը՝ զօրեղ կերն է՝ առուոյտ, թեփ և կոպտոն. լրացուցիչ կերն է՝ գարի, վարսակ և հաճար:

Պէտք է առանձնապէս ուշադրութիւն դարձնել և զգուշաւոր ու չափաւոր ընտրութիւն անել կենդանեաց օրական կերի մէջ այնպէս, որ նորանում լինի սննդարար նիւթերի պահանջած չափը և նիւթերը համապատասխան լինեն կենդանու ապրուստի եղանակին և նպատակին և որպէս զի ամէն անգամ, բացի սննդարար նիւթերից, կենդանին ստամոքսը լցնելու համար ստանայ նաև անհրաժեշտ քանակութեամբ խոշոր, դժուար բամբար կեր:

Այս բոլոր կանոնները ընդունուած են իբրև անփոփոխելի գործադրելի մի ճշմարտութիւն: Բայց եթէ աչքի առաջ ունենանք այն, որ մեծ եղջիւրաւոր անասուններէ համար որոշուած այս չափը մի միջին չափ է, որը գուրս է բերուած բաղաձայն կենդանիներէ վերայ տեղի ունեցած փորձերից, և իրականութեան մէջ միջին կամ միջակ կենդանի գոյութիւն չունի, իւրաքանչիւր կենդանի ունի իւր առանձնայատկութիւնները և շեղումները, հետեւապէս և կերի ժամանակ սնունդի չափ որոշելը խիստ դժուար է և նոյն իսկ բոլորովին անհնարին և եթէ յամառութեամբ հետևողներ լինեն, այդպիսիները արդիւնաւոր հետեւանքներ չեն հասնի: Ահա հէնց այդ պատճառով այստեղ աւելորդ է յառաջ բերել սննդի չափերը որոշող մի որ և է աղիւսակ, որովհետեւ ոչ մի գործնական նշանակութիւն չունի: Բայց որպէս զի կերը համապատասխան լինի նշանակած նպատակին և որպէս զի նիւթերը անմիւս և անօգուտ կերպով չվատանուին, լաւ կլինի պահպանել հետեւեալ կանոնները.

1) Մի կերից միւսին անցնելիս պէտք է խիստ յաջորդակաւ նութիւն պահպանել, այսպէս օրինակ. եթէ արօտատեղեշում կանաչ խոտ արածելուց անմիջապէս յետոյ կենդանիները աշնանը սկսեն կերակրուել չոր խոտով և կամ, ընդհակառակն, եթէ գարնանը չոր խոտից անցնեն կանաչի, նոցա կաթը կպակասի և քաշը կբարձրանալուց:

2) Կերի ժամանակ անհրաժեշտ է ուշը դարձնել, որ նա մի որոշ ծաւալ ունենայ: Թէպէտ կարելի է վերցնել փոքր չափով այնպիսի կեր, որ իւր մէջ պարունակում է կենդանու համար բաւարար չափով կարեւոր սննդարար նիւթեր, բայց նոցա նից կենդանին կանոնաւոր կերպով չէ կարող օգտուել, որովհետեւ

ստամոքսը լցուած չլինելու պատճառով մարսողական նիւթերը լաւ չեն արտադրուում և կենդանին անկարող կլինի ստամոքսից կերը յետ բերել որոճալու. բայց եթէ անասուններին այնքան շատ աննդարար նիւթեր տանք, որ ստամոքսը լցուի, նա անկարող կլինի այդքանը մարսել, նորա ստամոքսը կխանդարուի և կենդանին կարող է նոյն իսկ զգալի վնասներ կրել: Հասկանալի է, որ ձեռնառու չէ կերակրել նաև խիստ մեծ ծաւալ ունեցող նիւթերով, որովհետև կենդանու ստամոքսը կարող է անդաւորել իւր մէջ և մարսել միմիայն որոշ ծաւալ ունեցող կեր և մենակ մեծ ծաւալ ունեցող կեր դորժածելով, կենդանին քաղցած կարող է մնալ, հետևապէս և կդադարի արգիւնաբեր լինելուց: Պէտք է միշտ ընտրութիւն անել կերակրի մէջ և աշխատել յարմարաւոր նիւթեր ընտրել և կամ մի խառնուրդ կազմել՝ խոտի, դարմանի, իբրև մեծ ծաւալ ունեցող կերերի հետ, որոնք լաւ ներգործութիւն են անում մարսողական հիւթեր արտադրուելուն:

3) Եթէ կենդանիներին միաժամանակ կերակրոււմ են այլ և այլ նիւթերով, այն ժամանակ օգտակար և կանոնաւոր կլինի ամբողջ օրուայ համար այսպէս սահմանել, աւելի կոշտ ու կոպիտ, դժուարամարս և մեծածաւալ կերը պէտք է տալ անասուններին գիշեր ժամանակ, որովհետև նորա միջոց շատ կուսենան լաւ ծամելու և մարսելու: Անհամ կամ անասուններին դուր չեկող նիւթերը և կամ այնպիսիները, որոնց դեռ սովոր չեն անասունները, պէտք է տալ առաւօտները քաղցած ժամանակ, երբ սովորաբար նոցա ախորժակը սաստիկ դրդուած է լինում:

Սովորական և աւելի լաւ թանկագին կերը պէտք է գործածել ցերեկը, որպէս զի տէրը միջոց ունենայ վերահասու լինելու, որ կենդանիները հաւասար չափով ուտեն:

4) Շատ կարեւոր է ուշք դարձնել նաև, որ կեր տալը և ջուր խմացնելը տեղի ունենայ օրական որոշեալ ժամերում և որոշեալ թուով: Այդպիսի կանոնաւորութիւնը որոշ չափով պահպանում է մարսողութիւնը կանոնաւոր վիճակի մէջ և գիւրացնում կենդանեաց վերայ խնամք տանելու գործը: Խիստ անմիտ բան կլինի, եթէ մարդ առանց մտածելու կերակրէ իւր անասուններին. այսպիսի ժամանակ եթէ մի կերից մինչև միւս կերն եղած միջոցը մեծ լինի, կենդանին կարող է քաղցած մնալ, երբեմն էլ, ընդհակառակը, խիստ շուտ շուտ կերակրելով, կենդանիները հաճոյքից կսկսեն աւելացած կերը կոխուտել ոտների տակ: Եղջիւրաւոր անասուններին պէտք է ջրել օրական երկու անգամ, իսկ կեր տալ երեք անգամ: Ժամերի ընտրութիւնը կա-

րող է կախումն ունենալ տէրերի ունեցած յարմարութիւններից, բայց ցանկալի է, որ մէկ անգամից մինչև միւս անգամ ջրելու ժամանակամիջոցը 12 ժամ լինի և ձմեռը երեկոյեան տուած կերից մինչև առաւօտուայ կերը 7 ժամից աւելի չանցնի: Մնացած ժամանակներում կերերը պէտք է տալ հաւասար ժամանակամիջոց անցնելուց յետոյ:

Անասուններին խմացնելու ջուրը պէտք է բոլորովին մաքուր լինի, ամենալաւ խմելու ջուրը գետերի և առուակներէ ջրերն են. լաւ է նաև աղբիւրի և ջրհորի ջրերը: Եթէ հարկ լինի անասուններին լճակներից ջուր խմացնել, պէտք է այդ լճակները մաքուր պահել: Պղտոր, կանգնած, կանաչով ծածկուած ջրերը վնասակար են կենդանեաց առողջութեանը և ոչ միայն հիւանդութեան, այլ նաև նրանց մէջ ջարդ ընկնելու պատճառ են դառնում: Զմեռն անասուններին երբէք չպէտք է դուրս տանել ջրելու, որովհետև նախ որ շատ սառը ջրից կենդանիները ջերմում են և երկրորդ, որ սառը ջրից և գիւրացայթաք ճանապարհով քայլելով յոյլ կովերը կարող են վիժել և երրորդ, որ կիթան կովերը նոյն պատճառներից կարող են նուազեցնել տուած կաթի քանակը: Զմեռն ամենից լաւ է ջուրը պահել ախոռներում առանձին փայտեայ կամ քարեայ տաշտերի (դուռերի) կամ չաների մէջ, որպէս զի անասունները երբ կամենան, կարողանան խմել: Ախոռներում ջուրը բաւականին տաքացած է լինում և անասունները խմում են աւելի ախորժակով. ջրելու ամանը պէտք է մաքուր պահել:

Մնում է, որ կարևասու, աշխատաւոր և մաքուր եղջիւրաւոր անասուններին կերակրելիս իւրաքանչիւր տեսակի վերայ առանձին ու շաղրութիւն դարձուի, խնամք տարուի:

Կարևասու կովերի կերը. Մեծ քանակութեամբ և լաւ տեսակ կաթ ստանալու համար ոչ միայն կարևոր է, որ կովը աղնիւ և կաթնոտ ցեղից յաւաճացած լինի, հարկաւոր է ուշադրութեան տանել նաև այս կամ այն կերի յատկութիւնը և չափը, որովհետև ինչպէս կաթի քանակութիւնը, նոյնպէս և յատկութիւնը կախումն ունի կերից: Բայց որովհետև կաթը խիտապէս ոչ այլ ինչ է, եթէ ոչ կաթնային գեղձի լուծուող վանդակիկները, այս պատճառով կովից ստացուած կաթի թէ քանակութիւնը և թէ յատկութիւնը ամէնից աւելի կախումն ունի այդ գործարանի այս կամ այն աստիճանի զարգացումից և յատկութիւնից: Այս բնական օրէնքի ճշմարտութիւնը հաստատուում է նրանով, որ եթէ զանազան կովերի միակերպ կերակրենք և խնամենք, հաւա-

սար քանակութեամբ կաթ չի ստացուի. ջահել կովերը աւելի քիչ կաթ կտան. երկրորդ և երրորդ. ճնից յետոյ, երբ կաթի գեղձը իւր վերջնական զարգացմանը և բնական մեծութեանը կհասնի, կաթի քանակն ևս կմեծանայ. խոյ ճերուկեան հասակում գեղձը կիջորանայ, որով և կթուլանայ նորա գործունէութիւնը: Կաթնային վատ գեղձ ունեցող կովին որքան ուղում են լաւ կերակրեն, այնու ամենայնիւ նորա արդիւնաբերութիւնը միայն մինչև մի որոշ աստիճան կբարձրանայ, որից յետոյ կերի աւելին ոչ թէ կաթի կիւրծուի, այլ մսի և ճարպի: Այնու ամենայնիւ կերի գերը կաթ արտադրելու գործում խիստ մեծ է և կարևոր. նա նիւթեր է մատակարարում գեղձի արդէն կաթ դարձած վանդակիկներին վերանորոգուելու համար, որով ամէնից առաջ ազդում է կաթի քանակի վերայ: Յայտնի է, որ մարմնի բոլոր հիւստեածքները, զբանց թւում և կաթի գեղձը, պարունակում է սպիտակուցային նիւթեր. ահա այս պատճառով կաթնային նոր վանդակիկներ հիմնելու համար, անհրաժեշտ է սպիտակուցային նիւթերով հարուստ կեր: Հարուստ ասելով կերի մէջ սպիտակուցի քանակութիւնը չպէտք է չափազանց շատ լինի, որովհետև այդպիսի գէպքում նորա նշանաւոր մասից կյառաջանան այնպիսի թթու նիւթեր, որ կաթի արտադրութեանը բացարձակ վնաս կպատճառեն: Արովհետև կթի կովը իւր ստացած սննդարար նիւթերի մի մասը գործ է դնում կաթ պատրաստելու, խոյ միւս մնացածը իւր մարմնի կազմուածքը առողջ վիճակի մէջ պահելու համար, այս պատճառով նոցա համար երէք սննդարար, մանաւանդ սպիտակուցային նիւթեր չպէտք է խնայել, որովհետև սպիտակուցային նիւթերի մեծ մասը հէնց նոյն խոյ կաթի հետ միասին է դուրս գալիս, հակառակ գէպնոյն խոյ կաթի հետ միասին է դուրս գալիս, հակառակ գէպնոյն քում կենդանին շատ ծախսելով, բայց քիչ ստանալով, աւելի տրամադիր կլինի հիւանդանալու, մանաւանդ թորախտով: Ինչտարբերութեամբ է կաթի վերայ ունեցած ճարպի ներգործութեանը, փորձերը հակասական հետեանքներ են ունեցել. այնու ամենայնիւ կերի մէջ եթէ քիչ քանակութեամբ ճարպային նիւթեր լինեն, օգտակար է կաթի համար:

Մեծ եղջերաւոր անասունների ամենօրեայ կերը պէտք է բաղկացած լինի հետևեալ առհասարակ գործարանաւոր նիւթերից. սպիտակուցից, նարպից և ածխաջրածիւրից. կաթնատու անասունները կերն ևս նոյն բաղադրութիւնը պէտք է ունենայ: 1000 գրվ. կենդանի քաշ ունեցող մի կթի կովի համար որոշուած սննդարար նիւթերի կանոնաւոր չափը (բոս Վ.Օլֆի) հետևեալն է. 24 գրվ. առհասարակ գործարանաւոր նիւթեր, 2, 5

գրվանքայ սպիտակուց, 12, 5 գրվանքայ ածխաջրածին և 0, 7 գրվ. ճարպ: Այսպիսի բաղադրութիւն ունեցող կերը համապատասխան կարող է լինել արօտատեղերի լաւ խոտին և ճշմարեա որ, փորձերը ցոյց են աւել, որ ամենալաւ կերը կաթնատու անասունները համար մարգագետինների լաւ խոտն է:

Կերն ընդունակ է փոխել նաև կաթի յատկութիւնը: Կաթնատու կովին առատ և անխնայ կերակրելով կաթի մէջ չոր նիւթերը քանակը աճում է, բայց բաղադրիչ մասերը փոխադարձ յարաբերութիւնը (սպիտակուցի և ճարպի) սովորաբար մնում է անփոփոխ: Կերը փոխում է ոչ միայն կաթի, այլ և սորանից ստացուած նիւթերի՝ իւրի, պանրի լինչպէս քանակութիւնը, նոյնպէս և յատկութիւնը՝ գոյնը ¹, համը, հոտը և այլն: Բոլոր հասկաւոր բոյսերի՝ հաճարի, ցորենի, գարու, վարսակի, կորեկի, նաև եղիպտացորենի, վուշի, կանեփի, սիսեռի, լորու՝ հատիկները, թիթեանածաղիկ բոյսերը՝ սրուն, ոսպը, առուոյար ², քուշնէն, բամբակի կուտը, հասարակ կորնդան, նաև ալիւրը, թեփը ³: Կոպտոնը ⁴, քուսպը և մը քանի այլ նիւթեր ընդունակ են կաթի յատկութիւնը բարելաւելու. ընդհակառակը՝ դարմանը, մանաւանդ վատ աեսակ խոտերը, և մի քանի ուրիշ, իւրեւ կեր գործածուող նիւթերը, ինչպէս օրինակ՝ մի քանի ծառերի ճիւղքերը, ատերները, վատ աղդեցութիւն են ունենում կաթի վերայ: Բացի այս կերերից կայ նաև կերերի մեկը որդ կտամբ. որոնց մէջ ջրային մասը մեծ տեղ է բռնում: Այս կարգին են պատկանում արմատապտուղ բոյսերը՝ բազուկը (ձախդեղ), գաղաբը, շողգամը և ուրիշները, նաև կարտօֆիլը ⁵, որոնք բոլորն էլ ներգործութիւն են անում կաթի

1. Գալար, օրինակ, կաթին դեղին գոյն է տալիս եւայն:
2. Հասարակ առուոյսր գարնար բոս է հասնում եւ բոս օղակար է նախնով կերակրել կովերին, որովհետև դորանով կերակրուող կովը բոս կար է տալիս: Գաւերի խոտն առուոյսի չափ սննդարար չէ:
3. Իւրախանչիւր կրի կովին ամէն անգամ 5 գրվ.ից աւելի չպէտք է տալ:
4. Ամէն անգամ 4 գրվ.
5. Խորհուրդ են տալիս կարքանու անասուններին կերակրել մանրած կարսօժիլով (1000 գրվանքայ բոս ունեցող կարքանու կովին օրական պէտք է տա 10—15 գրվանքայ հում եւ 15—20 գրվանքայ եփած կարսօժիլ): Հում կարսօժիլը աւելացնում է առաւելապէս կաթի քանակը, իսկ եփածը՝ մսի: Եթէ այս չափից աւելի տալի, կոպր եւ իւրք անհանոյ համ կստանայ: Յղի կովերին պէտք է տա միայն եփած կարսօժիլ դորմանի հետ խոտն եւ այն էլ սովորականից աւելի պակաս քանակութեամբ, հակառակ դեպքում կենդանիները դժուարութեամբ կը մարան, փորութուրիւն կյառաջանայ եւ գուցէ վիժումն տեղի ունենայ. այս պատճառով հում տաւած ժամանակ վերան աղի ջուր են ցանում: Այսպիսի դեպ-

7711

քանակի վերայ, շատացնելով նորա ջրային մասերը: Արանց թուում կարելի է հաշուել նաև արաղի և դարեջրի դերը կամ սկզբ (տիանք, չաչ): Սոցանից կարածիկը, դաղարը, բազուկը, շաղ-գամը, կաղամբը, զանազան պտուղները և բանջարեղէնները թէ-պէտ շատացնում են կովի կաթի քանակը, բայց տալիս են ջրա-լի, թոյլ կաթ: Նման ազդեցութիւն են անում նաև արաղի և դարեջրի գործարանները տիանքները: Նաև ամէն մի փչացած կեր, բացի կենդանու առողջութեան վերայ վատ ազդեցութիւն ունենալուց, փչացնում է նաև կաթը ու նորանից յառաջացած նիւթերը: Ընդհանրապէս վատ կերը, մանաւանդ քիչ բորակ պարունակող նիւթերը, երբէք այնպիսի համեղ կաթ չեն տալիս, ինչպիսին ստացւում է ճոխ բուսականութիւնից կամ առուոյ-տից: Զմբան չոր և միմիայն յարդից բաղկացած կերը դժգոյն կաթ է տալիս, մինչդեռ գարնանը և ամրանը ստացւում է շատ լաւ դեղին կաթ, որովհետև կովերը արածում են համեղ բոյսեր:

Ապացուցուած է, որ իբրև կեր գործածուող նիւթերից մի քանիսը ընդունակ են կաթի մեջի ճարպային մասերը աւելացնե-լու. այդպիսիներից է օրինակ, բուսալը, կոպտոնը և այլն. թէպէտ քիչ չափով, բայց համարեա նոյն տեսակից են նաև հասկաւոր բոյսերի հատիկները և թիթեռնածաղիկ բոյսերը. սոցա մէջ աչքի են ընկնում վարսակը և մի քանի ուրիշները:

Մեզանում գարնանը, ամրանը և համարեա մինչև աշնան կէսերը բոլոր եղջիւրաւոր անասունները անց են կացնում արո-տատեղեցում և դոհանում եղած բուսականութեամբ, որով և կովերի կաթը աւելանում է: Այդպէս են վարւում բոլոր լեռ-նային երկրների բնակիչները: Արտասահմանում համարեա ամէն

ֆերում կարծիքի վերայ պէտք է աւելացնել նաև ուրիշ կեր. այսպէս օրինակ, 16 գրվանկայ կարծիքի վերայ պէտք է աւելացնել 15 գրվանկայ զարմանացանի դարման եւ այլն:

1. Առհասարակ կովկասում գոյութիւն ունեն երկու տեսակ առօտեղիներ՝ ամառնային կամ այսպէս անուանուած «ե ա յ լ ա ն եր» կամ «օբակեր», եւ ձմեռնային կամ «դ շ լ ա ն եր», որոնք միջոց են սալիս անառնայախորտակ պարապող ազգաբնակչութեան մեծամասնութեանը ամբողջ տարւայ ընթացում ա-րածեցնել իւրեանց անասուններին:

«ե ա յ լ ա ն եր» — բարձր լեռնային տեղեր են. որտեղի կլիմայական պայմանները այնպէս են, որ ոչ մի հացաբոյս չի կարող հասնել: Այդ տեղերը ամառային ամիս-ներում ծածկում են նոյն բուսականութեամբ, որ շատ օգտակար է անասուններին: Լեռների գառիվայրերում գտնուող «ե ա յ լ ա ն եր» առաւելապէս ոչխարներ եւ պահուում, որովհետև այդպիսի տեղերով բարձրանալ եւ իջնել կարող են միայն ոչխարներն եւ այծերը. իսկ խոճուր եղջիւրաւոր անասունների համար անխարստ են «դ շ լ ա ն եր» այն ցած հարթութիւններն են, որտեղ ամառնային շոգերը եւ

տեղ, շատ քիչ բացառութեամբ, աւելի յարմարաւոր են հա-մարում նոյն խոյ ամրանը կաթնատու անասուններին ախտուե-լում պահել, քան արօտներում, որովհետև այն ժամանակ կա-րելի կլինի նոցա աւելի լաւ կերակրել, նոցանից աւելի մեծ չա-փով կաթ ստանալ, սակայն այդ կերպ կերակրած անասունների կաթից պատրաստած իւղը, պանիրը այն առաւելութիւնները չունեն, ինչ առաւելութիւններ որ ունի արօտներում արածող կովերից ստացուածը: Կաթնատու եղջիւրաւոր անասուններին ախտուեցում պահելը ձեռնառու է միայն սակաւահող երկրների բնակիչներին, որտեղ անասունների համար յատկապէս զանազան տեսակ խոտեր են ցանում և բացի դրանից իբրև կեր գործ են ածում նաև զանազան գործարաններից դուրս թափած շատ ա-ւելուրդ նիւթեր: Ախտուեցում պահելու գլխաւոր պատճառն այն է, որ արտասահմանում զանազան ժամանակներում ցանում են այլևայլ տեսակ խոտեր, և այնպէս են յարմարեցնում, որ ամ-բողջ ամառուայ ընթացքում կենդանիները կանաչ կերի պակա-սութիւն չեն զգում:

Գարնան սկզբներին կովերին մէկէն ի մէկ չպէտք է բաւա-կանանալ միմիայն կանաչ խոտ տալով. պէտք է մի քանի օր կերակրել նաև խոտով ու դարմանով, որպէս զի նախ կենդա-նու փոքր չլուծէ և երկրորդ, որ արօտներում բուսած խոտը դեռ այնքան քիչ է և պակաս աննդարար, որ կենդանին քաղ-ցած կմնայ:

Արտասահմանում 1000 գրուանդայ ծանրութիւն ունեցող (մաքսային 800 գրվ.) կովը ընդունում են իբրև միութիւն, որի համար հարկաւոր է մի այնպիսի արօտատեղի, ուր համարձակ կերպով կարող են արածել երկու դիւ ին ջահել եղջիւրաւոր անա-սուն կամ 1 1/2 քուռակ, կամ 2 1/2 ցուլ, կամ 10 ոչխար կամ 8 խոզ: Որպէս զի կովը առանց ուրիշ կերի կարողանայ միայն ար-օտատեղում արածելով բաւականանալ մօտաւորապէս 150 օր, հարկաւոր է որ այդ արօտատեղին մինչև 112 1/2 փ. չոր խոտ տայ: Հետեւապէս և մէկ դիւ ին անասուն կերակրելու համար, երբ արօտատեղին շատ հարուստ է բուսականութեամբ, ու-րեմն և շատ լաւ խոտաւէտ տեղ է, որ կարող է մինչև 200—250 փ.

արհեսական եղանակով սուղելու բացակայութիւնները գիւղացիներին հնարաւորութիւն չեն տալիս երկրագործութեամբ պարապելու: Ամառը մերի, օտաւի շոգից եւ երեսից պարած սարածութիւնն «դ շ լ ա ն» ձմեռը ծածկում է այնպիսի բուսականութեամբ, որով կարող են կերակրուել ամբողջ ձմեռուայ ընթացում ըն-ժամի անասունները:



չոր խոտ (700—800 փ. կանաչ խոտ) սալ, հարկաւոր է մօտաւորապէս $1\frac{1}{2}$ դեսեատին այդպիսի արօտատեղի. երբ արօտատեղին քիչ պահաս է առաջնից, բայց դարձեալ այնքան խոտաւէտ, որ տալիս է 100—150 փ. չոր խոտ (300—400 փ. կանաչ խոտ), բաւական է $5\frac{1}{4}$ դեսեատինը. միջակ տեսակ արօտատեղու $1\frac{1}{4}$ — $1\frac{1}{2}$ դեսեատինը բաւական է մի կովի համար, երբ արօտատեղին վատն է, ուրեմն և աղքատ է բուսականութեամբ. $2\frac{1}{4}$ դեսեատին և վերջապէս շատ վատ արօտատեղու 3—5 դեսեատինը հազիւ բաւականացնէ: Եթէ արօտատեղին այնքան աղքատ է բուսականութեամբ, որ մի կովի բաւականութիւն տալու համար հարկաւոր է 3 դեսեատինից ոչ պակաս հող, կենդանին չէ կարող կշտանալ, այդ պատճառով էլ այդպիսի արօտատեղերում պէտք է արածեցնել միմիայն ոչխարներ:

Կաթնատու անասուններին ձմեռը պէտք է կերակրել օրական 3—5 անգամ առանձին մսուրքումը, մանաւանդ երբ թանկագին կեր է (օր. ալիւրի թեփ, կոպտոնը մանրած արմատապտուղների հետ և այլն): Սււելի օգտակար է շուտ շուտ, բայց փոքր փոքր բաժին տալ. միանգամից շատ կեր ստացած ժամանակ կենդանին թողնում է նորա մի մասը մսուրք մէջ, և յետոյ այլևս չի մօտենում, չի ուտում, որով և ի դուր վնաս է յառաջանում: Զպէտք է նաև շատ ուշ ուշ կերակրել, որպէս զի կենդանին քաղցած մնայ և կեր տեսնելուն պէս յարձակուի վերան և սիսի ազահարար, առանց կանոնաւոր ծամելու կուլ տալ ու խանդարել իւր մարսողութիւնը:

Կաթնատու կովերին կերակրելիս զիւղացիները կամ ազարակատերերը գլխաւոր հոգսը պէտք է լինի կերի համար պատրաստի ունենալ բաւարար չափով այլ և այլ նիւթեր, որոնք միջոց կտան կենդանուն արօտատեղերում կանաչ խոտ արածելուց, առանց որ և է վնասի, աստիճանաբար անցնել չոր կերի: Այսպիսի անցումները ժամանակ կաթնատու կովերին պէտք է կերակրել այնպիսի բազադրութիւն ունեցող կերով, որպիսին նորա ստացել էին արօտներում: Որովհետև սովորաբար կթի կովին տալիս են օրական միջակ յատկութիւն ունեցող մօտաւորապէս 30—35 գրվանբայ խոտ, որը իւր մէջ պարունակում է վերևում յիշուած քանակութեամբ սպիտակուց, ածխաջուր, ճարպ և այլն. մի չափ, որ միայն կարող է կենդանու սնունդը հաւասարակշուրութեան մէջ պահել և չափաւոր կաթ արտադրել, այս պատճառով միմիայն խոտով կերակրելով չպէտք է բաւականանալ. ձիշտ է, մեղանում կաթնատու անասուններին, մանաւանդ կովերին ձմեռուայ գլխաւոր կերը համարեա չոր խոտն է, բայց միայն



դրանով չպէտք է բաւականանալ. սննդարար նիւթերի մնացած մասը պէտք է լրացնել դարման, ալիւրի թեփ, գաղար, բազուկ, շաղգամ, վուշի կոպտոն գործ ածելով, որոնք լաւ կաթ արտադրելու միջոցներ են: Այսպէս, օրինակ. 15 գրուանբայ մարգադեանի խոտից, 4 գրուանբայ վարսակի դարմանից, 8 գրուանբայ հաճարի թեփից (отруби), և 40 գրուանբայ հացի արաղի տկանքը (барда), կաղմած ամբողջ խառնուրդը կատարելապէս բաւական է 25 փութ ծանրութիւն ունեցող կովի համար: Այս խառնուրդի մէջ եղած հաճարի թեփի տեղ կարելի է գործածել կոպտոն:

Իբրև կեր կովերին կարելի է տալ նաև կանաչ եգիպտացորեն. նորա սերով կուտեն, առողջ կմնան, ուժեղ կլինեն և շատ կաթ կտան: ձահնդեղի տերեւները քիչ սնունդ կտան և կովերին փոքր կլուծեն՝ այս պատճառով պէտք է գործածել մանրած և դարմանի հետ միասին: Կաղամբի տերեւները սրանցից լաւ են, միայն դարձեալ պէտք է դարմանի հետ տալ: Շատ տեղերում հաճարի արտի մէջ անմիջապէս եգիպտացորեն են ցանում ու աշնանը քիչ քիչ կարում և լաւ դարմանի հետ միասին գործադրում, միայն պէտք է զգուշանալ, որ արևի տաք ժամանակը այդպիսի արտի մէջ ոչխար, խոզ չմտնի, եթէ ոչ կվնասուի:

Գարմանը դանազան տեսակ է լինում: Կովին տալու դարմանը պէտք է լաւ պահուած լինի և շատ հասած. անձրևից, մեղրացօղից ու ժանկից փչացած չպէտք է լինի: Ոլորի, սոսլի, սիսեռի ու վիզի դարմանը հացաբոյսերի դարմանից աւելի լաւ է: Կովերին բորակածինով հարուստ, թարմ, ցանած խոտերով կերակրելիս, լաւ կլինի աւելացնել վերաները քիչ քանակութեամբ դարման: Խառնուրդ խոտը՝ այսինքն խառն ցանած վիզը, որուր, գարին եթէ ճաղկելուց յետոյ հնձած ու չորացրած է, յատկութեամբ լաւ տեսակի չոր խոտի է հաւասար: Սովորաբար լաւ խոտի մի գրվանբայ հաւասար է փչացած կամ թթու խոտի երկու գրվանքին:

Եգիպտացորենը և արմատապտուղները այն տեսակ նիւթերից են, որ օգտակար է գործ ածել նախ քան աշնանը ձմեռնային կերի անցները: Կաթնատու անասուններին լաւ է հացահատիկներ չտալ, նոցա տեղ կարելի է գործ ածել կոպտոն և կամ գարու և վարսակի ալիւրից պատրաստած լափ, որի հետ կարելի է խառնել նաև դարման:

Բացի դրանից կենդանիները կերերը զիւրամարս անելու նպատակով, երբեմն նոցա մասնաւոր պատրաստութիւններ են ենթարկում. այն է՝ հոտելու, թրջելու և խմորման: Այս կերպ պատրաստելով, կերերի սննդական արժէքը թէպէտ շատ չի բարձ-

բանում, այնու ամենայնիւ անասունները ախորժակով կսկսեն ուտել, հեշտութեամբ կծամուի և աւելի դիւրամարս կլինի:

Լաւ երկրագործներ կենդանիներէ կերերը միմեանց հետ խառնելով ու տեսակ տեսակ վորձերով այնպիսի եղանակներ են գտած, որ քիչ ծախքով լաւ և առողջ կեր են պատրաստում: Երբեմն կերերը գործ են ածում թրջած և երբեմն աւանց թրջելու: Այսպէս օրինակ, կարելի է տալ աւանց թրջու Նախօրօք մանր կտրած արմատապտուղները, շաղգամը, գաղարը, բաղուկը դարմանի հետ խառն: Այս խառնուրդի վերայ կարելի է աւելցնել նաև քիչ մանրած խոտ, որնց յետոյ պէտք է յուսալ, որ կովը լաւ և առատ կաթ կտայ: Այսպիսի պէտք է ամէնից առաջ պէտք է տալ կաղամբի տերև. սա միւսներէն աւելի պակաս սննդարար է, բացի դրանց երկար էլ չի պահուի: սրանց յետոյ պէտք է տալ դդում, գետնախընձոր բազուկի հետ միասին (միշտ պէտք է դարմանի հետ խառն տալ), որոնք շատ կաթ են տալիս և զերպանում: Ամէնից վերջը պէտք է տալ շաղգամ, որովհետև ամէնից աւելի շատ կզիմանայ և կաթի համար էլ օգտակար է: Նոյն խառնուրդները տալիս են նաև թրջած: Նախ վերցնում են դարման, արմատապտուղներ և քիչ էլ խառն խոտ: Նախ քան այս նիւթերը իրար վերայ լցնելը՝ կոշտ և նեարդաւոր կերերը՝ արմատապտուղները, եգիպտացորենը, գետնախնձորը կտրտում, մանրում են և յետոյ այդ խառնուրդի վերայ լցնում այնքան սառը կամ աւելի լաւ է առջ ջուր ու խառնում, մինչև որ բոլորը թրջուի, փափկի: Խոհանոցի և կաթնատան ջրերն ևս օգտակար է գործածել այս նպատակով: Ջուրը լցնելուց յետոյ ամանի բերանը փակում են և մի ժամ կամ մի օր անցնելուց յետոյ տալիս են կովերին:

1. Փորձում է, որ կովերի եղջիւրները արմատներէն կտրուելով, ցրանց կարր կաւելանայ եւ նոյն միակգամայն կզիրանան: Բայց այս գործը պէտք է կատարել, քանի որ անասունները վտր են, այսինքն քանի որ եղջիւրները դուրս ցցուած չեն: Երբ որ երիւցի եղջիւրների տեղ կսկսի ուռչիլ, լաւաջ քան այդ ուռուցքը կարծրանալը, պէտք է նախ մկրտով եղջիւրների տեղի վերայ բուսած մագեր սակից կտրել եւ յետոյ նոյն տեղը մտնով պարզ ջրով քրչել ու վրայից ամբողջ եղջիւրի արմատի վրայ դժոխաբար (կապուս ֆար) ֆել եւ երբ մտրք սկսի փափկիլ ջիւրի արմատի վրայ դժոխաբար (կապուս ֆար) ֆել եւ երբ մտրք սկսի փափկիլ և կարմրել, բռնել, որպէս թէ արիւն դուրս պիտի գայ, պէտք է դադարել եւ ֆելուց: Թացութիւնը խիստ կարեւոր է, որպէս զի դժոխաբար կարողանայ սպառել, միայն չպէտք է չափազանցութեան հասցնել, որպէս զի ջուրը խիստ վերայ վագելով վերը չլեծացնէ:

Եղջիւրներ կտրուելով կովի կաթի աւելանալու եւ զիրանալու պատճառը նմանեցնում են մի ծառի, որի երկ աւելորդ հիւղերը կտրուեն, աւելի մեծ պտուղներ կտայ, որով եւ ծառի կենսական հիւրը չի վիշտանալ, մի անօգուտ գործարան լաւաջ բերելով:

Այս կերպ պատրաստած կերը կովերը հեշտութեամբ են ուտում ու առողջ մնում, որովհետև հեշտ ու դժուար մարսելու նիւթերը խառնուած լինելով՝ աւելի դիւրին կմարսուին:

Հաստատուած է, որ խմորուած կերերը կենդանիները աւելի ախորժակով են ուտում: Ահա քսան տարի է, որ սկսել է տարածուել կերերի այս եղանակով պատրաստելը: Գրեթէ բոլոր կերերը՝ չոր կամ թրջած, ջրային, եթէ մի քիչ խմորուին, աւելի օգտակար և շահաւէտ կլինին: Երկար ժամանակ կատարուած վորձերը ցոյց են տուել, որ եթէ մի օր առաջ կերերը կտրտուեն և դարմանի մանրուքի, հոտած խոտի, հացահատիկների կամ արմտիքների կծեպների հետ խառնուեն, աւելի շատ քանակութեամբ սննդարար նիւթեր կտան, քան խիւղն կարտուած և տրուածները կամ առանձին առանձին տրուած դարմանը, խոտը և կծեպները և այլն: Այսպէս խառնում և խմորում նոյն իսկ նուազ սննդարար կերերը համովնալով, գոգուում են կենդանիներին ախորժակը և աւելի շատ քանակութեամբ ուտել են տալիս: Ամբան սկզբներին եթէ չոր և կանաչ խոտեր միաժամանակ քիչ խառն տրուի, կենդանիները կսկսեն ուտել կանաչ խոտը և ոչ չորը, բայց եթէ իրարու հետ լաւ խառնուած լինեն, երկուսից էլ հաւասարապէս կուտեն: Հացահատիկների, արմտիքների կծեպների, դարմանի, գետնախնձորի հետ կարելի է խառնել նաև քիչ փչացած խոտեր, որոնց համն ու հոտը անտարակոյս պիտի զզուեցնէին կենդանիներին, եթէ առանձին գործ ածուէին:

Կաթնատու անասուններին, առաւել ևս կովերին երբէք չպէտք է կերակրել փչացած, թթու խոտերով, որովհետև, ինչպէս վերը տեսանք՝ այդպիսի կերը կաթի վերայ վատ ներգործութիւն է ունենում: Չպէտք է շատ ուտեցնել նաև վարսակի դարման: Կթի կովերի կերը կարելի չկայ նոյն իսկ եփել, խաշել և մի որ և է այլ կերպ պատրաստել: Թէպէտ այս կերպ պատրաստելը համեղ է, բայց քնքուշացնում և փափկանում է դարձնում կենդանու ստամոքսը: Կաթնատու կովը, որ ձմեռը դարձնում կենդանու ստամոքսը: Կաթնատու կովը, որ ձմեռը խոտ ու դարման և այլ դժուարամարս նիւթեր պէտք է ուտէ, անպատճառ մաքուր, առողջ և ոչ քնքուշ ստամոքս պէտք է ունենայ:

Յղի կովերը, որոնք միաժամանակ տալիս են կաթ և կերակրում հորթերին, պէտք է աւելի առատ սննդարար կեր ստանան: Այսպիսիներէ համար պէտք է խուսափել գործ ածելուց մեքանի այն տեսակ կերեր, որոնք գործարանական արդիւնաբերութեան մնացորդներն են ներկայացնում, որպէս զի վիժումն չք

յառաջանայ (չհորթատէ): նոյն զգուշութիւնը պէտք է պահպանել նաև սառած կարտոֆիլի և ուրիշ փչացած կերերի վերամօր:

Կանոնաւոր և սննդարար կերը իւր մէջ բացի սպիտակուցից, ճարպից, ածխաջրածնից, պէտք է պարունակէ նաև զանազան հանքային նիւթեր: Կերի մէջ հանքային նիւթերը, մանաւանդ ծծմբային թթուի և կրի բացակայութիւնը խիստ զգալի կերպով արտայայտուի է կենդանեաց վերայ. նոքա նուազում, ուժասպառ են լինում, որովհետև կաթի մեջից անդադար դուրս է հանւում զգալի չափով ֆոսֆորաթթու կեր (фосфорнокислая известь): Կաթնատու անասուններին խոտով կերակրելիս շատ քիչ զէպքերում միայն գուցէ հարկաւորուի մտածել այս նիւթերի մասին. բայց եթէ կերը բաղկացած լինի բացառապէս դարմանից, թեփից, արմատապտուղներից և այլն, օգտակար և նոյն խոկ անհրաժեշտ է գործ ածել երբեմն երբեմն քիչ քանակութեամբ կեր (լաւ է գործ ածել կաւիճ) և կամ ոսկրի փոշի:

Հասարակ աղն ևս օգտակար է կթի կովերին. նա սաստկացնում, աւելացնում է նիւթերի փոխանակութիւնը և նպաստում կաթի առատ արտադրութեան. բացի դրանից աղը համեղ է դարձնում կերը և զրգուում կենդանու ախորժակը: Սովորաբար եղջիւրաւոր անասուններին տուած աղն քանակը փոփոխական է. այսպէս օրինակ, երբ նոքա արածում են աղոտ դաշտերում և կամ ծովափնեաց տեղերում և կամ եթէ նոցա ձմրան կերած խոտը հաւաքած է այգուիսի տեղերից, այն ժամանակ պէտք է քիչ աղ տալ: Սովորաբար կթի կովերին տալիս են օրական 1—2 1/2 լոտ աղ, երբեմն և աւելի. հետեւապէս և տարեկան կհարկաւորուի 11 1/2—28 1/2 գրուանբայ: Աղը պէտք է խառնել կամ չոր կերի և կամ ամէնից լաւն է լալիլ հետ ու այնպէս գործածել: Նրբէք կովերի առաջ չպէտք է աղն այնպիսի կտորներ զնել, որ նոքա կարողանան միանգամից կուլ տալ, որովհետև այդպիսի կտորները ընկնելով կենդանու ստամոքսը, այնտեղի մաղասային թաղանթի բորբոքումն և պատերի վերայ վերքեն և ուրիշ հիւանդութիւններ են յառաջացնում:

Աւստրալի եզների եւ կովերի կերը. Չափաւոր աշխատութեան և կամ ձմեռը պարատ ժամանակ եղները սակաւ սնունդի պահանջ են զգուում: Միայն սաստիկ աշխատութեանց ծամանակ պէտք է ուշադիր լինել կանոնաւորելու նրանց կերը: Իսկապէս աշխատութեան ժամանակ ևս եղները համեմատաբար պակաս

սննդարար նիւթեր են պահանջում, մանաւանդ եթէ համեմատելու լինինք ձիերի հետ: Աւելի չնչին և բոլորովին անզգալի կլինի այս աշխատաւոր անասունները վերայ եղած ծախքը, եթէ կան հարուստ արօտատեղիներ: Կովերն ևս շատ անգամ ծառայում են թէ իրրև աշխատաւոր և թէ իրրև կաթնատու կենդանի: Աղքատ երկրագործները համար սա մի խնայողական միջոց է: Մատաղ կովերի աշխատութիւնը պէտք է չափաւոր լինի. չպէտք է չարաչար աշխատեցնել, որովհետև կենդանին այդ հասակի մէջ ղեռ բոլորովին զարգացած չէ լինում:

Աշխատութեանց միջոցին, նախ քան կերակրելը, եղներին պէտք է մի քիչ ժամանակ հանդիստ տալ, որպէս ղի բոլորովին հանգիստ դրութեան մէջ նոքա մօտենան կերին. նոյն խոկ աշխատելիս աւելի կամ պակաս չափով պէտք է հանդիստ տալ կենդանուն: Հակառակ զէպքում, բացի ուժաթափ լինելուց, որ անուղղելի կարող է մնալ, կենդանու սիրտը կլայնանայ, շնչարգելութիւն առաջ կգայ և վերջապէս արիւնը կարող է թունաւորուել: Մանաւանդ շատ չպէտք է տանջել եղներին խոնաւ սեւահողի և կամ առհասարակ փափուկ հողի վերայ աշխատելիս, որովհետև նոցա վիզը կարող է սաստիկ վնասուել:

Կերակրելիս կարևոր է ուշք դարձնել, թէ արդեօք սննդաւոր նիւթերից որո՞նք են միաններին ուժ տալիս: Իսկապէս կերերը երեք բաղադրիչ մասերն էլ պէտքական են դորա համար, բայց ամենից աւելի սպիտակուցը, որովհետև միանները բաղկացած են հէնց այդ նիւթից, որ աշխատութեան ժամանակ ծախուում է, խոկ ծախսածի տեղ նորը պէտք է տալ: Ահա այս պատճառով կարևոր է, որ եղները կեր լինեն սպիտակուցով հարուստ սննդարար նիւթերը: Միակ նպատակայարմար սննդարար կերը, որ կարող է ոյժ տալ աշխատող կենդանուն՝ միջակ յատկութիւն ունեցող մարգագետնի չոր խոտն է. առուոյստով և կամ որ և է ուրիշ տեսակ խոտով կերակրելիս հարկաւոր է յարդ ևս տալ. եթէ կարելի է ձեռք բերել, օգտակար է գործ ածել նաև մանրած արմատապտուղներ, բամբակի կուտ և գարեջրի դերտ կամ ակնուցը: Գարնանը, ամրանը և աշնանը, երբ դաշտում կանաչ կեր շատ կայ, եղներին փոխ առ փոխ աշխատեցնելով՝ բաւական կլինի միայն կանաչ խոտ տալ. բայց եթէ կենդանիները ստիպուած են առանց փոփոխութեան ամբողջ օրը աշխատել, հարկաւոր է կանաչ կերի վերայ աւելացնել նաև չոր կեր, ինչպէս օրինակ, յարդ կամ չոր խոտ: Չոր խոտ չեղած ժամանակ կարելի է գործ ածել գարեջրի դերտ կամ ակնուցը կամ կոպտոն (ЖМЫХИ):

Մասաչ կենդանիներին տրուած կերը ոչ միայն աշխատութեան միջոցով կորցրածի տեղը պէտք է լցնէ, այլ նաև մարմինը դարգացնէ. այդ պատճառով սոցա պէտք է աւելի մննդարար կերեր տալ, ինչպէս օրինակ, դարձ վարսակ, եգիպտացորեն և այլն: Ինչ վերաբերում է յարդին, սորա քանակը պէտք է մեծանայ կենդանեաց ամելու հետ միասին:

Եզներին ձմեռը պարտաւ ժամանակներում պէտք է թեթև կերակրել: Բայց թեթև ասելով չպէտք է խեղճերին այնքան դըրկել, որ նորա նուազեն, մաշուեն, հալառակ դեպքում դարնանը, որպէս զի նորա ընդունակ լինեն աշխատելու՝ հարկաւոր կլինի անհամեմատ մեծ չափով կեր դործ ամել: Բացի դրանից, որովհետև վերջ ի վերջոյ աշխատաւոր եզներին անպէտքացած ժամանակ պէտք է զերացնել իբրև մասցու՝ այդ պատճառն էլ աչքի առաջ ունենալով, ձմեռը պարտաւ ժամանակ նոցա պէտք է բաւականաչափ կերակրել լաւ գարնանացանի յարդով: Բայց աւելի օգտակար կլինի յարդի երբորդ մասի անց խոտ տալ և կամ յարդի վերայ աւելացնել գարեջրի զերտ կամ ակնուցք և կամ ամէն մի գլուխ անասունին 2—3 գրուանքայ քուսպ (կոպտան), վարսակ:

Գարնանային անդադար և ծանր աշխատութեանց միջոցին 1000 գրուանքայ (25 փ.) կենդանի կշիռ ունեցող եզի կերը պէտք է բարձրացնել և տալ դոնէ մինչև 35 գրուանքայ լաւ չոր խոտ և կամ 25—30 գրուանքայ միջակ յատկութեամբ խոտ և 1¹/₂ գարնց * վարսակ և կամ մի այլ տեսակ հասկի:

Աշխատաւոր եզներին կերակրելիս անհրաժեշտ է պահպանել մի քանի կանոններ: Ամէն անգամ եզներին նախ քան ծանր աշխատութեանց ենթարկելը երկու շաբաթ առաջ պէտք է լաւ կերակրել մննդարար նիւթերով. որովհետև այդ կերը ամրացած կազմութեամբ նոյն խի ամենաեռանդուն և ծանր աշխատութեանց միջոցին չի թուլանայ, չի նուազի: Ինչպէս աշխատելուց առաջ, նոյնպէս և կարճատե հանգստութեան միջոցին պէտք է աւելի զիւրամարս և մննդարար կեր տալ: Երբէք չպէտք է կերակրել նոցա խիտ կոշտ ու կոպիտ, դժուարամարս նիւթերով, որոնցից կենդանու ստամոքսը և աղերները սաստիկ լցուում, ուռչում են:

Ինչպէս կաթնատու կովերին, նոյնպէս և աշխատաւոր անասուններին պէտք է ամենայն օր որոշ քանակութեամբ աղ տալ: Եզներին համար՝ 2¹/₂—2 լոտ, որ տարեկան անուժ է 28¹/₂

* Ռուպ, ուպիկ, աուս:

—35 գրուանքայ: Մի խումբ եզներին միասին աղ տալիս, պէտք է իւրաքանչիւր 6 փութ կենդանի քաշի համար որոշել 1¹/₂—2 մսխալ:

Մասցու մեծ եղջիրաւոր անասուններին կերը. Մասցու մեծ եղջիրաւոր անասուններին կերակրել՝ նշանակում է աշխատել կեր տալով նոցա մարմնի մէջ հնար եղածին չափ մեծ քանակութեամբ միս և ճարպ հաւաքել: Այս նպատակով անասուններ պահողը պէտք է իմանայ, թէ ինչ մննդարար նիւթերից կենդանու մարմնի մէջ կարող է միս և ճարպ գոյանալ:

Մասցու անասուններին գերացնելու համար նախ և առաջ պէտք է աչքի առաջ ունենալ կենդանու անհատական առանձնայատկութիւնները, որոնք խիտ կարեւոր նշանակութիւն ունեն, որովհետև կան կենդանիներ, որոնք 3 փութ կերից իւրեանց մարմնի կշիռը աւելացնում են 7—8 գրուանքայով և կան կենդանիներ, որ միայն 2—3 գրուանքայով. այս դէպքում ևս տեսակի ընտրութիւնը նոյնքան կարեւոր է, որքան կարեւոր էր կաթնատու, առողջ, լաւ աշխատաւոր եղջիրաւոր անասուններ ընտրելիս: Կան այնպիսի մեծ եղջիրաւոր անասուններ, որոնց կերի մննդարար նիւթերը, շնորհիւ մարտդական գործարանի խիտ դարգացման, արագութեամբ միս են դառնում և այդպիսով կենդանու կշիռը աւելացնում. անհայտակիսները ձեռնառ են գերացնելու և նոցա ապագայում վաճառքի հանելիս մեծ շահ կստացուի: Իսկապէս այդ տեսակ կենդանիները ծնելու օրից սկսած համարեա լաւ են կերակրում, այդ պատճառով էլ մեծացած ժամանակ տրամադրել են գերանալու: Սոցա մէջ կերի մի և ճարպի փոխուելու ընդունակութիւնը այն աստիճան դարգացած է լինում, որ 1¹/₂—2 տարեկան հասակում անչափ մտաւից են դառնում: Սովորաբար այսպիսիներին միտը խիտ քնքոյշ և համեղ է լինում, այդ պատճառով էլ սրբա համեմատաբար աւելի մեծ գին են ունենում:

Գերացնելու համար ամենալաւ հասակը շուտ հասունացողներին նկատմամբ համարում է երկու տարեկանից ի վեր, խի դանդաղ հասունացողներին՝ չորս տարեկանից ոչ պակաս հասակը: Մեծացած, նոյն խի ձեր՝ 9—10 տարեկան եզներն ու կովերը զանդաղ են գերանում և տալիս են կոպիտ բնաթել ու կոշտ միս: Մեզանում գիւղացիներին համար խիտ ձեռնառ է գերացնել պակասութիւն ունեցող եզները և կովերը և ապա վաճառել: Որովհետև ձերացած եղջիրաւոր անասունները դժուարութեամբ են գերանում, այս պատճառով աննպատակ կլինի այդպիսիներին երկար ժամանակ կանոնաւոր կերակրել և ծախքեր անել:

Գերացնու համար խոշոր եղջիւրաւոր անասուններ ընտրելիս պէտք է ամենեց աւելի ուշադրութիւն դարձնել կենդանու մարմնի և մանաւանդ բնի կազմուածքի վերայ, որովհետեւ նորա ձեւից կախումն ունի կենդանու պարարտանալու ընդունակ լինելը: Կենդանու բունը պէտք է լինի երկար, և եթէ նորա մի որ և է մասից հաստութեամբ կտրենք, պէտք է մտաւորապէս քառակուսի ձև ստացուի: Կենդանու շնչին գին ունեցող մասերը՝ գլուխը, պարանոցը, ոտները պէտք է բարակ և մանր լինեն, կաշին բարակ, փափուկ, առածղական. այդ նշան է, որ կաշուի տակի խորշանիւթերը սաստիկ զարգացած են, այս պատճառով էլ շատ ճարպ կհաւաքուի: Կաշին ծածկուած պէտք է լինի փափուկ պառկած և հարթ մազերով: Բայց եթէ կաշին թոյլ է և հաստ, վերայի մազերը հաստ ու երկայն են, խոկ մարմինը երկայն ու բարակ, այդպիսի կենդանին հեշտութեամբ չի գերանայ: Գերացնելու կենդանին պէտք է հէնց սկզբից չափաւոր գէջ լինի, երակը կանոնաւոր լսվի, աչքերը փայլուն և ուտելու ցանկութիւնը չափաւոր լինի:

Եթէ մտացուի համար ընտրած եղջիւրաւոր անասունները սաստիկ աշխատելուց և կամ վատ կերակրուելու պատճառով նիհար են մնացել, հարկաւոր է մի առ ժամանակ լաւ կերակրել զիւրամարս նիւթերով, որպէս զի քիչ միս հաւաքեն, և նոցա մարսողական գործարանները սովորեն ընդունելու, մարսելու և իւրացնելու աւելի մեծ չափով սննդաբար նիւթեր, առանց որի գերացնելու նպատակով գործ դրած կերը թանգ կնստի և գլխացումը երկարատե կլինի: Միմիայն այսպիսի նախապատրաստական միջոցներ գործածելուց յետոյ պէտք է ձեռք զարկել Կորեզ միջոցներին: Այս շրջանը կտևի 2—3 շաբաթ:

Այսպիսի ժամանակ իրը կեր գործածուող նիւթերից ամեննից աւելի գործածականներն են՝ թէ չոր և թէ կանաչ խոտերի այլ և այլ տեսակները (մանաւանդ մարզագետնի), առւոյտը *:

* Կանաչ առույտով անասուններ կերակրելիս եւ կամ երբ վերջիններս արածում են առույտի դաշտերում, պէժ է խիստ զգայ լինել, որ նոցա որովայնը չուռչի, որից շատ անգամ անասուններն անեցանում են: Չոր կերից կանաչ առույտի անցնելիս պէժ է չափաւորութիւն պահպանել եւ ասիւնամաքար վարժեցնել նոցա այդ կերին: Այս դեպքում օգտակար է առույտի մէջ խառն յարդ սայ. վերջինիս քանակութիւնը պէժ է ասիւնամաքար պահպանել, իսկ առաջինը մեծացնել: Սկզբներում նոյն իսկ կարելի է ախտում նախ մի քիչ չոր կեր՝ խոտ, յարդ սայ, եւ ապա դուրս քել դաշտ: Առասուցները, քանի որ առույտի վերայ ցող կայ, երբէք չպէժ է անասուններին բաց բողկել արածելու. երկուայն էս, երբ ցօրը կրկին երեւան է գալիս, նոյնպէս պէժ է արգելի:

կարտոֆիլ, բադուկը (ճակնդեղ, տակ), հացահատիկները՝ խոշոր աղացած գարին, վարսակը, կոպտոնը (քուսպ) և այլն:

Եղջիւրաւոր անասուններին գերացնելու համար բացի նախապատրաստական կերից, պէտք է երկու տեսակ կեր ևս տալ, որով գերացնելը երեք շրջան է ունենում: Նախապատրաստական սնուցման նպատակն այն է, որ նիհար կենդանին միս բռնի. դորա համար պէտք է տալ կոշտ, բայց սննդաբար նիւթեր: Յետոյ սկսում է երկրորդ շրջանը. այդ ժամանակ մտտ կենդանուն պէտք է որոշ չափով գերացնել, պէտք է տալ ծաւալով մեծ նիւթեր, բաւականաչափ խոտ, դարնանացանի յարդ՝ ալիւրի կամ քուսպի հետ խառն. մի խօսքով խոշոր նիւթերով հարուստ և ճոխ կերեր: Աւելին՝ երրորդ, շրջանում պէտք է ուտացնել աւելի համեղ և զօրեղ կեր, մանաւանդ հարուստ սպիտակուցով, օրինակ՝ քուսպ, արմատապտուղներ, թեփով և գարի ալիւրով պատրաստած լափ, ինչպէս և կարտոֆիլ: Այս շրջանում կենդանին պէտք է կատարելապէս գերանայ, բայց որովհետեւ այդ ժամանակ կենդանեաց ախորժակը փակուում է, այս պատճառով պէտք է կերակրել փոքրածաւալ սննդաբար և դիւրամարս կերերով:

Աւերջերը, երբ մտացուն արդէն բուականաչափ գերացած է լինում, տալիս են նաև տեսակ տեսակ մանրած, խոշոր աղացած ու խմորած, նաև երբեմն համեղ և եփած կեր, օրինակ՝ մանրած հացահատիկներ, դարեջրի զիրտ և այլն: Իսկապէս եղջիւրաւոր անասուններին լաւ գերացնելու համար պէտք է նոցա կերակրել զանազան սննդաբար նիւթերից կազմած խառնուրդներով: Դիտատեսակ կեր տուած ժամանակ կենդանին աւելի ուշ է գերանում, աւելի շատ ժամանակամիջոց է պահանջում լաւ և առատ միս և ճարպ հաւաքելու *, գերանալու համար: Ընդեղէնները

Առաջին օրերում եղջիւրաւոր անասուններին առույտի դաշտերում կարելի է արածացնել 1—2 ժամ եւ ոչ աւելի, յետոյ արդէն այդ միջոցը կարելի է ասիւնամաքար երկարացնել. այնուամենայնիւ երբ առույտը դեռ մտաց է, երկու ժամից աւելի չի կարելի արածացնել: Անպայման անասակար է կանաչ առույտ արածելուց եւ կամ ախտում նոյնը ուտելուց յետոյ չոր սայր: Ոչ գարնան սկզբներին շատ վաղ եւ ոչ էլ խոնար ցուրտ եղանակներին անասուններին պէժ է տալ դաշտ կանաչ առույտ արածելու: Բայց երբ մի որեւէ պահանջով անասունները արածելու է իւր անասուններին բաց բողկել մի քանի անգամ առույտ բուսած դաշտում արածելու, այն ժամանակ պէժ է ուտողութիւն դարձնել, որ գարնան եղանակը եւ հոգը չոր լինի:

* Այսին յառաջ ենք բերում գիրացնելու համար Ռուսաստանում խիստ արածում մի միջոց, որ գործ է դրում արբեր կերեր սայով. այդ կերերի սայն էս պէժ է բաժանել եւ շիւրջաններին: Սկզբներում 1000 գրամակայ կենդանի կեփ

Լաւ և առատ կերակրելիս կենդանու քաշը սկզբներում աւելի մեծ չափերով է մեծանում, քան վերջերը. երբեմն օրական մինչև 6—7 գրուանքայ: Խմանալու համար, թէ ո՞ր ժամանակուանց սկսած կենդանու քաշը կըաղարի աճելուց, պէտք է կշռել, թէպէտ մեր գիւղացիները շատ անգամ իմանում են այդ նաև աչքի չափով:

Այստեղ առաջարկում ենք հասարակ և արագ կատարուող մի մօտաւոր միջոց: Նախ պէտք է չափել կենդանու երկարութիւնը վերջոյով՝ ճակատից սկսած մինչև պոչի արմատը, ապա քնի (կրծքի) հաստութիւնը՝ դարձեալ ճակատից սկսած առաջին ոտների ետևով մինչև կրկին ճակատը: Ստացուած վերջոյները զոյգ թուերը պէտք է բաղմապատկել, որոնց արտադրեալը ցոյց կտայ, թէ կենդանու քաշը քանի գրուանքայ է:

Եղջիւրաւոր անասունների գիրութիւնը կարելի է որոշել նաև մի այլ բաւական դործնական միջոցով: Պէտք է շոշափել կենդանու կոցերը, պոչի արմատը, ամորձիքը, աճուկները: Այդտեղերի ճարպի քանակութիւնը որոշելով, դաղափար կարելի է կազմել ամբողջ կազմուածքի մէջ եղած ճարպի քանակութեան մասին. բայց այս միջոցներով կարող են օգտուել միայն բաւականաչափ հմուտ անձինք*:

Ամիտիկներ մուսցու մեծ եղջիւրաւոր անասունները մասին մինչև այժմ մեր ատածը:

1. Կիրացնելու համար պէտք է ընտրել սնդակաղմ, ծանրակշիւ կենդանի:

2. Հարկաւոր է ընտրել այնպիսի համեղ, զիւրամարս կեր, որը շուտով մարսւում է և մսի ու ճարպի փոխուում: Առաւելւապէս օգտակար են հատիկները և արմատապտուղները, մանաւանդ եթէ դոցա հետ տրուել նաև անհրաժեշտ քանակութեամբ խոտ:

3. Պէտք է շուտ շուտ ուտացնել, օրական նոյն իսկ մինչև վեց անգամ, որպէս զի կենդանին հնարաւորութիւն ունենայ հէնց ախորժակը գալուն պէս ուտել: Խիստ բարեբար ազդեցութիւն է ունենում կերը, եթէ վերան քիչ աղ աւելացուի:

4. Մտացու անասունը որքան շատ ուտէ, այնքան աւելի օգտակար կլինի տիրոջը, որովհետև նոյնքան արագ կգերանայ, և աւելի քիչ ծախք կլինի նորան խնամելու համար:

* Լաւ գիրացած, 50 փութ կեղանի քաշ ունեցող եզր իւր մէջ պարուցակում է մօտաւորապէս 2 փութ աղիւն. կաթին, գլուխը, ոտները եւ լեզուն՝ 7 փութ, փորոսիքը՝ 3 փութ, միսը եւ հարպը՝ 30 փութ, ստամոքսում եւ աղիքներում եղածները՝ 8 փութ: Իւրաքանչիւր 100 մաս մսին կհասնի 20—30 մաս ոսկր:

5. Նիհար և երկար ժամանակ քաղցած մնացող կենդանիներին սկզբներում մի անգամից չպէտք է առատ և թանկագին կեր տալ, որովհետև նոցա ստամոքսը սովոր չէ շատ կեր ընդունելու և մարսելու. բացի դրանից նիհար կազմուածքը շատ թըթուածին ներշնչելով, խիստ կերպով կսկսէ քայքայել կերից ջուրը և սպիտակուցը:

6. Պէտք է անպայման հանգիստ վիճակի մէջ պահել գիրացող կենդանուն. ախորձ պէտք է տաք և մութ լինի:

Գ.

Ծնունդ. Մեծ եղջիւրաւոր անասուններից կաթնոտ կովերը և լաւ ցուլեր պատրաստելու համար պէտք է նոցա քաղ ուտեցնել (զուգաւորել) 2—2½ տարեկանից ոչ շուտ, թէպէտ և կենդանիների իւրաքանչիւր տեսակի համար դժուար է առաջին մերձաւորութեան բոլորովին ճիշտ ժամանակը որոշել, որովհետև այդ կախուած է զանազան հանգամանքներից և պայմաններից: Պայմաններից ամենակարեւորը այս կամ այն կենդանու շուտ կամ ուշ հասունանալու առանձնայատկութիւնն է: Շուտ հասունացող կենդանիները մերձաւորութիւնը պէտք է տեղի ունենայ աւելի վաղ: Շուտ հասունանալը ժառանգական չէ, նա կախումն ունի առատ սննդաբար կերակուր ստանալուց մէջ միայն ծնուելու օրից սկսած, այլ նոյն իսկ մօր արգանդում եղած ժամանակ և մի քանի այլ պայմաններից:

Նովի քաղ ուտելու ցանկութիւն ունենալը իմացում է այն ժամանակ, երբ արգանդի արտաքին հանգոյցը ուռչում է և սեռական անդամից սկսում է հոսել մի տեսակ լորձիւնոտ հեղուկ. կենդանին անհանգիստ է լինում, ախորժակը կորցնում է, իսկ կաթնատու կովերի կաթը նուազում է:

Մերձաւորութիւնը լինում է ընական, երբ ցուլն ու կովը միասին են արածում և կամ միասին են ապրում միևնոյն ախոռում: Բնական մերձեցման դէպքում մի ցուլը կարող է մօտենալ տարեկան 30—40 կովի, որոնցից զըսքը (անպտուղ) են մնում սովորաբար 4—5 կով: Մեր երկրի համար անպայման օգտակար է այս եղանակով մերձաւորութիւնը: Ակամայ մերձաւորուելու դէպքում մի ցուլ կարող է մերձենալ մինչև 150 կովի: Մերձաւորութեան ժամանակ միշտ պէտք է աչքի առաջ ունե-

նալ հետևեալը. ա) Կովը պէտք է մերձաւորուի այն ժամանակ միայն, երբ արգանդը սկսում է հոսել լորձիւնոտ հեղուկ. բ) ցուրը օրական միայն մի կովի պէտք է մերձենայ և ոչ աւելի. գ) մերձաւորութեան դէպքում չպէտք է աղմուկ և աւերորդ մարդիկ լինեն: Եթէ կովը յղացած չլինի, 15—30 օրից յետոյ նորա արգանդից նորից կսկսէ հոսել լորձիւնոտ հեղուկ. ահա այդ ժամանակ պէտք է տեղի ունենայ երկրորդ մերձաւորութիւնը: Յղութիւնից յետոյ կովն այլևս չի թոյլ տալիս, որ ցուլն իրեն մօտենայ և այդ համարում է ամենահաստատուն միջոց խմանալու համար, թէ կովը յղի է, թէ ոչ:

Կովի յղութիւնը. Կովի յղութիւնը տևում է 240—321 օր. մեծաւ մասամբ 285 օր, այսինքն 9 ամիս 15 օրից աւելի: Յղացած երկնջի ստինքը (ծիծը) յղութեան երկրորդ կեսից յետոյ, երբ սովորաբար հորթը սկսում է շարժուել արգանդում, սկսում է դարգանալ: Յղի կովին պէտք է շատ լաւ և զգուշաւոր կերպով խնամել. նորան պէտք է հեռու պահել ամէն տեսակ հարուածներից, խիեղուց, չպէտք է վաղեցնել, աշխատեցնել: Լաւ կլինի յղի կովերին պահել առանձին ակոռներում, որտեղ ներս ու դուրս անելը պէտք է շատ զգուշութեամբ և մէկ մէկ տեղի ունենայ. միաժամանակ միևնոյն դռնից երկու անասուն (մէկը յղի) չպէտք է անց կենայ: Հովիւը պարտաւոր է ուշք դարձնել, որ հոտի մէջ յղի կովերը չկուռեն և եղջիւրներով կամ ոտներով իրար չհարուածեն: Լաւ կլինի դարձանք, երբ սովորաբար հօտի մէջ շատ կովեր են յղի լինում, հովիւները թիւը աւելացուի: Խիտ ծանրացած յղի կովերի համար վաանդաւոր է, երբ նորա ստամոքսը արագութեամբ սառչում է. այսպիսի դէպքերում շատ անգամ կովերը վիժում են, այս պատճառով պէտք է զգուշաւոր լուց, մանաւանդ դուրսը և շատ սառն կամ եղեամով ծածկուած կեր ուտացնելուց:

Օրպակաս ծնունդը և վիժումը երբեմն տեղի է ունենում ժամանակից 3—5 շաբաթ առաջ. այսպիսի հորթը դեռ կարող է ապրել, բայց սովորաբար կովերի վիժումը տեղի է ունենում յղութեան 5—7 ամիսներում: Վիժումը լինում է անհատական և տարափոխիկ: Անհատական վիժումը կապուած է ինչպէս վերևն յիշեցնիք, անզգոյշ հարուածելը, չափազանց կեր գործածելը և մի քանի ներքին հիւանդութիւններն են: Եթէ վիժումը պատահական բնաւորութիւն ունի, այդ ոչինչ, թէպէտ մի անգամ վիժող կովը ընդունակ է դառնում ուրեշ անգամ ևս նոյնը կրկնելու: Տարափոխիկ կամ փոփոխական վիժումը կապ-

ճառը վարակիչ մի նիւթ է, որից աղատ պահելու համար անհրաժեշտ է անմիջապէս բոլոր դեռ ևս չվիժող անասուններին մի նոր բնակարան տեղափոխել, նոր մշակ վարձել և, թէ բնակարանը, և թէ կենդանիներին և մանաւանդ սոցա սեռական գործարանները արտաքին մասերը լաւ ակտահանել՝ լուանալով կարբօլաթթուի 20|0 լուծուածքով: Հարկաւոր է ակտահանել նաև ակոռի պատերը, յատակը և առաստաղը և այնտեղ գտնուած բոլոր իրերը նախ կայաքարով (шелокъ) և ապա սուլեմի կամ կարբօլաթթուի լուծուածքով:

Յղի կովերին պէտք է լաւ և աւատ կերակրել, որովհետև նորա, բացի իւրեանց մարմնից, սնունդ պէտք է մատակարարեն նաև արգանդում եղած հորթին: Երբէք չպէտք է կերցնել մզլուտած, փչացած խոտ, կամ սառած արմատապտուղ, հում կարտօֆել, վերան եղեամն լծած կանաչ խոտ և չն: Քանի որ կովը զգալի կերպով չէ պահասեցնում իւր կաթը, կերի 1|5 կամ 1|2 մասը պէտք է լաւ խոտ լինի, վերան աւելացրած զօրեղ կեր՝ թեփ, կոպտոն և այլն և արմատապտուղ: Սովորաբար յղի կովերին կթելը պէտք է դադարեցնել ծնելուց 4 շաբաթ առաջ: Քանի որ կաթը պահասում է, զօրեղ կերի, երբեմն նոյն իսկ արմատապտուղի քանակն ևս պէտք է պահասեցնել: Ծնելուց առաջ կովի կերի մեծ մասը և կամ ամբողջ կերը պէտք է բաղկացած լինի լաւ խոտից: Ծնելու մօտ օրերին կովերին առատ զօրեղ կեր տալով գերացնելը վնասակար է, որովհետև ծնելուց յետոյ ստինքի բորբոքում կարող է յառաջանալ:

Ծնելու մօտ ժամանակները կովին կարելի է թողնել միւս կենդանիների մօտ ընդհանուր ակոռում, եթէ միայն ակոռը բաւական տար է և միւս անասունները կապուած են և աղատ, արձակ կերպով տեղաւորուած, հախառակ դէպքում պէտք է պահել առանձին ակոռում կամ յարմարաւոր բնակարանում:

Հորթի գրութիւնը մօր արգանդում բնական վիճակի մէջ այսպէս է լինում. նորա առաջին երկու ոտները միասին առաջ են ձգուած լինում. որոնց վերայ գրուած է դէպի առաջ երկարացած դուրսը. մէջքը ուղղուած է լինում մօր մէջքի կողմը: Այսպիսի հանգամանքներում հորթը լոյս աշխարհ դուրս գալու համար ոչ մի կողմնակի օգնութիւն չէ պահանջում: Բայց երբեմն ծնունդը ուշանում է այն պատճառով, որ սաղմնաբշտիկը չի պատառում, թէպէտ հորթը կանոնաւոր վիճակի մէջ է, բայց չի դուրս գալիս արգանդի ուժաթափ լինելու և վերջինս անցքը փակուելու պատճառով, և կամ երբ շատ քիչ անկանոնութիւն է տեղի ունենում: Եթէ երկուսը տեղի է ունենում, բայց

լով, կսկսեն շատ գլրանալ և հեշտութեամբ ստամոքսի խանգարումն կտանան:

Ծնելուց մի քանի ժամ յետոյ միայն, երբ նորածին հորթը ոտքի է կանգնում, պէտք է խմացնել անպատճառ մօր առաջին կաթից (դալից) և ապա այդպէս 8—10 օր շարունակ պէտք է տալ միմիայն մօր կաթը, սկզբներում առանձին խնամքով և ապա այդ նպատակով պատրաստած առանձին ամանից (майка): Նատ տեղերում մօր կաթը գործ են ածում եփած: Իսկապէս երբէք չպէտք է գրկել հորթին մօր սկզբնական կաթից՝ դալից, որովհետեւ այդ կաթը շատ օգտակար է և մաքրում, կանոնաւորում է հորթի ստամոքսը: Միայն կարեւոր է առաջին ծնի կովերի մօտ թողնել իւրեանց հորթերին. այդպիսի կովերը սովորաբար սահաւ կաթ են տալիս. նոցա ծծելը նպաստում է կաթի արտադրութեւն: 3—4 ժամից յետոյ հորթը քաղց կզգայ և կսկսի մայր կանչել: Սկզբներում մշտապէս իւրեանց մօր կուրծք ծծելով, հորթերը այդպիսով զարգացնում են իւրեանց մայրերի ստինքը: Ոմանք նոյն խի այս դէպքում անգամ մօր ծծեցնելն ուղղակի անօգուտ և նոյն խի վնասակար են համարում, և դերադասում են վերեւ յիշած արհեստական եղանակով սնուցանելը: Այդ եղանակով հորթեր մեծացնելու պակասութիւնն այն է, որ դժուար կլինի հորթի համար նշանակել կաթի մի այնպիսի չափ, ինչպիսին այդ պահանջում է նորա մարմնի զարգացումը: Լաւ կաթնոտ կովը սկզբներում այնքան կաթ է տալիս, որ նոյն խի 2—3 հորթի կարող է բաւականութիւն տալ: Եթէ թողնենք հորթին կովի մօտ նոյն խի մի որոշ ժամանակ, այնուամենայնիւ դարձեալ դժուար կլինի հաւատալ, թէ նա իւր չափն ստացաւ, որովհետեւ հորթն ամէն անգամ դժուար թէ մի և նոյն եռանդով սկսի ծծել մօր կաթը, և բացի դրանից առաջին հորթերին կերակրելու մի անյարմարութիւնն էլ այն է, որ շատ հոգս և խնամք է պահանջում: Եթէ նախ կթենք կովի կաթի մի մասը (ինչպէս այդ անում են շատ տեղերում), իսկ մնացածը թողնենք հորթին ծծելու, կարող է փորլուծութիւն յառաջանալ, որովհետեւ մնացած կաթը չափազանց իւղոտ է լինում. ապա այն կովը, որի մօտ ժամանակ առ ժամանակ թողնում են հորթը, երբեմն խիստ յամառութեամբ պահում է կաթը և ոչ մի կերպ՝ ոչ շփելով, ոչ փայփայելով և ոչ սեղմումներով և այլ մեջոցներով հնարաւոր է լինում կաթ ստանալ. այսպիսի դէպքում տանտիկինը ստիպուած է լինում միաժամանակ և՛ կթել, և՛ հորթին ծծեցնել, իսկ այդ շատ անյարմար է, որովհե-

տե ամէն ժամանակ դժուար կլինի կովիկթը պաշտպանել հորթի յարձակմունքներէ: Կաթը կիեղտոտուի, կթողը անհանգիստ կլինի և շատ դժուարութեամբ կկարողանայ միանգամից երկու խաչմերուկ ընկած պտուկներէ կթել: Բայց իսկապէս ուղղակի մօրից ծծելն ևս ունի իւր առաւելութիւնները. հորթը ստանում է չափազանց մաքուր և բնական տաքութեամբ կաթ, հէնց սորանով էլ բացատրում է այն հանգամանքը, որ մօրը ծծող հորթերի մէջ մահուան դէպքեր աւելի սահաւ են տեղի ունենում, քան միւսաների մէջ: Աւելի զգալի է այդ բանը ծծելու առաջին երեք օրերում, սրի պատճառով շատ կովատէրեր, թէպէտ հորթին չեն թոյլ տալիս մշտապէս ծծելու մօրը, բայց այս սկզբի օրերի համար բացառութիւն են անում: Այնուամենայնիւ փորձերը ցոյց են տուել, որ մօրից հեռու խնամուած հորթերը կարող են շատ լաւ ապագայ խոտանալ, եթէ արթուն հսկող լինի կաթի մաքրութեան, տաքութեան, խնամելու կանոնաւորութեան վերայ:

Սկզբներում չպէտք է արհեստական կաթնամաններ (ПОПЛЬНИКИ) գործածել, որովհետեւ այդպիսի ամանների պտուկները հեշտութեամբ են կեղտոտում և պատճառ դառնում փորլուծութեան և շատ տարափոխիկ հիւանդութիւններ: Առաջին անգամ աւելի յարմար և օգտակար է ճանաչուած սովորեցնել հորթին կաթ ծծելու մասին վրայից, թեքելով հորթի դուռը դէպի կաթով լի ամանը: Գորս համար ձեռքի մեջին մատը պէտք է դնել հորթի բերանը, նա կսկսի ծծել և ծծելիս ներս կբաշէ նաև կաթը. այդ ժամանակ մատը պէտք է քիչ դուրս քաշել և այդպիսով առաւելանաբար սովորեցնել հորթին կաթ խմելու ուղղակի ամանից: Մինչև առաջին շաբաթուայ վերջը պէտք է աշխատել սովորեցնելու, որ հորթը առանց մէկի օգնութեան ամանից կաթ խմէ, դուրս քաշելով բերանից ժամանակ առ ժամանակ մատը և դուռը բռնելով կաթի մէջ: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ տէրը ամբողջ ժամանակը առանձին ուշք պէտք է դարձնէ մաքրութեան վերայ. ամանը պէտք է լաւ լուացած լինի. վատ չի լինի, եթէ ժամանակ առ ժամանակ ձեռները, կովի կուրծք

* Հորթերի կարով կերակրելու համար հնարել են զանազան գործիքներ: Իոցանից մէկը, օրինակ պ. Իասովի հնարածը (Իիսպակեն Բաղաբաւ) կովի սիւնի մի պահէնն է ներկայացնում: Նա ներկայացնում է կարով լի մի աման, որ վերջանում է գուսսայերից պարսասած պտուկներով: Կարն այդ պտուկներից հոսում է միայն այն ժամանակ, երբ հորթը սկսում է ծծել: Այդ գործիքի զինն 7 բարի է: Կարելի է բերել սալ „Работники“ ընկերութեան միջոցով:

լուսացունին կրօնըսով: Հորթին տուած կաթը բացի մաքուր լինե-
լուց պէտք է ունենայ այնքան տաքութիւն, որքան տաքութիւն
ունենում է մօր ստինքի կաթը, այն է՝ 25—26°: Այս նպատա-
կին հասնելու համար երբէք խորհուրդ չեն տալիս կաթի վերայ
տաք ջուր աւելացնել, որովհետեւ աւելորդ ջրի քանակութիւնը
թուլացնում է հորթի մարմնի կազմուածքը և՛ անընդունակ
դարձնում կուռելու հիւանդութիւնները դէմ. մարտդութիւնն
էլ նուազում է:

Որովհետեւ նորածինների ստամոքսը փոքր է լինում և թոյլ,
դորա համար առաջին շաբաթուայ ընթացքում պէտք է
շուտ շուտ կերակրել՝ օրական 5—7 անգամ, ապա միւս շա-
բաթներում աստիճանաբար նուազեցնելով հասցնել մինչև 3 ան-
գամի: Երկրորդ, երրորդ և այլ շաբաթներում օրական այնքան
անգամ պէտք է կաթ տալ, քանի անգամ որ կթում են կովե-
րին: Բայց նայած հանգամանքներին կարելի է նաև շեղուել այս
կանոնից. այսպէս, օրինակ. կարիք չկայ անպայման ամէն ան-
շուած է. եթէ հորթը լինչ լինչ պատճառներից ստիպուած ա-
խորժակ չունի և անկարող է սրջուած չափով կաթ խմել,
չպէտք է ստիպել, հակառակ դէպքում կարող է մարտդութիւնը
խանգարուել: Հորթերը փորլուծութիւնը այնքան վնասակար է
նոցա կեանքի զարգացման համար, որ ապագայում դժուար կլի-
նի այլ ևս ուղղել: Փորձերից երևացել է, որ մի քանի անգամ
փորլուծութեան ենթակայ եղած հորթերից յառաջանում են
համեմատաբար մանր անասուններ:

Եթէ հորթը սնուում է հեռու մօրից, պէտք է ուշադրու-
թիւն դարձնել ամէն անգամ արուելիք կաթի քանակութեան
վերայ: Փորձը ցոյց է տուել, որ առաջին շաբաթուայ մէջ պէտք
է այնքան կաթ տալ, որքան ծանրութիւն կունենայ նորա մար-
մինը նոր ծնուած ժամանակ: Այսպէս, օրինակ, առաջին անգամ
պէտք է տալ միայն 1/40 վեգրօ կաթ, իսկ յետոյ աստիճանաբար
շատացնել: Չպէտք է մոռանալ, որ հորթի մարմնի աստիճանա-
բար զարգացումը և առողջութիւնը յաջող ընթացք կարող է ունե-
նալ այն ժամանակ միայն, երբ կերի փոխօրսութիւնը աստիճա-
նաբար և մեծ զգուշութեամբ է տեղի ունենում: Մի քանի շա-
բաթներ անցնելուց յետոյ երես չքաշած կաթի քանակութիւնը
պէտք է սահաւ առ սահաւ պահանք և ընդհակառակը, երես
քաշածինը աստիճանաբար աւելանայ: Նոյն կերպ պէտք է վա-
րուել նաև յետոյ ուրիշ կեր գործածելիս: Ընդհանրապէս կա-
թով կել ա՛րելուց (16 շաբաթից) յետոյ, պէտք է աշխատել, որ

չոր տեսակի կերը հարուստ լինի սպիտակուցով և ճարպով, որով-
հետև հորթի կազմուածքը այդ ժամանակներում խիստ արագ է
աճում, իսկ մըս և սիւրը կազմող նիւթը կերի սպիտակուցն է
և ճարպը կենդանու համար այնպիսի սննդարար նիւթերիցն է,
ինչպիսին են միւս մ'նացած ոչ բօրակային նիւթերը և դեռ 21/2
անգամ զօրեղ: Թէպէտ հորթին կոշտ կերի՝ խոտի և այլ նիւթե-
րի պէտք է սովորեցնել ծնելուց 10—12 շաբաթ յետոյ, բայց
դեռ մի ամսական հասակում շատերը խորհուրդ են տալիս փո-
ձել գործ ածելու այդպիսի կեր, որովհետև այդ հասակից սկսած
հորթի ստամոքսը սխուժ է քիչ քիչ զարգանալ և նորա մէջ
որոճալու գրգիռ և ախորժակ երևան դալ: Միջակ հասակ ու-
նեցող հորթերի համար պէտք է աչքի առաջ ունենալ կերի հե-
տևեալ աղիւսակը.

	երես չխաւած.	խաւած.
Առաջին շաբաթում պէտք է տալ ան- պատճառ մօր կաթից	23 կրուժկա ¹ «	»
Երկրորդ «	» 32 «	» «
Երրորդ «	» 34 «	» «
Չորրորդ «	» 37 «	» «
Հինգերորդ «	» 40 «	» «
Վեցերորդ «	» 42 ^{1/2} «	» «

Սրանից յետոյ պէտք է գործ ածել նաև երես քաշած կաթ.

Եօթներորդ «	» 40 «	»	10 կրուժկա
Ութներորդ «	» 34 «	»	18 «
Իններորդ «	» 25 «	»	28 «
Տասներորդ «	» 16 «	»	40 «
Տասնամէկերորդ «	» 7 «	»	48 «
Տասնևերկուերորդ «	» » «	»	55 «
Տասնևերեքերորդ «	» » «	»	43 «
Տասնևչորսերորդ «	» » «	»	30 «
Տասնևհինգերորդ «	» » «	»	15 «

Այսպիսով ուրեմն 16 շաբաթուայ ընթացքում հորթի հա-

1. 20 կրուժկան մի վեցրօ է, մի վեցրօ կարը 31 գրուանայ է:
2. Իսկապէս երես չխաւած կարի այս ասիւնան մեծ քանակութեամբ
ծախսելը քայստիլի է այն տեղերի համար, որտեղ կարի վեցրօն 50 կոպէկից
քանգ չէ. քանգ եղած տեղերում պէ՛տ է երես չխաւած կարի քանակը պակ-
սեցնել եւ աւելացնել երես քաւածից:

մար կըրև սնունդ կարող է ծախսուել մօտաւորապէս 33 վեդրօ երես չքաշած և 28 վեդրօ քաշած կաթ:

Վեց շաբաթական հորթին երես քաշած կաթի տեղ կարելի է տալ 10—12 կրուժկա թան, միայն հետեւեալ իւրաքանչիւր շաբաթուայ համար պէտք է տասնական կրուժկա աւելացնել: Երբ հորթը որոշ հատակի է հասնում, բացի կաթից պէտք է տալ նաև կըրև կեր այս կամ այն յարմարաւոր նիւթը: Ութներորդ շաբաթից սկսած օգտակար է տալ նաև լրացուցիչ կեր. այսպէս, օրինակ, կաթի հետ քիչ քանք ջուր խառնել և ապա դորա վերայ աւելացնել քիչ քանակութեամբ ոչ շատ մանրած հատիկներ, ալիւրի, վուշի թեփ, դարու, վարսակի, հաճարի և կամ վուշի սերմերից պատրաստած ալիւր, մանրած հաց, որով կտացուի մի տեսակ լափ (ПОЙЛО): Այս ժամանակուանից սկսած կարելի է գործ ածել նաև քիչ քանակութեամբ չոր և լաւ խոտ: Ինքն ըրտ ինքեան հասկանալի է, որ երես չքաշած կաթի աստիճանաբար պակասելովը, աւելանում է երես քաշած կաթի և մի այլ յարմարաւոր կերի, օրինակ, ալիւրի քանակութիւնը: Տասներորդ շաբաթից սկսած կարելի է աւելացնել նաև շիճուկ, նախ 4 կրուժկա օրական և ապա մինչև 13-րդ շաբաթում հասցնել 6 կրուժկի: Շիճուկը կարելի է գործ ածել մինչև 20-րդ շաբաթը, միայն շաբաթական պէտք է պակասեցնել մէկ մէկ կրուժկա, այնպէս որ 15 և 16 շաբաթներում միայն մի անգամ տալ և 18, 19-րդ շաբաթներում դարձեալ մի անգամ և վերջ: Տասներեք շաբաթական հորթին պէտք է շարունակել տալ երես քաշած կաթ, միայն այս ժամանակից սկսած սկսում է պակասել նաև երես քաշած կաթի քանակը, այնպէս որ 16-րդ շաբաթուայ մէջ պէտք է բոլորովին դադարեցնել կաթի գործածութիւնը և փոխարէնը օրական մի անգամ աւելացնել մէկ գրուանքայ չոր, մանրած, փշրած վարսակ: Քսաներորդ շաբաթից, այսինքն հինգ ամսից յետոյ հորթին ամենայն օր պէտք է տալ մինչև 12 գրուանքայ լաւ չոր խոտ և 4 գրուանքայ ալիւրից ու 2 գրուանքայ թեփից լափ և նորանից յետոյ շարունակել կերակրելը այնպէս, ինչպէս սովորաբար կերակրում են մեծ եղջիւրաւոր անասուններին: Նա աւեղերում 4—5 ամսական հորթին սովորեցնում են ուտել բացի ամենալաւ տեսակ չոր խոտից և թխած հացից, նաև ոչ շատ մանրած վարսակից, հաճարի թեփից, վուշի սերմերից ստացուած ալիւրից կազմած մի կեր, որի վերայ երբեմն աւելացնում են նաև բազուկ (ճակնդեղ) կամ մի այլ բանջար: Հորթերին սովորեցնում են ուտել նաև ինչպէս վարսակի փշրանք (дробина), նոյնպէս և գարու, հաճարի, եգիպ-

տացորենի, վուշի սերմեր, շաղգամ (рѣпа), կոպտոն: Եթէ կարելի է համարուում չորս կամ հինգ ամսական հորթին արածելու աւղարկել, պէտք է նոցա յաճախ տալ նաև ոչ շատ մանրած վարսակից, ալիւրի և վուշի թեփից պատրաստած մի կեր՝ վերան նախօրօք աւելացնելով քիչ աղ:

Հորթերին երբէք չպէտք է ուտացնել վուշի կոպտոն մինչև որ նորա չդառնան 16 շաբաթական. այդ հասակից սկսած պէտք է ամէն մի հորթին նախ օրական 1/2 գրով և ապա աստիճանաբար շատացնելով մինչև մի տարեկան դառնալը հասցնել այդ չափը 5 գրուանքի:

Իբրև սնունդ ալիւրը և հատիկներից պատրաստած կերը պակաս նշանակութիւն ունին, մի քանիսը թանկութեան պատճառով, ինչպէս օրինակ, ցորենը, իսկ միւսները սակաւ օգտակարութեան և առողջութեան անվտանգութեան պատճառով, որովհետև կարող են մարսողութիւնը խանգարել, արեան վնասակար թանձրութիւն և այստեղից էլ ոտների անգամալուծութիւն յառաջացնել: Վուշի սերմերը բացի նրանից որ երկնջին հեշտ եղանակով և չնչին ծաւալով բաւականաչափ անդարար նիւթեր են մատակարարում, մի կարևոր նշանակութիւն ևս ունի. նորա լրացում են երկնջի կերի միջի ճարպի պակասութիւնը: Այդ պակասութիւնը կերի մէջ յառաջացաւ նրանից, որ երես չքաշած կաթի տեղ սկսեցինք գործ ածել քաշածը: Կերի մէջ ճարպի պակասութեան, թերութեան առաջը կոպտոն գործածելով չի կարելի առնել, որովհետև այդ վերջինը չէ նպատակում կենդանու մարմնի աստիճանաբար զարգացմանը: Վուշի աղանձած սերմերը թեթեւ լուծի ժամանակ շատ լաւ միջոց է մատաղ կենդանու ստամոքսի գործունէութիւնը կանոնաւորելու:

Փորձերը ցոյց են տուել, որ մի քանի տեսակ հատիկներից, ինչպէս, օրինակ՝ վարսակից, դարուց և հաճարից կազմած խոտն կերը աւելի լաւ ներգործութիւն է ունենում հորթի մարմնի զարգացման վերայ, քան մի տեսակից կազմածը: Եթէ անասնատէրն ունի բաւական չափով սիսեռ, ոոպ և այլ նոյնանման նիւթեր, պէտք է գործ ածել, միայն ամէն անգամ քիչ քանակութեամբ. աւելի նպատակաշարժար և օգտակար կլինի գործ ածել նոցա մանրած տեսակը լաւ խոտից պատրաստած թէյի հետ, իսկ այս վերջինս պատրաստում են հետեւեալ կերպով. վեր են առնում լաւ չոր խոտ, վերան լցնում են եռացրած ջուր և թողնում 5—6 ժամ. այդպիսով ստացւում է խոտի թէյ: Այս

Թէկէջ մեծ քանակութեամբ չի կարելի գործ ածել, ամենաշատը օրական 6—8 կիլարտ, հակառակ դէպքում կենդանին կսկսէ թուլանալ և նորա որովայնը կսխ կընկնի:

Հորթերին չոր խոտ կարելի է տալ նոյն խոտ նոցա կեանքն այն շրջանում, երբ դեռ կերակրուում են միմիայն երես չքաշած կաթով, որովհետև դէպ այդպիսի կերն ունեցած գրգռուը նոցա մէջ շատ վաղ է երևան գալիս, միայն այդ խոտը յատկութեամբ պէտք է լինի ամենալաւը, փափուկը և անուշահոտը և չպէտք է բակլայն բոյսերի (бобовое растение) կարգէջ լինին, որովհետև դոքա դժուարութեամբ են մարսուում: Այլ կերպ պէտք է վարուել կանաչ կերի հետ, քանակութեամբ շատ քիչ պէտք է լինի. օրինակ՝ մանրած կարմիր առուոյարը շատ օգտակար է, որովհետև վերջնիս հետ կերի մէջ մտնում է մեծ քանակութեամբ կիր, որ շատ կարեւոր է Ֆիզիքապէս աճող կենդանու համար: Հէնց այս նպատակով խորհուրդ են տալիս հորթերին տալ ուղղակի կերի վերայ ցանած կուլիճի փոշի և կամ ուղղակի կտորներով դնել մտերքի մէջը, հակառակ դէպքում մատաղ ստամոքսում կրն պակասութեան և մեծ քանակութեամբ դանաղան թթուներ յառաջանալու պատճառով հորթերի սակրները պակասաւոր կլինեն, նոքա հեշտութեամբ կկոտորուեն, և դանաղան հիւանդութիւններ կյառաջանան: Ախորժակ բաց անելու և կերէջ դալի օգուտներ ոտանալու համար օգտակար է գործ ածել աղ. ամէն մի հորթին օրական մի մի մսխալ: Այս վերոյիշեալ բոլոր խորհուրդները պէտք է գործադրել այն ժամանակ միայն, երբ հորթը ծնելուց յետոյ մօր մօտ ակոռում մտնում է միայն մի ժամ չորանալու նպատակով. հակառակ դէպքում պէտք է փոփոխութիւններ մտցնել:

Երբեմն հորթերի կաշուի վերայ կաշտ մաղեր են դուրս գալիս, այդ նշան է, որ նոցա կերն անբաւարար է: Երբէք կերի պակասութեան պատճառով չպէտք է կենդանու մարմնի զարգացմանը արգելք դառնալ, որովհետև այդ ժամանակ կենդանու հատակը խիստ մեծ քայլերով է առաջ գնում և հակառակ վարուելով այդ աճեցմանը, կենդանին կսկսէ նուազել, նոցա ցեղը կայլասեւորի: Բնդհակառակն, երբ շօշափելիս կաշին սաստիկ կակուղ երևայ, նստատեղի բլրակներում ճարպային թմբիկներ երևան, այդ նշան է, որ հորթերը չափազանց առատ են կերակրուում, որը, ի հարկէ, վնասակար է նոցա ապագայում աալքը կաթի առատութեանը:

Հորթեր կերակրելիս ամենից տւելի կարեւոր է ուշք դարձնել մօքրութեան վերայ, որովհետև շատ հեշտութեամբ կարող

է վորլուծութիւն առաջ դալ, որ խիստ վտանգաւոր կարող է լինել և մինչև անգամ պատճառ դառնալ վարակիչ, ասորափոխիկ հիւանդութեան: Հորթերին խմացնելուց յետոյ մնացած կաթն այլ ևս չպէտք է գործ ածել միւս անգամ. ամէն անգամ կաթնամանը պէտք է լուանալ տաքացրած ջրով: Եթէ հորթը ստամոքսի խանգարմունք ունի, պէտք է տալ լաւ եփած, բայց քիչ սառած կաթ: Եթէ այդ չօգնէ, պէտք է կաթի վերայ աւելցնել խորոված և սղիած, փշրած հաւի ձու և կամ, ինչպէս վերէն էլ ասացինք, փոքր ինչ բոված վուշի սերմեր տալ:

Ամենայն օր հարկաւոր է հորթերի տակ ածել նոք և թարմ փռուածք, որպէս զի նոքա թաց կամ խոնաւ աղբի վերայ չմընան: Սկզբներում, մինչև երեք ամիս, հորթերին չպէտք է միատնիս պահել, անհրաժեշտ է ամէն մէկին առանձին առանձին տեղաւորել, հակառակ դէպքում նոքա կսկսեն լրար լիզել և կուլ կտան լրար մաղեր, որոնք ստամոքսում խճճուելով և կաշտեր կազմելով, արգելք կդառնան մարսողութեանը. երեք ամիս անցնելուց յետոյ միայն կարելի է խնամել միատնիս:

Հողանդացիները առաջին երկու երեք ամիսները, ինչ եղանակ սւղում է լինի, հորթերին դուրս չեն թողնում. այդքան ժամանակ անցնելուց յետոյ միայն դուրս են թողնում և վաղում ցանկապատ և առաջուց հնձած մի տեղ, որտեղ և կերակրում են: Հինգ ամսից յետոյ թէ ցերեկը և թէ գիշերը (ի հարկէ ամառը) հորթերին պահում են այդ ցանկապատ տեղերում: Արօտատեղերում արածելու թողնում են մի տարուց յետոյ միայն, բայց հօտի մէջ երկու տարուց ոչ աւելի վաղ. մինչև երկու տարեկան դառնալը նոցա երկնջը երբէք ցուլի երես չի տեսնում:

Հորթերի կաշին պէտք է մաքրել համարեա ամենայն օր ծղնօտէ լախտերով և կամ ծղնօտէ կամ փափուկ չոր խոտի փնջով, որով նոցա շնչառութիւնը կլաւանայ, դէմքը կզուարթանայ, կենդանին առողջ կլինի, ախորժակը կբացուի, աստիճանաբար իւր հասակը կառնի և կաշուի վերայ յից նոցա անհանդատացնող բոռի որդերը կօչնչանան: Անհրաժեշտ է նաև սկզբներում գոնէ շաբաթը մի անգամ լողացնել հորթերին գալ ջրով: Անմաքուր աղբով ծածկուած հորթերը աւելի դժուարութեամբ են բազմանում, աճում և Ֆիզիքապէս դարգանում: Շատ անգամ հորթերի և այլ ընտանի անասունների կաշուի վերայ մենք տեսնում ենք ուռուցքներ, գնդիկներ (бугорки), դոցա պատճառը բուռն է, որ իւր ձուերը դնում է կենդանու կաշուի մէջ, որտեղ նոքա թրթուրներ են դառնում և

ուժաթափ անում կենդանուն: Սոցանից ազատուելու համար պէտք է այն անցքերում, ուր թրթուրն է գտանուում, լցնել մի կաթիլ բւեկին (скипидаръ) և կամ կաշին թեթե կերպով կարել ու այնտեղից մատներով դուրս մղել կենդանուն:

Հորթերից ապագայում աղնիւ ցեղի անասուններ ստանալու համար աչքի առաջ պէտք է ունենալ հետեւեալ պայմանները.

1) Ռուսաստանում, շատ անասնատէրեր նկատել են, որ սովորաբար աշնան ծնած հորթերից աւելի շատ կաթնոտ կովեր են ստացւում:

2) Առաջին ծնի և մասամբ էլ երկրորդ ծնի հորթերից աւելի թոյլ և ոչ այսքան աղնիւ տեսակի կովեր կստացուեն, քան 3-րդ, 4-րդ կամ 5-րդ ծներից:

3) Ամենակարևոր հարցերից մէկն էլ այն է, թէ արդեօք որ հորթը պէտք է թողնել ապագայում աղնիւ և ընտիր ցեղի հով ստանալու համար: Սյուպիսի դէպքում ամէնից աւելի կարևոր է ուշք դարձնել, թէ արդեօք նորա մայրը և առաջ որբան կաթնոտ են եղել, թէ արդեօք որբան ընտիր ցեղից է եղել նոքա հայրը, այսինքն վերջինս արդեօք կաթնոտ կովերից է յառաջացած և այլն: Կովերի կաթնոտութեան մասին խօսելիս բաւական չէ միայն ուշք դարձնել նորա տուած կաթի քանակութեան վերայ, այլ առաւելապէս այն բանի վերայ, թէ ի՞նչ քանակութեամբ և ի՞նչ յատկութիւն ունեցող կերից է ստացւում կաթի այս կամ այն քանակութիւնը: Հորթի ծագման մասին տեղեկութիւններ հաւաքելիս օգտակար է ուշք դարձնել նոցա դիմացկանութեան, տոկունութեան, ծնողներն ունեցած պակասութիւններն, ախտերն վերայ, իբրև առանձնայատկութիւնների, որոնք որոշ չափով կարող են ժառանգաբար անցնել մէկից միւսին:

4) Կարևոր է ուշք դարձնել նաև հորթի մարմնի ձևի վերայ: Թէպէտ դժուար է պահանջել, որ հորթը նոյնպէս իւր հասակի համեմատ խիտ խոր կուրծք և լայն մէջք ունենայ, քնչպէս երկու տարեկան լաւ երէնջը, բայց աւելի լաւ պէտք է համարել այն հորթերը, որոնք իւրեանց հասակակիցներն հետ համեմատած այդ վերոյիշեալ և այլ ուրիշ բաների վերաբերմամբ որոշ չափով աչքի են ընկնում: 3—4 ամսական հորթի կուրծքի խորութիւնը բաւարար պէտք է համարել, եթէ ընի առաջևի մասի (անմիջապէս առաջին դուրս ոտներն յետևի կողմը) շրջապատը իւր երկարութիւնից՝ հաշուած թիակ ոսկրի և ուսի յօդից մինչև նոտատեղի դուրս ընկած ոսկրը՝ բլրակը (сѣ-

далищный бугоръ), մի վերջոյ աւելի լինի: Աւելի ուշք պէտք է դարձնել, որ կթի համար պահուած հորթը ունենայ բարակ կմախք և բարակ ու ազատ ձգուող կաշի՝ ծածկուած բարակ, փայլուն մազերով և միջակ երկարութեամբ դուռնչ:

5) Ամենակարևոր պայմաններից մէկն էլ այն է, որ սերունդ յառաջացնելու համար պահուած հորթը անպայման առողջ լինի և լաւ ախորժակ ունենայ: Մատաղ կենդանին պէտք է բաւականաչափ շարժուն վիճակի մէջ գտնուի, որպէս զի, երբ կենդանին հասնի իւր հասունութեան, ունենայ բաւականաչափ առողջութիւն, արեան զօրեղ շրջանառութիւն և դիմացկուն ջղեր: Այս և այլ ուրիշ շատ սոյնանման պայմաններ անհրաժեշտ են կթի կովի համար, որպէս զի առանց առողջութիւնը խանգարուելու, առանց հիւանդանալու և առանց կորցնելու կանոնաւոր յղանալու և առողջ սերունդ յառաջացնելու ընդունակութիւնը, աճեցնէ, շատացնէ իւր տուած կաթի քանակը ամենաբարձր աստիճանի: Սյուպիսի պայմաններում կաթի համար պահուող մատաղ անասունների համար շատ օգտակար է արօտներում արածելը, բայց թէ որ հասակից պէտք է թողնել, այդ այնքան էլ որոշ չէ: Ոմանք ասում են, որ այդ պէտք է տեղի ունենայ նոցա կեանքի հէնց առաջին գարնանը, մի քանիսն էլ խորհուրդ են տալիս թողնել երկրորդ գարնանը, իսկ առաջին գարնան համար ախոռների մօտ մի ցանկապատ շինել, ու այնտեղ թողնել հորթերին ազատ շարժուելու: Այս երկրորդ տեսակի համոզմունք ունեցողները աչքի առաջ ունեն այն հանգամանքը, որ չափազանց փոքր հորթերին արօտներում բաց թողնելով՝ նորա ստամոքսի խանգարմունք կստանան, որի պատճառով և շատ թոյլ կերպով կաճեն, կմեծանան: Իսկապէս այս կերպ վնասներ յառաջանալու պատճառն այն է, որ չոր կերից կանաչի անցնելիս որոշ աստիճանաւորութիւն չի պահուում:

Սկզբներում հորթերին պէտք է արածեցնել օրական միայն մի քանի ժամ և սովորական կերը դեռ շարունակել պէտք է ախոռում: Ջրելն ևս սկզբներում պէտք է տեղի ունենայ ախոռում: Արածելն իսկապէս կարող է վնասակար լինել ուշ, ապրելի ամսի մէջ ծնած հորթերի համար: Այդպիսիներին մինչև ամառուայ երկրորդ կէտը լաւ կլինի պահել ախոռում, միայն ամէն անգամ կարելի է քիչ քանակութեամբ կանաչ կեր տալ:

Հորթերին կապելու մասին խօսք անգամ չէ կարող լինել, նորա պէտք է ազատ լինեն:

Ինչ վերաբերում է իբրև աշխատաւոր կամ մասցու պահուող հորթերին, այսքանը պէտք է ասել, որ եթէ տնտեսական

պայմանները ներում են, առաջիններն հարկաւոր է կերակրել աւելի առատ և աւելի երկար ժամանակ երես չքաշած կաթով, քան կթի համար պատրաստուող հորթերին: Մասցու համարուող հորթերն պէտք է կերակրել երկար ժամանակ նոյնպէս երես չքաշած կաթով և ուրիշ լաւ նիւթերով:

Դ.

Մեծ եղջիրաւոր անասունների սարիքը որոշելու միջոց. երբ մէկը կամենում է մեծ եղջիւրաւոր անասուններ գնել, դորա համար խիստ կարևոր է իմանալ իւր գնած անասունների տարիքը: Սովորաբար եղջիւրաւոր անասունների տարիքը որոշում են ատամների միջոցով: Թէպէտ բացի այդ միջոցով ուրոշելուց, որոշում են նաև նոցա եղջիւրների վերայ եղած օղակները (եղջրաշերտեր, բոլորակաւոր): Եթէ եղջիւրը աճումը ամբողջ տարուայ ընթացքում կանոնաւոր է տեղի ունեցել, այն ժամանակ նորա արմատի մօտ դրսից նկատելի կլինեն օղակներ: Բայց եթէ եղջիւրը անհաւասարաչափ սնունդ ստանայ, եղջերային նիւթը կսկսի անկանոն կերպով արտադրուել և միակերպ հաստութեամբ ու լայնութեամբ օղակներ չեն ստացուել: Եղջերային նիւթի արտադրուելու վերայ ազդող շատ պատճառներ կան. հիւանդութիւնը, անդի պակասութիւնը, միմեանց յաջորդող ասթուայ եղանակների զգալի փոփոխութիւնները, կովերի յզութիւնը և մի քանի այլ պատճառներ:

Յզութեան ժամանակ կովի կազմուածքի ներքին գործունէութեան մէջ զգալի փոփոխութիւններ են յառաջանում. բոլոր անդաբար նիւթերի մեծ մասը գործ է դրում արդանջոցում, ինչպէս ենթադրում են, զգալի կերպով թուլանում է եղջերային նիւթի գործունէութիւնը, որի պատճառով էլ եղջերային օղակները բարակում են: Ընդհակառակը, ծնելուց յետոյ որով և ստացում է մեծ հաստութեամբ և լայնութեամբ օղակներ:

Սովորաբար մինչև երեք տարեկան հասակը այդ օղակները նկատելի չեն լինում, չորրորդ տարուանից սկսած եղջիւրների մակերեսային վերայ սկսում են երևան գալ փոքրիկ անհարթու-

թիւններ՝ օղակներ, որոնց կարելի է տեսնել և շօշափել: Այնուհետև իւրաքանչիւր տարի սկսում է մէկմէկ օղակ աւելանալ:

Կովի կամ եղի եղջիւրների վերայի օղակները համարելիս, անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել, որ մէկ կամ երկու օղակը մազերով ծածկուած չլինեն: Օրինակի համար, եթէ հաշուելուց յետոյ օղակների թիւը ընդամենը ինն է, դորա վերայ աւելացնելով երեք՝ կտանանք տասներկու, որը և համապատասխան կլինի կովի կամ եղան տարիքին: Եթէ օղակներն անկանոն կերպով են դասաւորուած և հաւասարաչափ չեն, այդ նշան է, որ կովը երկար ժամանակ զըսը (չբեր) է մ'սացել կամ վիժել է (հորթատել) և կամ հիւանդացել է: Այս վերջին դէպքում տաւարի տարիքը որոշելը նոյնքան դժուար է, որքան և ծերացածները, երբ սովորաբար օղակները պարզ չեն լինում: Վան մարդիկ, որ մեծ եղջիւրաւոր անասունների այդ օղակները թիւը վարպետութեամբ պահասեցնում են, որպէս զի իրանց վաճառած կովը կամ եզը երիտասարդ երևայ:

Մեծ եղջիւրաւոր անասունների տարիքը աւելի ճիշտ որոշել կարելի է ատամներից և նրանց կերպարանափոխութիւնից: Հասակն առած եղջիւրաւոր անասունների ատամների թիւը 32 է: Ներքին ծնօտում կայ 8 կարիչ և 12 սեղանատամ՝ ընդամենը 20: Վերին ծնօտում կտրիչներ չկան, նոցա տեղ բաւականին հաստ, սնդացած և կոշտ բթիկներ են լինում կաշուի վերայ, իսկ սեղանատամներ իւրաքանչիւր կողմում 6, ընդամենը 12: Այսպիսով ատամներն ընդհանուր թիւն է 32, որոնք հետևեալ պատկերն են ներկայացնում.

3.	3.	0.	0.	0.	3.	3.
3.	3.	0.	4.	4.	0.	3.

Նորածին հորթը կարող է բոլոր 8 կարիչներն էլ և կամ երկու կամ երեք զոյգն ունենալ: Բացի կտրիչներից կարող է ունենալ նաև 12 սեղանատամ, ամէն մի ծնօտի, ամէն մի կողմում երեք երեք, բայց աւելի յաճախ նորա երևան են դալիս ծնելուց յետոյ առաջին ամսուայ վերջերը և սովորաբար ամէն անգամ երկ-երկու: 5—6 ամսական հորթը ունենում է 8 կարիչ և 12 սեղանատամ, մնայն իւրաքանչիւր ծնօտի իւրաքանչիւր կողմում երբորդ սեղանատամի ետևը նկատուում է բթիկ կամ ցցուածք, որից վեցերորդ ամսից յետոյ բարձրանում է 4-րդ սեղանատամը և երեք ամսից յետոյ հաւասարում է միւս սեղանատամներին: 15 ամսական հասակում ծնօտների իւրաքանչիւր կողմում գուրս է դալիս հինգերորդ սեղանատամը: Երկու տարեկան հասակում երևում է վերջին վեցերորդ սեղանատամը:

Այս վերոյիշեալ 1 ամսական, 6 ամսական 14 և 2 տարե-
կան հասակների ժամանակ մեծ եղջիւրաւոր անասունների տա-
բէքը հեշտ է որոշել: Բայց եթէ կամենում ենք իմանալ, թէ այս
յայտնի շրջանների ժամանակամիջոցում և կամ երկու տարուց
յետոյ կենդանին քանի՞ տարեկան է, պէտք է ուշադրութիւն
դարձնել ատամները մաշուելու, կաթնատամները փոխուելու
և մշտական ատամներ դուրս գալու վերայ:

Առաջին ամսում դուրս եկած բոլոր ատամները՝ այն է՝ 8
կարելի ատամները և 12 սեղանատամները կոչուում են կաթնա-
տամներ. այդ բոլոր ատամները փոխուում են և նրանց տեղը
դուրս են գալիս մշտական ատամներ: Տարբեր որոշելու համար
ատամների փոփոխութիւնը աւելի ճիշտ միջոց է, մինչդեռ նո-
ցա աստիճանաբար մաշուելը միայն մօտաւոր որոշում է: Այլ և
այլ կովերի կամ եղջերի կարելի կաթնատամների փոխուելը միա-
կերպ, միաժամանակ չէ տեղի ունենում. մէկինը վաղ, իսկ
միւսինը նոյն իսկ 6 ամիս յետոյ կարող են դուրս գալ:

Այսպիսով ուրեմն եղջիւրաւոր անասունները ծնուելուց
յետոյ ունենում են 8 կարելի ատամներ և իւրաքանչիւր ծնօտե-
լւրաքանչիւր կողմում առաջին կողմի երեք սեղանատամներ:
Այդ կաթնատամները փոխուում են այսպէս.

Կարելիներից միջին երկուսը՝ բռնակ կոչուածները 18—20 ամսում.
Սոցա հարեան աջ և ձախ կողմի երկուսը՝
առաջին միջնակ 2—21₂ տարեկ. հաս.
Սոցա հարեան դէպի ներս ընկած երկուսը՝ վեր-
ջին միջնակ 21₂—3 « »
Մայրի երկու կարելիները՝ կոնակ կոչուածները 31₄—33₄ « »

Կարելի ատամների հետ միասին փոխուում են և սեղանա-
տամները (կաթնատամ): 2—21₂ տարեկան հասակում սովորա-
բար փոխուում են երկու առաջին սեղանատամները. 3-րդ տա-
րուայ վերջերը փոխուում է 3-րդ սեղանատամները: Այսպիսով
ուրեմն 4-րդ տարուայ սկզբներում տաւարի ատամները իւր-
եանց կատարեալ զարգացման են հասնում: Ահա այս հատակից
սկսած արդէն տաւարի հասակը պէտք է որոշել ատամների մա-
շուելուց, բայց ինչպէս վերեն ասացինք, այս միջոցը այնքան
էլ ճիշտ չէ, որովհետև կանոնաւոր ընթացք չունի և այդ ան-
կանոնութիւններն առաջ են գալիս զանազան պատճառներից,
մանաւանդ կերից: Նրը կենդանին 5 տարեկան է դառնում, բո-
լոր կարելիների ծայրերը սկսում են մաշուել և միօրինակ կամա-
բաձև տեսք են ունենում և նոցա միջին զոյգի մաշուած մա-
կերևոյթի վերայ նկատելի են դառնում եռանկիւնաձև բծեր:

6 տարեկան և դեռ աւելի մեծ հասակում կարելի ատամների
պոստիների եղբերում մեծ տարածութիւն է բացւում և ատամ-
ները քանի զնում աւելի մութ գոյն են ստանում, դեղնում են:
12—14 տարեկան հասակում տաւարի ատամներն այն աստիճան
հեռանում են միմեանցից, որ կենդանին մեծ դժուարութեամբ
է կարողանում նոցանով խոտ կարել: Այդ ժամանակներում կո-
վի մէջքը կախ ընկած է լինում, կախուած է լինում նաև կովի
կուրծք, փորն իջնում, ցածրանում է, խոկ պտուկները խիտ
կնճռոտում են: Շուտ հասունացող կենդանիների ատամների
փոխուելու ժամանակը այլ կերպ է: Այսպէս օրինակ, 3-րդ
սեղանատամը (կաթնատամ) մշտականի է փոխուում 2 տ. 9 ամս.
հասակում, իսկ մշտական կարելիները, փոխանակ վերոյիշեալ
ժամանակներում կարող են դուրս գալ՝ բռնակները—1 տ. 4 ամ-
սակ. հասակում, առաջին միջնակները՝ 2 տ. 1 ամս. հասակում,
երկրորդ միջնակները՝ 2 տ. 9 ամս. հասակում, իսկ ծայրերինը՝
3 տ. 3 ամս. հասակում:

Ե.

Ջրի սեռակն ու կարեւորութիւնը:—Թէպէտ սկզբներում
ջրի մասին համառօտակի խօսել ենք, բայց աչքի առաջ ունե-
նալով, որ նա կենդանիների առողջութեան, պարարտութեան,
անդի և կաթի քանակութեան ու յատկութեան վերայ մեծ
ազդեցութիւն ունի, կարեւոր ենք համարում այս մասին քիչ
աւելի ընդարձակ տեղեկութիւններ հաղորդել:

Տարբեր կենդանիներ տարբեր քանակութեամբ ջրի պահանջ
ունեն: Այսպէս օրինակ, խոշոր եղջիւրաւոր անասունների խմած
ջուրը չոր կերից 4 անգամ աւելի է: Մատաղ կենդանիները ջրի
աւելի մեծ կարիք ունեն, քան հասակն առած կամ ծերացած կեն-
դանիները: Ինչպէս մարդկանց, նմանապէս և կենդանեաց համար
լաւ ջուր խմելը շատ մեծ նշանակութիւն ունի: Գործածական
ջուրը պէտք է 8—12° ը բարեխառնութիւն ունենայ: Փորձերը
ցոյց են տուել, որ եղջիւրաւոր անասունների, մանաւանդ կաթ-
նատուների, խմած ջրի բարեխառնութեան աստիճանը մեծ ազ-
դեցութիւն է ունենում նոցա տուած կաթի քանակի և որակի
վերայ: Այսպիսի փորձերից մէկի արդիւնքն այս է եղել. ա) տաք

1. Այս գլուխը պէտք է լինէր Բ. գլխից յետոյ, բայց սխալմամբ մնացել է
ևս այստեղ է տեղաւորում:

ու գոյ ջուր խմող կովերից իւրաքանչիւրը միջին թուով մի մի գրուանքայ կաթ աւելի է տուել: ք) ամէն մի կով տաք ջուր խմած ժամանակ 10 գրուանքայ աւելի է խմել, քան սառն ջուր գործածելիս: գ) տաք ջուր խմող կենդանու մարմնի մէջ կերը աւելի օգտաւէտ կերպով է գործադրուում. ամէն մի գրուանքայ կաթի համար տաք ջուր խմող կովը պէտք է ուտէ 1,44 գրուանքայ կեր, մինչդեռ սառն ջուր խմելիս՝ 1,54 գրուանքայ:

Բոլոր անասնաբոյժները միաձայն հաստատում են, որ կենդանիները մէջ հիւանդութիւնը տարածուելու գլխաւոր պատճառը ջուրն է, վատառողջ ջուրը հետզհետէ վնասում է նոցա գործարանները, ծանր հիւանդութիւններ է առաջ բերում և այդպիսով արգելք դառնում կենդանու դարգացմանը:

Վնասակար ջուր համարւում են նախ և առաջ այն դեպքերը, որոնց ամբողջ վերայ գործարաններ կան: Շատ հեշտ միջոցով կարելի է խմանալ այսպիսի ջրի վնասակար լինելը. եթէ ձուկ չկայ, նշանակում է վատառողջ ջուր է: Վնասակար են ճանաչւում նաև երկար ժամանակ մի տեղում կանգնած ջրերը, որոնք երբէք չեն փոխւում և յատակին ցեխի հաստ շերտ է նստում: Այսպիսի ջրերից շատ անգամ վատ հոտ է փչում: Կենդանիները երբէք այսպիսի ջրերից չեն խմում. միայն սաստիկ ծարաւացած ժամանակ, երբ լաւ ջուր չեն գտնում, մօտենում են այդպիսի ջրերի: Այս տեսակ ջրերը վնասակար ազդեցութիւն ունենալով մարսողութեան վերայ, ամէն տեսակ հիւանդութիւնները պատճառ են դառնում: Կարելի է բացարձակապէս ասել՝ այն ջուրը, որ չի փոխւում, կամ պէտք եղածից աւելի գործարանաւոր մարմիններ և հանրային նիւթեր է պարունակում, շատ վտանգաւոր է կենդանիները առողջութեանը: Առհասարակ գործարանաւոր նիւթեր պարունակող ջուրը կունենայ իւր մէջ նաև մանրիկ կենդանիներ (միկրոբներ), որոնք պատճառ են դառնում ծանր և վարակիչ հիւանդութիւնները: Քայց ամէն անգամ չպէտք է կասկածել և քիչ պղտոր ջուրը անպէտք կամ վնասակար համարել. կարևոր է միայն, որ նա յարաբերութիւն չունենայ հոտած, նեխուած նիւթերի հետ:

Ջուրը նպաստում է նաև կենդանիների գերանալուն, իսկ կերը մարսելու համար նա անհրաժեշտ է: Նկատուած է, որ առատ ջուր ունեցող արօտատեղերում արածող կենդանիները սովորաբար աւելի շուտ են գերանում, քան թէ նոքա, որոնց ժամանակ առ ժամանակ ջրելու են տանում: Նկատուած է, որ երաշտ տարիները, երբ արօտներում բոյս չի բուսնում,

քայց վճիտ ջուրը առատ է լինում, կովերը որոշ չափով պարտանում են, մինչդեռ այն տեղերը, ուր ջուրը սահաւ է համ անառողջարար՝ նեղուում, մաշւում են:

Ջրի ազդեցութիւնը ամէնից աւելի նկատելի է կաթնատու կովերի վերայ. երեք անգամ ջուր խմող կովը աւելի է կաթ տալիս, քան երկու անգամ խմողը: Նկատուած է նաև, որ արօտի մէջ ջրած կովն աւելի կաթ է տալիս, քան ջրելու համար հեռաւոր տեղ տարածը: Մաքուր և առատ ջուրը ոչ միայն կաթի քանակութիւնն է աւելացնում, այլ և նորա յատկութեան վերայ մեծ ազդեցութիւն է անում, որովհետև կաթի 87% -ը ջուր է: Մաքուր ջուր խմող կովի կարգին աւելի երկար ժամանակ անվնաս կպահուի, քան թէ անառողջարար ջուր խմողին:

Գիւղացիները պարտականութիւնն է մաքուր պահել այն տեղը, որտեղից իւրեանց անասունները ջուր են խմում. պէտք է այնպէս պատրաստել ջուր խմելու տեղերը, որ կենդանիները կարողանան հեշտութեամբ խմել առանց մէջը մտնելու և ջուրը պղտորելու:

Ո՛չ շատ թեթեւ (թեթեւ ջուրը լուծ է յառաջացնում) և ո՛չ էլ չափազանց ծանր ջուրը (ծանր ջուրը դժուարացնում է մարսողութիւնը) կարելի է լաւ համարել. վերջին տեսակ ջուրը իւրաքանչիւր վեղբոյն մէջ կէս մտնալ կը է պարունակում:

Հիւսթալի, ուռեցնող կերից յետոյ և կամ կենդանու տաքացած, դայրացած ժամանակ չպէտք է ջուր տալ:

Զ.

Կ Ա Թ

Կարի բաղադրիչ մասերը:—Յայտնի է, թէ որպիսի տընտեսական մեծ նշանակութիւն ունի կաթը: Գործածութեան մէջ առաջին տեղը բռնում է կովի կաթը, որ ամէնից շատ է արդիւնաբերւում և թէ իբրև անմիջական կերակրի, թէ իբրև պանիր ու իւղ պատրաստելու նիւթ ամէն տեղ սովորական է: Յրանսխի ֆարիզ քաղաքում տարեկան գործ է ածւում մի միլիոն հարիւրաւորից աւելի կաթ:

Թարմ և մաքուր կաթը միակերպ անթափանցիկ է և սպիտակ, առանց որ և է ուրիշ գունաւորութեան, և ունի իւր առանձին հոտն ու համը: Նորա տեսակարար կշիւը քիչ աւելի

է ջրնց՝ եթէ մե վեդրօ ջուրը կշռում է 30 դրօ, մե վեդրօ երես չքաշած թարմ կաթը կկշռէ մօտաւորապէս 31 դրօ: Կաթի բաղադրելէ մասերնց ամենաթեթեւը ճարպն է, որ ջրնց թեթեւ է այդ պատճառով էլ սերը կաթի երեսն է բարձրանում, որովհետեւ իւր մէջ աւելի մեծ քանակութեամբ իւր է պարունակում: Կաթի միւս բաղադրելէ մասերնց ամենածանրը աղերն են և ապա կաթնաշաքարը: Որովհետեւ թանձր կաթն աւելի թեթեւ է լինում, այդ պատճառով դուցէ կշռելով կարելի լինի իմանալ, թէ արդեօք նորա երեսը քաշած է, թէ ոչ: Բայց այսպէս կշռելով մենք դժուար թէ կարողանանք ձեռն նպատակին հասնել, որովհետեւ եթէ երես քաշած կաթի վերայ մե որոշ քանակութեամբ ջուր աւելացուի, նորա քաշը կհաւասարուի երես չքաշած կաթի քաշին: Կաթի տեսակներն համեմատութեան և նոցա տեսակաբար կշիռը որոշելու ժամանակ անհրաժեշտ է, որ նա ունենայ 15° տաքութիւն:

Երես չքաշած անտրատ և առողջարար ամէն տեսակ կաթ միշտ միևնոյն նիւթերնց է կազմուած լինում, թէպէտ տարբեր չափերով: Կովի կաթի գլխաւոր բաղադրելէ նիւթերն միջին չափը հետեւեալն է.

15° II. տաքութիւն ունեցող հարկը մաս կաթի մէջ գլխաւորում է.

	միջին հաշուով	սահմաններ
Ջուր . . .	87, 5°	85 — 90°
Պինդ նիւթեր 12, 5 »		10 — 15 »
որոնցից ճարպ . . .	3, 4	2,0 — 6,0 »
Պանրածին . . .	3, 2	2,0 — 4,5 »
Սպիտ . . .	0, 6	0,2 — 0,8 »
Կաթնաշաքար 4, 6		3,0 — 6,0 »
Աղեր . . .	0, 7	0,6 — 0,9 »

Կան կովեր, որոնց կաթի մէջ ճարպային մասն աւելի է, կան և այնպիսիները, որոնց կաթը աւելի պանրածին է պարունակում: Կաթի այդ բաղադրելէ մասերն քանակը տարբեր կովերն համար, նայած նոցա ցեղին և ստացած կերին, տարբեր է լինում: Այն կաթը, որն մէջ պարարտ նիւթերը շատ են, բնականաբար աւելի համեղ կլինի:

Ճարպ (жир).— Կաթի մէջ ճարպը միջին հաշուով 4° է կազմում, որ թէ գլխաւորապէս ստեղծուած է կաթնատեսակի տեսակէտից կաթի ամենաթանկագին բաղադրելէ մասն է: Ճարպը կաթի մէջ անթիւ անհամար մանրիկ գնտակներն

ձեռով է դանւում, որոնք հասարակ աչքով աննկատելի են, և միայն 200 անգամ մեծացնող լաբ խոշորացուցով երևում են իւրե մե աստեղադարբ երկինք: Կաթի անթափանցիւթեան պատճառը գլխաւորապէս այդ ճարպային գնտակներն են, որովհետեւ դրանք իւրեանց գնտաձեւութեան պատճառով չեն թողնում, որ լոյսն անց կենայ իւրեանց դանդուածի միջով, այլ անդրադարձնում են: ճարպային գնտակներն մեծութիւնը տարբեր է, միայն մանրներն աւելի են քան խոշորները: Շեղէնբերգերէ հետազոտութիւններն նայելով մե լիար կաթի մէջ, որն 2,38° ճարպ է, ճարպային մանրիկ գնտակներն թիւը հասնում է միևնու 1.883.700.000.000 (1883,7 միլիարդ), իսկ եթէ 3,26° ճարպ է այդ թիւը բարձրանում է միևնու 6.363.800.000 (6363,8 միլիարդ): ճարպը հալում է 29—41° ջերմութեան մէջ, միջին չափը 33° է: Հալուած ճարպը սինդանում է հալման կէտից 10° ցած ջերմութեան մէջ:

Պանրածին (казеин).— Սա պանրի հիմնական դանդուածն է, կաթի մէջ սովորաբար 3,2° է լինում և հարուստ է բորակային նիւթերով: Պանրածինը կաթի մէջ լուծուած դրութեամբ է, այլ ուռած հոտիկներն ձեռով, ինչպէս օդային հատիկները եռացած ջրի մէջ: Կաթի անթափանցիւթեան պատճառն է նաև պանրածին յատկութիւնը. այդ երևում է նորանից, որ շատ քիչ ճարպ պարունակող (միայն 0,1°) կաթը թէպէտ երես չքաշած կաթնց աւելի թափանցիկ է և ջրայի է երևում, բայց դարձեալ կատարելապէս թափանցիկ չէ: Պանրածինը բազդատութեամբ նման է ձուի սպիտակուցին: Չանաղան թթուների և ստամոքային հիւթի ազդեցութեան տակ մանրիկ ուռած հատիկները մահաբերում են. դրան պատճառն այն է, որ թթուները միանում են պանրածին մէջ եղած ջրի հետ և այդպիսով դուրս քաշում նորան այն տեղից. ապա պանրածինը, որ միայն կրի հետ միացած ժամանակ կարող էր պահել իւր ուռած հատիկներն ձեռք, երեսն է դալիս, գուռում, նստում առանձին: Կաթի մէջ կաթնաշաքարից բոլորովին անկախ կերպով յառաջացած կաթնաթթուն (եթէ միայն բաւական շատ է՝ մօտաւորապէս 0,6°) կարող է նպաստել կաթի մահաբերութեան:

Սպիտ կամ կարմային սպիտակուց (альбуминъ или молочный бѣлокъ).— Սա կաթի մշտական բաղադրելէ մասն է, և կազմում է նորա 0,6° թէպէտ ոմանք հալում են և աւելի: Բացառութիւն է դալը, որն մէջ բաւական մեծ քանակութեամբ սպիտ կայ: Սպիտը լուծում է ջրի մէջ, ջրայի դարձրած թթուների և հասարակ աղի մէջ. բնդհանառակը բորակաթթուի լուծուածքն մէջ

բաժանում, տակն է իջնում: Նոյնը տեղի կունենայ նաև 70-75° II. տաքացնելուց յետոյ: Սպիտը բաւական նման է ձուխ սպիտակուցին և պանրագործութեան մէջ այնչափ կարևորութիւն չունի: Բայց որովհետև տաքութիւնից մակարդում է, ուստի գործ է ածւում կաթի շինուկից կամ թանկից մի տեսակ հասարակ սեր հանելու համար, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ չմակարդուած քիչ պանրածինի հետ խառնած սպիտ:

Կարմաւար (МОЛОЧНЫЙ САХАР).—Կաթի մշտական բաղադրելի մասն է, նորա 4,6%—ը, և առանձին նշանակութիւն ունի անհրեան համար: Կաթնաշաքարը մաքուր դրութեամբ կազմում է անգոյն, թափանցիկ բերեղիներ, լուծւում է 6 մաս սառն և 24½ մաս տաք ջրի մէջ և քիչ քաղցրութիւն ունի: Անօր տարածութեան մէջ կաթնաշաքարի տեսակարար կշիռն է 1,545: Սորա ամենաաչքի ընկնող յատկութիւնն է կաթնաթթուի վերածուելը, որի մի որոշ քանակութիւնը կաթի մէջ եղած մի քանի կրային նիւթերի հետ միանալով, մակարդում է կաթը: Եթէ կաթի մէջ մեծ քանակութեամբ կաթնաթթու դոյացած լինի, սովորական բարեխառնութեան ներքոյ ևս կարող է կաթը թթուել, իսկ բարձր բարեխառնութեան ներքոյ նոյն երեւոյթը կարող է յառաջացնել նաև աւելի քիչ կաթնաթթուն:

Կաթնաշաքարը կաթնաթթու դարձնելու պատճառը սունկերն են: այլևայլ սաղմերից ազատ կաթի մէջ 40° բարեխառնութեան ներքոյ 24 ժամուայ ընթացքում յառաջանում են սունկեր, կազմում են կաթնաթթու և այդպիսով մակարդում կաթը: Այդ սունկերը, որոնցից շատ կան ախտաբ. օղի մէջ, կաթնամանի վերայ և այլ տեղեր, ընկնելով կաթի մէջ թթու են յառաջացնում և ուրիշ մանրէկ օրգանիզմների գոյութեան պատճառ դառնում: Կան բակտերիաներ (մանրածիններ), որոնք 12°-ից ցած բարեխառնութեան մէջ չեն կարող բազմանալ, ուստի այդ գէպքում կաթնաթթու չի գոյանայ: 12—15° բարեխառնութեան մէջ թէպէտ գոյանում է, բայց շատ քիչ, 20°-ից բարձր բարեխառնութեան մէջ կաթնաթթուն սկսում է արագ զարգանալ, իսկ 32—38° բարեխառնութեան մէջ հասնում է արդէն իւր ամենաբարձր չափին: Սորանից աւելի բարձր բարեխառնութեան մէջ բակտերիաների կենսունակութիւնը սկսում է թուլանալ, իսկ 44—45° բարեխառնութեան մէջ արդէն կանգ է առնում և եթէ 45—52° բարեխառնութեան մէջ ևս մակարդում է, այդ պէտք է վերագրել ուրիշ միկրօօրգանիզմների ներկայութեանը: Եթէ կաթնաշաքարը լուծենք մաքուր ջրի մէջ, օրգանիզմներն այնտեղ անկարող են զարգանալ: միայն անհրաժեշտ է, որ լու-

ծուածքի մէջ լինեն կաթի յայտնի անհարար մասերից: Մակարդուած կաթի մէջ ամենաշատ (0,6%) կաթնաթթու դոյանում է միջակ բարեխառնութեան ներքոյ 50 ժամուայ ընթացքում:

Որովհետև ներկայումս յայտնի են կաթի թթուելու և մակարդուելու պատճառները, ուստի հեշտ կլինի գործադրել մի քանի այնպիսի միջոցներ, որոնք կարգելեն և կամ գոնէ մի առ ժամանակ կյետածղեն այդ գործողութիւնները: Այսպէս օրինակ, կարելի է կաթը տաքացնել մինչև եռացման ստաիճանը, որով մէջն եղած սաղմերը կոչնչանան ու այդպիսով կաթը ժամանակաւորապէս ազատ կմնայ թթուելուց: Ոմանց յաջողուել է ամենայն օր կաթը եռացնելով, պահպանել երկու ամիս շարունակ թթուելուց: Կաթը թթուելուց ազատ կարելի է պահել նաև սառեցնելով:

Աղեր կամ մոխիր (СОЛЬ).—Կաթի այս բաղադրելի մասերը բաղկացած են այնպիսի նիւթերից, որոնք անհրաժեշտ են մատաղ կենդանու կազմուածքը կազմակերպելու համար և որոնք ուրեմն եղել են կովի կերի մէջ: Այս նիւթերը կարևոր են նաև պանրագործութեան մէջ: Տեսանք, որ կաթի 0,7% աղեր են: Որովհետև պանրածինի հատիկները ուռած վիճակը կարևոր է կաթի Ֆիզիքական յատկութիւնները համար, իսկ նա այդ դրութեան մէջ կարող է լինել այն ժամանակ միայն, երբ բաւականաչափ քանակութեամբ կիր է պարունակում իւր մէջ, ուստի և պարզ է, թէ որքան կարևոր դեր է խաղում կիրը կաթի յատկութեան նկատմամբ:

Բացի վերոյիշեալ բաղադրելի մասերից կաթի մէջ լինում են նաև մի քանի ուրիշ նիւթեր, կաթնային գազեր՝ թթուածին, ածխաթթու, բորակ և այլն:

Դալ (МОЛОЗИВО):—Ծնելուց անմիջապէս յետոյ մի քանի օր շարունակ արտադրուած կաթը, որ իւր բաղադրութեամբ զգալի կերպով տարբերում է ընական կաթից, դեղնաւուն է լինում և պղտոր, կոչւում է դալ: Առաջ ենք բերում կովի դալի բաղադրելի նիւթերի միջին չափը՝

Չորը	77,04%
Պինդ նիւթեր	22,96 »
որից՝ ձարպ	3,72 »
Պանրածին	7,57 »
Սպիտ	5,45 »
Կաթնաշաքար	5,15 »
Աղեր	1,07 »

Կովի սկզբնական կաթը— դալը պարունակում է իւր մէջ մեծ քանակութեամբ զիւրամարս պինդ նիւթեր, երբեմն նոյն իսկ աղիւտակի մէջ ցոյց տուածից աւելի, մանաւանդ սպիտ և ճարպային նիւթեր, այս պատճառով և դալի տեսակարար կշիււը շատ աւելի բարձր է լինում կաթից: Դալը նորածիններին համար խիտ անդարար և կարեւոր կերակուր է և շնորհիւ իւր մէջ եղած աղերի մեծ քանակութեան, նոյն իսկ իբրև մի տեսակ թեթև լուծողական է նոցա ստամոքսը մարբերու համար: Ոմանք նորածին հորթերին դալ չեն տալիս, համարելով վնասահար: Ըայց այդ կարծիքն, իհարկէ, սխալ է:

Բացի իւր անսակարար կշիւց դալը գանազանոււմ է սովորական կաթից նաև իւր մէջ գտնուող առանձին տեսակ մարմնիկներով, որոնք ոչ այդ ինչ են, եթէ ոչ կաթնային գեղձերի վանդակիկներ կամ աւշային մարմնիկներ:

Եռացնելիս դալը մակարդուում է, որովհետև նորանում մեծ քանակութեամբ սպիտ կայ, այդ չէ կարող պատահել կովի քնական կաթի հետ:

Դալի համն աղի է և քիչ թթուաշ, դոյնը դեղնաւուն, յաճախ սուր հոտ է ունենում: Եթէ դալը թողնենք հանգիստ վիճակի մէջ, երկու շերտ կհաղմէ. վերևին՝ անթափանցիկ, դեղին, և ներքևին՝ աւելի պարզ և դեղնաւուն:

Ոմանք ենթադրում են, որ դալը իւր մէջ մեծ քանակութեամբ իւր է պարունակում, որովհետև հանգիստ վիճակի մէջ իբրև թէ շատ սեր է բռնում. սուրա համար աւելացնում են կաթի վերայ, որպէսզի մեծ քանակութեամբ իւր ստացուի: Այս ենթադրութիւնը սխալ է. ինչպէս տեսանք դալի մէջ քիչ իւր կայ և նա մնասում է իւր և պանիր պատրաստելուն: Մարտը դալից կարելի է, իհարկէ, իւր պատրաստել, եթէ հետը ջուր խառնենք: Կաթը դալի հետ խառնուելով կապականուի, աւելի տարածական և մեղմածոր կբառնայ, իւրը դժուարութեամբ կարտադրուի և ստացածն էլ (իւրը) շատ անգամ զգուելի համ և հոտ կունենայ: Եթէ կաթի հետ դալ կայ խառն, այդպիսի կաթից պանիր պատրաստելիս պանրածինի մտկարգուելը և պանիրի հասունանալը անկանոն կերպով տեղի կունենան: Ահա այս է պատճառը, որ դալը երբէք չպէտք է խառնել կաթի հետ. կամ պէտք է առանձին գործ դնել, գոնէ մինչև առաջին շաբաթը և կամ պէտք է ուղղակի դորանով կերակրել հորթերին և խոզերին: Այն տեղերում, որտեղ երես չքաշած կաթից թանկազին պանիրներ են պատրաստում, նոյն իսկ ծնելուց յետոյ երկու շաբաթ շարունակ կթած կաթը չեն գործ դնում. հակառակ

դէպքում ամենավորը քանակութեամբ դալն անգամ կարող է իջացնել ամենաթանկազին պանիրը:

Ծնելուց 3—14 օր յետոյ արտադրում է աւելի ջրայի և բնական կաթ, որից և կարելի է պատրաստել իւր և պանիր:

Կարի գործարանը.— Յայտնի է, որ կաթի թէ քանակի և թէ յատկութեան վերայ ցեղը, խնամքը, մանաւանդ կերը մեծ ազդեցութիւն են ունենում: Կան նաև ուրիշ երկրորդական պատճառներ, որոնք գարձեալ սրոշ չափով ազդում են: Անասնապահութեամբ պարագոյր ամէն ոք տեսած կլինի, թէ ինչպէս միևնոյն կերն ուտող, ըայց տարբեր պայմաններում ազդող մի կով տարբեր քանակութեամբ և յատկութեամբ կաթ է տալիս: Սորա պատճառները բարդ են և բազմապիսի, ըայց աւելի շատ բան կախուած է այն գործարանի—գեղձի կազմութիւնից, որտեղ պատրաստում է կաթը:

Կաթնային գեղձը բարկանում է ահագին քանակութեամբ վամփշտիկներէց կամ վանդակիկներէց, որոնք միաւորող անկուածի օգնութեամբ միացած են և շրջապատուած ճարպային հիւստեածքով: Փամփշտիկներէց կաթնատար նեղ անցքերը աստիճանաբար միանալով, մեծանում են և վերջը կազմում կաթնալարներ, որոնցից յետոյ դուրս են գալիս առանձին խողովակներ պտուկներէ մէջ. սոցա վերևի մասը կոչւում է հիմք, իսկ ներքևինը կազմում է իսկական պտուկը: Այս վերջին մէջ են գտնուում միանային թերերը, որոնց ամփոփումը և կրճատումը կենդանու կամքից անխախ է: Էնց այդ միաններն են պատճառը, որ պտուկը կուրծք կաթով լիքն եղած դէպքում իսկ չէ ձգւում, լայնանում, մինչդեռ հիմքը բաւականաչափ ընդարձակում, ձգւում է: Մեծ քանակութեամբ լաւ կաթ ստանալու համար կարեւոր է ուշք գարձնել, թէ արդեօք լինչպէս է գործում այն գեղձը, որ կաթ է արտադրում և թէ այդ գեղձը կաթ պատրաստելու համար ո՞րքան շատ նիւթեր ունի (այսինքն թէ, սրբան արիւն է հոսում դէպի կուրծք): Այս երկու հանգամանքներն էլ ուղղակի կախումն ունեն կանոնաւոր կթելուց, սակնքը կանոնաւոր վիճակի մէջ պահելուց, կենդանու ստինքի զարգացման վերայ ուշադրութիւն դարձնելուց և հիւանդ ստինքը կանոնաւոր կերպով խնամելուց: Գեղձը գործում է գլխաւորապէս մեքենայական զրգիւնների ազդմամբ, որ տեղի է ունենում կամ կթելու ժամանակ կթողների մասների միջոցով, կամ հորթի դնչով: Ահա այս է պատճառը, որ որքան վաղ գրգռուի կովի, կամ աւելի լաւ ասած, երկնջի ստինքը, և որքան յաճախ, երկարատև և հմուտ կերպով տեղի ունենան այդ գրգը-

կան վիճակն մէջ է մտնում, կաթը արտիճանաբար շատա-
նալով հասնում է ամենաբարձր կէտին, սրբեց յետոյ կամաց
կամաց սկսում է պակասել: Այս դէպքում ևս կովերն մէջ նկա-
տելն է խիստ մեծ տարբերութիւն. մինչդեռ մէկը ծնելու հէնց
առաջին շաբաթում մեծ քանակութեամբ կաթ տալուց յետոյ
յանկարծ սկսում է պակասեցնել, միայն կով, քնդհակառակը,
սկզբներում աննշան քանակութեամբ կաթ է տալիս, բայց այդ
չափը երկար ժամանակ մնում է նոյնը և վերջերը նոյն խոկ եր-
բեմն աւելանում է: Կաթի պակասելը մեծաւ մասամբ աստի-
ճանաբար չէ տեղի ունենում:

Առհասարակ մինչև այժմ եղած դիտողութիւնները ցոյց են
տուել, որ ծնելուց յետոյ որքան առաջ գնանք, այնքան աւելի
կշտանայ կովի կաթի մէջ պինդ նիւթերի, մանաւանդ ճարպի
քանակը, և նկատուած է, որ կաթի քանակութեան պակասե-
լովը աւելանում է նորա մէջ թանկագին նիւթերի չափը: Իւ-
րաքանչիւր կենդանու առանձնայատկութիւններն անկասկած
կաթի բաղադրել մասերի փոփոխութիւններն վերայ որոշ ազդե-
ցութիւն կունենան. մինչդեռ մի կովի կաթի մէջ եղած չոր-
պինդ նիւթերի քանակը անսովոր է մնում, միւսինը զգալի
փոփոխութիւն է կրում: Այսպէս, օրինակ, 1889—90 թ. Գեօա-
տինդէնի զիւղատնտեսական ինստիտուտում պահուած երեք
կովի վերայ կաթնատուութեան ամբողջ ընթացքում շաբաթա-
տուութիւնները հետևեալ արդիւնքն են ցոյց տուել:

Տ Ե Ս Ա Կ Ն Ե Ը Ը	Մեկուց յետոյ անմիջապէս սկզբի 4 շաբաթուայ մէջ.		Մեկուց յետոյ 8-րդ եւ 9-րդ ամիսներում.	
	Չոր նիւթ.	Ճարպ	Չոր նիւթ.	Ճարպ
Սիմմենթալ	12,60 °	3,70 °	13,16 °	4,16 °
Օտտֆրիզլանդի	11,14 »	2,51 »	11,18 »	2,89 »
Չերզէյն	14,05 »	4,82 »	16,86 »	6,52 »

Այս ազիւսակից մենք տեսնում ենք, որ Սիմմենթալ և
Չերզէյն ցեղի կովերն կաթը հարուստ է լինում չոր-պինդ
նիւթերով և ճարպով և կաթնաբերութեան ընթացքում այդ
նիւթերի քանակը զգալի կերպով աստիճանաբար աւելանում է,
մինչդեռ Օտտֆրիզլանդի կովերն կաթը աղքատ է մնում այդ
նիւթերով, բայց համեմատաբար հարուստ ճարպով:
Փորձերը ցոյց են տուել, որ կաթի ընտանեկ եղանակով պա-
կասելու առաջը կարելի է առնել, միայն պէտք է հարուստ
նիւթերով համապատասխան կեր տալ, որն հետ սերտ կապ ու-
նի նաև կենդանու մարմնի քաշը: Աերջնիս պակասելը պարզ

ապացոյց է կերն անբաւարար լինելուն, որն պատճառով և շատ
արագ կերպով պակասում է կովի կաթը: Կաթնաբերութեան
ընթացքում, եթէ կովն քաշը կարողանանք միևնոյն աստիճանի
վերայ պահել, կարելի կլինի յաջողութեամբ կուռել կաթնային
գեղձն այդ բնութեան դէմ, և հարկադրել որոշ չափով կաթ
արտադրուելուն, և որովհետև այդ նպատակին հասնել կարելի
է միմիայն շատ լաւ սնունդ մատակարարելով կովերին, ուստի
և պէտք է առանձին ուշադրութիւն դարձնել նպատակայարմար
եղանակով կերակրելու վերայ:

Գ. Կերը.— Կերն տեսակը և նորանում եղած սննդարար
նիւթերն ևս մեծ ազդեցութիւն են ունենում կաթի կազմու-
թեան վերայ. կաթի աւելանալու կամ պակասելու պատճառնե-
րից գլխաւորն անշուշտ սնունդն է: Թէպէտ կերն մասին առան-
ձին դիտում բաւական մանրամասնօրէն խօսուել է, բայց աւե-
լորդ չէ լինի լրացնել և պարզել մի քանի կարևոր կէտեր, որոնք
մեծ նշանակութիւն ունեն կաթնաբեր գործարանի՝ գեղձերի
գործունէութեան նկատմամբ: Ինչպէս միւս կենդանիներին,
նոյնպէս և կովերին անբաւարար քանակութեամբ սննդարար
կեր տալով, մարդ վնասած կլինի իւր արդիւնաբերութեան: Կերն
սննդարար նիւթերից սպիտակուցը կաթի կազմուելու համար
խիստ կարևոր նշանակութիւն ունի. նորա միջի պինդ նիւթերը
սպիտակուցային նիւթերն փոխանակութիւններն են առաջա-
նում: Կերն մէջ որքան շատ լինեն սպիտակուցային նիւթեր,
նոյնքան աւելի եռանդով տեղի կունենայ այդ փոխանակութիւ-
նը և նոյնքան շատ կաթ կարտադրուի: Եթէ սպիտակուցը քա-
նակութեամբ անբաւարար է՝ խիստ զգալի ներգործութիւն
է ունենում կաթնային գեղձի գործունէութեան վերայ: Ոմանք
կարծում են, թէ ընտիր աեսակ կով պահելով կունենան նաև
ընտիր և առատ կաթ: Բայց տեսակն հետ անհրաժեշտ է, որ
կերն ևս ընտիր լինի և առատ:

Կաթի ինչպէս առատութեան, նոյնպէս և արհուլութեան
վերայ բարերար ներգործութիւն է ունենում խոտաւէտ արօտ-
ներում արածելը, որովհետև կաթնային գեղձի գործունէութիւ-
նը խիստ զբոսւում է, երբ կենդանին ստանում է առատօրէն
զիւրամարս, սննդարար նիւթերով հարուստ կեր և մաքուր օդ:
Այստեղ առաջ ենք բերում Կիւ քաղաքի փորձերի կայարանում
պահած 10 անգելի կովերից 1877—1878 թ. ստացած կաթի հա-
մեմատական չափը: Գոյս ծինը տեղի էր ունեցել հոկտեմբեր և
վետրուար ամիսների միջոցներում և կերը կարելի է 4 գլխաւոր
շրջանների բաժանել:

- 1. Ախոռում մ'նացած և ձմեռնային չոր կերով սնուած.
 - 2. Ախոռում մ'նացած և կանաչ կերով սնուած.
 - 3. Արօտներում սնուած, և
 - 4. Այնպէս, ինչպէս առաջին շրջանում.
- Տասը կովերից ամենայն օր ստացուում էր մօտաւորապէս հետևեալ քանակութեամբ կաթ:

Ամբողջ տարուայ ընթացքում միջին թուով	4 փ.	27, 7 քրվ.
Առաջին շրջանում մինչև ապրիլի 30-ը	7 »	1, 3 »
Առաջին շրջանի վերջին շաբաթը	6 »	14, 5 »
Երկրորդ շրջանում մինչև մայիսի 15-ը	6 »	24, 2 »
Երրորդ շրջանի առաջին շաբաթում	6 »	27, 78 »
« » երկրորդ շաբաթում	7 »	1 »
« » երրորդ շաբաթում	7 »	6, 2 »
Վերջին շաբաթում	1 »	17, 3 »
Առաջին շրջանի ժամանակ ամենաշատ կաթ է ստացուել փետրուարի 19-ին	7 »	16 »
Երրորդ շրջանի ժամանակ ամենաշատ կաթ է ստացուել մայիսի 24-ին	7 »	27, 4 »

Առաջ բերած թուանշանները պարզ երևում է կաթնաբեր գեղձի գործունէութեան փոփոխութիւնները: Մինչդեռ ձմեռը ախոռում սնունդ ստանալիս օրական ստացած կաթի քանակը իջել է 6 փ. 14, 5 քրվ., արօտներում արածելով կրկին բարձրացել է մինչև 7 փ. 6, 2 քրվ. և հէնց այդ ժամանակ է, որ մայիսի 24-ին կաթի քանակութիւնը հասել է մինչև 7 փ. 27, 4 քրվ., մի չափ, որ երբեք ուրիշ անգամ չէ եղել, չնայելով որ կաթնաբերութեան շրջանի սկզբնէն, երբ ախոռում էին սնունդ տալիս, օրական ստացուած կաթի քանակը հասել է 7 փ. 16 քրվ.: Բայց կաթի այնքան առատ արտադրուելը, որ արօտներում արածելու հետևանք է, երկար չի տևել և արդէն մի քանի շաբաթ անցնելուց յետոյ զգալի կերպով ընկել է և յետոյ աւելի և աւելի պակասել, մինչդեռ առաջ նա երկար ժամանակ մ'նացել էր մօտաւորապէս միևնոյն բարձրութեան վերայ: Այն կովերը, որոնք ախոռի մէջ են սնուում չոր խոտով, հացահատիկների ալիւրով և առհասարակ ընտիր նիւթեր պարունակող կերով, շատ իւրոտ կաթ կը տան, խի նորա, որոնք ջրալի կեր կամ կանաչ խոտ են սնուում, կտան, թէպէտ առատ, բայց ոչ իւրոտ կաթ և այդպէս կաթի մէջ ճարպ և պանրածին սակաւ կգտնուի: Ահա այս է պատճառը, որ աշնանային և ձմեռային կաթը աւելի հարուստ է լինում պինդ նիւթերով, քան գարնանային և ամառ-

նային կաթը: Բուսականութեամբ հարուստ չոր արօտներում արածող կովերը աւելի թանձր կաթ կտան, քան խոնաւ ճահճային տեղերում արածողները: Մանրեան նիւթերի մօտաւոր համեմատութիւնը ցոյց տալու համար առաջ ենք բերում հետևեալ աղիւսակը.

6 փութ հասարակ չոր խոտը համապատասխան է՝

24—30 փ.	կանաչ խոտի,
16,5—18 »	լազուտի կանաչ տերեւների,
5 »	չոր առուոյտի,
6 »	չոր վայրի առուոյտի,
18 »	ցորենի յարդի,
12 »	գարու յարդի,
11 »	բատատի
17 »	ճահնդեղի,
2,5—3 »	լազուտի ալիւրի,
2,5 »	ցորնի ալիւրի,
3,5—4 »	ցորնի թեփի,
2,5 »	կոպտոնի, և այլն:

Ե. Հողը եւ նորա համապատասխան բուսականութիւնն ևս մեծ ազդեցութիւն ունին կաթի յատկութեան, մանաւանդ համի վերայ: Շվէյցարական, կովկասեան և առհասարակ լեռնային արօտների առանձնաչափութիւնիցն է շվէյցարական պանրի համը և անուշահոտութիւնը: Այս դէպքում նշանակութիւն ունի հանրային աղբի բաղադրութիւնը, որ այլ և այլ հողերի մէջ տարբեր է լինում: Միաժամանակ աղբում են նաև արեգակի լուսաւորութիւնը, երկրի բարեխառնութիւնը և օդի խոնաւութիւնը:

Դ. Կովի սարիքը, բացօթեայ շարժումները, կլիման, օդի սափութիւնն եւ մաքրութիւնը, մարմնի մաքրութիւնն եւ այլն:—Կովի կեանքի որոշ շրջանում նիւթերի փոխանակութեան արագութիւնը հասնում է ամենաբարձր աստիճանին և հէնց այդ ժամանակ սկսում է արտադրուել ամենամեծ քանակութեամբ կաթ: Առաջիններից սկսած մինչև երրորդ կամ չորրորդ ծինը, այսինքն մինչև 7 տարեկան հասակը, կաթն աստիճանաբար աւելանում է և հասնում է ամենամեծ չափի, որից յետոյ սկսում է նուազել. մինչև 11—12 տարեկան հասակը դեռ բաւարար չափով կաթ է ստացուում, ապա պէտք է կենդանուն սպանդանոց ուղարկել: Բայց այս ընդհանուր կանոնը այլ և այլ պատճառներով շատ բացառութիւններ ունի: Հիմք կայ ենթադրելու, որ որքան կովը մեծանում է, այնքան աւելի նորա կաթը աղնուանում է և իւրոտ դառնում,

Թէպէտ երբեմն պատահում է նաև հակառակը:

Բաց օդի մէջ չափաւոր շարժումները շատ օդտակար են կովերին, նպաստում են նիւթերի փոխանակութեան արագանալուն: առողջութեան և կաթի աւատութեան: Եթէ հանդամանքները ներեն, պէտք է միջոց տալ աղատ շարժումներ դործելու: Կան տեղեր, որտեղ կովերին աշխատեցնում են, և եթէ այդ աշխատութիւնները չափաւոր լինեն, կաթը կաւելանայ: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ աշխատող կաթնատու կովերի սնունդն ևս աւելի առատ պէտք է լինի:

Լայպցիգի գիւղատնտեսական լինստիտուտում երկու կովերի վերայ փորձեր են կատարուել իմանալու համար թէ աշխատութիւնը ի՞նչ ազդեցութիւն է ունենում կաթի վերայ: Կովերին պահերաբար մի շաբաթ աշխատեցնում էին օրական 9—10 ժամ և մի շաբաթ հանգիստ տալիս և այդ ժամանակուայ ընթացքում նշանակում էին կաթի քանակութիւնն և բաղադրութիւնը: Կովերով վարել են հնձած տեղեր, սայլի լծել խոտ են կրել և այլ նման աշխատութիւններ կատարել: Ահա փորձերի արդիւնքը.

Ա. Կ Ո Վ.		Աւստրիական միջոցում.		Հանգստութեան միջոցում.	
Կաթի քանակը	21 գրվ.	21	գրվ.	23	գրվ.
Չոր նիւթեր	13, 3 օ/օ	13, 3	օ/օ	13	օ/օ
Ճարպը	4, 3 »	4, 3	»	4	»
Չոր նիւթերի քանակը	3 գրվ.	3	գրվ.	2, 8	գրվ.
Ճարպի քանակը	1 »	1	»	0, 99	»

Բ. Կ Ո Վ.		Աւստրիական միջոցում.		Հանգստութեան միջոցում.	
Կաթի քանակը	11, 6 գրվ.	11, 6	գրվ.	12, 7	գրվ.
Չոր նիւթերը	13, 3 օ/օ	13, 3	օ/օ	13, 2	օ/օ
Ճարպը	4, 3 »	4, 3	»	4, 2	»
Չոր նիւթերի քանակը	1, 6 գրվ.	1, 6	գրվ.	1, 5	գրվ.
Ճարպի քանակը	0, 48 »	0, 48	»	0, 5	»

Ամերիկայում մասնագէտները ցոյց են տուել կովի յոգնածութեան ազդեցութիւնը կաթի յատկութեան վերայ այսպէս. վեր են առել ճանապարհորդութիւնից քիչ յոգնած երեք կովեր և առաւօտեան ու երեկոյեան կթել են, իւրաքանչիւրից ստացուած կաթը վերլուծել են իւրեանց բաղադրելէ մասերի. առաջին կովի կաթից յաջորդաբար ստացուել է 3, 72 օ/օ, 3, 6 օ/օ, 2, 6 օ/օ, 2, 9 օ/օ, 3, 4 օ/օ. կարագ, մինչդեռ ա-

ռաջ պարունակում էր միշտ 3, 4 օ/օ. կարագ: Այս փորձերից երևում է, որ 6-րդ անգամ կթուելուց յետոյ, այսինքն ճանապարհորդութիւնից 3 օր յետոյ ստինքի դեղձերը իւրեանց բնական վիճակի մէջ կլինեն:

Միւս երկու կովերի տուած կաթից ստացուել է յաջորդաբար՝

Երկրորդից՝ 3, 2 օ/օ, 8, 3 օ/օ, 6, 5 օ/օ, 4, 2 օ/օ, 3, 6 օ/օ.
Երրորդից 1, 5 օ/օ, 2 օ/օ, 2, 4 օ/օ, 3, 8 օ/օ, 7, 2 օ/օ, 11, 1 օ/օ, 5, 3 օ/օ, 4, 7 օ/օ, 3, 9 օ/օ: Աւելի ուշադրութեան արժանի է երրորդ կովի տուած կաթը, որ սկզբում քիչ (1, 5 օ/օ) կարագ է պարունակում, ապա երթալով աւելանում է և երրորդ անգամ կթուելիս յանկարծ առաւօտեան բարձրանում է 7, 2 օ/օ, երեկոյեան 11, 1 օ/օ. վերջապէս իններորդ անգամ կթած կաթն իւր բնական վիճակն է ընդունում: Միւսին փորձերը ցոյց են տուել, որ կենդանիների յուղմունքն ևս ազդում է կաթի քանակութեան վերայ. յուղուած կովը շատ քիչ կաթ կտայ:

Փորձերը ցոյց են տուել, որ կովերին շատ աշխատեցնելուց, ուժերը լարելուց կաթի քանակը սաստիկ պակասել է, իսկ ճարպն աւելացել. կաթի միւս բաղադրելէ մասերը համարեա անփոփոխ են մնացել: Յոգնածութեան ազդեցութիւնը աւելի զգալի է լինում երկրորդ անգամ կթելիս. այս անգամ ևս ճարպի քանակութիւնն աւելանում է:

Կլիման, օդի տաքութիւնը, խնամելու եղանակը և ախոռն ու կովերի մարմինը մաքուր պահելը ազդում են կաթի առատութեան վերայ: Ձմրան սաստիկ ցրտութիւնը, ամրան սաստիկ տաքութիւնը և մանաւանդ բարեխառնութեան զգալի փոփոխութիւնները վնասակար են կաթի թէ առատութեան և թէ յատկութեան կողմից. ընդհակառակը բարեխառն և խոնաւ կլիմաները նպաստաւոր են: Ահա այս է պատճառը, որ շատ կաթ տուող կովերը բարեխառն և խոնաւ երկրներն են: Կլիման ազդեցութիւն է ունենում նաև կաթի բաղադրութեան վերայ. չոր, ցամաքային կլիմայի կենդանիներն աւելի թանձր և իւղոտ կաթ են տալիս, քան թէ խոնաւ, ծովային կլիմայինը: Այսպէս օրինակ, հոլլանդական և մի քանի ուրիշ ցեղի կովերը Ռուսաստանում տալիս են աւելի իւղոտ կաթ, քան թէ միւսին կովերը իւրեանց հայրենիքում կամ խոնաւ կլիմայ ունեցող տեղերում: Ախոռի տաքութիւնը պէտք է լինի 12—14 աստիճան անփոփոխ, միայն պէտք է աշխատել միշտ օդը փոփոխել:

Որովհետև մարմնի մաքրութիւնը խիստ բարեբար ազդեցութիւն է ունենում կովերի առողջութեան վերայ, ուստի նո-

րա մաքրութեան մասին միշտ հող տանելով, մենք նպատակաւ
կլինենք կաթի աւելանալուն:

է. Կով կրելու չափն ու ժամանակը. — Բաւական մեծ ազ-
դեցութիւն է ունենում կաթի քանակի և յատկութեան
վերայ նաև այն հանգամանքը, թէ կովը օրը քանի՞ անգամ է
կթուում և ո՞ր ժամերին: Գիտութիւնը և փորձը որոշել են, որ
ամառը կովերին պէտք է կթել երեք անգամ՝ ա) առաւօտեան
արօտի ասնելուց առաջ, բ) կէսօրին և դ) երեկոյեան արօտա-
տեղերից վերադառնալուց յետոյ. իսկ ձմեռը օրական երկու
անգամ՝ առաւօտեան և երեկոյեան: Շատ ատեղեր ամառը երկու
անգամ կթելը բաւական են համարում, պատճառ բերելով, որ
կըր այդքան անգամ կթելով էլ նոյնքան կաթ կտտացուի, որքան
և երեք անգամ կթելով: Բայց այդ սխալ պատճառաբանութիւն
է. այդպէս անողները պէտք է խմանան, որ դորանով վնասում
են կաթնատու կովերին և զրկում կաթից: Փորձուած է, որ
երեք անգամ կթելով ոչ թէ միայն կաթի քանակութիւնն է ա-
ւելանում, այլ և կաթը աւելի իւղոտ է դառնում, քան եր-
կու անգամ կթելիս: Առատ կաթ տուող կովերի կաթի քանա-
կը կպակասի, եթէ շուտ շուտ չկթուեն:

Գանիացի յայտնի կաթնատանտես Խեզելունտը վերջերս գը-
տել է կթելու մի նոր խելացի եղանակ: Մի կով, որ ամէն ան-
գամ 8, 5 գրվ. զօրեղ կեր, 9, 7 գրվ. շաղգամ և քիչ էլ խոտ
էր ստանում, ծնելուց յետոյ ամբողջ երեք շաբաթ շարունակ
օրական միայն 8, 5 գրվ. կաթ էր տալիս: Սիզըներում օրական
կթում էին 3 անգամ, բայց յետոյ 8 անգամից ոչ պակաս: Նոյն
կովը առաջուց չափ և միևնոյն տեսակի կեր ընդունելուց
յետոյ սկսեց աւելացնել իւր կաթը և հասցրեց 22—24, 4 գրվ.
և այնուհետև այլ ևս չպակասեցրեց, չնայելով որ երեք շաբաթ
անցնելուց յետոյ նորից սկսեցին կթել 3 անգամ օրական: Այդ
կովն ամբողջ տարուայ ընթացքում 167 փ. 23 գրվ. կաթ տուեց:
Միևնոյն փորձերը դործ են զրել նաև ուրիշ կովի վերայ, որը
այդ կովն սկսել են կթել օրական 12, 2—14, 6 գրվ. կաթ: Երբ
այդ շաբաթուայ ընթացքում բարձրացել է մինչև 35, 2 գրվ. և
դեռ 21¹/₂ ամիս անցնելուց յետոյ կովը շարունակել է օրական
37, 7 գրվ. կաթ տալ: Խեզելունտի ասելով այս նոր եղանակով
կթելու առաւելութիւնն այն է, որ օրական շատ անգամ կթե-
լը բարեբար ազդեցութիւն է ունենում կովի ստինքի գործու-
նէութեան վերայ:

Մի ժամանակ Եւրոպայում սովորութիւն կար (այդ սովո-

րութիւնը մասամբ այժմ էլ գոյութիւն ունի) կովերի առաջին
ծնից յետոյ մի առժամանակ շուտ շուտ կթել: Այսպէս օրինակ,
ոմանք սիզըր օրերում ամէն 2—3 ժամը մի անգամ էին կթում,
այս 3—4 ժամը մի անգամ և վերջապէս օրը հինգ անգամ:
Այս կերպ շարունակում էին կթել 2—6 շաբաթ, որից յետոյ
սկսում էին օրական 4 անգամ և մի քանի ամիս անցնելուց յե-
տոյ 3 անգամ կթել: Այս կերպ վերաբերողներին թիւը, շնորհիւ
աշխատաւոր ձեռներին պակասութեան՝ պակասել է, թէպէտ մի
քանի գործունեայ, աշխատասէր ազարակատէրեր, և գիւղացի-
ներ մինչև օրս շարունակում են նոյնը:

Կաթի առատութեան և յատկութեան վերայ ազդեցու-
թիւն է ունենում նաև միշտ միևնոյն ժամին և հաւատար ժամա-
նակամիջոցներով կթելը: Փորձուած է, որ միևնոյն ժամին կթե-
լով կաթը 10%⁰ կաւելանայ: Օրը երեք անգամ կթելիս իրար մէջ
եղած ժամանակամիջոցը պէտք է 8 ժամ լինի, իսկ երկու անգամ
կթելիս՝ 12 ժամ (առաւօտեան 5 ժամին և երեկոյեան 5 ժամին):
Պետք է կթել միշտ կերից առաջ կամ յետոյ, բայց ոչ երբէք կե-
րի ժամանակ, մանաւանդ ձմեռը: Կթողն անպատճառ պէտք է
ճշտապահ լինի և ամէն անգամ օրուայ ճիշտ միևնոյն ժամին
կթէ: Երեկոյեան կաթն աւելի հարուստ է պինդ նւթերով, քան
թէ առաւօտեանը, որն աւելի ճարպ և պանրածին է պարունա-
կում:

Մաքրութեան նշանակութիւնը կաթնահետաքրութեան մէջ.

— Կաթնատանտեսութիւնը շահաւէտ դարձնելու ամենակարևոր
պայմաններից մէկն է նաև չափազանց մաքրութիւնը: Զանազան
գործարանական նւթերից, անատունների ազրից, կաշուի վերայի
թեփից, մաղերից, կաթնային մնացորդներից, փոշուց յառա-
ջացած անմաքրութիւնները ոչ միայն իւրեանց մէջ անթիւ ան-
համար սոււնիկեր են պարունակում, այլ և դոցա համար պարարտ
հող են ներկայացնում: Հետևապէս, եթէ կամենում ենք սահմա-
նափակել կամ բոլորովին արգելել սոււնիկերի գործունէութիւնը,
որ մեծապէս վնասում է կաթին, առաջին դործը պէտք է լինի
կաթնատնից հեռացնել բոլոր անմաքրութիւնները և ձեռք առ-
նել բոլոր միջոցները, որոնք նպատակում են մաքրութեանը և
զիմազրում սոււնիկերի դարգացմանը:

Պէտք է առանձին ուշ դարձնել նաև գոմերի և կաթնա-
տընների օդի մաքրութեան վերայ: Որքան անմաքոր շինի գոմի
օդը, այնքան աւելի մեծ թուով սոււնիկեր կպարունակէ և աւելի
շատ սաղմեր կընկնեն կաթի մէջ, որով և աւելի արագ կերպով

տեղի կունենան նորանում ամէն տեսակ վնասակար փոփոխութիւններ:

Կաթնատան օդը մաքուր լինելուց զատ, պէտք է հնար եղածին չափ նաև չոր լինի, բացի այն տեղից, ուր պանիր է մակարդում, որովհետև կաթն ընդունակ է խոնաւութիւնից յառաջացած և օդի մէջ տարածուած մըլահոտը, անմաքրութիւններն իւր մէջ ընդունելու և նոյնը հաղորդելու իրենից պատրաստած իւղին: այլ և սուկիերը շատ լաւ բազմանում են խոնաւ օդի մէջ: Այս պատճառով կաթը չպէտք է պահել նաև այնպիսի տեղերում, որոնք լըրե ընակարան, մառան, խոհանոց են ծառայում, որովհետև այդպիսի տեղերի օդը յաճախ հարուստ է լինում վատ գոլորշիներով և բախտերիաներով: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ կաթնատան դիրքը, առատաղի և պատերի ներկը, յատակի կազմութիւնը պէտք է հնար եղածին չափ բաւարարութիւն տան մաքրասիրութեան պահանջներին: Առատաղիները, պատերը և յատակներն այնպէս պէտք է շինուած լինին, որ կարելի լինի հեշտութեամբ մաքրել, լուանալ:

Նոյն կանոնները պէտք է պահպանել նաև կաթնամանները վերաբերմամբ: Ամանները կարող են լինել փայտից կամ մետաղից, դիւաւորապէս թիթեղից (կլայեկած երկաթ), կամ արծնապակած և կամ վերջապէս իւղաներկով ներկած: Մետաղեայ ամաններն աւելի հեշտ են մաքրում, այդ պատճառով աւելի յարմար են համարում փայտեայ ամաններից: վերջիններս ծակոտիքների մէջ կաթի մնացորդներն աւելի հեշտութեամբ են մնում: Փորձերը ցոյց են տուել, որ փայտեայ ամաններն մէջ աւելի շուտ և արագ են աճում սուկիերը, քան թիթեղեայ և արծնապակած ամաններն մէջ: Այն դէպքում, երբ արծնապակած ամանները դժուար է ձեռք բերել, աւելի լաւ է գործածել թիթեղեայ ամաններ: Թիթեղից շինուած ամանները բացի հեշտութեամբ մաքրուելուց, թեթեւութեան պատճառով աւելի յարմար են գործածութեան. թէպէտ փայտեայ ամաններն ևս այն առաւելութիւններն ունին, որ աւելի արժան և ամուր են լինում և վատ հաղորդող են տաքութեան*:

Լաւ է նախ տաք և ապա սառն ջրով լուանալ, սրբել, չորացնել և առժամանակ թողնել մաքուր սառն օդի մէջ: Կաթնամանները աւելի լաւ մաքրել կարելի է խողանակով և լուալ նատրոնի մոխրաջրի (НАТРОВЫЙ ШЕЛОКЪ) լուծուածքով: Գործա-

* Հիանալի կարճամաններ կարելի է ստանալ Մոսկուայում Ն. Վ. Վերեչայգինից եւ ուրիշ քաղաքներում նորա ներկայացուցիչներից:

դրելիս հարկաւոր է այդ լուծուածքի մի մասը վերցնել և լսաւնել 100 մաս ջրի հետ, այնպէս որ ստացուած նոր լուծուածքը պարունակէ իւր մէջ 0,17% նատրոն. Սոդայի (կալաքար) լուծուածքի հետ համեմատած սա աւելի յարմար է, որովհետև աւելի դիւրութեամբ է խառնում ջրի հետ, աւելի լաւ է լուծում, մաքրում ճարպը և սոդայից էլ թանգ չէ: Այս գործողութիւնը կատարելուց յետոյ ամանը պէտք է լուանալ նաև մաքուր և սառն ջրով: Յարմար միջոց է համարում բացիլներ ոչնչացնելու համար նաև կրկնածմբաթթու կրի (ДВОЙНАЯ СЪРНИСТО—КИСЛАЯ ИЗВЕСТЬ) հեղուկ վիճակի մէջ գործադրելը: Այս լուծուածքից պէտք է ցանել առատաղի, պատերի և յատակի, նմանապէս ամանները վերայ: Նախ քան մի աման գործադրելը հարկաւոր է ջրով լաւ լուանալ, իսկ մետաղեայ ամանները մաքուր շորով ևս չորացնել: Թէ նատրոնի և թէ սոդի լուծուածքներով լուանալուց յետոյ ամանները պէտք է կանոնաւորապէս մաքրել, որովհետև այդ նիւթերը անհաճոյ համ են ունենում: Աւելի յարմար է ժամանակ առ ժամանակ, մինչև իսկ ամէն օր ամանները ենթարկել չափազանց շատ տաքացրած գոլորշու (105—110°) ազդեցութեան, որը շոգեմբենայ կամ շոգեկաթսայ եղած տեղերում հեշտութեամբ կարելի է կատարել: Շոգին խողանակից և ջրից անհամեմատ աւելի լաւ կարող է մանել ամանների ծակ ու ծուկերը և ոչնչացնել այնտեղ եղած անմաքրութիւնները, սուկիերը:

Ամանները մաքրելուց յետոյ (մանաւանդ փայտեայ ամանները) պէտք է լաւ չորացնել. հակառակ դէպքում հեշտութեամբ մըլահոտ են ստանում, որ ոչ միայն կաթին, սերին և նոցանից ստացուած այլ արդիւնքներին է վնասում, այլ և սուկիերի զարգացմանը նպաստում է:

Կիրք. Կթելու գործողութիւնը շատ նշանակութիւն ունի կաթնատեսութեան մէջ, որովհետև կթելու եղանակից կախումն ունի ստացուած կաթի քանակը, որակը և մաքրութիւնը: Այս դէպքում ևս հարկաւոր է ձեռք առնել մաքրութեան բոլոր միջոցները, իսկ կթել չիմացողը կլնաստէ լաւ կաթնոտ կովին:

Կովից հնար եղածին չափ մեծ քանակութեամբ մաքուր և իւղոտ կաթ ստանալու համար պէտք է առաջնորդուել հետեւեալ կանոններով:

1) Ամէն անգամ կթելուց առաջ կովի ամբողջ ստինքը, մանաւանդ պտուկները, կովկիթը, կթողի ձեռները և կթելու

համար զործածուած բոլոր ամանները պէտք է շատ մաքուր լուանալ և ապա մաքուր շորով սրբել, չորացնել: Առ հասարակ որչափ մաքուր պահուել կողերի ստինքը, այնքան աւելի ընտիր կաթ հտացուել: Այդ աչքի առաջ ունենալով կթելիս հորթերին չպէտք է թողնել մայրերի մօտ: Կթելուց առաջ պտուկները փափկացնելու համար հարկաւոր է թարմ կաթ քսել, յետոյ փոքր լնչ զեանի վերայ կթել, և ապա կովկիթի մէջ:

Թէ որքան կարևոր է կաթնատնտեսութեան մէջ մաքրութիւնը, պարզ երկում է Սօկրատի կատարած զխողութիւնները: Միւսինէն քաղաքի անմաքուր օդ պարունակող մի գոմում առանց նախօրօք պտուկները լուանալու կթել են կովը, ապա հէնց նոյն կովը, առաջուց պտուկները և կթողի ձեռները լուանալով: կթել են բացօթեայ: Այդ երկու անգամ ստացած կաթը պահել են 15° բարեխառնութեան մէջ. 50 ֆամ անցնելուց յետոյ մակարդուել է առաջին անգամ կթած կաթը, իսկ 80 ֆամից յետոյ երկրորդ անգամ կթածը:

Որպէս զի աւելի մաքուր և սաղմերից աղատ կաթ ստացուի, բացի ստինքը լուանալուց հարկաւոր է նաև նորա շուրջն եղած որովայնի միւս մասերը և կողերը ձխասանրով (զաշաւի) և խողանակով օրական երկու անգամ մաքրել, գոմի օդը փոխել, կենդանիների աղբը հեռացնել, փռուածքի համար գործ դնել չիչացած յարգ, կովերի կերի միջից հեռացնել ամէն տեսակ թթուած, խմորուած, փչացած նիւթեր: Կթելու ժամանակ կովերին չպէտք է կեր տալ: Եթէ հնարաւոր է, լաւ կլինի նոյն իսկ գոմի պատերը և յատակը ամենայն օր մաքրել և լուանալ: Իւրաքանչիւր կով կթելուց յետոյ կթողը պէտք է նախ ձեռները լուանայ մաքուր ջրով և ապա մօտենայ մի ուրիշ կով կթելու: Փորձերը ցոյց են տուել, որ անխնամ, անմաքուր պայմաններին մէջ ստացուած կաթը կտրող է 2000 անգամ աւելի բակտերիաներ պարունակել, քան երբ կանոնները հնար եղածին չափ պահպանուեն:

2) Կթելուց առաջ անհրաժեշտ է մի երկու րոպէ զրդեղ ստինքը և ձգել պտուկները, մանաւանդ այն կովերին, որոնք սովորութիւն ունին կաթը պահել ստինքներում: Կթողը որչափ հանգիստ լինի՝ աթուակի վերայ նստած, նոյնչափ բարեխղճաբար կվերաբերուի հարկաւ զէպի իւր գործը:

3) Ամէն մի պատահական մարդու, մանաւանդ երեխայի ձեռք չի կարելի կով տալ կթելու: Կթողը պէտք է հմուտ լինի և այնքան ոյժ ունենայ, որ կարողանայ բոլորովին քամել

կովի ստինքը: Անպատճառ հարկաւոր է ամբողջ բռունցքով հինգ մատով, և ոչ թէ միայն բթամատով ու ցուցամատով կթել, մանաւանդ սկզբներում. երկու մատով կթելիս կենդանին աւելի ցաւեր է զգում և անհանգիստ է լինում: Հողմանդացիք այսպէս են կթում. նախ ամբողջ բռունցքով բռնում են պտուկը այնպէս, որ ցուցամատով սեղմում, ճնշում է նորա արմատը, ապա յաջորդաբար սեղմում են հետևեալ մատները և այդպիսով կաթը հոսում է պտուկի վերևի մասերից գէպ ներքև, ծայրը, և թափւում է ամանի մէջ: Հեշտութեամբ կարելի է սովորել այս եղանակով կթելը. կթողի համար սա պակաս դժուարին և պակաս ձանձրալի է, քան սովորական եղանակով կթելը: Կով կթելը ջահել հասակից պէտք է սովորել:

4) Պէտք է կթել արագ արագ, մանաւանդ երիտասարդ և կաթնառատ կովերին, որպէս զի ստինքը գրգռուի. միայն ի հարկէ առանց չափազանցութեան: Փորձերը ցոյց են տուել, որ որքան արագ կթուել, այնքան աւելի կաթ հտացուել: Գանդաղութիւնը կարագի մի մասի կորստեան պատճառ է դառնում: Գանդաղ կթելը վատ է ազդում նոյն իսկ կովի վերայ և նա դժկամալուութեամբ է կաթ տալիս:

Գերմանական մի ազարակում այս նպատակով 5 կովերի վերայ փորձեր են կատարուած, որոնց փոխ առ փոխ կթել են՝ նախ մի աշխոյժ երիտասարդ, արագ արագ, և ապա մի ծերունի՝ դանդաղ կերպով: Առաջ ենք բերում այդ փորձերի հետևանքը զգերմանական լիտեր չափով:

Կովերի հ.-ը	դանդաղ կրելիս	արագ կրելիս
1.	32	38,5
2.	34,5	51,5
3.	50 »	68,5
4.	40.5	43 »
5.	44.5	50 »

Այս աղիւսակից մենք տեսնում ենք, որ երկու կթողների ստացած արդիւնքները զգալի կերպով տարբերում են և բոլոր գէպերում էլ արագ կթելիս աւելի է ստացուել. հետևաբար և անհրաժեշտ է միշտ արագ կթել:

5. Պէտք է կթել մինչև վերջին կաթիլը և բնաւ չընդհատել, քանի որ դեռ կաթ կայ ստինքի մէջ: Ընդհատումներով կթած ժամանակ ընտիր կաթ չի ստացուում: Սկզբներում կթած կաթը աւելի ջրալի է լինում, մինչդեռ մնացած մասը կաթի ամենաբարձր, պինդ մասն է՝ հարուստ կարագով: Կաթի ճարպային

մասերը թեթև լինելով բարձրանում են ստինքի վերևի մասերը, ուստի ամենևց վերջը կթած կաթը աւելի լւղոտ է լինում: Ստինքի մէջ կաթ թողնելը ձեռնտու չէ, և նոյն իսկ վնասակար է. կովը կարող է պահասեցնել այդպիսով կաթը, մնացած մասը արգելք կդառնայ ապագայում դոյացուող կաթին, ստինքներում ու պտուկներում կարող է մահարդուել և բորբոքում յառաջացնել. բացի դորանից պնդացած մակարդը կարող է ընկնել նոր կթած կաթի մէջ և փչացնել:

Շատերը կարծում են, որ կթելուց յետոյ մի փոքրիկ բաժակ կաթ հազիւ մնացած լինի կովի ստինքի մէջ, բայց այդ սխալ է: Փորձերը ցոյց են տուել, որ երբեմն մինչև իսկ մի շիշ կաթ թողած են լինում, և պատճառն այն է, որ կովը շատ անգամ իւր ուղածին պէս կարողանում է պահել, արգելել կաթը ստինքում:

Անհրաժեշտ ենք համարում այստեղ առաջ բերել մի փորձառու և յայտնի գիւղատնտեսի կատարած փորձերի արդիւնքը: Նա իւր փորձերը կատարել է մի այդատուղեան կովի վերայ, այսպէս: Որովհետև երեկոյեան և առաւօտեան կթելիս կողմնակի մարդիկ կային կանգնած, կթողը հմուտ անձը չէր, իսկ կովն էլ նորան սովոր չէր, ստացուեց՝ երեկոյեան 2250, առաւօտեան՝ 2340 խոր. սանտ. կաթ: Ճաշի ժամանակ կով կթողը մի հմուտ, փորձուած մարդ էր, և չնայելով որ սովորաբար ճաշերին աւելի պակաս կաթ էր ստացւում, այդ օրը 4090 խոր. սանտ. կաթ ստացուեց: Ուրեմն կովն առաւօտեան բաւական քանակութեամբ կաթ էր պահել իւր ստինքներում: Բացի քանակութեան տարբերութիւնից, կաթի բաղադրութիւնը ճարպի վերաբերմամբ հետևեալն է.

Ճարպի քանակութիւնը

	ամբողջ կրածի մէջ	կրելու սկզբին	կրելու վերջերը
Երեկոյեան . . .	3,17% ₀	2,05% ₀	3,99% ₀
Առաւօտեան . . .	1,95 »	1,59 »	2,97 »
Կէս օրին	2,56 »	1,33 »	5,12 »

Այս հաշուով երեկոյեան ստացուեց 1/6, առաւօտեան 1/9, իսկ կէս օրին 1/4 գրուանքայ:

Վերջերս Գանեմարըացի մի հողագործ հաւաքել է կովերի կաթը չորս մասի բաժանած և իւրաքանչիւր մասն առանձին հարել, տեսել է, որ մի լիտր կարագ ստանալու համար կթելու սկզբներին ստացուած կաթից հարկաւոր է 172 լիտր կաթ

միջին կթածից	38 լիտր կաթ
վերջերից	27 « »
ամենավերջին կաթիլներէց	12 « »

Այս հաշուից պարզ երևում է, որ կաթի վերջին կաթիլները աւելի հարուստ են լւղային մասերով, և ուրեմն պէտք է մինչև վերջին կաթիլը քամել, մանաւանդ որ այդպիսով կովերի կաթնատուութեան կարողութիւնն ևս զօրանում է:

6) Մինչև վերջին կաթիլը դժուար կլինի կթել այն ժամանակ միայն, երբ կովի պտուկները ծածկուած են դորանուկներով (бородавки), որով դժուարանում է կթելը նոյն իսկ կթողի համար. երբեմն այնպէս է պատահում, որ կթելը կովին ցաւ է պատճառում, և նա շատ անհանգիստ է լինում ու դժուարացնում մինչև վերջը կանոնաւոր կթելը:

Վերջապէս երբեմն կովի ստինքը կամ նորա մի մասը վնասուած, վերան վէրքեր, ձեղքուածներ կամ բորբոքում յառաջացած է լինում. այս բոլորը կարող է պատահել մրսելուց, հարուածելուց, բայց ամէնից աւելի ստինքի անմաքրութիւնից և վատ կթելուց: Այս դէպքում կաթը սակաւ է լինում ո՛չ միայն նորա համար, որ հնար չը կայ մինչև վերջին կաթիլը կթելու, այլ և որ ստինքի դեղձի միջից կաթ արտադրելու գործողութիւնը վնասուած, խանգարուած է. մինչև իսկ երբեմն զործարանը բոլորովին դադարում է կաթ արտադրելուց:

Ուռած կամ վերաւոր ստինք ունեցող կովը արացի է տալիս, որովհետև ստինքին դիպչելը սաստիկ ցաւ է պատճառում: Չնայելով դորան հիւանդ ստինքը պէտք է օրսկան 3—4 անգամ մաքուր կթել: Այդպիսի ստինքից ստացուած կաթը շատ անգամ լոռ լոռ է լինում և գործածութեան համար անպէտք է. դորանով կարելի է միայն խոզերին կերակրել: Եթէ հիւանդ ստինքը չկթուի և կամ անկանոն կթուի, այն ժամանակ ստինքը, թթուած կաթից չաղատուելով՝ այնչափ կցուի կեղտով, որ մի կամ երկու պտուկը բոլորովին կփակուեն և այլ ևս կաթ չեն արտադրի: Այսպիսի կովերն այնուհետև իւրեանց ամբողջ կեանքում կկթուեն երկու կամ երեք պտուկներով և աւելի պակաս կաթ կաան:

7) Երբ ստինքը այս կամ այն կերպ վնասուած կամ վերաւորուած է լինում և ոչ մի կերպ հնարաւոր չէ կթել մինչև վերջին կաթիլը, որպէս զի լուրջ հիւանդութիւններ չյառաջանան, ստինքը չբորբոքուի՝ դործ են ածում յատկապէս այդ նպատակով պատրաստած կաթնահան գործիք (кастетъ), որի բարակ

խողովակը անց են կացնում պտուղի անցքի մէջ: Ամէն անգամ այս խողովակը, բացի $\frac{1}{4}$ ժամ տար ջրի մէջ թողնելուց, պէտք է լաւ ակտահանել և ապա գործ ածել: Խողովակը չպէտք է շատ հաստ լինի և ոչ էլ կարճ: Պտուղն առաջ պէտք է դնել պտուղի անցքի մէջ, որ շատ խորը չգնայ, ոչ աւելի քան պտուղի երկարութեան $\frac{5}{4}$ մասը:

Կթելու մեքենաներ շատ կան, բայց դրա բոլորն էլ այնքան օգտակար չեն համարում, ունին շատ աչքի ընկնող պահասութիւններ, որոնց պատճառով և շատ չեն տարածում: Պահասութիւնները հետեւեալներն են.

ա. Մեքենայով կովի ստինքի մէջ եղած կաթը բոլորը չէ կթում, այնպէս որ վերջերը մարդ ստիպուած է լինում մնացածը ձեռներով կթել:

բ. Մեքենայով կթել կարելի է միայն հանդարտ բնաւորութիւն ունեցող կովերին. վախկոտ կովերը շուտ կտան կովի կթը և վայր կձգեն խողովակը, այնպէս որ ամէն անգամ այս կերպ կով կթելիս մօտը պէտք է մարդ կանգնած լինի:

գ. Սատիկ ձգելու, քաշելու պատճառով պտուղները մէջ մեծ քանակութեամբ արեւն կսկսի հաւաքուել և կթելուց յետոյ կսկսեն կապտել. ուստի մեքենայով երկարատե կթելուց պտուղները երակները կարող են ընդլայնանալ և կովի ստինքը կիչանայ:

դ. Կովի կթներին իբրև պահապան և ստինքները մէջ մնացած կաթը կթելու համար հարկաւոր կլինի պահել աւելի թուով ծառաներ՝ այնպէս որ, եթէ աչքի առաջ ունենանք նաև մեքենայի գինը, որ բաւակա՞ն մեծ է լինում, կանստներ որ մեքենայով կթելը անհամեմատ աւելի թանկ է նստում, քան ձեռքով կթելը:

Մեքենայի գինը կախումն ունի կթած կովերի քանակութիւնից: Մի քանի կովեր կթելիս պէտք է գործ ածել ձեռքի օդահան մեքենայ (ручной воздушной насос): Երբ կովերը թիւը 50—80-ի է հասնում, անհրաժեշտ է ունենալ մի որ և է շարժիչ գործիք, այնպէս որ ամբողջ կազմութիւնը կնստի 2—3000 ռուբլի:

Որովհետև կթելու համար հնարած բոլոր գործիքները շատ անյարմարութիւններ ունին, մի քանիսը նոյն կսկ ժամանակի խնայողութիւն չեն անում և ստինքներից ամբողջ կաթը անհարող են մաքրել, լաւ կլինի արհամարհել այդպիսի գործիքները: Առհասարակ դժուար թէ գտնուի մի այնպիսի գործիք, որ ձեռքով կթելու նման կարողանայ օգտակար լինել. միայն, ինչպէս

ասացինք, երբ սակնքի հիւանդութեան ժամանակ ձեռներով անկարելի է դառնում կթելը, կարելի կլինի գործ դնել այդ գործիքներից յարմարագոյնը:

Ամէն անգամ կով գնելիս պէտք է դուրս լինել և ուշադրութիւն դարձնել, թէ արդեօք այդ կովը ստինքի բորբոքում ունի, կամ երբեք ունեցել է:

8) Կթելիս պէտք է աշխատել կովին (մանաւանդ երկնջին) այնպէս պահել, որ հանդիստ լինի, մարդկանցից չվախենայ, առանց վրդովուելու անարգել կերպով թոյլ տայ իրեն շփելու: Բայց եթէ կովերը ինչ ինչ պատճառներից ստիպուած չեն թողնում կթելու, յամառութիւն են առնում, երբեք չպէտք է բղաւել, ճշալ նոցա վերայ և կամ խփել, որով նորա աւելի կկատաղեն. աւելի լաւ կլինի շոյել նոցա և շփել կողերը: Նատերը կատաղած, զայրացած կովերը մէջքի վերայ դնում են մի թաց շորի կտոր, որով կենդանին կարճ ժամանակուայ մէջ հանգստանում է: Հողանդկայում կթելու ժամանակ վրդովուած, անհանդիստ կովերի առջևի ոտքը մէկը բարձրացնում կամ ետևի երկու ոտքը կապում են իրար, որ չկարողանան արայել աւլ, և կամ ստինքի առջևի կողմից փորի տակով մի հաստ թուկ են անցկացնում և այդ թուկի երկու ծայրերը կապում ընկ վերևը. միայն շատ չպէտք է ձգել թուկը, որ կենդանին չկարողանայ հեշտութեամբ շարժել անդամները:

Այսպիսով ուրեմն ամէն կթող պէտք է համբերող լինի, հող տանէ, որ կթելու ժամանակ կովերը չզայրանան, չյուզուեն. երբեք չպէտք է նրանց հանդիստը վրդովել, պտուղներից պէտք է հանդարտ քաշել և առհասարակ կենդանուն յուզող բոլոր շարժառիթները հեռացնել: Կովը ջղային կենդանի է, ամէն ջղային գրգռւ աղբում է նորա արեան շրջանառութեան վերայ, և ընտանապէս այլայլում է կաթը, որ նոյն արեանից է կազմում: Կովի յուզուելովը ոչ միայն կաթի յատկութիւնն է փոխում, այլ նաև քանակը. գրգռուող կովը թէ յատկութեամբ և թէ քանակով պակաս կաթ կտայ:

9) Կթելիս երբեք չպէտք է կովերին կեր տալ և ոչ էլ տաները յարդ ցանել, որովհետև ինչպէս տեսանք, կաթի արտադրութեան վերայ որոշ չափով աղբում է նաև նոցա տրամադրութիւնը: Կերի ժամանակ կովը սովորաբար գրգռուած է լինում և հանդիստ չի կանգնում. այդ բանը զայրացնում է կթողին, որ շատ անգամ համբերութիւնը կորցնելով՝ սկսում է կոպտ վարուել նորա հետ, մինչդեռ յայտնի է, որ միակերպ և քաղցր վարուելն որա հետ, մինչդեռ յայտնի է, որ միակերպ և քաղցր վարուելն որա հետ, մինչդեռ յայտնի է պատճառում կենդա-

նուն և աւելացնում է կաթի քանակութիւնը: Յարդ փռելը քացի նորանից որ դբաղեցնում է կթուող կենդանուն, օդի մէջ փոշի է բարձրացնում, որ կարող է նստել կաթի վերայ և փչացնել:

10) Պէտք է կթել խաչածն, այսինքն առջևի զոյգ պտոյկներն աջը ետևի ձախի և առջևի ձախը ետևի աջ պտուկի հետ: Այս կերպ կթելուց աւելի շատ կաթ կստացուի, քան զուգահեռաբար կթելովը: Կթելիս պէտք է աշխատել բարձրից բռնել, որ կարելի լինի ճղմել նաև ստինքի մէկ մասը: Երկու պտուկներն բաւականաչափ կաթ վազեցնելուց յետոյ հարկաւոր է թողնել և բռնել այս անգամ միւս խաչածն ընկած երկու պտուկները: այսպէս փոխ առ փոխ պէտք է կթել կովի չորս պտուկները:

11) Կթելիս հեշտութեամբ կարելի է մի կովի հիւանդութեամբ միւսին վարակել. այս պատճառով պէտք է կանոն դարձնել, որ առաջ մաքուր և առողջ ստինք ունեցող կովերը կթուին և յետոյ անառողջ պտուկներ ունեցողները:

12) Իւրաքանչիւր կով կթելիս հարկաւոր է ուշադրութիւն դարձնել, թէ արդեօք նորա կաթը կանոնաւոր, առողջ վիճակի մէջ է և որ և է նկատելի պակասութիւն չունի՞ (կաթնային աւազ, քարեր, կարմիր գոյն և լին):

Այս կանոններով չառաջնորդուող անանատները իւր ձեռքով պակասեցրած կլինի իւր ստանալիք կաթի և կարագի քանակութիւնը:

Սովորաբար ծնելուց մօտ վեց շաբաթ առաջ դադարեցնում են կթելը. թէպէտ կան կովեր, որոնց համար կարելի է աւելի կարճ միջոց թողնել. պէտք է կթել ընդհանրապէս այնքան ժամանակ, որքան կովը կաթ է տալիս:

Կաթի քամելը եւ փոխադրութիւնը.—Կթելուց յետոյ պէտք է աշխատել կաթը մաքուր պահել, այս պատճառով կարևոր է, որ ախոռից կաթը շուտով փոխադրուի կաթնատուն, որովհետև ախոռի օդը հարուստ է լինում աղբից և մէղից բարձրացած սաղմերով և գոլորշիներով, որ խիստ վնասակար են կաթի և նորանից պատրաստած նիւթերի համար:

Կթելուց յետոյ ստացուած կաթը դանազան անմաքրութիւններից մաքրելու համար, պէտք է խկոյն և եթ քամել հասարակ մաղով կամ մաքուր քաթանի կտորով: Բայց երբեմն աշխատաւորների անշնորհքութեան և ծուլութեան պատճառով մաղը կամ քաթանը անմաքուր է լինում, որի պատճառով էլ կաթը

շուտով թթւում, փչանում է: Ահա այս պատճառով խորհուրդ չենք տալիս կաթ մաքրելու համար գործ ածել վերոյիշեալ միջոցները: Իսկ եթէ կովատէրը ստիպուած է այդպէս վարուել, այն ժամանակ մաքրութեան վերայ հարկաւոր է մեծ զգուշութիւն գործ դնել և գործածած մաղը պէտք է բարակ մետաղաթելից պատրաստած լինի: Այս նպատակով գործածուող մաղերը պէտք է ուրիշ կազմութիւն և յարմարութիւններ ունենան: Նախ և առաջ մաղի ցանցը երբէք չպէտք է բոլորովին տակից ամրացած լինի, աւելի լաւ է քիչ վերեով կողքերից: Բացի սորանից նպատակայարմար է ճանաչուած կրկնակի ցանցեր յարմարեցնելը, միայն այնպէս, որ փոխելը հեշտ լինի: Այս նպատակի համար ամենայարմարաւոր կարող է համարուել Տիլե մաղը: Կաթ քամելու համար պատրաստած մաղեր շատ կան. յայտնի են Քեմանի, Գիտմանի քիչ աւելի բարդ կազմութիւն ունեցող մաղերը:

Կաթ մաքրելու համար գործ են ածում նաև առանձին տեսակ մետաղեայ քամիչներ (ԱՅԴԻՄԿԻ): Քամիչի ամենապարզ և հասարակ տեսակը բաղկացած է մի թիթեղեայ արկղից, որի ներքևի մասը նեղ է լինում և տակի մասը՝ մետաղեայ կլայեկած գոգաւոր ցանցը՝ բարձրացած է արկղի մէջ, արդելում է անմաքրութիւնները և հաւաքում եզրերում: Քամիչը դնում են մետաղից շինած եռոտանու վերայ: Այս գործիքը շատ պարզ կազմութիւն ունի և եթէ նոյն իսկ տեղական վաճառականների մօտ չգտնուի, ամէն մի թիթեղագործ կամ պղնձագործ կարող է շատ հեշտութեամբ պատրաստել:

Կաթը կարող է փչանալ նաև այն ժամանակ, երբ կթած տեղից կաթնատուն է տարւում, մանաւանդ երբ կաթնատունը հեռու է լինում: Գորա առաջն առնելու համար անհրաժեշտ է ուշք դարձնել, որ փոխադրութեան միջոցին կաթը չտաքանայ և չցնցուի: Եթէ կաթնատունը շատ հեռու է, որչափ էլ խնամքով փոխադրենք կաթը, այնուամենայնիւ աւելի քիչ սէր կունենանք, քան եթէ կթելուց յետոյ հանգիստ վիճակի մէջ մնայ: Կաթը որչափ աւելի սաստիկ և երկարատև ցնցուի, այնչափ աւելի կլինասէ սէր կազմելուն, երբեմն նոյն իսկ պատճառ է դառնում կարագի բաժանման, երևալուն:

Այն երկրներում, ուր զարգացած է կաթնատնտեսութիւնը և որտեղ կաթն ու նորանից պատրաստած արդիւնքները տարւում են հեռաւոր տեղեր, գործ է ածւում յատկապէս այդ նպատակով պատրաստած փայտեայ կամ մետաղեայ ամաններ: Սոցանից իւրաքանչիւրն ունի իւր առաւելութիւններն ու պակասութիւնները: Փայտը տաքութեան իբրև վատ հա-

դորդիչ, աւելի լաւ է պահպանում կաթը շրջապատող օդի տաքութեան ազդեցութիւնից, աւելի լաւ է դիմանում, հեռեւապէս և աւելի երկար ժամանակ է պահպանում իւր արտաքին ձևը, քան մետաղը միայն փայտեայ ամանն աւելի ծանր է թիթեղեայ ամանից: Մետաղեայ ամանների սուււելութիւնը գլխաւորապէս այն է, որ աւելի հեշտութեամբ է մաքրուում և կարող է անմիջապէս լուանալուց յետոյ դործ ածուել, մինչդեռ փայտեայ ամանները պէտք է լաւ լուանալ, դուրս դնել, չորացնել և ապա միայն դործ ածել: Մետաղեայ ամանն ունի նաև այն առաւելութիւնը, որ նորա վերայ շատ հեշտութեամբ կարելի է յարմարեցնել ամուր խուփ: Առհասարակ աւելի տարածուած են մետաղեայ ամանները:

Սատիկ ժանդոտուած մետաղեայ կաթնամանների ժանգը կարող է հեշտութեամբ ընկնել կաթի մէջ, որով կաթը և նորանից ստացուած իւղը մի տեսակ անհաճոյ համ կստանայ: Այս չարիքի առաջն առնել կարելի է լաւ ցլնկից պատրաստած կաթնամաններ դործ ածելով և ժամանակին ժանդոտածները հեռացնելով:

Մետաղեայ կաթնամանների մէջ կաթը տաքութեան և սառնութեան ներգործութիւնից ազատ պահելու համար պէտք է աչքի առաջ ունենալ Սօկրեան առաջարկած ձևը՝ այն է՝ ամանները պատել ծղօտէ ծածկոցով և կամ այդ կերպ ծածկելուց յետոյ դնել նաև ուռնու ճիւղքերից հիւսած կողովի մէջ: Նրբեմն կաթով լի ամանը դնում են սառը ջուր պարունակող ուրիշ ամանի մէջ ու այնպէս կատարում փոխադրութիւնը:

Փոխադրելիս ամանները պէտք է լիքը լինեն՝ բաց ամանների կաթի երեսին կարելի է մաքուր տախտակ դնել, որ ցնցումները պահասեն:

Որպէս զի կաթը շուտով չթթուի, չմահարդուի, կթելուց անմիջապէս յետոյ պէտք է սառեցնել և փոխադրութիւնը կատարել օրուայ գոյ ժամանակը՝ գիշերը և եթէ տեղը մօտ է, աւելի օգտակար է ձեռքով և ոչ կառքով կատարել փոխադրութիւնը:

Գերմանական քաղաքներում ծախելու համար դործ է ածուում որոշ տեսակի ձիու կամ ձեռքով քաշելու երկանիւ կառք, որ մեծաւ մասամբ ներկուած է լինում պայծառ գոյնով: Ձիու կառքն արժէ 300—450 ռ., իսկ աւելի փոքր՝ ձեռքով քաշելունը՝ 120 ռ.: Այդ տեսակի կառքերից արտասահմանում ամենից աւելի յայտնի են Հ. Հայնէյի որդոցը՝ Պրիտցում: Այսպիսի կառքերը պէտք է անպատճառ զսպանակաւոր լինեն,

որպէս զի կաթը շատ չցնցուի, սեր կապելուն չվնասէ: Սատիկ ցնցումը մի կողմից գցում է կաթի արժէքը, իսկ միւս կողմից դժուար կացութեան մէջ է դնում կաթ գնողին ճանաչելու կաթի անարատութիւնը: Ձեռքով քաշելու կառքը շատ յարմարութիւններ ունի. կառապանն անկարող է խարդախել, ոչ ջուր և ոչ մի այլ բան կարող է աւելացնել: Այս կառքը բազկացած է լինում փայտեայ մի արկղից, որը երեք մաս ունի: Երկու ծայրի մասերում կան երեք թիթեղեայ խողովակներ, որոնց ծորակներն են (краны) միայն դրսից երևում: Այդ երկու մասերը լցուած են լինում կաթով, իսկ միջին մասի մէջ դրուած է լինում փոքրիկ պուլիկներով կամ բոլորներով կարագ, սեր և առհասարակ կաթից ստացուած արդիւնքներ: Կառքի վերայ նշանակուած է իւրաքանչիւրի գինը: Փոքր քանակութեամբ աւելի լաւ և թանգ կաթ գնողները, որոնք երեսխաների կամ հիւանդների համար պէտք է դործածեն, կաթնավաճառից պահանջում են երաշխաւորութիւն՝ իւրեանց կաթի անարատ և մաքուր լինելուն համար: Այդպիսիների համար վաճառողը ուղղակի կաթը տանում, հասցնում է նոցա տունը առանձին փոքրիկ թիթեղեայ ամաններով, որոնցից իւրաքանչիւրը տանում է մէկ, երկու լիտր կամ աւելի կաթ: Այդ ամանները դրսից արձնելով փակում են: Այսպիսի կաթն երբեմն վաճառում է նաև շէքերով, որոնց առաւելութիւնն այն է, որ մի անգամից կարելի է իմանալ, թէ որքան մաքուր է կաթը և բացի դորանից, կատարելապէս ապահով լինելու համար, վերելից խցանի վերայ կպցնում են առանձին թղթադրոշմ:

Կար չափելու եղանակները. — Շատ տեղերում կաթը չափում են ծաւալով, բայց այդ միջոցը այնքան էլ հեշտ չէ, որքան կշռելով իմանալը, մանաւանդ որ նորանից պատրաստած իւղը պանիլը չափում են փթերով և գրուանքաներով: Յատկապէս այս նպատակով յարմարեցրած կշռօքները և ամանները հնարաւորութիւն են աալիս շատ արագ և յարմար կատարել դործողութիւնը:

Ընդհանրապէս կաթի ծաւալը որոշում են վեզրօներով, պղնձէ ամաններով, շտօֆներով, կրուժկաներով, երբեմն նաև շէքերով (կէս շտօֆ) և այլ ամաններով: Այդ նպատակով դործ են ածում սովորաբար կամ շտօֆանոց կրուժիկ, որ բաժանուած է լինում $\frac{1}{2}$, $\frac{1}{4}$ և $\frac{1}{8}$ շտօֆների, կամ տասներորդական մասերի և կամ վեզրօներ, որոնք բաժանուած են լինում շտօֆների, կիսաշտօֆների. պատահում են նաև այնպիսի վեզ-

բօներ, որոնք բաժանուած են լինում գրուանքաների*:

Կաթ կշռելու համար գործ են ածում Սալտերսի սլաքաւոր կշիւը, որ ցոյց է տալիս գրուանքաները և կէս գրուանքաները: Սլաքը պտուտակի միջոցով շարժուած է և այնպէս է յարմարուած, որ երբ կշռում են դատարկ վեդրօն, ցոյց է տալիս զերօ: Այսպիսի զգայնահաւոր կշիւներով աւելի արագ գործ է կատարուած, սլաքը ուղղակի ցոյց է տալիս կաթի քաշը, թէ քանի գրուանքայ է: Վերջերս տարածուել է կաթի ծանրութիւնն իմանալու համար ուրիշ տեսակ կշեռք, որ զլանածէ վեդրօյի նմանութիւն ունի, (որի մէջ լինում է առանցքով մի լողածող (поплавокъ съ стержнемъ): Այդ առանցքը մանր գծերով բաժանուած է գրուանքաների: Երբ կաթը լցնում են, լողածողը բարձրանում է կաթի երես և առանցքի վերայն գծիկը հասնելով վեդրօյի ունիկ բարձրութեաննը, ցոյց կտայ, թէ կաթը քանի գրուանքայ է: Այս կշեռքնը շատ պարզ կազմութիւն ունի, թէպէտ երբեմն կարող և սխալ ցոյց տալ: Կան նաև աւելի բարդ կազմութիւն ունեցող կշեռքներ, որոնց մասին աւելորդ ենք համարում այստեղ խօսելը:

Կարի պակասութիւններ. — Որքան աւելի է պարզուած բաղադրանքի դերը ամբողջ գործարանական կեանքի մէջ, նոյնքան աւելանում են կաթն և նորանից պատրաստած նիւթերն անվնաս պահելու միջոցները: Կաթի մէջ յառաջացած գրեթէ բոլոր փոփոխութիւնները պէտք է վերագրել այդ մանրիկ օրգանիզմների գործունէութեան. կան փոփոխութիւններ, որ ցանկալի չեն, որ պէտք է արգելել կամ դժուարացնել. կան և այնպիսիները, որ պէտք է յառաջ բերել կամ հանոնաւորել. ուստի հասկանալի է, թէ որքան կարևոր է կաթնատնտեսութեան համար այս օրգանիզմները մասին ազդեկութիւններ ունենալը: Նայած այն դերին, որ խաղում են սոքա կաթնատնտեսութեան մէջ, նոցա կարելի է բաժանել երեք խմբերի.

1. Օրգանիզմներ, որոնց գործունէութիւնը անհրաժեշտ

Մի վեդրօն (պէսական)	30,9 գրվ.
» կրօմկան կամ ԵՏՕԸ, (պէս.) որ 1/2 վեդրօ է . . .	3,10 գրվ.
» կրօմկան (Պեթրբուրգի), որ 1/2 վեդրօ է . . .	3,86 գրվ.
» ԵԻԵ, որ 1/2 վեդրօ է կամ 1/2 ԵՏՕԸ	1,54 գրվ.
» « » 16 » (Պեթրբուրգի)	1,93 գրվ.
» լիսր	2,50 գրվ.
» բաժակը (1/2 ԵԻԵ)	1/2 գրվ.

է, որպէս զի կաթին կամ նորանից ստացուած նիւթերին որոշ ցանկալի յատկութիւն արուի: Այդպէս է, օրինակ, թթուած սերից կարագ պատրաստելը և պանիր ստանալը:

2. Օրգանիզմներ, որոնք ձգում են կաթի և նորանից պատրաստած բերքերի արժէքը: Սոցանից մի քանիսը կաթը թթուեցնելու պատճառ են դառնում, որ սակայն անհրաժեշտ է սերը մակարդեղու համար. միւսները պանիր անհանոն թթուութիւն են առաջացնում. մի երրորդ խումբը առաջ է բերում ուրիշ տեսակ պակասութիւններ:

3. Վերջապէս կան մի քանի այլ տեսակ օրգանիզմներ, որոնք նոյն իսկ ծանր տարափոխիկ հիւանդութիւններ են առաջ բերում. այդպիսիներից են տուբերկուլեօզի (բարակացաւ, չախօթկայ), ծաղիկի և այլ բացիլները: Այս օրգանիզմներն ընդունակ են կաթի մէջ ապրելու և վարակելու մարդկանց և կենդանիներին՝ մահացու հիւանդութիւնների պատճառ դառնալու: Սոցա սաղմերը կարող են գտնուել հիւանդ ստինքի մէջ. բայց աւելի յաճախ զարգանում են կաթի մէջ շրջապատի ապականուած օղից և անմաքուր ամաններից:

Կաթը փոփոխութեան է ենթարկուած երբեմն կթելուց առաջ, ստինքների մէջ, երբեմն էլ յետոյ: Կթելուց առաջ եղած պակասութիւնների պատճառ կարող են լինել անասունները վատ ոնուկը, փչացած ջուրը և կենդանու հիւանդութիւնները:

Պակասաւոր կաթի այլևայլ տեսակները կարելի է հետևեալ կերպով որոշել.

Կապոյտ կար. — Երբեմն, երբ եղանակը տաք է լինում, կթելուց յետոյ անմիջապէս, իսկ ցուրտ օրերը աւելի երկար ժամանակուայ ընթացքում (24—72 ժամ անցնելուց յետոյ) կաթի երեսին նկատուում են առանձին կապոյտ, հաղուադիւտ դէպքերում նաև դեղին ու կարմիր բծեր, որոնք գնալով հետզհետէ բազմանում են և բռնում ոչ միայն կաթի մակերեսայթը, այլ և տարածուած ստորին շերտերում և ամբողջ կաթի երեսը կապտում է: Բծերի տարածումը դադարում է, երբ կաթը խիտ թթուած է, կամ մակարդուած է: Կաթի մէջ այդպիսի փոփոխութիւններ առաջացնողը մի տեսակ կապտուուն բացի է:

Պակաս ջերմութեան մէջ կաթի երեսին աւելի դանդաղ է առաջանում կապտաւուն գոյնը, քան բարձր ատոմանի բարեխառնութեան մէջ, որովհետև առաջին դէպքում միկրոբն անհամեմատ աւելի դանդաղ է զարգանում: Մասնագէտների

կատարած փորձերից երևում է, որ կաթն սկսում է կապտել 10—12° ջերմութեան մէջ թոյլ կերպով, 15—18° մէջ հասնում է իւր բարձր աստիճանին և այդպէս շարունակւում է մինչև 25°-ը: 25°-ից բարձր ջերմութեան մէջ գանդաղ ընթացք է ունենում, իսկ 37° ջերմութեան մէջ դադարում է բոլորովին:

Կապտաւուն գոյն ունեցող կաթը լիստ թթու հոտ է ունենում: Թէպէտ այդպիսի կաթի սերից կարելի է կարագ հանել, բայց այդ կարագը ընտիր տեսակից չի լինում և կապտաւուն գոյնը անցնում է նորան: Այն կարծիքը, թէ այսպիսի կաթը թունաւոր է լինում և գործածութեան համար անպէտք, սխալ է:

Որովհետև կաթի մէջ այսպիսի պահասութիւնները շատ անգամ յանկարծակի են պատահում և շուտով էլ անհետանում են, ուստի ենթադրում են, որ գոցա պատճառը անասուններին համար իբրև կեր ծառայող բոյսերն են, որոնցից միևրոբներն անցնում են կամ անմիջապէս անասուններին մարմնին, կամ գոմի ապահանսած օդից ընկնում են կաթի մէջ:

Փորձերը ցոյց են տուել, որ 80° ջերմութեան ներքոյ միևրոբները մի քովում ոչնչանում են:

Կաթի այս պահասութիւններից դուրսանալու համար հարկաւոր է ամենից առաջ մաքրութեան բոլոր միջոցները ձեռք առնել: հարկաւոր է դռներն և լուսամուտները փակել և ծրծումբով մի լաւ ծուխ ալ կաթ պահած տեղերում: կաթնատան պատերի, յատակի, առաստաղի, նաև կաթի վերաբերեալ գործիքներին գամ քսել: կաթը սառն օդի մէջ պահել և որքան կարելի է շուտ գործադրել:

Կաթը կարող է կապտաւուն գոյն ունենալ երբեմն նաև այն ժամանակ, երբ նորանում միևրոբներ չկան: այդ ժամանակ կաթը կապտաւուն է լինում արդէն կթելիս և նորա մէջ կապտութիւն են առաջ բերում կերի հետ խառնուած մի քանի բոյսեր, օրինակ՝ թորթը, ծաղկաբերը, կնիւն և այլն, որոնցից մի տեսակ չվերլուծող կապտաւուն նիւթ մանեղով կենդանու կաղմուածքի մէջ, այնտեղից անցնում է կաթի մէջ: Անասնատէրերը կարող են ուշադիր լինել և մարդագետնից, արօաներից կամ քաղած խոտերի միջից ջոկել կաթն այդպէս վնասող բոյսերը:

Կարմիր կար.—Պահատաւոր է համարւում նաև կաթի կարմիր գոյն ունենալը, որ առաջանում է ա) կերի մէջ եղած կարմիր ներկող նիւթերից, 2) արիւնից, 3) մի տեսակ միևրոբներից: Կաթին առանց նստուածքի (տկնուցք, դիրտ), միակերպ կարմրաւուն գոյն տուող բոյսերից են գլխաւորապէս տորոնը, հրանունկը, ձիագին, փեննան և այլն: Երբ կաթն իւր մէջ արիւն

է պարունակում, կաթնամանի յատակի վերայ լինում է կարմիր նստուածք: Արիւնն ընկնում է կաթի մէջ կամ այն ժամանակ, երբ ստիւքի և նորա մօտ գտնուող մարմնի մասերը վերայ վերքեր են լինում: և կամ երբ կոլը արիւնասխառն է միջում, որովհետև առողջութիւնը խանգարուել է: Արիւնասխառն մէղ արտադրուելու պատճառը դանդան ընձախոտերի (ЛЮТИКЪ), կաղանչանների (МОЛОЧНАЯ), եղեգնաբոյսերի (КАМЫШЪ), ագռաւածաղիկների (ОСОКИ), պրտուի (СЯТНИКЪ), ձիագու (ХВОЩЪ), տերեւալից (լատենի—ОЛХА) և փշտերեւ ծառերի մատաղ ընձիւղներն են: Արիւնոտ մէղ կարող է առաջանալ նաև գարնանը շատ վաղ անբարեյաջող եղանակին կովերին արօտ տանելուց: Կովերին այս հիւանդութիւնից ազատելու համար խորհուրդ են տալիս օրական երեք անգամ 33 գրան կապարաշաքար (СВИНЦОВЫЙ САХАРЪ) տալ:

Կաթին կարմիր գոյն տուող միևրոբներն ամենից աւելի լաւ դարգանում են 25° ջերմութեան մէջ: նորա փչայնում են կաթը նախ նորանով, որ շուտով մակարդում, կարում են, փոխում նորա գոյնը, և ապա մի տեսակ հոտ են տալիս: Այս դէպքում ևս մաքրութիւնն առաջին միջոցն է չարքեր դէմ:

Գեղին կար.—Կան մի քանի սուսկեր և մի տեսակ բացել, որոնք կաթին դեղին գոյն են տալիս, բայց դեռ չեն ուսումնասիրուած: Եթէ եռացրած կաթը խառնենք դեղին կաթի հետ, 21 ժամ անցնելուց յետոյ մակարդում է: Կաթը դեղին գոյն կարող է ստանալ նաև այն ժամանակ, երբ կովեն ուտում են ստեպղինի, ջրբումի, խաշնդեղի տերեւներ, և այլն: Այս դէպքում ևս պէտք է վերջիշեալ միջոցները ձեռք առնել:

Կաթն երբեմն կարող է նաև մանուշակի գոյն ստանալ, երբ կովերն ուտում են աղուեսաղի, մատիգեղ, կմըշարուկ, սև ցորեն ևլն:

Կալչուն կար.—Կալչուն կամ թել թել դարձող կաթը թանձր է լինում: Եթէ շատ թանձր լինի, կձգուի թել թել և կամ բոլորովին չի նստի, կամ կնստի, բայց քիչ և հեշտութեամբ էլ կմակարդուի: Կաթի կալչունութիւնն ընդհանրապէս սառելուց յետոյ կհասկացուի: Այդպիսի թանձր, կալչուն կաթը անախորժ, անհամ, է լինում, սերը պահաս և նորանից դժուարութեամբ է կարագ ստացւում: Կաթի այս պահասութեան պատճառներն են՝ կովերի հիւանդութիւնները (կձղակի հիւանդութիւն ևլն), վառ կերը, կաթնատան անյարմարութիւնները և վերջապէս անմաքրութիւնը: Այդպիսի պայմաններում երևան են գալիս մի շարք այլևայլ տեսակի միևրոբներ, որոնք և փոխում են

կաթի բնական յատկութիւնը: Թէպէտ այսպիսի կաթով անվնաս
 էր պարէ կարելի է կերակրել անասուններին, այնուամենայնիւ
 անհրաժեշտ է կովերն առանձին առանձին կթելով իմանալ, թէ
 արդեօք հօտի մէջ ոչ կովի կաթն այդպէս է, և միջոցներ ձեռք
 առնել. օր. մինչև 65° տաքացնելով կարելի է անվնաս դարձնել
 այն:

Կարբ կար. Շատ անգամ կովերի կաթը դառն համ է ու-
 նենում և այդ դառնութիւնը տեղում է երբեմն մի քանի օր
 կամ շաբաթներ: Ոմանք սորա պատճառը համարում են կեն-
 դանեաց կերի մի քանի տեսակները՝ գերիմաստը (ЛЮПИНЪ) շան-
 քերիցուկը (СОБАЧЬЯ РОМАШКА) և առհասարակ ճահճային տեղերի
 բոյսերը, որոնք իւրեանց մէջ պարունակում են դառն նիւթ և
 մարտդակիան գործարանի ու լեարգի խանգարմունքը. վերջին
 դէպքում լեարգից լեզին թափուում է արեան մէջ և այնտեղից
 անցնում կաթի մէջ: Ծերացած կովերն ևս երբեմն մի կամ մի-
 քանի պտուկներից դառնաղի համ ունեցող կաթ են տալիս:

Բայց կաթի այս պակասութեան գլխաւոր պատճառը մի
 քանի տեսակ բակտերեաներ են, որոնց մի տեսակը նախ ա-
 ռաջացնում է ստինքի վարակիչ հիւանդութիւն, և ապա ընկ-
 նելով կաթի մէջ, մի տեսակ թթուութեան առաջացնում, իրենում է
 պանրածինը և կաթին դառն համ տալիս:

Կաթի այս պակասութեան դեմ կռիւ մղելու համար հար-
 կար է նախ և առաջ փոխել կովերի կերը և լաւը տալ, ամե-
 նայն օր աղքը վերցնելուց յետոյ նոցա ալտուր պէտք է սրակել
 կարբօլաթթուութեամբ, ծծումբով ծուխ տալ, իսկ ստինքն երկու-
 անգամ լուանալ նախ գոլ և ապա կարբօլաթթուութեամբ
 ջրով: Երեք օրից յետոյ կաթի և սերի դառն համը բոլորովին
 կանցնի և սերից կրկին կարելի կլինի պատրաստել հիանալի կարագ:

Կաթի դառնութեան առաջն առնել կարելի է նաև
 կովի ստինքը սօդի 20/0 տաք լուծուածքով և աղքահիւթը հոսե-
 լու համար պատրաստած խողովակները կրէօլինի 30/0 լուծուած-
 քով լուանալով, իսկ պտուկներն անցքերը հարկաւոր է ախտա-
 հանել 30/0 սոսկերտակի թթուութեան (ծորնայ կիսլոտա) լուծուածք
 օրակերով: Պակասուող կաթը պէտք է բաժանել առողջից:

Թրուած կար. Կաթն օդի մէջ մնալով սկսում է կրել դա-
 նագան խմորումներ (дрожжи), մանաւանդ երբ տեղի տաքու-
 թիւնը բարձր, մօտաւորապէս 300 լինի: Կան մի քանի տեսակ
 խմորումներ, որոնք ընդունակ են անմեջապէս թթուեցնել կաթ-
 նաշաքարը և նորանից կազմել ածխաթթու (углекислота) և սպիրտ:
 Բացի այդ խմորումներից կան նաև մի քանի տեսակ զարգաց-

ման ստարին ստախճանի վերայ կանգնած ստնկեր, որոնք նոյն-
 պէս կարող են այդպիսի գործողութիւններ առաջացնել:

Ննչպէս որ կան շատ տեսակ սպիրտի խմորումներ, նոյն-
 պէս և կան միմեանցից յատկութեամբ տարբեր շատ տեսակ
 կաթնային խմորումներ: Մի քանիսը կաթնաշաքարը դարձնում
 են կաթնային թթուութի, ուրիշները՝ միջնական, իւղային, ածխա-
 յին և այլ թթուութեան: Այսպիսի խմորումները կաթի սովորա-
 կան խմորումներից բոլորովին տարբեր են լինում: Կաթի մէջ
 կաթնային խմորումը կարող է սկսուել 10—120 ջերմութեան
 մէջ և որքան աւելի լինի ջերմութիւնը, այնքան աւելի յաջող
 տեղի կունենայ այդ խմորումը և միայն 70—750 ջերմութեան
 մէջ դադար կառնի. այսպիսով ուրեմն եռացրած կաթը դժուա-
 րութեամբ կարող է թթուել, եթէ անմաքուր ամանի մէջ չէ
 դրուած և կամ խառնուած չէ հում կաթի հետ:

Եթէ կաթը թթուում է որևէ խմորման պատճառով,
 այդպիսին առանց կասկածելու կարելի է գործ ածել, միայն
 թէ նրանից չէ կարելի պանիր պատրաստել: Եթէ խմորման
 պատճառն ուրիշ տեսակ միկրօօրգանիզմներ են, այն ժամա-
 նակ պէտք է զգոյշ լինել, որովհետև նրանցից մի քանիսը
 ստինքի բորբորման պատճառ դառնալով, թունաւոր ներգոր-
 ծութիւն են անում. այդպիսի կաթը պանրագործութեան հա-
 մար անպէտք է համարուում:

Աւազախառն կար. Այսպիսի կաթը ստինքից արտագրուե-
 լիս սովորաբար ցաւեր է պատճառում կենդանիներին, որով-
 հետև ստինքում հաւաքուած՝ այսպէս կոչուած կարի քաւե-
 բից մանրերը կթելիս դուրս են գալիս: Պէտք է աշխատել
 ստինքից կթելու միջոցով հեռացնել կաթի այդ քաւերը. բայց
 եթէ դժբա այնքան մեծ են, որ անհարող են անցնել պտուկի
 անցքի միջով, այն ժամանակ հարկաւոր է պինցեմով հեռաց-
 նել: Սակայն եթէ այս ևս չյաջողուի, մնում է ստինքը կտրել
 և այնտեղից դուրս հանել այդ քաւերը: Եթէ կաթի գեղձն
 ամենալաւ գործունէութեան մէջ է, որ տեղի է ունենում սո-
 վորաբար կաթնատուութեան ժամանակամիջոցում, այս տեսակ
 անդամահատութիւնն անվնաս կանցնի: Բայց որովհետև հէնց այդ
 գրութեան մէջ ամենից աւելի երկիւզ պէտք է կրել, որ չլինի
 թէ պտուկի անցքը կաթի քաւերով վաղուեւելով, ստինքի բորբո-
 քում առաջանայ և դրանով վնասուի ոչ միայն կովի կաթ-
 նոտութիւնը, այլ և նոյն իսկ նորա կեանքը, այս պատճառով
 այդպիսի ժամանակ ստինքից անվնաս կերպով կաթ արտա-
 դրելու միակ հաւաստի միջոցը պէտք է համարել կաթնահան

գործիքի (молочный катетеръ) գործադրութիւնը:

Աղի կարի պատճառը գլխաւորապէս այն սուսկերն են, որոնք ստինքի բորբոքում են առաջացնում: Երբեմն պառաւ կովերն ևս մի կամ մի քանի պտուկներեց ազահամ կաթ են տալիս:

Մահացու սարափոխիկ հիւանդութիւններ առաջացնող կար. կաթն իւր մէջ կարող է պարունակել զանազան վնասակար վարակիչ հիւանդութիւնների սաղմեր: Այդ սաղմերը կարող են զտնուել դեռ ստինքում եղած կաթի մէջ անատունների հիւանդութեան պատճառով. բայց աւելի յաճախ կաթն ընդունում է իւր մէջ այդպիսի սաղմեր շուրջն եղած ապականուած օդի միջից կամ անմաքուր ջրով լուացած ամաններից: Մահացու հիւանդութիւններ առաջացնող բացիւններից են՝ տուբերկուլեօզի (թորախտի, բարակացաւի), աիֆի և խօլերայի բացիւնները:

Թորախտաւոր կովերի կաթի մէջ սովորաբար լինում են տուբերկուլեօզի բացիւններ: Ներկայումս ընդունում են, որ այդ հիւանդութիւնը կենդանիներից կաթի միջոցով կարող է անցնել մարդկանց: Փորձերը ցոյց են տուել, որ այս բացիւնները կարող են պահպանել իւրեանց կենսունակութիւնը թթու կաթի մէջ 10—40 օր, իսկ պանրի մէջ 35 օր: Ինչ վերաբերում է բացիւն գոյութեանը իւրի մէջ, այդ մասին կարծիքները տարբերում են: Մինչ դեռ մի քանի կատարած փորձերը ցոյց են տուել, որ իւրն ևս ընդունակ է վարակուել այդ բացիւնների սաղմերով, ուրիշներն իւրեանց փորձերով ընդհակառակն են ապացուցանում և ասում են, որ դրա տուբերկուլեօզի բացիւններ չեն:

Տիֆի բացիւնները կարող են պահպանել կաթի մէջ իւրեանց կենսունակութիւնը մինչև 25 օր, իւրի մէջ նոցա սաղմերը ոչնչանում են միայն 5—7 օր անցնելուց յետոյ:

Ինչ վերաբերում է խօլերայի բացիւններին, ոմանք կաթը այդպիսի բացիւնների համար յարմար տեղ են համարում, միայն 12 ժամ անցնելուց յետոյ նոքա ոչնչանում են: Ուրիշներն ապացուցանում են, որ նոքա կաթի մէջ կարող են իւրեանց գոյութիւնը պահպանել 4—6 օր, իսկ իւրի և պանրի մէջ խօլերայի կենդանի սաղմերը ոչնչանում են: Բայց ընդհանրապէս կաթը խօլերայի ժամանակ չպէտք է այնքան էլ վտանգաւոր համարել և վախենալ գործածելուց:

Կաթի միջոցով կարող են վտանգուել սկարլատինան, անատունների դաբաղ (шарб) կոչուած հիւանդութիւնը, որոնց վարակիչ սաղմը դեռ անյայտ է, նաև կատարութիւնը, թանչքը

(дисентерія), ծաղիկը, դեղնախտը և այլն: Սերիբախտի սաղմերը շատ լաւ աճում են թարմ կաթի մէջ և առաջին օրերում երբեք չեն կորցնում իւրեանց վարակիչ յատկութիւնը: Գիֆտերիտի բացիւններն երիւթ տաք կաթի մէջ շատ արագ են զարգանում, այնպէս, որ այս հիւանդութիւնն ևս կարող է կաթի միջոցով անցնել մարդկանց:

Թէպէտ սուսկերը մի կողմից շատ անգամ բոլորովին ձգում են կաթի արժէքը, սակայն միւս կողմից նոքա շատ օգտակար են հանգիստանում կաթնասնտեսութեան համար: Մի կողմ թողնելով սերի մէջ կատարած թթուանների ազդեցութիւնը, երբ նորանից (թթուած սերից) պատրաստում են այսպէս անուանուած հմի կարագ, առանց այդ օրգանիզմների օգնութեան հաւանականաբար անհնարին կլինէր պանիր պատրաստելը. վերջապէս կաթից այնպիսի լամելլներ պատրաստելը, ինչպիսին է կեֆիրը, որ գործ է ածւում թուլացած, սկարացած օրգանիզմներին սնուցանելու համար, մարդկութիւնը դարձեալ պարտական է այդ բուսական անտեսանելի էակների գործունէութեանը:

Տեսլին գործածութեան ժամանակ այս վտանգներից ազատ մնալու համար կաթը երբեք հում չպէտք է խմել, նաև եռացնել և ապա գործածել, թէև հում կաթն աւելի դիւրամարս է, քան եփածը, թէ որ նոր է կթուած և ազատ է հիւանդութիւններից և վերոյիշեալ սաղմերից:

Կարի սառեցնելը, պաստրացումը, սերչացումը և հակափուս նիւրբի գործադրութիւնը. որպէս զի կաթը թէ անմիջական գործածութեան և թէ նորանից այլ և այլ նիւթեր պատրաստելու համար շահուէտ լինի, կարևոր է ամենից առաջ արդեւել նորա մակարդուելը, թթուելը՝ զանազանցնելով սուսկերի աճեցումը կամ բոլորովին ջնջելով նոցա կաթի միջից, բացի այն դէպքերից, երբ սուսկերի, այդ մանրիկ էակների գոյութիւնն անհրաժեշտ է նոցանից մի քանի տեսակ արդիւններ ստանալու համար: Բայց բաւական չէ միայն կաթի և սերի մէջ վաղաժամ թթուութիւն առաջացնող սուսկերի առաջնաւնելը, որոնք այսպէս թէ այնպէս ձգում են կաթի արժէքը. կարևոր է մարդուս վնասակար, վտանգաւոր հիւանդութիւններ առաջացնող բակտերիաները ոչնչացնել:

Որպէս զի կաթը երկար ժամանակ անփոփոխ մնայ, գըլ-

խաւորապէս թթուելուց ազատ լինի, որպէս զի հնար լինի բոլորովին ոչնչացնել կամ դանդաղացնել սունկերի վարդացումը, անհրաժեշտ է ձեռք առնել հետեւեալ միջոցները.

1. Կաթը սառեցնել,
2. » տաքացնել,
3. Կաթի հետ զանազան հակափուռ նիւթեր խառնել:

Կար սառեցնելը. Կթելուց անմիջապէս յետոյ շատ հեշտ կերպով կարելի է կաթը սառեցնել, որով կդանդաղի թթուելը և մահարգուելը, որովհետև որչափ աւելի սառը լինի կաթը, այնչափ աւելի ուշ կդոյանան նորա մէջ սունկեր: Մանաւանդ սառեցնելն բգտակար է ճանաչուած այն դէպքում, երբ հարկաւոր է կաթը տաք եղանակին (ամառը) փոխադրել հեռու տեղ: Ինչ էլ որ լինի, այնու ամենայնիւ կարեւոր է, որ կթելուց անմիջապէս յետոյ տեղի ունենայ սառեցնելը: Սառեցնելու համար կարելի է ամանով կաթը ջրի մէջ դնել: Բայց եթէ կաթը շատ է, որպէս զի աւելի լաւ սառչի, հարկաւոր է գործ դնել սառեցնող գործիք կամ սառնարան, որի մէջ կաթը սառչում է այն պատճառով, որ հոսում է վերեւից ներքև պղնձեայ խողովակների արտաքին մակերևոյթի վերայով, մինչդեռ ջուրը հոսում է այդ խողովակների միջով հակառակ ուղղութեամբ: Գործածութեան մէջ կայ երկու տեսակ սառեցնող գործիք. Լատերենսի և նորա ձևով պատրաստած շատ ուրելները և գլանաձև գործիքներ, ինչպէս օրինակ Բադենում պատրաստած Շմիտզի և Բրետտինի գործիքները: Սառնարաններն իւրեանց բոլոր պարագաներով արժեն 22—125 ռ, նայած իւրեանց սառեցրած կաթի քանակութեանը. իւրաքանչիւր ժամում կարելի է րառեցնել 100—2000 լիտր կաթ:

Կաթի սառնութեան աստիճանը կախումն ունի սառեցնելու համար գործածուող ջրի քանակութիւնից և նորա բարեխառնութիւնից: Եթէ 360 ջերմութիւն ունեցող կաթը 85/4⁰ ջերմութիւն ունեցող ջրով սառչելով իջել է 10⁰-ի, այն ժամանակ սառեցնելու համար ջրի քանակութիւնը 2 անգամ աւելի պէտք է լինի ընտրած կաթի քանակութիւնից: Եթէ նոյնպիսի ջրով կաթը սառել է մինչև 17⁰, կարիք կլինի կաթի քանակութիւնից 1,24 անգամ աւելի ջուր: Կաթ սառեցնելու համար կարելի է գործածել ջրհորի կամ աղբիւրի ջուր, սակայն եթէ սառը ջուր չլինի, պէտք է աւազանի մէջ լցնել սառուց ու այնպէս գործածել:

Բայց որովհետև ամէն մի տուն անկարող է սառնարան կամ յատկապէս այդ նպատակով պատրաստած սառեցնող պա-

հարան ունենալ, մենք առաջարկում ենք կաթ պահելու համար մի չափազանց հասարակ եղանակ. ամանով կաթը պէտք է բաւականաչափ ցած բարեխառնութեան մէջ պահել, որով միւլաւանտչափ ցած բարեխառնութեան մէջ պահելը, իսկ միւլաւանտչափ կաթը թթուեցնելու առաջն առած կլինենք, իսկ միւլաւանտչափ ստիպուած չենք լինի բաւական թանգ դնով ծախուող սառեցնող պահարան դնելու: Այդ նպատակով հարկաւոր է վերցնել մի սպաղիւկ աման (յուրան, բանկայ, սափոր), լցնել նորա մէջ կաթ, ծածկել համաչափ ծածկոցով և դնել մի լայն, մինչև կէսը սառը ջրով լցրած թասի մէջ: Յետոյ կաթով ամանը պէտք է ծածկել թաց քաթանով կամ անձեռոցիկով, միայն կարեւոր է հետեւել, որ դոցա ծայրերն անպատճառ ջրի մէջ լինեն: Ահա այն է կաթ պահելու ամբողջ գործը: Աւելացնենք նաև այն, այս է կաթ պահելու ամբողջ գործը: Աւելացնենք նաև այն, որ այսպէս թէ այնպէս կաթի շուտափոյթ թթուելուն նպատակ արեգակի ճառագայթների վնասակար ազդեցութիւնից տող արեգակի ճառագայթների վնասակար ազդեցութեանց և ջրով թասի մէջ ազատ կացուցանելու համար, անհրաժեշտ է ջրով թասի մէջ գրած կաթով լի ամանը դնել մի մութ տեղ, միայն այնպէս, որ այդ տեղը խոնաւ չլինի և օդը մաքուր լինի:

Կաթի սառնութեան համար 150 II. բարեխառնութիւնը պէտք է ամենաբարձրը համարել, որովհետև այդ աստիճանից սկսած ջերմութեան աստիճանաբար աւելանալովը կաթնային թթուութիւնը բաւարարաները կսկսեն աճել և բազմանալ: Հետեւեալ աղիւսակը ցոյց է տալիս, թէ որքան կարեւոր է կաթը դնել մինչև 15⁰ ջերմութեան մէջ պահելը:

390 ջերմութեան մէջ կաթը մահարդւում է 19 ժամ անցնելուց յետոյ.

250	»	»	»	29	»	»
200	»	»	»	48	»	»
174/2 ⁰	»	»	»	63	»	»
150	»	»	»	88	»	»
100	»	»	»	99	»	»
20	»	»	»	14	օր	»

Տաքացրած կաթն ևս որոշ ջերմութեան մէջ աղատուում է սաղմերից: Այս փորձն առաջին անգամ արել է 1810 թ. մի գիտնական. նորան յաջողուեց ջերմութեան ազդեցութեամբ կաթը մի քանի ամիս իւր ընտանի վիճակի մէջ պահել՝ ամէն օր թեթեւ կերպով եռացնելով:

Յայտնի է, որ կաթի մէջ եղած սաղմերը չեն կարող դոյուրիւն ունենալ 0—12⁰ ջերմութեան մէջ և միայն 12⁰-ից սկսած մինչև 30⁰ ջերմութեան մէջ կսկսեն աճել, բաղմանալ: 30⁰ բարձր հետզհետէ կսկսեն պակասել այդ սաղմերը և որքոչ աստիճանի ջերմութեան մէջ արդէն բոլորովին կոչնչանան:

ստերջացնելիս հարկաւոր է ամէն անգամ այդպիսի ընդմիջումներէ ժամանակ կաթը թողնել 200-ից բարձր ջերմութեան մէջ, որպէս զի չոչնչացած տաղմերը կարողանան առաջ գալ, ածել, որ յետոյ հեշտ լինի նոցա ոչնչացնելը:

Ստերջացման առաջին երկու եղանակներն այնքան էլ նպատակայարմար չեն, որովհետեւ այսպիսի ժամանակ ինչպէս արտաքին, նոյնպէս և ներքին փոփոխութիւնը շատ դժուար է լինում. կաթը մութ կլինամոնադոյն է դառնում և անհաճոյ համ ստանում: Երրորդ եղանակն, իհարկէ, աւելի նպատակայարմար է, բայց այն ատիճան դժուարին և թանգ, որ սովորական պայմաններում դժուար է գործադրել. միայն այն դէպքում, երբ կաթի գինը բաւական թանգ է լինում և երբ կարեւոր է սաղմերից բոլորովին ազատ կաթ ստանալ, կարելի է գործադրել այս եղանակը:

Առաժներիցս պարզ երևում է, որ կաթը սաղմերից բոլորովին ազատ կացուցանելն այնքան էլ հեշտ չէ և շատ դէպքերում բաւական կհամարուի, եթէ հիւանդութիւններ առաջացնող սաղմերը միայն յաջողուի ոչնչացնել: Համեմատաբար սակաւ և հեշտ ոչնչացող սաղմեր պարունակող կաթ ստանալու համար ամենից առաջ պէտք է ուշադրութիւն դարձնել, որ կովից ստացուած կաթը մինչև մշակելը մաքուր լինի:

Կաթի պատարացման և ստերջացման համար գործածուելիք գործիքները երկու տեսակ են լինում. առաջին տեսակի գործիքների մէջ կաթը տաքացնում են 1000-ից ոչ բարձր, երկրորդ տեսակի մէջ 1000-ից բարձր: Իւրաքանչիւրը դոցանից նոյնպէս բաժանուում է երկու կարգի. մի քանիսի կաղմութիւնը նման է տառնարանների կաղմութեան. կաթը հոսում է խողովակների դրոսի կողմից, իսկ ներսից հոսում է գոլորշին. միւսները կաղմութիւնն այնպէս է, որ նոցա մէջ լցրած կաթը դրոսի կողմից գոլորշիով տաքանում է. կաթը մշտապէս շարժման մէջ է կամ առանձին խառնիչի միջոցով և կամ հէնց գործիքը պտտելովը:

Ստերջացման համար շատ գործիքներ և եղանակներ կան. հետաքրքրութեան համար առաջ ենք բերում այստեղ Սօկրուլէտի ստերջացման եղանակը: Կաթը պէտք է ոչ բոլորովին լիքը լցնել խորով կամ ծղօտէ գործուածքով պտտած փոքրիկ շշերէ մէջ, որոնց վերևի կողմը քիչ դատարկ տեղ է մնում օդով լցուած. ամանների բերանը խէժից պատրաստած և մէջտեղը ծակ խցանով փակուում է: Այդ շշերը պէտք է դնել խուփ ունեցող մի կոնքի մէջ, որը պէտք է լցնել ջրով մինչև շշերի պարանոցի սկիզբը և ապա փակելով խուփը, ջուրը տաքացնել մինչև եռացման աս-

տիճանը ու թողնել 5 վայրկեան, որպէս զի կաթի մէջ լուծուած օդը դուրս դաչ խցանի անցքից. սրանից յետոյ խցանների անցքը հարկաւոր է փակել մի կտոր կոնաձև ապակիով, իսկ կոնքը խուփով և ապա նորից տաքացնել ջուրը եռացման ատիճանից քիչ պակաս: Այս բոլորից յետոյ պէտք է հանել շշերը և թողնել սառչելու: Այս կերպ պատրաստած կաթը կարող է պահուել մինչև մի ամիս:

Տաքացնելու համար ընտրած կաթը պէտք է կատարելապէս թարմ լինի, որովհետեւ ամենաաննշան թթուութիւնն անգամ բաւական է, որ տաքացնելուն պէս կաթը մահադուրի, որից յետոյ գործիքը անկարող կլինի կանոնաւորապէս գործել: Չպէտք է տաքացնել այն կաթը, որն արդէն ինկուբացիօնի շրջանն (վարակումն սկսուելուց մինչև հիւանդութեան յայտնուելու ժամանակամիջոցը) անցել է:

Ստերջացրած կաթն օգտակար է գործածել առաջին երկու երեք օրուայ մէջ, մանաւանդ եթէ նորածին երեխայոց համար է գործածուում, որովհետեւ այդպիսի կաթն աւելի ժամանակ անցնելուց յետոյ անմարտողական է դառնում:

Հակափոս նիւթեր. Կաթը թթուելուց երկար ժամանակ ազատ մնալու համար երբեմն նորա հետ խառնում են միջանի յայտնի նիւթեր. ոսկեքորակի թթուա (борная кислота), կամ ոսկեքորակ (бура). Իւրաքանչիւր լիար կաթի հետ խառնում են 0,5 գր.: Գործ են ածում նաև ուռիտական թթուա (салициловая кислота), Իւրաքանչիւր լիար համար 0,2—0,3 գր.: Կաթի թթուութիւնն երբեմն աշխատում են ծածկել խառնելով Իւրաքանչիւր լիար կաթի հետ մի մի գրան սօդա կամ երկրնածխական սօդա (двууглекислая сода): Նոր փորձերը ցոյց են տուել, որ եթէ այս կերպ վարուելով մարդս Իւր նպատակին հասնի, այնուամենայնիւ չպէտք է երբէք յիշեալ նիւթերը գործածէ, որովհետեւ ժամանակի ընթացքում այդպիսի կաթը կարող է նոյն իսկ վնասակար ներգործութիւն ունենալ մարդու կաղմուածքի, մանաւանդ ստամոքսի և աղիքների վերայ: Ահա այս պատճառով պէտք է արգելել թէ այս և թէ ուրիշ հակափոս նիւթերի գործածութիւնը:

Կարի քրուքիւնը եւ նոցա հետագօտիւն ու խարդախելը.

Կաթնաանտեսութեան մէջ շատ կարեւոր է իմանալ կաթի արժէքը, որ կախումն ունի նորա մէջ եղած ճարպի քանակուութիւնից, խարդախած կամ անխարդախ լինելուց և մէջն եղած

հաստատուն նիւթերի քանակութիւնն: Կարևոր է իմանալ նաև կաթի տեսակարար կշիռը: Այդ նպատակով առաջ ենք բերում այստեղ համառօտակի այն գործադրուող հեշտ միջոցները, որոնցով կարելի կլինի մօտաւորապէս իմանալ կաթի պարարութեան չափը և ապա նորա տեսակարար կշիռը: Այս միջոցները բաւական են իմանալու համար, թէ արդեօք կաթը ընական վիճակի մէջ է, թէ խարդախած, երեսից սերը քաշած, վերցրած է, կամ թէ արդեօք ջուր չէ աւելացրած: Աոյն նպատակին հասնելու համար կարևոր է կաթը հետազօտութեան ենթարկել. բայց նախքան այդ անելը, սրպէս զի արգիւնաւոր հետեւանքների հասնենք, անհրաժեշտ է, որ հետազօտելի կաթը լաւ խառնուի և նորա տաքութեան աստիճանն իջնի մինչև 15: Կաթը ուղղահայեաց դրութեամբ պէտք է խառնել և եթէ շատ չէ, կարելի է խառնել փայտեայ գգալով, շատ եղած դէպքում շերտիով: Խառնելու նպատակն այն է, որ խիստ կարևոր նշանակութիւն ունեցող կաթի ճարպային գնդակիկները, որոնք միշտ ձգտում են բարձրանալ կաթի երեսը, համահաւասար կերպով տարածուեն կաթի մէջ:

Պատահում է երբեմն, որ իբրև փորձ վերցրած կաթի բազազրութիւնը, մանաւանդ ճարպի քանակութիւնը, զգալի կերպով տարբեր է անարատ կաթի մէջ եղած ճարպի քանակութիւնից. դա փորձի համար վերցնելուց առաջ կաթը լաւ չխառնելու հետեւանք է:

Եթէ հարկաւոր է համարուում փորձի համար վերցուելը կաթը զանազան ամաններից առնել, այդպիսի դէպքում աւելի լաւ կլինի բոլորը լցնել մի ամանի մէջ, որով աւելի ճիշտ կերպով կարելի կլինի միջին յարգը իմանալ. եթէ այս նախազգուշութիւնը չպահպանուի, մնում է, որ իւրաքանչիւր ամանից փորձի համար վերցրած կաթը առանձին քննուի և դուրս բերուի նոցա բազազրութիւնը. միայն այսպիսի դէպքում ուշադրութեան պէտք է առնել նաև իւրաքանչիւր ամանի մէջ եղած կաթի քանակը. իւրաքանչիւր ամանից իբրև օրինակ վերցրած կաթը պէտք է յարաբերական լինի նորանում եղած կաթի քանակութեանը. այսպէս օրինակ, կարելի է իւրաքանչիւր 100 լիտր կաթից վերցնել 1, 1/2 կամ 1/3 լիտր և ապա բոլոր վերցրածները խառնել ու ստացուածը ենթարկել հետազօտութեան:

Եթէ կաթի երեսն արդէն սեր է բռնել, այն ժամանակ սերն ամբողջ կաթի մէջ տարածելու կամ խառնելու համար հարկաւոր է միջոցներ ձեռք առնել: Սորա համար անհրաժեշտ

է կաթը 30—400 տաքացնել և խառնելով սառեցնել մինչև 150, որով սերն մէջ հաւաքուած ճարպը կարող է հաւատարապէս տարածուել կաթի մէջ:

Կաթ հետազօտելը, նորա միջի ճարպի քանակը որոշելը պէտք է շատ շուտ կատարուի և կամ թէ չէ կաթը պէտք է պահել սառն օդի մէջ (100-ից ցած), հակառակ դէպքում նորա միջի չոր նիւթերը կաթնային թթւութիւնի պատճառով կպակասեն: Փորձերը ցոյց են տուել, որ 10—150 ջերմութեան մէջ 48 ժամ անցնելուց յետոյ պակասել է՝ 0,30/0, 19—210 ջերմութեան մէջ՝ 0,780/0, 96 ժամ անցնելուց յետոյ՝ 1—1,920/0:

Քննել կաթի արժէքը, նշանակում է իմանալ գլխաւորապէս նորա մէջ եղած ճարպի քանակը: Ներկայումս կաթի մէջ եղած ճարպի քանակութիւնը որոշելու շատ միջոցներ կան: Թէպէտ այդ միջոցներից համարեա և ոչ մէկը բոլորովին ճշտութեան սահմանին չի մօտենում, բայց նոցանից մի քանիսը յարմարութեան պատճառով խիստ ընդարձակ գործադրութիւն են ստացել կաթնատեսութեան մէջ: Գործադրուող միջոցները չորս խմբի կարելի է բաժանել. ա. սերն քանակութիւն չափելը, բ. փորձի ենթարկուող կաթի անթափանցիկութեան աստիճան որոշելը, գ. փորձի համար կարագ հարելը, դ. մի քանի քիմիական նիւթերի միջոցով, երբեմն և կենդանական գորութեամբ ճարպ հանելը:

Ա. Կաթի մէջ սերն քանակութիւնը չափելու համար շատերը գործ են դնում Շեվալէի սերաչափ (кремометръ или сливкометръ) գործիքը, որովհետև եղածների մէջ ամենից պարզն է և յարմարը: Այս գործիքի միջոցով կարելի է որոշել 24 ժամուայ ընթացքում դով և հանդարտ մնացած և 12—150 ր. ջերմութիւն ունեցող կաթի սերն քանակութիւնը: Այդ գործիքը բաղկացած է 20 սանտ. բարձրութիւն և 4 սանտ. տրամագիծ ունեցող ապակեայ մի գլանից, որ բաժանուած է աստիճաններին. 15 սանտ. բարձրութեան վերայ նշանակած է 0 աստիճանը, որը հեղահեղ բարձրանալով հասնում է մինչև 100-ի: Սերաչափի մէջ կաթը պէտք է լցուի մինչև 6 աստիճան և, ինչպէս վերևն էլ յիշեցնենք, 24 ժամ շարունակ պէտք է թողնել հանդիստ մի զով տեղ. այդ ժամանակուայ ընթացքում սերը ընթանուելով կաթից՝ նստում է նորա երեսը բաւական որոշ և նկատելի շերտով: Այսպիսով որոշած կլինենք թէ սերն քանակը, թէ կաթի հետ ջուր խառնած լինել կամ չլինելը և թէ երեսից սերը քաշած է թէ ոչ: Արոշ ժամանակ անցնելուց յետոյ պէտք է նայել, թէ սերը քանի փոքրիկ բաժանմունքներ՝ այսինքն

աստիճան տեղ է բռնել. հենց այդ բաժանմունքները թիւը ցոյց է տալիս, թէ կաթի մէջ հարելուց ու մասն է սեր: Այսպիսի գէպը ուր որ պէս զն սերի ստորին շերտերն ևս, որոնք այսպէս թէ այնպէս պարզ նկատելի չեն, որոշ լինին, վերջերք կաթի մէջ մի քանի կաթիլ անիլիսի կապոյց գոյն կամ լեղակի կարմիր գոյն պէտք է լցնել: որով սերը կպահպանէ իւր նախկին գոյնը, իսկ երեսը քաշած կաթը կնեղուի:

Բայց սերաչափ գործիքով չի կարելի ճիշտ կերպով կմանալ կաթի պարարտութեան չափը, որովհետեւ թէպէտ սերը շերտի ծաւալը զուգընթացաբար մեծանում է կաթի մէջ եղած ճարպի քանակութեամբ, այսինքն սրբան շատ ճարպատ լինի կաթը, այնքան աւելի սեր կտայ, բայց ընդհանրապէս սերը քանակութիւնը ուղիղ յարաբերական չէ կաթի մէջ եղած ճարպի քանակութեանը: Բայց այն քանից, որ շատ դժուար է պահպանել կաթը միևնոյն բարեխառնութեան մէջ, որ նոյնպէս ազդում է սերի շերտի բարձրութեան վերայ, այստեղ կարևոր է ուշադրութեան առնել նաև կաթի յատկութիւնը, նորա թանձրութեան աստիճանը և ճարպային գնտակիկները մեծութիւնը: Որքան թելաձիգ լինի պանրածինը և որքան մանր ճարպային գնտակիկները, վերջիններս այնքան աւելի դանդաղ կբարձրանան կաթի երեսը և այնքան աւելի պակաս թուով կընկնեն նորա սերի մէջ 24 ժամուայ ընթացքում: Միևնոյն կաթից վերցրած երկու օրինակները, որոնք միևնոյն քանակութեամբ ճարպ են պարունակում, կարող են բոլորովին տարբեր քանակութեամբ սեր պարունակել:

Կաթի սերի և նորա մէջ եղած ճարպի քանակութիւնը որոշ յարաբերութեան մէջ գնելու համար կատարուած փորձերը բոլորովին անյաջող են անցել և հիմա կաթի սերը չափելու համար գործ են ածւում առանձին գործիքներ (ЛАКТОКРИТЪ), որոնք կենդանախոյս զօրութեամբ են գործում և որոնցով կարճ ժամանակուայ ընթացքում կարելի է իմանալ զանազան տեսակ կաթերի սերի քանակը, թէպէտ սոքա ևս ունին իւրեանց թերութիւնները:

Բ. Կաթի մէջ եղած ճարպի քանակութիւնը որոշելու մի միջոց է համարւում նաև կաթի անթափանցիւթեան աստիճանը: Առաջ կարծում էին, թէ կաթի անթափանցիւթեան միակ պատճառը նորանում եղած ճարպն է (լոյսի ճառագայթներն անդրադառնում են ճարպային գնտակիկները), հետևապէս և անթափանցիւթեան աստիճանը ճիշտ յարաբերական է ճարպի

քանակութեան հետ. այսպէս օրինակ, որպէս զի կաթը մի որոշ աստիճան թափանցիւթիւն ունենայ, որպէս զի նորա մի որոշ շերտից կարելի լինի անցնել մի յայտնի սև գիծ և այլն, պարարտ կաթի հետ աւելի ջուր պէտք է խառնել, քան ոչ պարարտ, այսինքն ճարպային գնտակիկներով աղքատ կաթի հետ: Բայց այս հայեացքը ճիշտ չէ երկու տեսակէտից:

Առաջին, որ կաթի անթափանցիւթիւնը կախումն ունի ոչ միայն որոշ քանակութեամբ կաթի մէջ եղած ճարպային գնտակիկները, այլ և նոցա մեծութիւնից. որքան մանր լինեն ճարպային գնտակիկները և, հետևապէս, որքան շատ լինեն նոքա, այնքան աւելի սաստիկ կլինի լոյսի անդրադառնալը և նոյնքան աւելի պակաս թափանցիկ կլինի կաթը: Եթէ վերցնենք միևնոյն քանակութեամբ ճարպ պարունակող երկու տեսակ կաթ, ճարպային մանր գնտակիկներ պարունակողն աւելի սակաւ թափանցիւթիւն է ունենում և այդպիսի կաթն աւելի պարարտ է համարւում, քան այն կաթը, որի մէջ սակաւ, թէպէտ խոշոր ճարպային գնտակիկներ կան: Եւ որովհետեւ սարքեր տեսակի կաթեր տարբեր մեծութեամբ ճարպային գնտակիկներ են պարունակում, պարզ է ուրեմն, որ թափանցիւթեան աստիճանով կաթի ճարպի քանակութիւն որոշելն այնքան էլ յուսալի հետևանքներ չի ունենում:

Երկրորդ, որ կաթի թափանցիւթեան պատճառը ոչ միայն նորա մէջ եղած ճարպն է, այլ և պանրածինը և հանքային նիւթերի մասնիկները:

Գ. Որև է կաթի մէջ եղած ճարպի քանակութիւնը որոշելու համար մարդիկ փորձեցին հարել նոյն կաթից իւրեւ օրինակ վերցրածը: Այս միջոցը սկզբներում խիստ ընդարձակ գործունէութիւն է ունեցել Եակօբսենի գործիքով. այդ գործիքի մէջ միաժամանակ և միևնոյն պայմաններում կարելի է կարագ հարել վեց տեսակ կաթից: Այս կերպ ստացուած կարագը կշռում են և իմանում ճարպի չափը: Բայց սրովհետեւ կարագի քանակն ամէն ժամանակ համապատասխան չի լինում ճարպի որոշ քանակութեանը, ինչպէս այդ ցոյց են տալիս փորձերը. շատ պարարտ կաթը որոշ հանգամանքներում կարող է տալ աւելի պակաս կարագ, քան քիչ պարարտ կաթը, այդ պատճառով այսպիսի միջոցներով երբեք ճիշտ եզրակացութիւններ չի կարելի հասնել, մանաւանդ որ այս նպատակով գործածուող գործիքը շատ հողացողութիւն և խնամք է պահանջում, նպատակայարմար չէ և բաւական թանկ է, մօտաւորապէս 100 մարկ արժէ:

Գ. Կաթի մէջ եղած ճարպի քանակը որոշելու միջոցները չորրորդը (ճարպը քիմիական նիւթերի օգնութեամբ բաժանել) աւելի մեծ նշանակութիւն ունի և աւելի շատ է տարածուած: Սորա առաւելութիւնն այն է, որ նոյն իսկ վերլուծութեան գործին սակաւ, մինչև իսկ բոլորովին անձանօթ մարդն անգամ կարող է գործադրել. միքանի տեսակները նոյն իսկ հնարաւորութիւն են տալիս միաժամանակ և կարճ միջոցում մեծ թուով հետազոտութիւններ կատարել: Այդ տեսակները կամ եղանակները կարելի է երկու կարգի բաժանել. առաջին դէպքում կաթից ճարպը բաժանուում է վերան քիմիական նիւթեր աւելացնելով, իսկ երկրորդ դէպքում կարևոր է համարուում գործ դնել կենդանակոյս զօրութիւն: Առաջին կարգին է պատկանում Մարշանի ճարպ չափելու գործիքը (лактобутирометр), որ 30 սանտ, երկարութեամբ և 12 միլիմ. տրամագիծ ունեցող պղպեղայ մի խողովակ է՝ ներքեկից փակուած, իսկ վերեկից բաց, որի մէջ հաւասար չափով կաթ և 900 սպիրտ կամ 630 եթեր (эфир) և մի քանի կաթիլ այրեցական կալի (жёлтый кали) խառնելուց յետոյ, հարկաւոր է լաւ հարել և ապա խողովակը մտցնել 380—400 տաքացրած ջրի մէջ ու թողնել 10—15 րոպէ: Կաթի ճարպը հետզհետէ կը բարձրանայ խողովակի վերեկ մասերը և երբ ճարպային գնտակիները բոլորովին դադարեն բարձրանալուց, խողովակը ջրի միջև պէտք է հանել, ուղղահայեաց բռնել և հաշուել նորա վերայ նշանակած աստիճանները՝ սկսած այն տեղից, որտեղից որ ճարպային մասը բաժանուում է եթերից կամ սպիրտից: Երկրորդ կարգին է պատկանում Գէ—Լաւալի գործիքը (лактокрит): Այս գործիքի առաւելութիւնն իւր աժանութեան և պարզութեան մէջն է կայանում. միակ անյարմարութիւնն այն է, որ ամէն ժամանակ ճիշտ հետեանքներ չենք կարող հասնել: Բայց երբ հարկաւոր է լինում որոշել ճարպի քանակը մօտաւորապէս, օրինակ առանձին կովերի կաթի մէջ եղած ճարպը, այդպիսի դէպքում Մարշանինը մի կանոնաւոր, կատարելապէս օգտակար գործիք է համարուում: Այս գործիքով շատ արագ և բաւական ճիշտ կերպով կարելի է գործ կատարել, այս պատճառով էլ գործնական տեսակէտից վերլուծութիւնը խիստ օգտաւէտ է համարուում: Մի փոքր քանակութեամբ (10 խոր. սանտիմ.) կաթի հետ պէտք է խառնել հաւասարաչափ քանակութեամբ 50/0 ճճմբային թթւութեամբ (концентрированная серная кислота) քացախային թթւութեամբ (уксусная кислота): Խառնուրդը 7—8 րոպէ պէտք է տաքացնել եռացրած ջրում և ապա մօ-

տաւորապէս 5 րոպէ ենթարկել սեպարատորի մէջ կենդանակոյս զօրութեան՝ ամէն մի րոպէում 6000—6600 շրջան անելու արագութեամբ: Խողովակի վերայ եղած բաժանմունքներից կարելի է անմիջապէս որոշել, թէ կաթի մէջ եղած ճարպը հարկերից որ մասն է կազմում, որովհետև երկու բաժանմունքների միջև կաթից առաջացած ճարպի ծաւալը համապատասխան է կաթի մէջ եղածի 1/10⁰/0ի: Թէպէտ այս գործիքով արդիւնաւոր հետեանքների միշտ կարելի է հասնել, բայց պէտք է գործադրել այն դէպքերում միայն, երբ պատրաստի կայ թանկագին սեպարատոր:

Այս միջոցով դառած է, որ երբ մի լիտր կաթի մէջ 12,60/0 գրամից աւելի ճարպ չլինի, նորա երեսին ճարպային նիւթեր չեն բարձրանայ, այդքանը լուծուած է մնում եթերի կամ սպիրտի հեղուկի մէջ: Մարշան ընդունում է, որ այս քանակութիւնն անփոփոխ է ամէն տեսակ կաթի մէջ և հեղուկի երեսը բարձրացած ճարպային նիւթերից գործիքի իւրաքանչիւր բաժանմունքի համապատասխան մասը քաշում է 0,0233 գրամ: Որքան այս փոքրերն աւելի խնամքով կատարուեն, այնքան աւելի կարելի կլինի մօտենալ ճշտութեան սահմանին:

Կարի քրուրիւնը. Շատ կարևոր է որոշել կաթի իւրաքանչիւր տեսակի վիճակը, մանաւանդ թթւութեան աստիճանը: Կթելիս որքան շատ կեղտ ընկնի կաթի մէջ, որքան բարձր բարեխառնութեան մէջ պահուի կաթը, այնքան աւելի բարձր կլինի նորա թթւութեան աստիճանը և ընդհակառակը: Մի աստիճան թթւութիւնը (50 խ. ս. կաթի մէջ) համապատասխան է 0,0255 գր. կաթնային թթւութեան: Քարմ կաթը իւր մէջ 1—4 աստիճան թթւութիւն է պարունակում: Կաթն եփելիս մահարզւում է այն ժամանակ, երբ նա իւր մէջ 5,5—6,5 աստիճան թթւութիւն է պարունակում, որ համապատասխանում է 0,114—0,146 գր. կաթնային թթւութեան: Կաթն ինքն իրեն մահարզւում է, երբ 15—16 աստիճան թթւութիւն է ունենում, որ 0,337—0,360. գր. կաթնային թթւութեան է հաւասար (կամ երբ 100 խ. ս. կաթի մէջ 0,674—0,720 գր. կաթնային թթւութեան է լինում):

Կաթի մէջ եղած թթւութիւնը որոշելը շատ կարևոր հանգամանք է կաթնատեսութեան մէջ. դրանով երևում է կաթի հետ ունեցած վարուցողութեան եղանակը՝ սկսած կթուելուց և թարմ կաթի թթւութեան աստիճանի բարձրանալը, որ տեղի է ունենում միայն կթելուց մի առ ժամանակ անցնելուց յետոյ. այդ ժամանակն աւելի ուշ կլինի, եթէ խնամքով

վարուած լինին կթելին և խնամքով էլ պահած կթելուց յե-
տոյ: Սօկուէտը մինչև թթուութեան աստիճանն նկատելի դառ-
նալն եղած ժամանակամիջոցն աննւանում է ինկուբացիօնի
շրջան: Տաքացրած կաթի վերաբերմամբ այդ շրջանը տևում
է 3—8 ժամ, 100 տաքութիւն ունեցող կաթինը, 52—75 ժամ:
Խնամ մաքուր կթած կաթի վերաբերմամբ այդ ժամանակամի-
ջոցը չորս անգամ աւելի երկար է տևում, քան անխնամ՝ ան-
մաքուր կթած կաթինը: Որքան աւելի երկար է տևում այդ
շրջանը, նշանակում է թուով նոյնքան աւելի պակաս սաղմեր
են լինում կաթի մէջ, հետևապէս և նոյնքան աւելի դանդաղ
է աեղի ունենում նորա բաղադրել մասերի մէջ փոփոխութիւն
և ընդհանառակը:

Պլաւտի ասելով այս տեսակէտից որևէ կաթ հետազօտե-
լու համար պէտք է այսպէս վարուել. նախ պէտք է որոշել
փորձի ենթարկուող կաթի թթուութեան աստիճանը ինչպէս
հում, նոյնպէս և ետիւմ լիճակի մէջ. յետոյ ամանի մէջ լցրած,
խցանով (ватная пробка) ամուր փակած 120 խոր. սանտ. կաթը
պէտք է դնել օդային բաղանիքի մէջ և ժամանակ առ ժամանակ
որոշել վերցրած օրինակները մէջ թթուի քանակութիւնը.
Թարմ, վերին աստիճանի մաքուր պայմանները մէջ կթած
կաթի թթուութիւնը հազիւ նկատելի է դառնում միայն
5 ժամ անցնելուց յետոյ. անխնամ կթած թարմ կաթի
մէջ հինգ ժամից յետոյ արդէն նկատելի է դառնում բաւա-
կանաչակի թթուութիւն: Պատճառացման և ստերիլացման ենթա-
կայ եղած կաթի վերաբերմամբ այս եղանակը չի գործադրուում:
Եթէ հարկաւոր լինի ճշտութեամբ իմանալ ոչ թէ կաթի թթու-
ութեան աստիճանը, այլ նորա թթուած լինելը, այն ժամա-
նակ կատարելագէս բաւական կհամարուի սպիւրտով փոր-
ձելը: Եթէ հաւասար քանակութեամբ 680/0 (ըստ ծաւալի)
սպիւրտի հետ խառնած և 150 տաքութեան մէջ պահած կաթը
չէ մահաբերում, այն ժամանակ այդ կաթը եռացնելիս ևս մի
քանի ժամ շարունակ չի մահաբերում: Եթէ այս փորձի ժա-
մանակ կաթը թոյլ կերպով է մահաբերում, այն ժամանակ
ևս կարելի է եռացնել, առանց երկեւղ կրելու թէ կմահաբերուի:

Վատառողջ է համարուում այն կաթը, որ 9 ժամից առաջ
կամ 18 ժամից յետոյ է մահաբերում: Այդպիսի կաթը չպէտք է
գործ ածել ոչ խմելու և ոչ պանրագործութեան համար: Կան-
կաճելի է համարուում այն կաթը, որ 9 ժամից յետոյ կամ դեռ
12 ժամ չանցած մահաբերում է. դորս պատճառը ոչ միայն ան-
նասունները հիւանդութիւնն է, այլ նաև կաթի մէջ եղած ան-

մաքութիւնները, գոնցէ և անասունների կերած դատ խոտը:
Այս պատճառներից մէկն ու մէկը միայն բաւական է պանրա-
գործութեանը վնաս հասցնելու: Կաթնախմորացոյցի մէջ (лакто-
ферментаторъ) 12 ժամից յետոյ և 18 ժամից առաջ մահաբե-
րող կաթը առողջարար է համարուում: Այն տեղերում, որտեղ
կաթն այլ և այլ տեղերից են հաւաքում պանիր պատրաստելու
համար, աւելի նպատակայարմար է կաթնախմորացոյցի գոր-
ծածութիւնը:

Նախքան որևէ կաթից պանիր պատրաստելը, ամէն ոք
պարտաւոր է նախօրոք մի փոքր օրինակ վերցնել փորձելու հա-
մար, թէ արդեօք որքան յարմար է նա պանրագործութեան.
այդ փորձերի հետևանքը կամ արդիւնքն այն է լինում, որ կաթի
բոյր թերութիւններն աւելի շուտ և պարզ երևան են դալիս այն
ժամանակ, երբ նա պահուում է 40 կամ 45⁰ բարեխառնութեան
մէջ: Զալաատուրում Վալաերի կազմած կաթի խմորացոյցը
բաղկացած է թիթեղեայ մի կաթսայից, որ երկու բաժան-
մունքներ է ունենում. վերինը՝ փակ մասը ջրի համար է լի-
նումէ փոքր՝ 50 և 100 խ. ս. բովանդակութեամբ, ուր
պէտք է դնել խմորով ծածկուած ապակեայ դլանակները, իսկ
երկրորդը, որ բաց է լինում, սպիւրտի լամպի համար է: Գլա-
նակները և խփիկները պէտք է վերին աստիճանի մաքուր պա-
հել, լուանալ նախ մոխրաջրով և ապա եռացրած ջրով. աւելի
նպատակայարմար կլինի դլանակները ստերիլացնել: Վերին բա-
ժանմունքը փակուում է խփով և ունի ջերմաչափի համար
մի անցք, որի դնտաձև մասը, որ պաշտպանուած է ծակ-ծակ
թիթեղեայ պատեանով (футляръ), խորասուզուում է ջրի մէջ:
Ստերիլացրած դլանակները 2/3 մասը պէտք է լցնել կաթով և
խոխոյն փակել ստերիլացրած խցաններով: Զուրը պէտք է ամ-
բողջ ժամանակը անփոփոխ կերպով 40⁰ տաքութիւն ունենայ:
Փորձի ենթարկուող իւրաքանչիւր տեսակ կաթ պէտք է առան-
ձին խնամքով կթած լինի: Գլանակները մէջ եղած կաթի բար-
ձրութիւնը հաւասար պէտք է լինի կաթսայի մէջ եղած ջրի
բարձրութեանը:

Առաջին անգամ դլանակները մէջ եղած կաթը դիտելու
համար կաթսայի խուրի կարելի է վերցնել 6 ժամ անցնելուց
յետոյ, նոյն փորձը կարելի է կրկնել 9—12 ժամ անցնելուց յե-
տոյ: Առողջ, մաքուր կթած և լաւ պահած կաթը երբեք չպէտք է
12 ժամուայ ընթացքում մահաբերուի և կամ դգայի կերպով
փոփոխուի: Փորձն աւելի կատարելաւ և ճիշտ անելու համար
կարելի է իւրաքանչիւր տեսակ կաթից երկ-երկու դլանակ

լցնել և դիտելու ժամանակ նրանց մէկի խփիկը բանալ և այնպէս տեսնել, թէ արդեօք կաթը թթուած է և այլն: Տառներկու ժամուայ ընթացքում կաթի թանձրութեան աստիճանը պէտք է մնայ այնպէս, ինչպէս սովորաբար լինում է առողջ կաթինը և եթէ այդքան ժամանակամիջոցում մակարդուի, շատ թանձր չպէտք է լինի, չպէտք է պղպճակներ ունենայ և ոչ էլ քուլայ քուլայ թելաձև ձգուած լինի և այլն: Միայն պէտք է իմանալ որ այսպիսի փորձեր կարելի է կատարել թարմ և ոչ թէ մեօրուայ կթած կաթի հետ:

Կաթի թրութիւնը եւ նորա հետազօտելն ու խարդախելը. Կաթի խարդախելը. Սովորաբար կաթը խարդախում են երեք կերպ. կամ մէջը ջուր են խառնում, կամ սերը քաշում, վերջնում են, թէպէտ երբեմն երկու դործողութիւնն էլ միաժամանակ է տեղի ունենում և կամ կողմնակի նիւթեր են խառնում: Իւղադործութեան և պանրագործութեան մէջ մարդս գործ է ունենում միայն առաջին երկուսի հետ: Որովհետեւ կաթը շատ տեսակ նիւթերից է բաղկացած, այդ պատճառով հեշտութեամբ չի կարելի որոշ կերպով իմանալ նորա խարդախած լինելը:

Կաթի մէջ ջուր լինել կամ չլինելը որոշելու համար մի շատ հասարակ և միևնույն ժամանակ յարմար մեջոց կայ: Վեր են առնում մի մաս (քաշ) կաթ և երկու մաս 900 սպիրտ. այդ երկուսը լցնում են մի տեսակ ապակեայ ամանների (пробирка) մէջ, որ ծախում են դեղատներում և դեղատան պահեստներում և 5-8 րոպէ շարունակ հարում են այդ խառնուրդը: Յետոյ այդ խառնուրդը դատարկում են մի ապակեայ ամփռէի մէջ և դիտում. եթէ կաթի մէջ խառնուրդ չի եղել, սպիրտի ներդործութիւնից կաթի բաղադրիչ մասերից մէկը պանրածինը կսկսի մակարդուել և կաթի ու սպիրտի խառնուրդուց 40—50 րոպէ անցնելուց յետոյ կդոյանան մանրիկ քուլաներ. բայց եթէ կաթի մէջ ջուր լինի, այդպիսի քուլաների կազմուելը ուշանում է և որքան շատ ջուր խառնուած լինի, այնքան աւելի ուշ երևան կզան քուլաները, այնպէս, որ եթէ կաթի հետ կէսը ջուր է խառնած, քուլաները կարող են երևալ միայն փորձի ենթակայ կաթի և սպիրտի խառնուելուց կէս ժամ յետոյ:

Այլքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ ջուր աւելացնելով, նոյնպէս և սերը քաշելով պահատում են կաթի մէջ եղած ճարպը և պինդ նիւթերը, այդ պատճառով հեշտ կարելի է իմանալ, թէ արդեօք կաթը խարդախած է, թէ ոչ, եթէ միայն կարողանանք որոշել առհասարակ կաթի մէջ եղած յիշեալ նիւթերի քանակութիւնը: Բայց շատ անգամ այս միջոցը նպատակին չէ հասնում, որովհետեւ զանազան տեսակ չխարդախած, անարատ կաթերը կրենց մէջ միատեսակ անփոփոխ քանակութեամբ պինդ նիւթեր և ճարպ չեն պարունակում:

Այս տեսակէտից կաթը հետազօտելու համար մեծ նշանակութիւն ունի նորա տեսակարար կօիւ որոշելը. նախ որ ամենից աւելի տեղի ունեցող խարդախութիւնը՝ կաթի հետ ջուր խառնելը, փոխխում է նորա տեսակարար կշիռն այնքան զգալի կերպով, որ շատ անգամ իսկոյն և եթ աչքի է ընկնում և կարելի չի լինում խարդախութիւնը որոշելու համար հետազօտել կաթի պինդ նիւթերը և ճարպը և երկրորդ, որ տեսակարար կշիռն իմանալը և միաժամանակ կաթի մէջ եղած պինդ նիւթերի և ճարպի քանակութիւն որոշելը հնարաւորութիւն է ապրիս իմանալու կաթի բաղադրութիւնը և նորա յատկութիւնը:

Անխառն, երես չքաշած կաթի տեսակարար կշիռն երբէք չէ կարող 1,029-ից պակաս և 1,039-ից աւելի լինել. միջին հաշուով կարող ենք ընդունել 1,031 գրամ: Այս նշանակում է, որ եթէ մի լիտր մարուր 4° տաքութիւն ունեցող ջուրը (աւելի ճիշտն ասած թորած ջուրը) կշռում է 1000 գրամ, նոյն ծաւալն ունեցող անքաշ, անարատ կաթը կիշռէ 1031 գրամ: Այսպիսով ուրեմն կաթը ջրից ծանր է և հէնց այդ է պատճառը, որ եթէ ջրի մէջ մի կաթիլ կաթ ձգենք, կիջնի տակը:

Եթէ վեր առնենք 1,031 տեսակարար կշիռ ունեցող մաքուր, չխարդախած կաթ և աւելացնենք վրան 100% ջուր, կտեսնենք, որ տեսակարար կշիռը պակասում է և իջնում մինչև 1,0273: Եթէ մի տեսակ կաթի տեսակար կշիռը 1,031 է, այն ժամանակ մի լիտրը¹⁾ կքաշէ 1,031 գրամ և եթէ դորա վերայ աւելացնենք 100% ջուր²⁾, որ քաշում է 100 գրամ, ամբողջ խառնուրդը (1100 խոր. սանտ.) կքաշէ 1131 գրամ: Եւ որովհետեւ 1,131 գրամ ծանրութիւնը բաժանած ծաւալի վրայ (1100 խոր. սանտ.) ստացւում է կաթի տեսակարար կշիռը, այդ

1) Մի լիտր—1000 խոր. սանտ.
2) 10% ջուր—100 խոր. սանտ.

պատճառով վերջինը արտայայտուում է 1,0282 թուանշանով: Այսպիսի պահաս տեսակարար կշիռ ունեցող կաթը բացասա-
թիւն է կաղմում. պէտք է հասկածելի համարել և հետազո-
տութեան ենթարկել: Եթէ կաթի մէջ 250/0 ջուր է խառնած,
չնորհիւ այդ հանդամանքի տեսակարար կշիռը պակասում է
մինչև 1,0248. Տէնց այս թիւն արդէն պարզ ցոյց է տալիս, որ
կաթի հետ ջուր է խառնած: Բոյց եթէ կաթի տեսակարար կշիռը
հէնց սիզրեց հաւասար է 1,033-ի, փոխանակ 1,031-ի, այդ դէպ-
քում 100/0 ջուր աւելացնելով կաթի վրայ, նորա տեսակարար
կշիռը հաւասար կլինի 1,030-ի, իսկ 250/0 աւելացնելով՝ 1,024:
Միացն վերջին դէպքում գուցէ կարելի լինի նկատել, թէ կաթի
հետ ջուր է խառնած. առաջին դէպքում, երբ տեսակարար
կշիռը 1,030-ի է հաւասար, առանց հետազոտութեան դժուար է
այդ բանն իմանալ: Առհասարակ 1,025-ից պակաս տեսակարար
կշիռ ունեցող կաթի համար համարձակ կարելի է ասել, որ
խարդախած է:

Դուրս բերելով կաթի միջից նորա ամենաթեթեւ բաղադրել
մասը՝ սերը կամ աւելի ճիշտն ասած ճարպը, մենք այդպիսով
բարձրացրած կլինինք կաթի տեսակարար կշիռը: 1,031 տեսակա-
րար կշիռ ունեցող կաթի մի լարի մէջ 34 գրամ ճարպ կլինի,
որ հաւասար է 3,40/0. այդ 34 գրամը 0,93 տեսակարար կշիռ-
ունեցած գէպքում 36,6 խոր. սանտ. ծաւալ կունենայ:
Մի լիտր կամ 1000 խոր. սանտ. կաթը, որ կշռում է
1,031 գր., պարունակում է իւր մէջ 36,6 խոր. սանտ. ճարպ,
որ քաշում է 34 գրամ. ճարպից դուրի կաթը կունենայ 963,4
խոր. սանտ. ծաւալ և 997 գրամ ծանրութիւն, որով և ճար-
պից զրկուած կաթը կունենայ 1,0348 տեսակարար կշիռ: Եթէ
կաթից սերը մաս-մաս քաշելով նրանից 10/0 ճարպ վերցնենք,
այն ժամանակ 34 գր. ճարպ պարունակող մի լիտր (1,000 խոր.
սանտ.) կաթից կմնայ 24 գրամ ճարպ պարունակող 950 խոր.
սանտ. կաթ: 24 գրամ ճարպը 25,8 խոր. սանտ. ծաւալ է
ունենում, այնպէս որ ճարպազուրկ կաթին մնում է 924,2
խոր. սանտ. ծաւալ՝ 956,4 գրան ծանրութեամբ (հաշուելով
վերջին տեսակարար կշիռը 1,0348): Այդպիսով վերոյիշեալ
կերպով սերը վերցնելուց յետոյ մնացած 950 խոր. սանտ.
կշռում է 24+956,4=980,4 գր., որով տեսակարար կշիռը հա-
ւասար կլինի 1,0320:

Սերը քաշելուց կաթի տեսակարար կշիռը համեմատաբար
շատ չէ փոխուում, քեզ բարձրանում է. բայց եթէ վրան ջուր

աւելացնենք, տեսակարար կշիռը կրկին կպակասի: 10/0 վեր-
ցրած ճարպի փոխարէն եթէ 40/0 ջուր աւելացնենք, կարելի է
մտաւորապէս վերականգնել կաթի սիզրեակի տեսակարար
կշիռը:

Կաթի տեսակարար կշիռը սրճելու համար գործ է ած-
ուում կարի խաչաչափ կամ կարնաչափ (лактоденсиметръ) կո-
չուած գործիքը: Աւելի գործածական է Կելվենի կաթիխաչա-
չափը: Այդ գործիքն ամբողջապէս 22 սանտ. երկարութիւն
ունի և բաղկացած է դրանաձև մի ձողից, որի ներքևի մասում
դանուում է մի ծանր դունտ, իսկ վերին ծայրում 6 մլ.
լայնութեամբ ապակեայ մի նեղ խողովակ, որի վերայ նշանա-
կուած են բաժանմունքներ, աստիճաններ: Տեսակարար կշիռ-
ցոյց ստուղ աստիճանները սկսում են վերևի ծայրից, ուր նշա-
նակուած է 14, որի շարունակութիւնը վերջանում է ներքևում
այնտեղ, ուր նշանակուած է 42, որ համապատասխանում է
1,042 աստիճան տեսակարար կշիռի: Աստիճանները մէկ մէկուց
2 մլ. հեռու են դանուում, այնպէս որ առանց դժուարութեան
կարելի է միջները կէս աստիճաններ ևս նշանակել: Կողքերին
նշանակուած են նաև ուրիշ թուանշաններ, որոնցով որոշուած է
թէ խառնուած է ջրով 1/10, 2/10, 5/10 և այլն:

Այս գործիքը պէտք է գործադրել հետեւեալ կերպով. հար-
կաւոր է վերցնել առաջուց լաւ խառնած կաթից և լցնել մի եր-
կայնաձև սրուակի մէջ այնքան, մինչև որ կաթը ամանի կողքերից
վայր թափուի, որպէս զի փրփուր չգոյանայ, որովհետև փր-
փուրը խանգարում է աստիճանները որոշելուն, որից յետոյ հան-
դարտ կերպով կաթի խաչաչափը պէտք է պտտուող շարժում-
ներով ընկղմել կաթի մէջ մտաւորապէս մինչև 30 աստիճանը.
մի կամ երկու րոպէ անցնելուց յետոյ կնկատուի գործիքի եր-
կայնութեան վրայ կաթի մակերևոյթին համապատասխան
եղող աստիճանը: Աւելի ճիշտ կերպով տեսակարար կշիռը որո-
շելու համար պէտք է աչքի առաջ ունենալ այն հանդամանքը,
որ կաթը կաթի խաչաչափի պատերին կպչելով, նորա մակե-
րևոյթը քեզ աւելի բարձր կլինի կանգնած, այդ պատճառով
էլ տեսակարար կշիռը քեզ աւելի ցած է երևում մեր աչքին,
քան իսկապէս է: Եթէ ընկղմուած կաթի խաչաչափը կաթի մէջ
32 աստիճան ցոյց տայ, նշանակում է, որ կաթի տեսակարար
կշիռը 1,032-է:

Կթելուց անմիջապէս յետոյ կաթի տեսակարար կշիռը
1/2-1 աստիճան աւելի ցած է լինում, քան մի քանի ժամ յետոյ:
Կաթի խաչաչափով կաթը փորձելիս շատ կարևոր է ճիշտ

կերպով որոշել նորա բարեխառնութեան աստիճանը. տարութիւնն է լայնանում է, կաթի խտաչափն աւելի է խորասուզում և այդ պատճառով էլ աւելի ցած տեսակարար կշիռ է ունենում, քան սառնութեան մէջ եղածը, երբ սովորաբար կաթը սեղմում, կուչ է դալիս և կաթի խտաչափը աւելի քիչ է խորասուզում և աւելի բարձր տեսակարար կշիռ է ցոյց տալիս: Արպէս զի կաթի խտաչափով կատարած այլ և այլ փորձերը կարելի չեն համեմատել իրար հետ, հարկաւոր է որոշել մի ընդհանուր կանոնաւոր բարեխառնութիւն կաթի համար. այդպէս բարեխառնութիւն պէտք է համարել 150 II., որ շատ անգամ հաւասար է լինում արտաքին օդի բարեխառնութեան և այսպիսի ժամանակ կաթնախտաչափի ցոյց տուած աստիճանը համարում է կաթի ճիշտ տեսակարար կշիռը: Բայց եթէ արտաքին օդի տարութիւնը 150 չլինի, այն ժամանակ կաթի խտաչափի ցոյց տուած աստիճանը պէտք է ուղղել յետագայ երկու ուղղիչ աղիւսակներով, որոնցից մէկը անխառն, երես չքաշած կաթի համար է, իսկ միւսը երես քաշածի:

ԿԱԹԻ ԽՏԱՉԱՓԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ.

Նրեար չխաւած կար.

	100	110	120	130	140	150	160	170	180	190
21	20. 3	20. 4	20. 5	20. 6	20. 8	21. 1	21. 2	21. 4	21. 6	21. 8
22	21. 3	21. 4	21. 5	21. 6	21. 8	22. 1	22. 2	22. 4	22. 6	22. 8
23	22. 3	22. 4	22. 5	22. 6	22. 8	23. 1	23. 2	23. 4	23. 6	23. 8
24	23. 3	23. 4	23. 5	23. 6	23. 8	24. 1	24. 2	24. 4	24. 6	24. 8
25	24. 2	24. 3	24. 5	24. 6	24. 8	25. 1	25. 2	25. 4	25. 6	25. 8
26	25. 2	25. 3	25. 5	25. 6	25. 8	26. 1	26. 2	26. 4	26. 6	26. 8
27	26. 2	26. 3	26. 5	26. 6	26. 8	27. 1	27. 2	27. 4	27. 6	27. 8
28	27. 1	27. 2	27. 4	27. 6	27. 8	28. 1	28. 2	28. 4	28. 6	28. 8
29	28. 1	28. 2	28. 4	28. 6	28. 8	29. 1	29. 2	29. 4	29. 6	29. 8
30	29	29. 2	29. 4	29. 6	29. 8	30. 1	30. 2	30. 4	30. 6	30. 8
31	30	30. 2	30. 4	30. 6	30. 8	31. 1	31. 2	31. 4	31. 6	31. 8
32	31	31. 2	31. 4	31. 6	31. 8	32. 1	32. 2	32. 4	32. 6	32. 8
33	32	32. 2	32. 4	32. 6	32. 8	33. 1	33. 2	33. 4	33. 6	33. 8
34	32. 9	33. 1	33. 3	33. 5	33. 8	34. 1	34. 2	34. 4	34. 6	34. 8
35	33. 8		34. 2	34. 4	34. 7	35. 1	35. 2	35. 4	35. 6	35. 8

Նրեար Բաւած կար.

	100	110	120	130	140	150	160	170	180	190	200
25	24. 3	24. 4	24. 5	24. 6	24. 8	25. 1	25. 2	25. 4	25. 5	25. 8	
26	25. 3	25. 4	25. 5	25. 6	25. 8	26. 1	26. 3	26. 5	26. 7	26. 9	
27	26. 3	26. 4	26. 5	26. 6	26. 8	27. 1	27. 3	27. 5	27. 7	27. 6	
28	27. 3	27. 4	27. 5	27. 6	27. 8	28. 1	28. 3	28. 5	28. 7	28. 9	
29	28. 3	28. 4	28. 5	28. 6	28. 8	29. 1	29. 3	29. 5	29. 7	29. 9	
30	29. 3	29. 4	29. 5	29. 6	29. 8	30. 1	30. 3	30. 5	30. 7	30. 9	
31	30. 3	30. 4	30. 5	30. 6	30. 8	31. 1	31. 3	31. 4	31. 6	31. 8	32
32	31. 3	31. 4	31. 5	31. 6	31. 8	32. 1	32. 2	32. 4	32. 6	32. 8	33
33	32. 3	32. 4	32. 5	32. 6	32. 8	33. 1	33. 2	33. 4	33. 6	33. 8	34
34	33. 3	33. 4	33. 5	33. 6	33. 8	34. 1	34. 2	34. 4	34. 6	34. 8	35
35	34. 2	34. 3	34. 4	34. 6	34. 8	35. 1	35. 2	35. 4	35. 6	35. 8	36
36	35. 2	35. 3	35. 4	35. 6	35. 8	36. 1	36. 2	36. 4	36. 6	36. 8	37. 1
37	36. 2	36. 3	36. 4	36. 6	36. 8	37. 1	37. 2	37. 4	37. 6	37. 8	38. 1
38	37. 2	37. 3	37. 4	37. 6	37. 8	38. 1	38. 2	38. 4	38. 6	38. 8	39. 2
39	38. 2	38. 3	38. 4	38. 6	38. 8	39. 1	39. 2	39. 4	39. 6	39. 8	40. 2
40	39. 1	39. 2	39. 4	39. 6	39. 8	40. 1	40. 2	40. 4	40. 6	40. 8	41. 2

Այս աղիւսակները շատ հեշտ կերպով կարելի է օգտուել: Առաջին ուղղահայեաց շարքում դասաւորուած են կաթի խտութեան աստիճանները, իսկ հորիզոնական ուղղութեամբ դասաւորուած են զանազան տեսակ կաթերի տարութեան աստիճանները ցոյց առնող թուանշանները: Կաթի ճիշտ խտութեան աստիճանը կամ տեսակարար կշիռը գտնելու համար պէտք է նախ գտնել կաթի խտութեան մօտաւոր աստիճանը և սպա տարութեան աստիճանը. այդ երկուսի ուղղութեամբ առաջ գնալով կպատահի մի թիւ, որ ճիշտ կերպով որոշում է խտութեան աստիճանը: Այսպէս օրինակ, ենթադրենք թէ երես չքաշած կաթի տեսակարար կշիռն է 1029 և կամ աւելի համառօտ ասած 29 աստիճան, իսկ բարեխառնութիւնը 200. այն ժամանակ իսկական տեսակարար կշիռը 150 ջերմութեան մէջ հաւասար կլինի 1,0302 կամ 30,2 աստիճանի: Եթէ փորձելու ենթակայ կաթը, ընդհակառակը, միայն 100 տարութիւն ունի, իսկ կաթի խտաչափը ցոյց է տուել 31 աստիճան, այն ժամանակ տեսակարար կշիռը հաւասար կլինի 1,030 կամ 30 աստիճանի: Երես քաշած կաթի հետ պէտք է վարուել այսպէս. իւրաքանչիւր 50 մէջ տեսակարար

կշիռի բարեխառնութեան տարբերութիւնը հաւասար է 0,001 կամ կաթիլի խտաչափի մէկ աստիճանին. այլ կերպ ասած իւրաքանչիւր 50 աւելին բարձրացնում է կաթիլի տեսակարար կշիռը մի աստիճանով և ընդհակառակը: Եթէ առանձին ճշտութիւն չէ պահանջում, կարելի է և առանց այս աղիւսակներէ զտրծ տեղնել: Աղիւսակները կազմած են մինչև 200 բարեխառնութեան համար և կաթիլի խտաչափով երես չքաշած կաթիլի տեսակարար կշիռը ցոյց տալու համար մինչև 35, երես քաշածի համար մինչև 40 աստիճանը. առհասարակ տեսակարար կշիռը պէտք է որոշել կանոնաւոր բարեխառնութեան, այն է 150-ի մէջ և ոչ երբէք 200-ից բարձր և 100 պակաս ջերմութեան մէջ, հաւառակ դէպքում դժուար կլինի ճիշտ որոշելը:

Երբեմն կաթիլի խտաչափերը անհոգ կերպով են շինուած լինում, այդ պատճառով էլ էժան են լինում: Կաթիլի այդպիսի խտաչափերին չէ կարելի վստահել. պէտք է ստուգել ոչ և է հմուտ մասնագէտի ձեռքով:

Սովորաբար կաթիլի խտաչափի ցոյց տուած աստիճանը միայն բաւական չէ հեշտ կերպով ստուգելու համար. թէ արդեօք կաթիլի հեռ ջուր խառնած է, թէ ոչ. երբեմն այս խտաչափերը ծածկելու համար նորա հեռ սեր են խառնում. քննողը միայն այն ժամանակ ճիշտ հեռահանքներ կհասնի, երբ կամենայ կասկածաւոր համարուած կաթիլ վործով համեմատել նոյն տեղից ստացուած անխառն, երես չքաշած կաթիլի հեռ, կամ համեմատելով կասկածելի համարուած կաթիլի տեսակարար կշիռը երես քաշած կաթիլի հեռ: Եթէ միայն սերն է վերցրած, երկու պեսակ կաթիլ տեսակարար կշիռներէ տարբերութիւնն աննշան կլինի, բայց եթէ սերը վերցնելուց յետոյ կաթիլ վրայ ջուր ևս աւելացրած է, ինչպէս վերը տեսանք, կասկածելի կաթիլի տեսակարար կշիռը սովորական չափի մէջ կլինի. նոյն կաթիլի տեսակարար կշիռը, սերը կրկին վերցնելուց յետոյ, կգտնուի երես քաշած կաթիլի տեսակարար կշիռը ցոյց տուող աստիճանից ցած:

Կարևոր է ի նկատի ունենալ, որ կաթիլի աւելի կամ պակաս տեսակարար կշիռ ունենալուց չէ կախուած նորա մէջ եղած այս կամ այն նիւթի (ճարպի, պանրածինի) աւելի կամ պակաս հարստութիւնը, որովհետև կարող է պատահել որ պակաս տեսակարար կշիռ ունեցող կաթիլ հարուստ լինի ճարպով և պանրածինով և ընդհակառակը, բարձր տեսակարար կշիռ ունեցող կաթիլ իւր մէջ համեմատաբար աւելի պակաս քանակութեամբ պարունակէ յիշեալ նիւթերէն: Այսպէս օրինակ, շատ ճարպ, նոյն խի պանրածին պարունակող կաթիլ պակաս տեսակարար կշիռ

կունենայ, որովհետև ճարպը ջրից թեթեւ լինելով պակասեցնում է կաթիլի տեսակարար կշիռը:

Առհասարակ կաթիլը քննելիս պէտք է ուշադրութիւն դարձնել ոչ միայն նորա տեսակարար կշիռի, այլ և արտաքինի, գոյնի, հոտի և համի վրայ:

Ի՞նչպէս պէճ է իմանալ, թէ կաթիլի հեռ այլ եւ այլ նիւթեր են խառնած. կաթիլի հեռ երբեմն խառնում են անրաջուր, օսլայ (կրախմբ) և այլն: Այս խառնուրդները որոշելու համար պէտք է վարուել այնպէս. հարկաւոր է վեր առնել օղիկ մի վորջրիկ բաժանով անք կաթ և մէջը 5—6 կաթիլ քացան լցնել. կաթիլը կսկսի մահարդուել. զգուշութեամբ թէյի գտալով կաթիլ խառնելուց յետոյ ամբողջ լու լու դարձածը պէտք է հաւաքել ու դուրս ձգել: Փորրիկ բաժանի մէջ կմնայ շիճուկը, որը և փորձի պէտք է ենթարկել: Շիճուկի վերայ պէտք է աւելացնել մի կաթիլ մանիշի (тинктура юды) լուծուածք և եթէ կաթիլի հեռ օսլայ չէ խառնած, շիճուկը դեղին գոյն կստանայ (յեօղի գոյն), իսկ եթէ նման նիւթերի խառնուրդ կայ, այն ժամանակ հեղուկը ներկուած է կապոյտ գոյնով: Այս փորձն ուղղակի կաթիլի հեռ կատարելն անյարմար է, որովհետև կաթիլի սպիտակ գոյնը երբեմն ծածկում խանդարում է ներկուելուն, գոյների առաջ գալուն. այս պատճառով աւելի լու կլինի ամէն անգամ կաթիլը առաջնից քացախով մահարդել:

Հուլի եւ եփած կաթիլի արբերութիւնը. Այս նպատակով Արնուրը առաջարկում է դաղղիական փայտի դուրսաւոր լուծուածք (бакауттовая тинктура), որի քանակութիւնը չպէտք է իրեն օրինակ վերցրած կաթիլի 100/0-ից պակաս լինի: Այդ լուծուածքի աւելացնելովը հում կաթիլը ներկուած է կապոյտ գոյնով. ներկուելը արագ է կատարուած. 20—30 վայրկեան անցնելուց յետոյ եփած կաթիլը ներկուած է մութ-դեղնաւուն (привновато-желтый) գոյնով: Այդ հակաաղղեցութեան շնորհիւ կարելի է որոշել նաև եփած և հում կաթիլ իրար հեռ խառնուած լինելը, որովհետև եփած կաթիլը շուտով չի ներկուում, մօտաւորապէս մի օրով հեռ եփած կաթիլը շուտով չի ներկուում, մօտաւորապէս մի օրով հում կաթիլը խառնուած լինի, 30—50 րոպէում տեղի կունենայ ներկուելը, 250/0 հում կաթիլ խառնելով՝ 11—15 րոպէում տեղի կունենայ 1/5 հում կաթիլի և 2/5 եփած կաթիլի խառնուրդը կներկուի այդ, 6—10 րոպէում: Վերջապէս հաւասարաչափ քանակութեամբ ինչպէս հում, նոյնպէս և եփած կաթիլի խառնուրդը հաղորդակցութիւն է ունենում (կապտուուն գոյն է ստանում) 1—2 րոպէից յետոյ:

Է.

ԿԹԹԻՅ ՍԵՐ ՁԱՏՆԼԸ.

Կաթից սեր զատելու ընդհանուր պայմանները. Կաթը մի քանի ժամ շարունակ մնալով հանդարտ վիճակի մէջ, նորա ճարպային մասնիկները՝ գնտակիկները իրենց թեթևութեան պատճառով բարձրանում են վերև և սկսում լողալ նորա երեսին ու կաղմում ճարպային մի թանձր շերտ, որ կառուցում է սեր: Կաթի միջին ճարպային գնտակիկները կատարելապէս բաժանւում են կաթից և երեսին սեր կաղմում միայն այն ժամանակ, երբ նրանք բոլորովին ազատ կերպով կարողանում են շարժուել կաթի մէջ: Բայց գնտակիկները վերև բարձրանալիս ճանապարհին կրկնակի արգելքների են հանդիպում. առաջին արգելքն է նրանց կալոսի և կաթի միւս բաղադրիչ մասերից կաղմուած (աւելի տեսակաւոր կշիռ ունեցող) թաղանթը. երկրորդը՝ փքուած պանրածինն է, որ խտացնելով կաթը, դանդաղեցնում է գնտակիկների երես բարձրանալը և նոյն իսկ շատ անգամ բոլորովին արգելք է դառնում: Կաթի երես բարձրանում են նախ և առաջ խոշոր ճարպային գնտակիկները և ապա մանրերը, և որչափ մանր լինեն գնտակիկները, այնքան աւելի ընդդիմութեան կհանդիպեն կաթի երես բարձրանալիս: Այսպիսով մանրիկ գնտակիկներն մի մասը մնում է կաթի մէջ այն ու այն կողմ ցրիւ եկած: Սրանից կարելի է հետևել, որ երես քաշած կաթի մէջ եղած գնտակիկները համարեա առանց բացառութեան պատկանում են մանրիկների կարգին:

Մեզանում՝ շատ տեղեր կթած կաթը լցնում են ամանների մէջ և դով տեղ թողնում, մինչև որ սերն ինքնիրեն բարձրանայ կաթի երես. յետոյ այդ սերը հաւաքում են և խնոցու մէջ հարելով՝ պատրաստում կարագ: Այս եղանակով կարագ ստանալն ունի իւր թերութիւնները, որովհետև ճարպային գնտակիկների մի մասը մնում է կաթի մէջ:

Հանդիսա վիճակի մէջ դանուող կաթի ճարպային գնտակիկների ազատ շարժուելու և երես բարձրանալու վրայ ազդում են հետևեալ հանգամանքները.

1. Կաթի յափուրիւնը եւ նրանում եղած նարպը. որովհետև ամէն տեսակ կաթի մէջ պանրածինը միակերպ փքուած-տարածուած չէ լինում և որովհետև դրանից առաջացած կաթի թանձրութիւնը արգելք է դառնում ճարպային գնտակիկների ազատ շարժողութեանը, այդ պատճառով էլ տարբեր տեսակ

կաթերի մէջ կաթնային գնտակիկների երես բարձրանալը միակերպ չէ կատարւում նոյն իսկ այն դէպքում, երբ միւս պայմանները (բարեխառնութիւնը, ճարպի քանակը և այլն) նոյնն են:

Որքան թանձր լինի կաթը, այնքան աւելի արգելքների կպատահեն գնտակիկները վերև բարձրանալիս և ընդհակառակը: Հանդարտ վիճակի մէջ թողած ոչ թանձր կաթի ոչ միայն ճարպային մասնիկներն են արագ կերպով վերև բարձրանում, այլ և սերն մէջ ընկնում են այն մասը կաթնային գնտակիկները, որոնք թանձր, մածուցիկ կաթի մէջ անկարող են լինում վերև բարձրանալ և այս պատճառով էլ սերն աւելի կատարելապէս է բաժանւում և ճարպի քանակութիւնն աւելի մեծ է լինում:

2. Կաթի սառուրիւնը. Կաթի երեսը սեր կապելու վերայ մեծ ազդեցութիւն է ունենում նաև կաթի տաքութիւնը: Եթէ մենք աչքի առաջ ունենանք այն հանգամանքը, որ տաքութեան պակասելովը կաթն աւելի թանձրանում է և մանաւանդ որ ճարպային գնտակիկները, որքան կաթը թանձր լինի, այնքան աւելի դանդաղ են շարժւում, բոլորովին հասկանալի կլինի մեզ համար, որ ճարպը այնքան աւելի հեշտ կբաժանուի կաթից, որքան բարձր է կաթի տաքութեան աստիճանը, մանաւանդ որ գնտակիկները տաքութիւնից լայնանալով, աւելի հեշտութեամբ վերև կբարձրանան: Այս կանոնը վերաբերում է ինչպէս հին եղանակներով, նոյնպէս և նորագոյն կենդանախոյս-սեպարատոր մեքենաներով սեր դատելուն: Յայտնի է նաև, որ տաք կաթն այնչափ կալուս չի լինում, ինչպէս սառը կաթը, որով ճարպային գնտակիկները քիչ ընդդիմութիւն կրելով, շուտով բարձրանում են կաթի երես և իրենց հետ տանում միաժամանակ պանրածին և այլ նիւթեր, որոնցից կաղմուած է սերը: Տաքութիւնն ազդում է ինչպէս սերին, նոյնպէս և երես քաշած կաթի մէջ մնացած ճարպի քանակութեան վրայ: Այդ ազդեցութիւնն արտայայտւում է նրանով, որ միւս համանման պայմաններում որոշ ժամանակուայ ընթացքում սերն մէջ այնքան աւելի ճարպ կհաւաքուի, որքան աւելի բարձր լինի տաքութիւնը սերը դատելիս:

3. Ժամանակի ազդեցութիւնը. Թէպէտ ընդհանրապէս սերն մէջ այնքան աւելի ճարպ կլինի, որքան աւելի երկար ժամանակ նա փռուած կմնայ, սակայն սկզբում սովորաբար աւելի շատ ճարպ է բարձրանում կաթի երես, քան յետոյ և որքան առաջ գնայ, այնքան աւելի և աւելի կսկսէ պակասել բարձրացող ճարպային գնտակիկների թիւը: Որպէսզև կաթի միջին ամբողջ սերը երես բարձրանայ, շատ ժամանակ կհարկաւորուի, բայց որով-

հետև այդքան երկար ժամանակ կաթը փռուած պահելն անհնարին է լինանալու պատճառով, ուստի և անհնարին է կաթի միջից ամբողջ սերը զտակը: Նկատուած է, որ ցած տաքութեան մէջ կազմուած սերի թանձր շերտի մէջ աւելի քիչ ճարպ կգտնուի, քան նոյնքան ժամանակում բարձր տաքութեամբ կազմած բարակ շերտի մէջ. և առհասարակ տաքութեան բարձրանալովը թէպէտ սակաւ քանակութեամբ, բայց ճարպով աւելի հարուստ սեր կտասցուի:

ճարպը բարձրանում է սերի մէջ.

Սկզբի 8 ժամից յետոյ	43,50%	1 ժ. = 5,440%
Հետևեալ 8 « «	11,5 «	1 ժ. = 1,440%
» 12 « «	11,4 «	1 « = 0,960%
» 12 « «	6,7 «	1 « = 0,56 «

40 ժամուայ ընթացքում 73,10%, 1 ժամ = 1,830% մտա.

Սորա պատճառն այն է, որ խոշոր գնտակիկներն աւելի աբազ են բարձրանում, մինչդեռ մանրիկներն աւելի դանդաղ, իսկ ամենամանրները բոլորովին չեն ընկնում կաթի երես՝ սերի մէջ:

4. Կաթի բարձրութիւնը եւ ամանների ձեւն ևս աղիւցեցութիւն են ունենում ճարպային գնտակիկներին երես բարձրանալու վրայ և որքան կարճ լինի այն ժամանակամիջոցը, որը ընթացքում գնտակիկները հասնում են կաթի երես, այնքան աւելի սեր կըռնէ կաթի երեսը: Սրանից հետևում է, որ սեր բռնելու համար աւելի նպատակաշարժար են լայն և տափակ, քան խոր ամանները:

Ամանների ինչ նիւթից (մետաղից, փայտից, կաւից և այլն) պատրաստելն ինքն ըստ ինքեան ոչ մի նշանակութիւն չունի սերակազմութեան վերայ: Բնական եղանակով, այսինքն կաթն երկար ժամանակ փռած հանգարտ թողնելով, սեր զատելու համար յարմար է ճանաչուած 10—150 տաքութիւնը, միայն կաթը մինչև 12 ժամ պէտք է թողնել տափարակ ամանների մէջ: Այդ ամանները կարող են լինել փայտից, մետաղից, կաւից: Ամենայարմարաւոր են ճանաչուած թիթեղեայ, ապա արծնապահած ամանները. որտեղով կաթը շուտ է սառչում և եթէ կաթի շերտը հաստ չէ, շատ շուտով երեսը կատարելապէս սեր է բռնում: Այսպիսի ամաններ մաքրելու համար պէտք է լուանալ տաք ջրով և սապոնով, բայց ոչ երբէք աւաղով: Փայտեայ ամանները դժուարութեամբ են մաքրուում, իսկ պղնձեայ ամանները նախ պէտք է լաւ կլայեկել և ապա գործ օժել: Կաթի վերայ ջուր համ աղ աւելացնելը դժուարացնում է սորա երեսին սեր բռն-

նելու գործը: Կաթի եփելն ևս, ինչպէս փորձերը ցոյց են տուել, բնական եղանակով սերակազմութեանը արգելք է դառնում:

Կաթից սեր զատելու այլ եւ այլ եղանակներ. Այն

բոլոր միջոցները, որոնք դործադրուում են կաթից հնար եղածին չափ մեծ քանակութեամբ սեր զատելու և նրանից ճարպ ստանալու համար, երկու խմբի են բաժանուում. ա. բնական եղանակով կամ կաթը փռելով սեր քաշելը, երբ ճարպային գնտակիկները բարձրանում են կաթի երես, և բ. հենտրոնախոյս զօրութեամբ սեր զատելը:

Ա) Բնական կամ հասարակ եղանակով կաթից սեր զատելն այժմ քանի գնում աւելի և աւելի կորցնում է իւր նշանակութիւնը, որովհետև հետզհետէ ամէն տեղ տարածուում է կենտրոնախոյս մեքենաներով սեր զատելու ամենայարմար և դիւրին միջոցը: Բայց դիւրաանտեսութեան այլ և այլ անբարեյաջող հանգամանքներն պատճառով դուրսէ մեղանում շատ ուշ մուտ գործեն սեր զատելու համար դոյութիւն ունեցող կենտրոնախոյս մեքենաները: Այս պատճառով բնական եղանակով սեր զատելու մասին այստեղ կարևոր ենք համարում մի հարեանցի ակնարկ ձգել:

Ռուսաստանում և մեղանում՝ Կովկասում գործարւում է գլխաւորապէս երեք եղանակ. ա. կաթը փռում են հասարակ կաւէ կճուճներին, բղուղներին, տաշտերին, բ. քառանկիւնաձև թիթեղեայ ամաններին և դ. Շուտարցի քուղաներին մէջ:

Առաջին տեսակ ամանների մէջ սեր զատելը ամենաանյարմարն է և անօգուտը. մանր ամանների մեծ քանակութիւնը դժուար է մաքուր վիճակի մէջ պահել. կաւէ ամանների պատերն դժուարութեամբ սառչելու, նրանց անկանոն ձևի և մակերևոյթի ներսի մասն անհարթութեան պատճառով սեր զատելը կատարեալ կերպով չէ տեղի ունենում և պակաս կարգ է ստացուում: Երես քաշած կաթի մէջ մօտաւորապէս 10% ճարպ է մնում, որը ամառնային շոգ օրերում հասնում է մինչև 1,5—20% ի: Պակաս անյարմարութիւն չեն ներկայացնում նաև փայտեայ ամանները:

Հասարակ եղանակով սեր զատելու երկրորդ եղանակն այն է, որ կաթը լցնում են քառանկիւնաձև թիթեղեայ թասերի մէջ շատ բարակ շերտով և հանգարտ ժամանակը 120—160 Ռ. տաքութեան մէջ են թողնում: Այս միջոցը տարածուած է Ռուսաստանի մի քանի նահանգներում. այս ամանները գործադրելիս կաթի երեսը սեր լաւ է բռնում, բայց փռելու համար մեծ տարածութիւն է պահանջում և աչալուրջ հսկողու-

Թիւն մաքրութեան վերաբերմամբ: Երես քաշած կաթի մէջ մտնում է մօտաւորապէս 0,750/0 ճարպ, իսկ ամառնային ամիսներում, երբ կաթը շուտով թթւում է, ճարպի քանակութիւնն այդպիսի կաթի մէջ հասնում է մինչև 1,0—1,50/0:

Կաթից սեր կարելի է քաշել նաև ցրտութեամբ. դորա համար ամանով կաթը պէտք է դնել սառն ջրի կամ սառուցի մէջ: Այսպէս է Շուարցի եղանակով կաթից սեր զատելը, որ սկսել է գործադրուել 1860 թուականներից և արագութեամբ տարածուել է այլ և այլ երկրներ և մինչև կենտրոնախոյս գործիքների գործադրութիւնը, այսինքն մինչև 1880 թ. ամենալաւ և օգտակար միջոցն էր համարւում: Այս եղանակով սեր քաշելիս գործ է դրւում սպիտակ թիթեղեայ բարձր զուգահեռոնաձև, կողքերը կտրացրած, երբեմն և դրանաձև կամ ձուլաձև քուղաներ. որանց մէջ բերանից մինչև 5 սանտիմետր ցած մօտաւորապէս 15—18 դմ. խորութեամբ նոր կթած բոլորովին թարմ, հեռաւապէս և տաք կաթ լցնելուց յետոյ՝ դնել պէտք է 3-40 Ռ. տարութիւն ունեցող սառցաջրի մէջ և հանդարտ թողնել: Սակայն որքան սառը լինի ջուրը, այնքան աւելի լաւ սեր կը ձևէ. երբէք 100 Ռ., բարեխառնութիւնից բարձր չպէտք է լինի: Կրկնում եմ, կաթը սառն ջրի մէջ դրած ժամանակ անպատճառ պէտք է տաք լինի, իսկ եթէ պատահաբար սառած եղաւ, հարկաւոր է նախ տաքացնել մինչև 35° և ապա նոր դնել ջրի մէջ: Մետաղեայ ամանները աւաղանի մէջ պէտք է այնպէս տեղաւորել, որ կաթի երեսն աւաղանում եղած ջրի մակերևոյթից բարձր մնայ: Այս քուղաները շինում են սովորաբար երկու մեծութեամբ՝ 3 և 1 1/2 վեդրանոց (30—40 լիտր):

Ընդունարանը, որի մէջ տեղաւորում են կաթով լի ամանները, պատրաստուած է լինում փայտից, որի մէջը ցինկի կամ արծնապակած թիթեղով պատած է լինում և կամ քարով ու ցեմենտով շինած. դորա կէտը հողի մէջն է լինում. քարեայ կամ թիթեղեայ աւաղանների համար անհրաժեշտ է աւելի սառը ջուր: Ընդունարանի յատակի վերայ դրւում է փայտեայ մի ցանց. սառը ջուրը բաց են թողնում ներքևից առանձին խողովակով աւաղանի մէջ, որտեղ կաթից տաքանալով՝ մի ուրիշ խողովակի միջով անցնում է նորա վերևի մասերից և դուրս գալիս: Աւաղանն այնպէս պէտք է յարմարեցնել, որ աշխատաւորը կարողանայ շուրջը պտտել: Նորա մեջի ջրի տաքութիւնը հնար եղածին չափ պէտք է ցած լինի և եթէ հասնի 120 Ռ., անհրաժեշտ է սառուց աւելացնել (մի լիտր կաթի համար 0,75—1 կելօգրմ. սառուց): Սկզբի 12 ժամուայ

ընթացքում մի լիտր կաթի համար լւրաքանչիւր ժամում կուրեւոր է լինում մի լիտր ջուր, բայց յետոյ, երբ կաթը սառչում է, միայն այդ քանակութեան 1/5 մասը բաւական համարուի: ճարպային գնտակիկները իրենց սկզբնական տաքութիւնը կորցնում են աւելի դանդաղ, քան նրանց շրջապատող հեղուկը, այդ պատճառով էլ կաթի այս և այն բաղադրիչ մասերի տեսակարար կշռի մէջ եղած տարբերութիւնը մեծ լինելով՝ գնտակիկներն աւելի արագ կերպով վերև կը բարձրանան:

Կաթի երես բարձրացած սերը պէտք է քաշել յատկապէս այդ նպատակով յարմարեցրած առանձին կիսաբոլորակ շերտիով: Երես քաշած կաթն էթէ 24 կամ 36 ժամ (շատ քիչ դէպքերում աւելի ուշ՝ 48 ժամ) շարունակ հանդարտ մնայ, մօտաւորապէս 0,760/0 ճարպ կունենայ: Ստտիկ սառնութիւնը, հեշտութեամբ մաքրուող կլայեկած քուղաները, կաթի մակերևոյթի փոքրութիւնը, որ արտաքին օդի ազդեցութեանը մատչելի է՝ այս բոլորը բարեյաջող պայմաններ են սերի զատումը մաքուր և կատարեալ լինելու համար. ինչպէս սերը, նոյնպէս և երես քաշած կաթը մինչև իսկ 48 ժամ անցնելուց յետոյ դարձեալ բոլորովին թարմ կմնայ: Շուարցի եղանակով ստացուած սերը թանձր չի լինում, 100 կելօգրամ կաթից կոտացուի 12—20 կելօգրամ սեր, որից և դուրս կգայ 3—3,5 կելօգրամ կարգ: Այս եղանակով թէպէտ աւելի շատ կարագ է ստացւում, բայց այնչափ համեղ չի լինում: Սորա առաւելութիւնները հետեւաներն են. 1) սեր բռնելը կախում չունի արտաքին հանդամանքներից՝ բարեխառնութիւնից և այլն. 2) կարօտ չէ ծառայի կամ աշխատաւորի աչալուրջ հսկողութեան. 3) համեմատաբար աւելի մաքուր և կատարեալ է լինում ճարպային մասնիկների կաթի երես բարձրանալը. 4) սեր զատելու համար ամաններ տեղաւորելիս մեծ տեղ չէ հարկաւորւում (մի կովի կաթի համար 0,20—0,30 քառ. մ.). 5) կաթի երես քաշելու և ամաններ մաքրելու համար սովորաբար շատ քիչ աշխատութիւն պէտք է մաքրելու համար սովորաբար շատ քիչ աշխատութիւն լինամբ գործ դրուի, գործ դնել. 6) եթէ աշխատելիս առանձին խնամք գործ դրուի, ձեռք բերած կարագը պակաս արժէքաւոր չի լինում միւս եղանակներով ձեռք բերածից. միակ անյարմարութիւնը որ կայ, այդ այն է, որ պէտք է բաւականաչափ սառցի պաշար կամ սառը ջուր ունենալ. 7) ցրտութեան միջոցով սեր զատելը նաև այն օգտակարութիւնն ունի, որ երես քաշած կաթի շինուկը թթուած չի լինում և շնորհիւ իւր քաղցրութեան՝ կարող է գործ ածուել ուտելու համար. 8) կարագն աւելի երկար ժամանակ կարելի կլինի պահել և 9) սերը քաշելուց յետոյ խսկոյն

ըստ Կ. Երևանի քաղաքի և զինվորական է լինում, քան թէ հասարակ եղանակով ձեռք բերածը:

Սեր զատելու համար գործադրուող այս մեքենաներն ունեն նաև մի քանի պահասութիւններ, որոնք առաւելութիւնների հետ համեմատած աննշան են. ահա այդ պահասութիւնները. 1) շնորհիւ սերի լաւ զատուելուն, մնացած կաթի մէջ ճարպային գնտակիկները աւելի սակաւ են լինում, այդ պատճառով աւելի պահաս սննդարար է, քան հասարակ ձեռով ստացուած երես քաշած կաթը: Բայց այս տարբերութիւնն աննշան է, որովհետև պահասում է միայն կէս տոկոս ճարպ, միւս մնացած սննդարար նիւթերը (մօտաւորապէս 8—90/0) մնում են երես քաշածի մէջ. 2) մեքենայով երես քաշած և քիչ ճարպային գնտակիկներ պարունակող կաթից ստացուած լոռը (ТВОРОГЪ) շատ չոր ու ցամաք է լինում, որն ուղղելու համար փոխում են պատրաստելու եղանակը. 3) կենտրոնախոյս մեքենաների շատ մասերը կարող են հեշտութեամբ փչանալ, որով կխանդարուի նորա կանոնաւոր ընթացքը. մեքենաների հետ գործ ունեցողները պէտք է ծանօթ և վարժ լինին նորա գործածութեանը. 4) եթէ կաթը մեքենայից դուրս գալիս փրփուր բռնած լինի, այնքան յարմար չէ լինի պանրագործութեան համար, ինչպէս սովորական կաթը. 5) եթէ կաթը սահմանուած արագութիւնից աւելի արագ պտտուի, մեքենան կարող է տրաքուել:

Սերգասիչ մեքենաներ կամ սեպարատորներ. Կենտրոնախոյս գործութեամբ սեր զատելու փորձ առաջին անգամ արել է Ա. Պրանդը 1864 թ., բայց նորա կազմած մեքենան յաջողութիւն չունեցաւ: Այս փորձից յետոյ ուրիշներն էլ աշխատեցին մե այդպիսի մեքենայ գլուխ բերել, որ Մօզերը Վիէնայում և ուրիշները: Համեմատաբար աւելի լաւ էր համարուում Լեֆելդի 1876 թ. կազմածը. սա առաջինն եղաւ, որ գործնականութեան մէջ պէտքական համարուեց, բայց զգալի պահասութիւններ ունէր: Լաւալը 1879-ին Ստոկհոլմում առաջին անգամ կատարելագործեց սերզատիչ կենտրոնախոյս մեքենան, որ ներկայումս ամենից աւելի տարածուածն է: Այդ գործիքի գլխաւոր մասը պողպատից շինուած արագ արագ պտտուող թմբուկն է (մի րոպէում մինչև 6000 պտ.), որն ներսի կողմը կլայեկած է լինում: Այդ թմբուկը պտտում է իւր առանցքի վրայ. պտոյտները սկզբներում աստիճանաբար արագանում են, բայց յետոյ այդ արագութիւնը միօրինակ պահում է մինչև վերջը: Կաթը բարձրում յարմարեցրած ընդունարանից մշտապէս և միակերպ սկսում է հոսել տակի ամանի մէջ:

Եսկ այնտեղից անցնում է թմբուկի մէջ: Նախքան թմբուկի մէջ լցուելը, կաթը պէտք է անցնի մաղի միջով, որպէս զի մաքրուի պատահաբար մէջն ընկած աղտեղութիւններից: Սերզատիչ գործելիս թմբուկը սկզբում շարժում, պտոյտներ է անում բոլորովին դատարկ և երբ մի որոշ արագութեան է հասնում, այն ժամանակ միայն պէտք է կաթը լցնել թմբուկի մէջ: Որպէս զի սերը կաթից հեշտութեամբ և շատ շուտով դատուի, պէտք է կաթը 28—300 տաքութիւն ունենայ: Նոր կթած կաթն արդէն այդքան տաքութիւն ունենում է, հետևաբար լաւ կլինի անմիջապէս մեքենայով սերն առնել: Եթէ կարելի չլինի իսկոյն այս կերպ վարուել և կաթը սառչի, կրկին պէտք է տաքացնել, մինչև որ վերև յիշուած տաքութիւնն ունենայ: Սերզատիչներն ունենում են նաև առանձին տաքացնող գործիքներ, որտեղ կաթը, նախ քան մեքենայի մէջ մտնելը, տաքանում է. բայց եթէ մեքենան այդպիսի յարմարութիւն չունենայ, կաթը կարելի է և այլ կերպ տաքացնել. կաթի ընդունարանի մէջ ընկղմել պէտք է բերանը փակ տաք ջրով լցուած մի կլայեկած աման, որից յետոյ հարկաւոր է կաթը լսառնել. կարճ ժամանակից յետոյ նա կստանայ մեր ցանկացած տաքութիւնը:

Սերզատիչի գործելու ժամանակ կաթն արագութեամբ բաժանուում է սերի և երես քաշած կաթի, որոնցից իւրաքանչիւրը համապատասխան կերպով դասաւորած երկու խողովակների միջով սերզատիչից դուրս է հոսում: Սերը զատելուց յետոյ թմբուկի շարժումները դադարում են. թմբուկը պէտք է վերցնել գործիքի վերայից, որպէս զի նորա միջից հեռացուի մնացած թոյլ, նիհար, ջրալի կաթը, որով կարելի է սնուցանել հորթեր և կամ շինել զանազան տեսակ հասարակ անիւղ պանիրներ: Եւրոպայում զիւղատնտեսները անսեր կաթի հետ խառնում են երկպտացորենի, բրնձի ալիւր կամ գետնախնձորի բուսալիւր և դրանցով սնուցանում են հորթերին:

Սերը զատելուց յետոյ թմբուկի պտտերի վերայ մնում է նստուածք կամ ակնուց (մաղառային փառ), որ լինում է սպիտակ կամ բաց մոխրագոյն: Այդ մաղառային փառը բողկացած է ջրից և կաթնային նիւթերից, որոնք երեսնց մէջ պարունակում են այլ և այլ անմաքրութիւններ. մաղ, պտուկների թէփուկներ, կերի մնացորդներ, քակորներ և այլ մանրիկ անմաքրութիւններ, որոնք մաղի միջով անցնելով ընկել են կաթի մէջ. բացի դրանից, ինչպէս փորձերն էլ ցոյց են տուել, թմբուկի պտտերի վերայ նստած են լինում կաթի մէջ ընկած բակտերիաների մեծ մասը: Այսպիսով ուրեմն կաթն անցնելով սերզա-

տելչի մեջով, ազատում է անմաքուր թիւններից և մասամբ էլ անվնաս դառնում: Որքան անմաքուր լինի անասունների բաղը, որքան վատ պահուեն անասունները, հետևաբար և որքան կեղտոտ լինի կաթը, այնքան աւելի շատ մաղասային փառ կլինի: Սովորաբար նորա քանակութիւնը հասնում է 0,040/0, և այդ աւելի պատահում է ամրանք: ձմեռն այդ քանակութիւնը կրկնապատկում է, իսկ միջանի հիւանդութիւնների ժամանակ (օր. դաբաղ եղած դէպքում) զգալի կերպով շատանում է: Առողջ կաթի մաղասը բոլորովին սպիտակ գոյն է ունենում, հեշտութեամբ կարելի է լինում թմբուկի պատերից վերացնել և լուծում է ջրի մէջ: Հիւանդոտ կաթից ստացւում է թելածիգ, մածուցիկ, կպչուն մաղաս, որ լաւ չէ լուծւում ջրում: անա այս պատճառով թմբուկը լուանալիս պէտք է տեսնել, թէ որ տեսակի մաղաս է: Եթէ այս մաղասից շատ հաւաքուի, կարելի է իբրև կեր տալ խոզերին. սա շատ սննդաբար կեր է համարւում, որովհետև պարունակում է իւր մէջ մօտաւորապէս 670/0 ջուր, 260/0 սպիտակուցային նիւթեր և 3,70 0 աղեր: Ջրով մաքրած, սրբած մաղասը առաջուց պէտք է մի լաւ եփել և կամ տաքացնել մինչև 53—600 Բ. և ապա գործածել: Ամէն անգամ կաթը լցնելուց առաջ հարկաւոր է թմբուկը նախ տաք և յետոյ սառն ջրով, իսկ շաքարով մի անգամ մոխրաջրով լուանալ:

Այլ եւ այլ սերգասիչներ. Այն ժամանակուանից, երբ լոյս ընկաւ առաջին կատարելագործուած Գէ—Լաւալի մեքենան, զանազան տեղերում սկսել են լոյս ընկնել սեր զատելու համար շատ նոր տեսակի կենտրոնախոյս գործիքներ: Ներկայումս ամենից շատ տարածուած են հետևեալ սերգատիչ մեքենաները:

Ա. 1) Գէ—Լաւալի «Բէբե» ձեռքով շարժելու ուղղահայեաց սերգատիչը, որ 3 1/2 փ. ծանրութիւն է ունենում և մի ժամում 4 1/2 վեդրօ կաթից սեր կարող է զատել: Գինն է՝ 150 ռուբլի:

2) Գէ—Լաւալի ձեռքի, ուղղահայեաց (մի մշակի համար) մի ուրիշ սերգատիչ: Այս մեքենան մի ժամում կարող է 9 վեդրօ կաթից սեր զատել, ունենում է 8 փ. ծանրութիւն և արժէ 250 ռուբլ:

3) Գէ—Լաւալի ձեռքի հորիզոնական սերգատիչ, որ աւելի կատարեալ, անթերի կազմութիւն ունի, 13 վեդրօ կաթի համար է, 10 փ. ծանրութիւն և 300 ռ. արժողութիւն ունի:

4. Կան նաև Գէ—Լաւալի ձեռքով կամ շոգեշարժ սերգատիչներ, որոնք եթէ առաջինների հետ համեմատելու լի-

նենք, կտեսնենք, որ նոյնքան ժամանակում աւելի շատ կաթից սեր կարող են զատել, մի ժամում 36—45 վեդրօ. այդպիսի սերգատիչների գինն ևս մեծ է—400—600 ռ:

Բ. Պահաս յայտնի չեն նաև Բուրմիստերի և Վայնի սերգատիչները. սրանք տարբերւում են Գէ—Լաւալի սերգատիչներից նրանով, որ աւելի պակաս պտոյտներ են անում. մի րոպէում 2700—4000, նայած մեծութեանը, մինչդեռ Գէ—Լաւալինը՝ 6000—7000 պտոյտներ է անում նոյնքան ժամանակում: Բուրմիստերի և Վայնի սերգատիչներն ևս լինում են ձեռքի և ձիու: Բուրմիստերի և Վայնի № 32 սերգատիչը մի ժամում կարող է 4—5 վեդրօ կաթից սեր զատել. և արժէ 200 ռ. իսկ № 31, որ 12—15 վեդրօ կաթի համար է, արժէ մինչև 250 ռ:

Կան նաև ուրիշ շատ սերգատիչներ, որոնց մէջ աչքի են ընկնում Ալեքսանդրա (Գերմանիայի Հօլշտէյն գրութեան մէջ), Վիկտորիա (Անգլիայի Կլաիօու քաղաքից) և այլն: Այս բոլորը լինում են տարբեր մեծութեամբ և կարող են պատուել ձեռքով կամ շարժիչ մեքենայի ուժով:

Սերգասիչների գների, այլ եւ այլ սխեմների, արդիւնքի եւ չափի աղիւսակը.

Սխեմներ	№ կամ նշան (գրօշմ)	Չորքով կամ շարժիչ մեքենայով շարժուող	Իւրաքանչիւր ժամում քանի վեդրօ կարող է սեր կարել:	Չափ	Գինը.
				Չափ	
աւալի	Ա.Վ.Պ. АП	Շարժիչ մեքենայով	150	19	700
«	AI	«	100	17	575
«	«Понн»	«	50	13	350
«	АЕП	Շոգեանիւով	140	—	775
«	АЕI	«	100	—	650
«	PE. (Понн)	«	50	—	420
«	BE	«	33	—	340
«	« Բէբե »	«	18	—	225
«	B	Չեռքի	28	7	250
«	« Բէբե • S »	«	12	4 1/2	160
«	« Բէբե • H »	«	12	3	145
«	« Կօլբերի »	«	6	35 գրվ.	80
Աւելորսանդրա	1	Շարժիչ մեքենայով	120	—	640
«	2	«	80	—	525
«	3	«	40	—	350
«	3	«	30	—	300
«	4	«	20	—	255

	9	Չեռ. քի	20	2	225
	10		15	2	200
	11		11	1	150
	12		6	30	100
Լեֆեղի եւ	III	Շարժիչ մեքենայով	40	—	360
Լինչի	IV		80	—	480
	V		120	—	600
	Չորեղոնակ. 5X0	Չեռ. քի	8	—	125
	I		12	—	150
	II		16	—	200
	III		24	—	250
	Ուղղահայ. MRI		8	—	125
	II		12	—	150
	III		16	—	175
	BE I		4	—	75
	II		9	—	90
	III		8	—	110
Կ. Եակոբսոնի	Էքստրակտոր A		14	4	155
Ստոկհոլմի	B		26	7	250
	Էքստրակտոր		15	5	155
	Օմեդա		8	35	75
Բուրմիստերի	X	Չեռ. քի	14	—	175
եւ վայնի	X		10	—	125
	X		14	—	175
	X		20	—	225
«Վիկտորիա»	I.	Չեռ. քի	3	—	90
	2.		5	—	100
	3.		9	—	140
	4.		13	—	160

Սերգասիչների մասեր փոխելը. Սերգատիչները իւրաքանչիւր առանձին մասը կտարուէլիս կամ փչանալիս կարելի է փոխել: Կան մասեր, որոնք ընդունակ են շուտ փչանալու: Սերգատիչի պահեստի բոլոր մասերը թուահամարներ ունեն և բերել տալիս պէտք է միայն յայտնել նորա սիստեմը և չափը (թուահամար կամ դրօշմ) և այն մասերը թուահամարները, որոնցից անհրաժեշտ է ունենալ: Ահա այս պատճառով սերգատիչ զննելիս բացի հրահանգներից, հարկաւոր է պահանջել նաև պահեստի մասերի ցուցակը: Եթէ գործարանը կամ այդպիսի մեքենաների պահեստը շատ հեռու տեղ է գտնուում, խորհուրդ ենք տալիս շուտ փչացող մասերից մշտապէս պատրաստի ունենալ:

Սերգասիչի իւղ. Սերգատիչներին պէտք է ջրալի հանքային իւղ (жидкое минеральное масло) քսել: Աւելի լաւ է իւղն ևս

զննել այնտեղից, որտեղից սերգատիչն է դնած: Սերգատիչի համար իւղի յատկութիւնը խիստ մեծ նշանակութիւն ունի. չպէտք է երբէք ձէթ (деревянное масло) կամ ուրիշ մեքենաների համար գործածուող մի այլ տեսակ իւղ քսել: Եթէ իւղը թանձր է, կարելի է ջրիկցնել նաւթ խառնելով:

Սերգասիչների հետ վարուելու գլխաւոր կանոնները 1) երբէք չպէտք է պտտել սերգատիչը, քանի որ մաքրած, տեղաւորած և կատարելապէս ուղղած, կանոնաւորած չէ: Առաջ, նախքան սերգատիչ գործածելը, պէտք է իւղամանները (масленка) և որոշ անցքերի մէջ ձէթ լցնել և պատրոյզներ զննել:

2) Բացի սերգատիչի ձէթից երբէք չպէտք է ուրիշ ձէթ գործածել:

3) Պէտք է պտոյտները աստիճանաբար և հաւասարաչափ արագացնելով հասցնել մինչև կատարեալ արագութեան:

4) Աշխատութիւնից անմիջապէս յետոյ սերգատիչը պէտք է լուանալ. իսկ եթէ այդ անհնարին է, այն ժամանակ ինչպէս թմբուկը, նոյնպէս և միւս մասերը, որոնք կարօտ են լուանալու, պէտք է զննել ջրով լի որևէ ամանի, կիսատակառի կամ քուղայի մէջ:

5) Թմբուկի միջի այս կամ այն մասերը պէտք է զգուշութեամբ լուանալ, յետոյ սրբելով լաւ չորացնել ու պահել չոր և մաքուր տեղ:

6) Լուանալու համար չպէտք է չափազանց շատ ջուր գործածել. ջրի հետ խառնել պէտք է սոդա և լուացումը պէտք է տեղի ունենայ յատկապէս իւրաքանչիւր սերգատիչի հետ ուղարկած խողանակով: Սօդայով լուանալուց յետոյ հարկաւոր է ողողել մաքուր ջրով:

7) Ժամանակ առ ժամանակ իւղելու բոլոր տեղերը հարկաւոր է լուանալ նաւթով (պէտք է գործածել մաքուր նաւթ) և ապա լցնել ձէթ:

8) Եթէ սերգատիչը ճօճում է, պէտք է ուշադրութիւն դարձնել նորա ուղիղ լինելու (հարթաչափով ստուգել), հաստատուն, ամուր տեղաւորելու, կոկորդի կցանի (горловая муфта) կամ ուէտինէ օղակի կանոնաւորութեան, ափսէների ուղղադիր, կանոնաւոր դասաւորութեան և ձէթի թանձրութեան վերայ:

9) Երբէք ափսէները չպէտք է վերցնել և առհասարակ չպէտք է մասերը քանդել, քանի որ մեքենան բոլորովին չէ կանգնել, դադարել գործելուց:

10) Սերզատիչը չպէտք է կանգնեցնել, այլ թողնել, որ ինքն իրեն կանգնի:

Աշխատութեան վերաբերեալ այս և այլ ուրիշ կանոնները պէտք է արտադրել խոշոր և պարզ կերպով ու կախ տալ կաթնատանը:

Թէ ամեն անգամ սերգասիչներով որքան ժամանակ պիտի ելաւորուի. Սերզատիչով չափազանց երկար ժամանակ անընդհատ աշխատել չէ կարելի, որովհետեւ թմբուկի պատերի վերայ այնքան մաղաս կհաւաքուի, որ վերջինս կրկին կանցնի երես քաշած կաթի մէջ և, պակասեցնելով թմբուկի տրամագիծը, կը վնասէ սերի մաքուր արտադրուելուն: Եթէ կաթը մաքուր է, երկու, մինչև իսկ 2 1/2 ժամ անընդհատ կարելի է աշխատել: Երբ անստունները ձմրանը փակուած են լինում դոմերում կամ արածում են խոնաւ, ցեխոտ արօտներում, կաթն անմաքուր է լինում և թմբուկի պատերի վերայ հաւաքուած է մեծ քանակութեամբ մաղաս, այդ պատճառով սերզատիչով անընդհատ 1 1/2 ժամից աւելի աշխատել անկարելի է: Ահա այս պատճառով, երբ մեծ քանակութեամբ կաթ է հաւաքուած լինում, կաթի կէս մասն սերը սերզատիչով դատելուց յետոյ պէտք է կանգնեցնել, թմբուկը լուանալ և ապա նորից բանեցնել: Բայց երբէք 1 1/2 - 2 ժամից աւելի չպէտք է աշխատել մեքենայով, որովհետեւ կաթը աւելի երկար ժամանակ կմնայ տաք վիճակի մէջ, այսինքն մի այնպիսի բարեխառնութեան մէջ, երբ սովորաբար աւելի զօրեղ կերպով է տեղի ունենում թրթուելը. այնպիսի հանգամանքներում եթէ սերը նախօրօք պատեօրացրած չլինի, չպէտք է յուսալ, թէ ամենալաւ տեսակի կարագ կտաացուի:

Ի՞նչպիս պիտի սերգասիչ մեքենայ բնտրել. Սերզատիչ գնելիս պէտք է աչքի առաջ ունենալ երկու բան. ի՞նչ մեծութեամբ պէտք է լինի սերզատիչը և ո՞ր սիտեմինը յարմար է այս կամ այն պայմաններին: Սերզատիչի մեծութիւնը կարելի է որոշել համաձայն այն կաթի քանակութեան, որ հաւաքուած է անտեսութեան մէջ ամենաշատ կաթնաբեր ժամանակ մի անգամուայ կիթելուց: Եթէ անտեսութեան մէջ ամենից շատ կաթ հաւաքուած է մեծ պատին կամ ամբանն արօտներում արածելիս և ամենայն օր մի անգամուայ կիթը հաւատար է լինում, օրինակի համար, 30 վեղրօ կաթի, այն ժամանակ սերզատիչի մեծութիւնը այնպէս է որոշուած. երբէք չպէտք է սերզատիչով երկու ժամից աւելի աշխատել, այս պատճառով 30 վեղրօ կաթից սեր դտտելու համար ամէն մի ժամում սերզատիչի մէջ պէտք է լըց-

նել 15 վեղրօ կաթ: Այս մեծութեամբ սերզատիչը տարուայ ամէն ժամանակում էլ բաւականութիւն կտայ. ամառը սովորուած պէտք է աւելի աշխատել, իսկ աշնանը, երբ կաթը պակաս է լինում, աշխատանքը 10—20 ընդէ հազիւ տեէ: Եթէ հօտի պայմանները փոխուեն և կաթը շատանայ, այն ժամանակ մե համարով բարձր սերզատիչ պէտք է գնել:

Ինչ վերաբերում է սիտեմին, պէտք է ասել, որ այստեղ խօսք կարող է լինել սերզատիչի ամբուլթեան, աշխատութեան մէջ ունեցած յարմարութիւնների, նոյնպէս և համեմատական էթանութեան մասին: Իսկ ինչ վերաբերում է մաքուր և կատարեալ կերպով սեր դատելուն, պէտք է ասել, որ ներկայումս յայտնի և տարածուած սերզատիչներն այդ (գործնական) տեսակէտից համարեա նման են: Թմբուկի ներսն ափսէ յարմարեցրած սերզատիչներն («Ալֆա» սերզատիչներ, Էքստրակտներ, Բուրմիստերի և Վայնի X₅ և X₁) արդիւնաւէտութեամբ աւելի բարձր են և յարմար լուանալու համար, որովհետեւ թմբուկը բացուած է: Բայց այդ յաւելուած մասերը պատրաստուած լինելով թեթեւ նիւթերից, պէտք է առանձնապէս զգուշութեամբ և կանոնաւոր կերպով վարուել նրանց հետ լուանալու ժամանակ. եթէ ափսէները լաւ սրբած, չորացրած չեն, եթէ տեղ-տեղ ժանդոտուած, մաշուած է, սերզատիչը կսկսէ շարժուել և լաւ չի բաժանում սերը: Ահա այս պատճառով ընտրութիւնը պէտք է այնպէս տեղի ունենայ. այնտեղ, ուր վարժ, կանոնաւոր և ճշտապահ կարագ պատրաստող կայ, կարելի է վերցնել աւելի բարդ կազմութիւն ունեցող սերզատիչներ. եթէ այդպիսիներ չկան, այն ժամանակ պէտք է վերցնել ուրիշ սիտեմի աւելի ամուր և պարզ կազմութիւն ունեցող սերզատիչներ («Ալէքսանդրա», Լեֆելըի և ուրիշները): Պէտք է աշխատել միշտ ձեռք բերել իսկական սերզատիչը և ոչ ռուսական ընդօրինակածը:

Սերգասիչների տեսակ օգուտը. Միջին հաշուով սերզատիչով ստացուած սերը 100% աւելի կարագ է տալիս, քան Շուարցի ամանով ստացուածը և 200% աւելի գիւղական հասարակ եղանակով ամանների մէջ փուլելուց: 250 ա. արժողութիւն ունեցող սերզատիչը մի տարուայ ընթացքում կարող է մինչև 10,000, ամենապակասը 8000 վեղրօ կաթից սեր դատել: Այդչափ կաթից կարելի է ստանալ հին եղանակով, այսինքն ամանների մէջ փուլելով՝ 222 փ., Շուարցի ամանով՝ 240 փ., իսկ սերզատիչով՝ 244 փ. կարագ: Սրանից հետեւում է, որ սերզատիչն ամանների մէջ փուլելուց 44 փ., իսկ Շուարցի եղանակով սեր դատելուց 24 փ. աւելի կարագ է տալիս: Կարագի փուլը

12 ռուբ. հաշուելով՝ առաջին դէպքում 528 ռ., իսկ վերջին դէպքում 288 ռ. աւելի եկամուտ է ստացուում:

Նշանակում է, եթէ մէկը թողնի ամանները մէջ կաթ փռելն ու այնտեղից սեր զատելը և այդ նպատակով գործ դնէ սերզատիչ, կէս տարուայ ընթացքում այդ մեքենայի գինը կհանէ. իսկ եթէ նուարցի ամանով սեր զատելու փոխարէնը գործ դրուի սերզատիչ, վերջինս գինը մօտ մի տարում կարելի է դուրս բերել: Աւելի պարզեցնել մեր խօսքը. սերզատիչով հինգ կովի կաթից այնքան կարագ կստացուի, որքան պէտք է ստացուէր հին եղանակով վեց կովից, որից հետևում է, որ սերզատիչ գնող կովատերը մի վեցերորդ կով ևս դնած կլինի, որը թէպէտ և խսկապէս գոյութիւն չի ունենայ, բայց կաթ կստացուի: Բացի դրանից մի սերզատիչով կարելի է մի ազարակի գործ տեսնել և մի կին, նոյն իսկ մի տղայ կարող է դարձնել ամբողջ մեքենան:

Ը.
ԿԱՐԱԳ.

Ազարակատէրերը, գիւղացիները և առհասարակ ամէն մի կովատէր կովերից ստացած կաթից կարող են տարբեր եղանակներով օգտուել: Եթէ ազարակը կամ գիւղը քաղաքին կամ պանիր ու կարագ պատրաստելու գործարանին մօտ է գտնւում, կաթը կարող է ծախուել: Բայց եթէ այդպիսի յարմարութիւններ չկան, անասնատէրերն սկսում են պատրաստել կարագ, պանիր, մածուն և այլն: Մեզանում ամենից աւելի ձեռնտու է կաթից կարագ պատրաստելն այն պատճառով, որ կովի կարագը շուկաներում միշտ լաւ գնով և օգուտով է ծախուում. կարագ պատրաստելը միշտ աւելի շահաւէտ է մեր կովատէրերի համար:

Հարելու օգնութեամբ սերից կամ կաթից պինդ դրութեամբ զատուած կաթնային ճարպը, որի հետ խառն են լինում մի քանի այլ լրացուցիչ նիւթեր, ինչպէս օրինակ ջուր, աղ և այլն, կոչւում է կարագ: Հարելու նպատակն է կաթի անջատուած ճարպային գնտակիկները միացնելի մի ամբողջ: ճարպային այդ գնտակիկները կաթի մէջ կաթիլահեղուկ վեճակի մէջ են գտնուում նոյն իսկ սենեակի ցած բարեխառնութեան մէջ: Կաթի այդ ճարպային գնտակիկները միացնելու համար

անհրաժեշտ է նախ և առաջ հեղուկ ճարպային գնտակիկները պինդ վեճակի մէջ դնել, սառչելուց յետոյ թանձրացած ճարպի առանձին գնտակիկները միացնել: Այս նպատակին կարելի է հասնել հարելով:

Կարագ կարելի է պատրաստել թարմ սերից, կաթից, և թթուած սերից: Լաւ տեսակ կարագ կարելի է ստանալ թարմ սերից. թթուած սերից սովորաբար հասարակ տեսակի կարագ է ստացուում. բայց եթէ մէկը շատ կովեր չունի և ուղում է նոյնպէս թարմ սերից կարագ պատրաստել, կամ պէտք է ամէն օր իւր հարեաններից կաթ փոխ առնի (խափ անէ) և կամ վաղըրիկ խնոցներ շինել տայ: *) Բոլորովին ընտիր և համեղ կարագ ստանալու համար սերը պէտք է լցնել մի ամանի մէջ ու դնել մի մաքուր, ոչ դարչահոտ, զով տեղ և քսանընթրս ժամից յետոյ հարել. եթէ սրանից աւելի մնայ, կթթուի, իսկ թթուած սերից, ինչպէս վերևն էլ ասացինք, աւելի միջակ և մի տեսակ համ ունեցող կարագ կստացուի: Բայց եթէ թարմ, չթթուած սերից կարագ ստանալու մի առանձին կարեորութիւն չկայ, այն ժամանակ կովատէրերի համար աւելի ձեռնտու է ոչ այնքան թարմ սերից կարագ պատրաստելը, որքան թթուած (հում, արածան): Թթուած սերից կարագ պատրաստելն այն առաւելութիւնն ունի, որ սերը վերցնելուց յետոյ ամէն կմնայ թթու կաթ, որից շատ տեղերում հեշտութեամբ պատրաստում են ճիւղի պանիր, իսկ Ռուսաստանում՝ լոռ. բացի դրանից այդպիսի սերը կարող է երեքչորս օր և դեռ աւելի երկար ժամանակ անվնաս փռուած մնալ և սովորաբար քիչ թթուած սերից աւելի շատ կարագ է ստացուում, քան թարմ սերից: Այս կերպ՝ միայն առանձին խնամքով պատրաստած կարագը շատ քիչ է տարբերւում թարմ սերից պատրաստած կարագից: Ներկայումս շատ տեղեր կարագ պատրաստում են ուղղակի երես չքաշած թարմ կաթից: Այս կերպ աւելի լաւ կարագ կստացուի, միայն աւելի ջանք և աշխատութիւն է պահանջւում, քան միւս եղանակներով՝ թարմ կամ թթուած սերից պատրաստելիս, այդ պատճառով էլ շատ չէ տարածւում և գործադրւում: Թթուած կաթից էլ կարելի է կարագ դուրս բերել, բայց դարձեալ ժամանակի կորուստ է, մանաւանդ որ մնացած թանն անյարմար

* Ներկայումս միևեկ 12 գրուակայ սերի համար եւս, որից մօտաւորապէս 2 1/2 գրվ. կարագ կստացուի, առանձին խնոցիկեր են պատրաստում:

կհամարուի պանրագործութեան և միայն իբրև կեր անասուններին կարելի է տալ:

Լաւ կարագ ստանալու գլխաւոր պայմանները. Լաւ կարագ ստանալու գլխաւոր պայմանները հետեւեալներն են.

1) Առողջ կարից սեր քաւելլը. Լաւ կարագ ստանալու համար հարկաւոր է, որ սերը առողջ կաթի երեսից քաշած լինի: Շատ անգամ կաթի հիւանդութեան, ամանների անմաքրութեան և այլ պատճառներով խնոցին երկար ժամանակ հարելուց յետոյ ճարպային գնտակիկները չեն հաւաքուում և միանում:

2) Սերի սափութեան ասիճանը. Սերի կամ կաթի տաքութեան աստիճանից կախումն ունի ինչպէս հարելու տեղութիւնը, նոյնպէս և կարագի քանակութիւնը և յատկութիւնը: ճարպային գնտակիկները հեղուկ դրութիւնից կանոնաւոր կերպով պնդանում են որոշ ջերմութեան մէջ: Կարագ հարելու համար սերի միջին բարեխառնութիւնը $\frac{1}{2}$ մեքը պէտք է լինի 10—120 ֆ., իսկ ամրանը՝ 8—10^o ֆ.: Չթթուած սերն աւելի պակաս տաքութեան մէջ պէտք է հարել, քան թթուածը: *) Պէտք է աչքի առաջ ունենալ, որ հարելու ժամանակ սերի տաքութիւնն աւելանում է մի-երկու աստիճանով: Սերի տաքութեան չափը կարող է փոփոխուել երկրի, հեռեւապէս և խոտի յատկութեան, կերի չորութեան, անասունների տեսակի, կերի բաղադրութեան, խմած ջրի և այլ պատճառներով: Այսպէս օրինակ, չոր ծոցից կամ դարմանից բաղկացած կերը աւելի պնդացնում, կոշտացնում է կարագը, այս պատճառով հարելիս սերը բարձր աստիճանի տաքութիւն պէտք է ունենայ. ընդհակառակը, եթէ կովը կերակրուում է կանաչ կերով, կոպտոնով և այլն, պէտք է հարել ցած աստիճան բարեխառնութեան մէջ, որովհետեւ սովորաբար այդպիսի կերից թոյլ կարագ է ստացուում: Սակայն ժամանակ սերի տաքութիւնն այնչափ պէտք է լինի, որ 40—45 րոպէում կարագը հարուի. որքան բարձր լինի սերի տաքութեան աստիճանը, այնքան աւելի շուտ կարագ կստացուի և ընդհակառակը, որքան ցած լինի, այնքան աւելի դժուար և երկար ժամանակ կհարուի: Չափազանց բարձր տաքութեան մէջ հարած կարագը լինում է թոյլ, կակուղ, ճրա-

* Հարաւոր քաղցր սերի սափութիւնը պիտի է լինի մօտաւորապէս 11—120, քրոնած սերի՝ 15—160, իսկ քրոնած կարիկը՝ 17—180 ֆ.:

գակալած, իւր մէջ մեծ քանակութեամբ ջուր և պանրածին է պարունակուում, դժուարութեամբ է քամուում, կորցնում է իւր անուշահոտութիւնը, հետեւապէս և կարճ ժամանակ կարող է գիմանալ. ընդհակառակը, երբ սերը ցած աստիճան տաքութիւն է ունենում, հարած ժամանակ ճարպային գնտակիկները դժուարութեամբ են հաւաքուում, միանում և կարագ կազմում. ստացուած կարագն էլ լինում է պինդ, քամուում է դժուարութեամբ, ամանի մէջ միակերպ գոյն չէ ունենում (գոյնզգոյն, մարմարագոյն), սակայն համեղ է լինում:

3. Խնոցու մէջ եղած սերի քանակութիւնը. Սա ևս ազդեցութիւն է ունենում ոչ միայն շատ հարելու, այլ և սերից կանոնաւոր չափով կարագ ստանալու վրայ: Իւրաքանչիւր խնոցու մէջ պէտք է մի որոշ չափով կաթ կամ սեր լցնել, որից աւելի կամ պակաս եղած դէպքում անկանոն կերպով տեղի կունենայ կարագի հատիկների երևան դալը, ուշ կհարուի և կարագը կատարելապէս չի գուրս գայ սերի միջից: Շատ անգամ խնոցի հարողները գանգատուում են, թէ կարագը ուշ է գոյանում. սորա պատճառը խնոցու մէջ սեր կամ կաթ շատ լցնելն է, որի պատճառով էլ սերը զօրեղ կերպով չէ հարուում և չէ դարձնում: Չափազանց պակաս սերն ևս խիստ մեծ խնոցու մէջ շատ զօրեղ զարկեր է ունենում, կարագը շատ շուտ է կազմուում, որի պատճառով և յաճախ գնտակիկների երևան դալը խանգարուում է և քիչ կարագ ստացուում:

4. Սերի քանակութիւնը. Կարագ ստանալու համար սերի թանձրութիւնն ևս նշանակութիւն ունի: Պահանջուած թանձրութեամբ սեր կունենանք միայն այն ժամանակ, երբ նա հաւասար կլինի այն կաթի ամբողջ ծաւալի $\frac{1}{3}$ — $\frac{1}{6}$ (16 — 20%) մասին, որից քաշուած է կամ զատուած: Խիստ թանձր սերը տալիս է աւելի շատ կարագ, բայց չկարողանալով ազատ շարժուել խնոցու մէջ, շիւտ է նորա պատերի և ներքին մասերի՝ թւերի, վանդակիկների հետ, այդ պատճառով էլ փոխուում և կորցնում է իւր համը և պնդութիւնը: Խիստ ջրալի սերն աւելի շատ աշխատութեան պատճառ է գառնում. այդպիսի սեր կարելի է գործ ածել աշնանը, երբ սովորաբար քիչ կաթ, հետեւապէս և քիչ սեր է լինում:

5. Կարագի հատիկների մեծութիւնը, որով որոշուում է կարագի պատրաստի լինելը. կարագ ստացուում է ճարպային գնտակիկների իրար հետ միանալուց և եթէ հարը կանոնաւոր և համաչափ է տեղի ունեցել, այն ժամանակ կարագի հատիկները պէտք է լինեն կատարելապէս գնտածեւ. երբ կարագը բաժանուում է սերից, կազմում է կատարելապէս գնտածեւ ման-

ընկ կորեկի մեծութեան հատիկներ: Հարելու այդ աստիճանը բնական է համարում և երբ կարողի հատիկը հասնում է այդ մեծութեան, խիոյն հարկաւոր է խնոցին դադարեցնել հարելուց: Եթէ հարելը շարունակուի, հատիկներն իրար հետ միանալով աւելի կխոշորանան և իրենց մեծութեան պատճառով անկարող կլինեն պահպանել իրենց ձևը. նրանք կսեղմուեն և նախ ձուլան, ապա երկարաւուն և վերջապէս բոլորովին անկանոն ձև կստանան ու կկազմեն մեծ կտորներ: Այսպիսի կարագը խանգարուած է համարում. նա ճրագահալուում է, պարունակում է իւր մէջ մեծ քանակութեամբ ջուր, դժուարութեամբ է քամում, անհամ է լինում, պինդ չէ և շուկայում լաւ դին չէ ունենում: Որպէս զի կարագը չափազանց շատ չհարուի և չլինասուի, նախազդու շանալու համար, նախքան հարելը, պէտք է շուտ շուտ բաց անել խնոցին և հետեւել հատիկները կազմակերպուելուն, սառը ջուր կամ սառուց լցնելով պէտք է արդեւել հատիկները միմեանց կպչելուց: Դեռ հատիկները վերելում յիշուած մեծութեան չհասած, եթէ կարագը խնոցուց դուրս է բերում, այդպիսի կարագը համարում է կենսակատար հարուած: Երբ կարագի հարը տեղը չի լինում (հարը պակաս է լինում), թէպէտ և պահպանում է իւր թարմութիւնը, անուշահոտութիւնը և լաւ համը, բայց իւր մէջ շատ թան է պահում, որի պատճառով և կարագի մէջ պանրածինի քանակութիւնը շատանում է, նա թոյլ է լինում և, եթէ երկար պահուի, կիծուի:

6. Խնոցու շարժումների արագութիւնը. կարագ հարելիս իւրաքանչիւր տեսակ խնոցու շարժումները տարբեր արագութիւն են ունենում: Եթէ Լէֆէլդի ձևի խնոցները չափազանց արագ պտտենք (օրինակ մի րոպ. 100 պտոյտ), նրանց մէջ եղած սերը կենտրոնախոյս զօրութեան պատճառով կկպչի պտտերին և առանց վանդակի վրայ ընկնելու, խնոցու տակառիկի հետ միասին կոկսեն պտոյտներ անել, որով և հարը տեղի չի ունենայ: Չափազանց դանդաղ պտտելիս խնոցու դարկերը թոյլ կլինեն և հարը կրկին ուշանում է: Ահա այս պատճառով հարկաւոր է ամեն մի տեսակ խնոցու համար մի որոշ չափ աչքի առաջ ունենալ: Հարելու ամբողջ ժամանակուայ ընթացքում խնոցու պտոյտները պէտք է լինեն միակերպ և ունենան միանման արագութիւն մինչև այն ժամանակ, երբ կարագի հատիկները կազմուած կլինեն, որից յետոյ պտոյտները պէտք է քիչ դանդաղացնել, որպէս զի կազմուած կարագը խնոցու ներքին մասերին չափազանց զօրեղ զարկուելուց չապականուի, չճրագահալուի: Քաղցր սերը քիչ աւելի դժուարութեամբ

է հարուում, քան թթուեցրածը, այս պատճառով առաջին տեսակ սերը հարելիս քիչ աւելի արագ պէտք է կատարել պտոյտները, քան թէ թթուած սերը: Նոյնը պէտք է ինկատի ունենալ նաև ջրալի և թանձր սերերի վերաբերմամբ. առաջին տեսակը հարելիս խնոցին քիչ աւելի արագ պէտք է շարժել, քան թէ թանձր սերը հարելիս: Լաւ խնոցները մէջ կարագ հարելը վերջանում է 20—60 րոպէում:

Լաւ խնոցու յատկութիւններ. Ինչպէս կարագ ստանալու, նոյնպէս և նորա յատկութեան համար խիստ մեծ նշանակութիւն ունի այն գործիքը, որով կարագ է պատրաստուում: Այդ գործիքը կոչւում է խնոցի, ձձում կամ ծիոց: Լաւ կազմած խնոցին պէտք է ունենայ հետեւեալ յատկութիւնները.

- 1) Պէտք է պարզ և ամուր կազմութիւն և հեշտ գործածուելու յարմարութիւն ունենայ, որպէս զի կարելի լինի հեշտութեամբ մաքրել, միջից վատ հոտերը հեռացնել:
- 2) Մեծութեան կողմից ևս խնոցին յարմար պէտք է լինի, որ հեշտութեամբ կարելի լինի պտտել և հարելու համար մեծ ոյժ չպահանջուի: Միշտ պէտք է առաւելութիւն տալ այն խնոցներին, որոնք պակաս գործող ոյժ են պահանջում, որի համար և անհրաժեշտ է, որպէս զի խնոցու առանձին մասերը լաւ պատրաստուած և հարթուած լինեն, իսկ պտտուող խնոցները երկու մասերը հաւասարակշռութիւն ունենան, որպէս զի մի կողմը միւսին չձգէ:
- 3) Խնոցին լուանալու և առհասարակ մաքրելու բոլոր յարմարութիւններն էլ պէտք է ունենայ, այս նպատակով անցքը կամ դռնակը որքան լայն լինի, այնքան լաւ է: Մէջը պէտք է քիչ միջնորմներ, աւելորդութիւններ լինեն, որպէս զի անկիւններ և ձեւերի ու խողանակների համար անմատչելի տեղեր չլինեն: Նեղ անցքերով խնոցները վատ են մաքրուում, քամում, որի պատճառով էլ ամենափոքր անհոգութիւնից բորբոսնում, թթու հոտ են ունենում, որը նոյն իսկ զգալի է լինում կարագի վերայ:
- 4) Խնոցին պէտք է այնպէս յարմարեցրած լինի, որ կարողը նրանում կարելի լինի լուանալ. այդ նպատակին հասնելու համար խնոցին չպէտք է յատակի վերայ դնուի լինի, այլ կախուած կամ այլ կերպ յարմարեցրած, որպէս զի հնարաւոր լինի դուրս թափել թանը և տեղը սառը ջուր լցնել:
- 5) Խնոցու մէջ մետաղ չպէտք է լինի, մանաւանդ չլլայեկած, որովհետեւ մետաղը վատ համ է տալիս կարագին, նպատակում է նաև փայտի փշանալուն, որի պատճառով և խնոցին

շատ շուտով փչանում է: Ահա այս պատճառով խնոցի դնելիս պէտք է ուշադրութիւն դարձնել, որ նորա տարբեր մասերն իրար միացնող մեխերի ծայրերը խնոցու մէջ դուրս եկած չլինեն: Բոլոր մեխերն ու պտուտակները պէտք է լաւ կլայեկած լինեն: Այն խնոցիները, որոնց մէջ երկաթէ առանցք կայ անցկացրած, անյարմար պէտք է համարել գործածութեան:

6) Խնոցու տախտակները պէտք է շատ լաւ հարթած և իրար պինդ սեղմուած լինեն, որպէս զի նրանց միջև, նմանապէս և բոլոր մնացած մասերում փոսիկներ, անցքեր, ձեղքուածքներ մնացած չլինեն, որտեղ կարող են մնալ թանի մնացորդները և յետոյ թթուել կամ նեխուել: Շատ ուտեր ունեցող փայտը անյարմար է համարուում խնոցի շինելու համար:

7) Խնոցի շինելու համար ամենայարմարաւոր փայտ համարուում է կաղնին, թեղօշը, ամերիկական հացի ծառը (amerikanский ясень), շատ քիչ գործածական է թխտենին (береза), բոլորովին անյարմար են ճանաչուած կակուղ փայտերը, որոնք ջրի ազդեցութեան տակ շուտով սկսում են փչանալ:

8) Խնոցին չպէտք է ոչ չափազանց շատ դանդաղ և ոչ էլ շատ արագ կարագ հարէ. շուտ-շուտ հարած ժամանակը դժուար կլինի իմանալ կարագի հատիկների հատուանալու րոպէս, որի պատճառով և շատ անգամ այդպիսի խնոցիների մէջ կարագը չափից աւելի է զարկում և ճրագակալում: Եթէ խնոցին շատ դանդաղ է հարւում, այդ դէպքում, բացի իզուր ժամանակ և աշխատանք կորցնելուց, կարող է քիչ կարագ ստացուել: Այս հանգամանքն աչքի առաջ ունենալով, խնոցու ներքին մասերը, ինչպէս օրինակ թևերը, վանդակները և այլն, չպէտք է շատ մեծ և խիտ լինեն և ընդհակառակը:

9) Խնոցու անցքը կամ դռնակը հնար եղածին չափ պէտք է լայն լինի, որպէս զի կարելի լինի աղատ կերպով թիակի օգնութեամբ կարագը դուրս հանել և միւս աշխատութիւնները հէնց ուղղակի միջում կատարել:

10) Խնոցին այնպիսի կազմութիւն պէտք է ունենայ, որ ամէն տեսակ սերից և կաթից կարելի լինի ամբողջ կարագը զատել:

11) Վերջապէս խնոցին պէտք է լինի էփան, հետևապէս և փայտից շինուած, որովհետև մետաղից պատրաստածը թանգ է լինում: Քէպէտ դժուար թէ լինի մի այնպիսի խնոցի, որ վերոյիշեալ բոլոր պահանջներին համապատասխան լինի, այնուամենայնիւ շատ կան որոշ չափով յարմարաւոր խնոցիներ:

ԽՆՈՑԻՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ. Հօլեսէյնի խնոցի. Խիտ տաքածուած պարզ կազմութիւն ունեցող և մեր դեղագիտներէ համար յարմարաւոր խնոցիներէց է համարուում «Հօլշտէյնի» խնոցին: Սա ձեռքով շարժելու խնոցիներէց ամենալաւագոյնն է և համարեա ամենայն տեղ գործ է ածուում միայն այս ձևի խնոցիների ձևով կամ շոգեմեքենայով շարժուող տեսակները: Հօլշտէյնի խնոցին համարեա միակն է, որ կարող է բաւակա-նութիւն տալ վերոյիշեալ բոլոր պահանջներին: Այս խնոցին բաղկացած է մի բաց տակառից, որ միջնորմներ և ծակ-ծակ թևեր չէ ունենում. կարելի է շատ լաւ լուանալ տակառը, վեր առնել գործիքի վրայից և դուրս դնել մաքուր օդի մէջ, որ հոտը քաշուի: Խնոցու հարող մասը բաղկացած է մի հասարակ շրջանակից, որ նոյնպէս հեշտութեամբ կարելի է դուրս բերել լուանալու համար: Լայն բացուածք կամ դռ-նակ ունենալով՝ այս խնոցին բոլոր գործողութիւնները կատարելու ամէն տեսակ յարմարութիւններ ունի: Կախարիչի միջով անցկացրած ջերմաչափը հնարաւորութիւն է տալիս գործի ամբողջ ընթացքում հետևել սերի բարեխառնութեան աստիճանին. եթէ տակառը բարձրացած է, նորա մէջ յարմար կլինի կարագ լուանալ, դուրս թափել թանր և այլն: Այս տեսակ խնոցիներ պատրաստում են թէ արտասահմանում, թէ Ռուսաստանում և թէ Ֆինլանդիայում. վերջիններն աւելի էփան են: Ֆինլանդական խնոցիներէց № 1-ը, որի մէջ կարագ հարելու համար մի անգամից կարելի է լցնել 15/4 վեզրօ սեր, արժէ 30 ու., № 2, որ 2 1/2 վեզրօ սերի համար է՝ 45 ուրբ... № 4., որ 4 վեզրօ սեր հարելու համար է՝ 50 ու., № 5., որ 4 1/2 վեզրօ սերի համար է՝ 52 ու., № 6., որ 6 1/2 վեզրօ սերի համար է՝ 75 ու., № 7., որ 9 վեզրօ սերի համար է՝ 100 ու.: Չիա-շարժ և շոգեշարժ խնոցիներն ևս տարբեր մեծութեամբ և տարբեր գներով են լինում:

Հօլշտէյնի ձևի խնոցիները մէջ մինչև 2/3 մասը կարելի է սեր լցնել. աւելի մեծ քանակութեամբ անհնարին է լցնել. սերը կսկսէ կախարիչից դուրս ցայտել և կարագը կատարելապէս չի արտադրուում: Քիչ քանակութեամբ սեր եղած դէպքում ևս խնոցին լաւ չէ հարւում. այս պատճառով երբէք չպէտք է խնոցու 2/3 մասից պակաս սեր լցնել մէջը: Գլանիւն պտոյտների թիւը փո-փոխուում է՝ նայած խնոցու մեծութեանը և հարուող նիւթին: Երբ մեծ խնոցիներով քաղցր սեր է հարւում, պտոյտների թիւը 120—150 պէտք է լինի, իսկ թթուած սերը հարելիս պտոյտների թիւը 20-ով պակաս: Զեռքի խնոցիների պտտելու արագու-թիւնը պէտք է 20—30 պտոյտով աւելի լինի:

Լեֆեյդի խնոցիները Ռուսաստանում ամենից աւելի են տարածուած և տասը տարուց աւելի է, որ գործ է ածուում Անդրհովիտի կառարեղագործուած անտեսութեանց մէջ. այս խնոցին շատ յարմար է գործածութեան համար. նորա հորիզոնական առանցքի վերայ ամրացած է նոյն ուղղութեամբ պտտուող տակառը, որ շատ պարզ և կատարեալ կազմութիւն ունի. մանաւանդ շատ յարմար է կարագը դեռ հատիկաւոր վիճակի մէջ եղած ժամանակ լուանալու, թանք դուրս բերելու համար. շատ թեթև է գործածութեան մէջ, շատ լաւ կարագ է հարում, բայց և այնպէս ունի նաև իւր մի քանի պակասութիւնները. տակառի մէջ նորա երկարութեամբ կայ երեք ծակ-ծակ թև, որ բարդ կազմութիւն տալով խնոցուն, շատ անկիւններ է առաջացնում, որոնց մէջ կարող է մնալ թանք: Շատ դժուարութեամբ կարելի կլինի դուրս դնել հոտը քաշուելու համար, դժուարութեամբ կարելի է լինում յատկապէս խնոցիների համար պատրաստած թիակների օգնութեամբ կարագը դուրս հանել խնոցուց: Եթէ այս տեսակի խնոցիները կաթնատնտեսութեան վերաբերեալ գործիքներին մասնագիտօրէն ծանօթ ֆիրմայի պատրաստածը չէ, այն ժամանակ յաճախ փոքր խնոցիների ծակ-ծակ թևերն այն աստիճան մեծ են լինում, որ կարագը շատ արագ է հարւում, որի պատճառով և հեշտութեամբ ճրագակալուում է և համեմատաբար քիչ կարագ ստացուում: Այսպիսի դէպքում հարկաւոր է կամ փոքրացնել, տաշել, հարթել այդ թևերը կամ պտտել խնոցին իւր բոլոր երեք թևերով մինչև կարագի հատիկների յայտնուելու սկիզբը, որից յետոյ հարկաւոր է վեր առնել մի թևը և երկու թևով շարունակել հարելը: Այս խնոցիների ամենալաւ տեսակը պատրաստուում է Շենկնդենում Լեֆեյդի և Լինչի ֆիրմայում. նրանց թևերի ձևը և մեծութիւնը բոլորովին համապատասխան են տակառի մեծութեանը: Միշտ պէտք է արտասահմանում պատրաստուածներին առաւելութիւն տալ, մանաւանդ որ շատ քիչ թանգ են նոյն ձևով պատրաստած ռուսական խնոցիներից:

Լեֆեյդի խնոցիները սովորաբար գործ են ածուում ձեռքով հարելու համար: № 0 խնոցին, որ 1 1/4 վեդրօ սեր հարելու համար է, Ռուսաստանում արժէ 30 ռուբ., № I, որ 2 1/2 վեդրօ սերի համար է՝ 40 ռուբ., № II, որ 4 վեդրօ սերի համար է՝ 50 ռուբ., № III, որ 6 վեդրօ սերի համար է՝ 60 ռուբ.: Ռուսական գործարանների պատրաստած այս տեսակի խնոցիները, նայած մեծութեանը՝ 2—5 ռուբ. էֆան են գնահատուում: Տնայնագործ խնոցիները, որ 3, 4 և 6 վեդրօ սեր կարող են

միանգամից հարել՝ արժեն 20, 23 և 30 ռ.: Խնոցու մէջ կէս մասից աւելի պակաս սեր պէտք է լցնել: Մի ընդհանուր դառնում է 45—60 պտոյտ:

Իեխիսի ամերիկական եօնացող խնոցին իր կազմութեամբ նման է Անդրհովիտում գործածուող տեղական խնոցիներին: Այս խնոցին շատ պարզ կազմութիւն ունի, փոքրիկ տնտեսութեանց շատ յարմար է, հեշտութեամբ մաքրուում է, գործից յետոյ կարելի է լաւ չորացնել, առանց դժուարութեան կարելի է մէջը սեր լցնել և ստացուած կարագը դուրս հանել և, որ ամենագլխաւորն է, գործածելիս մեծ սյժ չի պահանջում և համեմատաբար էֆան է: Այս տեսակ խնոցու անյարմարութիւններից մէկն այն է, որ կապիւրիչն ամէն ժամանակ լաւ, քիւր չի փակուում և սաստիկ ու անդդոյշ շարժումների ժամանակ խնոցու արկղը կարող է դուրս գալ այն ձողերի վերայից, որոնցից նա կախուած է: Այնու ամենայնիւ այս խնոցին առանձին ուշադրութեան արժանի է և մեզանում ամէն մի հմուտ վարպետ կարող է պատրաստել:

Վիկտորիա խնոցին, որ ուղղահայեաց է պտտուում, բաւական նման է Լեֆեյդի խնոցուն. յայտնի է նաև «Ճալօրիտ», «Ուղղահայեաց Լեֆեյդ», «Սլբօրնի», «Պօլտաւիա» և այլ անուններով: Վիկտորիա խնոցին բաղկացած է մի տակառից, որ պտոյտներ է անում իւր ուղղահայեաց առանցքի շուրջը, որի պատճառով և սերը փոփոխակի գարկում է երբեմն վերևի, երբեմն ներքևի յատակին: Այս խնոցին ներսը ոչինչ չունի, բոլորովին դատարկ է և կողերը ողորկ: Իբրև խուփ ծառայում է ամբողջ վերևի յատակը, հետևապէս և տակառը հնար եղածին չափ շատ լայն է բացուում: Այդ շարժական յատակի մէջ տեղը ամբարցած է մի կոլոր ապակի, որտեղից կարելի է դիտել, թէ ինչ վիճակի մէջ է կազմակերպուող կարագը. նոյն յատակի վերայ մի գոպանակաւոր կալիարիչ ևս կայ, որտեղից դուրս է գալիս ներսի օդը, գաղերը: Թանք և լուանալու ջուրը դուրս գալիս ներսի օդը, գաղերը: Թանք և լուանալու ջուրը դուրս թափելու համար միւս յատակի վերայ մի անցք—ծորակ կայ: Թափելու կազմակերպութեան այդ տեսակի խնոցիներին տալիս է ամէն Այսպիսի կազմութիւնն այդ տեսակի խնոցիները, աւելի յարմար է և թեթև գործատեսակ առաւելութիւններ, աւելի յարմար է և թեթև գործածութեան համար, կարագը հեշտութեամբ կարելի է լուածուութեան համար, կարագը հեշտութեամբ կարելի է լուածունալ և յետոյ մաքրել: Այս խնոցիների պակասութիւնը միայն այն է, որ կարագը ուշ է հարւում, մանաւանդ փոքր տեսակի խնոցիներով: Այս ձևով յարմարեցրած Սլբօրնի խնոցին տակառի մէջ լայնութեամբ ձգուած ծակ-ծակ թև ունի, որպէս զի աւելի շուտ հարուի: Լեֆեյդի այս տեսակի խնոցիների № 0, որ շուտ հարուի մի վեդրօ սեր է հարում՝ արժէ 35 ռուբ., № I, ամէն անգամ մի վեդրօ սեր է հարում՝ արժէ 35 ռուբ., № I,

որ 15/4 վեդրո սերի համար է՝ 40 ուռք, № II, որ 21/2 վեդրո սերի համար է՝ 50 ուռք, № III, որ 4 վեդրո սերի համար է՝ 55 ուռք. և № II, որ 7 վեդրո սեր է հարում միանգամից, արժէ 65 ուռք: Միևնոյն խնոցիները, բայց Ռուսաստանում պատրաստածը՝ անհամեմատ աւելի էժան են. նայած մեծութեանը՝ արժեն 10—35 ուռք: *) Այս կարգին են պատկանում Բրազիլի քառանկատ արկղից բաղկացած խնոցիները, որոնք մէջն աւելորդութիւններ չեն ունենում: Անկիւնները թէպէտ դժուարացնում են խնոցի լուանալու գործը, բայց նպաստում են կարագի շուտ հարելուն: Այսպիսի խնոցիներ կարող է պատրաստել ամէն մի լաւ հիւան. արկղի երկարութիւնը 1 1/2 անգամ աւելի է լայնութիւնից:

Ի՛նչպէս պէ՛ս է խնոցի ընժրել. Հարկաւոր է որոշել խնոցու մեծութիւնը՝ որպէս զի համապատասխան լինի տընտեսութեան մէջ ձեռք բերած կաթի քանակութեանը: Խնոցու մեծութիւնը պէտք է այնպէս լինի, որ նրանում կարելի լինի հարել սերի այն քանակութիւնը, որ հաւաքուում է ամենառատ ժամանակը. սակայն այնքան էլ չափազանց մեծ չպէտք է լինի տարուայ այն եղանակի համար, երբ սոյնորաբար կովերի կիթը շատ զգալի կերպով պահաս է լինում: Եթէ այդ երկու ծայրայեղութիւնների մէջ տարբերութիւնը շատ մեծ չէ, այն ժամանակ խնոցին պէտք է ընտրել կաթնատուութեան ամենաառատ ժամանակի համապատասխան: Ենթադրենք թէ մի որ և է տընտեսութեան մէջ ամենամեծ քանակութեամբ կաթ ստացում է փետրուար, մարտ ամիսներին, երբ կովերը նոր են ծնած լինում, կամ յունիսին, երբ անասուններն արօտներում առատ սնունդ են ստանում՝ օրական մօտաւորապէս 30 վեդրո, իսկ նոյեմբերին ամենից պակաս, մօտաւորապէս 10—15 վեդրո: Սովորաբար 30 վեդրո կաթից ստացւում է 5—6 վեդրո սեր (կաթի 1/3—1/6 մասը). ուրեմն խնոցին պէտք է այնպէս լինի, որ նրանում կարելի լինի այդ քանակութեամբ սեր հարելու աւելի պակաս քանակութեամբ միշտ կարելի է հարել: Եթէ գարնանային և աշնանային կաթի քանակի մէջ խիստ մեծ տարբերութիւն կայ (օր. գարնանը՝ 30, իսկ աշնանը՝ 15 վեդրո), այն ժամանակ խնոցու մեծութիւնն այնպէս պէտք է լինի, որ մարդ ստիպուած չլինի աշնանային սերը մի քանի օր շարու-

*) Майновская сельскохозяйственная школа въ Черниговской губерні.

նակ հաւաքել կամ մեծ խնոցու մէջ հարել շատ աննշան քանակութեամբ սեր: Այսպիսի դէպքում հարկաւոր է վերցնել միջակ մեծութեամբ խնոցի, իսկ ամենամեծ քանակութեամբ կաթ ստացած ժամանակ կարելի է օրական երկու անգամ կարագ հարել: Վերջապէս կարելի է պահել երկու տեսակ խնոցի մէկը սերի միջին քանակութիւնից մեծ, միւսը փոքր:

Ի՛նչպէս պէ՛ս է նախապատրաստել խնոցին գործածութեան համար. Նոր խնոցին տալիս է կարագին այն փայտի համն ու հոտը, որից նա շինուած է: Այդ համն այն աստիճան փչացնում է կարագը, որ շատ անգամ անպէտք է դարձնում գործածութեան: Ահա այս պատճառով գործածութիւնից առաջ խնոցին պէտք է մի քանի օր շարունակ լուանալով մաքրել, տաք ջրով ողողել և ապա մէջը լեքը ջուր լցնել ու թողնել մինչև հետեւեալ օրը: Միջի ջուրը դուրս թափելուց յետոյ խնոցին պէտք է լուանալ մէջը սօդա լուծած ջրով և կրկին լեքը տաք ջուր լցնել ու թողնել մինչև հետեւեալ օրը: Այսպէս մի քանի անգամ լուանալուց, ողողելուց յետոյ դուրս թափած ջուրը հետզհետէ կսկսէ պարզել և քիչ հոտ կքաշէ իւր մէջ տակառից. և քանի որ խնոցու մէջ լցրած ջուրը բոլորովին չէ մաքրուել և ազատ չէ հոտից, խնոցին չպէտք է գործ ածել:

Նոյն կերպ պէտք է մաքրել, լուանալ մէջը սօդա լուծած ջրով նաև խնոցու միւս մասերը և այն բոլոր գործիքները, որոնք գործ են ածւում կարագ պատրաստելիս. մանր առարկաները պէտք է թրջոց դնել մէջը ջուր լցրած կիսատակառի կամ որևէ այլ ամանի մէջ:

Ամէն անգամ, նախքան գործածելը, բոլոր առարկաների վերայ, որոնք այսպէս թէ այնպէս շփումն ունեն կարագի հետ, հարկաւոր է նախ տաք և յետոյ անմիջապէս սառը ջուր լցնել: Սորա նպատակն այն է, որ տաք ջուրը լայնացնում է փայտի Սորա նպատակն այն է, որ տաք ջուրը լայնացնում է փայտի ծակոտիները և լուանում. սառը ջուր լցրած ժամանակ ծակոտիները կրկին սեղմւում են և նրանց մէջ փակուում է սառը ջուրը. փայտի մակերևոյթը կորցնում է իւր անհարթութիւնը և ձեռք է բերում սառնութիւն, որը պատճառով և կարագը չի կպչում, մնում է նորա վերայ և չի ճրագակալւում: Եթէ կարագը կպչում է թիակին կամ թրմող գործիքին (отжималка), այդ նշան է, որ այդ գործիքների վերայ նախ տաք և ապա սառը ջուր չէ լցրած:

Կարագ ֆալիչ (маслообработчик). Հարելուց յետոյ կարագը

պէտք է թողնել մի առ ժամանակ խնոցու մէջ հանգիստ, յետոյ բաց անել խնոցու բերանը, թանը դուրս թափել, խնոցու մէջ ջուր ցնել և այս ու այն կողմ շարժելով՝ կարագը լուանալ, որպէս զի հատիկներն աւելի մեծանան: Այս գործողութիւնը շատ չպէտք է կրկնել, երկու կամ երեք անգամ. աւելին կարող է կարագի համը կորցնել: Լուանալու համար ամառը դործ է ածուում սառը ջուր կամ խնոցու մէջ հետք սառցի կտորներ խառնած: Ամանը խոյս են տալիս բոլորովին թարմ կարագը ջրով լուանալուց, աւելի օգտակար են համարում երես քաշած կաթով լուանալ: Լուանալուց յետոյ հարկաւոր է կարագը դուրս բերել խնոցուց և կարագի միջի թանը քամել: Կարագը քամել կարելի է ձեռքով շաղախելով, որի համար պէտք է դնել տաշտի կամ մի այլ յարմարաւոր ամանի մէջ և այնպէս կատարել այդ գործողութիւնը: Բայց այս եղանակն այնքան ընդունելի չէ, որքան յատկապէս այդ նպատակով պատրաստած զանազան տեսակ քամիչ գործիքները, որովհետև ձեռքը կարող է անմաքուր լինել և կարագը փչանալ. բացի դրանից ձեռքով քամածն այնքան լաւ չի լինի, որքան գործիքով քամածը և վերջապէս ձեռքով մաղի օգնութեամբ կարելի է լինում քամել միայն քիչ քանակութեամբ կարագ:

Քամիչը մի գործիք է, որ ծառայում է խնոցուց դուրս հանած կարագը առանց փչացնելու քամել, մղել, որպէս զի նրանից բոլորովին դուրս գալ մնացած թանը: Կարագից թանը պէտք է շատ զրուշուրթեամբ քամել. հարկաւոր է ամբողջ ժամանակը վերան մաքուր ջուր լցնել, մինչև որ վերայից հոսող ջուրը ոչ թէ սպիտակաւուն, այլ թափանցիկ լինի, այսինքն մինչև որ ամբողջ թանը քամուի կարագի միջից: Այս գործողութիւնը չպէտք է շատ երկար տևէ, որովհետև կարագը կարող է փչանալ, ապականուել: Որպէս զի այդպիսի բան չպատահի, գործիքն այնպէս պէտք է շինուած լինի, որ ձնշում գործ դնէ կարագի վերայ և ոչ թէ տրորէ. դուրս համար պէտք է ուշադրութիւն դարձնել, որ քամող գործիքը ոչ թէ սահելով անցնի կարագի երեսով, այլ պարբերաբար ձնչէ ու այդ ճնշումով քամէ, չորացնէ կարագը: Քամիչի մակերևոյթը, որտեղ քամում է կարագը, պէտք է բոլորովին ազատ լինի երկաթէ մասերից, որովհետև վերջիններս կարող են ժանդոտուել և փչացնել ինչպէս կարագը, նոյնպէս և քամիչը: Քամիչի սեղանի մակերևոյթը պէտք է բոլորովին հարթ լինի. տախտակները, որոնցից կազմուած է նա, պէտք է իրար շատ պինդ գրկած լինեն, որպէս զի ոչ մի ծակ ու ծուկ չմնայ: Պէտք է այնպէս շինել, որ խոնաւութիւնից սեղանի տախտակը չծռուի:

չթեքուի: Շինելու համար կըրև ամենալաւ նիւթ կարող են ծառայել կաղնու, թեղօշի (букъ) և թխտենու (береза) փայտերը:

Փոքր և միջակ ծաւալով կաթնատնտեսութեամբ պարպողները համար ամենայարմարն է Ռուսաստանում ամենաէփան և հասարակ եռանկիւնաձեւ քամիչը (трехугольный обработчикъ). Սա բաղկացած է սեղանից, որի վերևի տախտակը քիչ թեքուած է դէպի նեղ կողմը, ետևն ամրացրած է մի փայտէ քեան (брусъ) այնպէս, որ կարող է շարժուել ինչպէս վերև ու ներքև, նոյնպէս և աջ ու ձախ: Կարագը լաւ քամելու համար քեանի ներքևի մակերևոյթը երկարութեամբ փոսիկներ ունի, որպէս զի աշխատութեան ժամանակ կարագը քեանի տակից դուրս շտղայ: Սորանով քամելիս հարկաւոր է միայն քեանը վերևից դէպի ներքև սեղմել, կարագը բնաւ չի տրորւում, այդ պատճառով էլ անկարելի է որ ճբագակալուի:

Այս տեսակ քամիչ գործիքը փոքր քանակութեամբ անասուններ պահողի համար ամենայարմարն է և ամենաձեռնտուն, որովհետև Լեֆելդի քամիչ գործիքները շատ թանկ են: Որովհետև այսպիսի պարզ կաղնութիւն ունեցող գործիք շինելը շատ հեշտ է, այդ պատճառով այստեղ առաջ ենք բերում գործիքի Լեւրաբանչիւր մասի համառօտ նկարագիրը և նրանց չափը:

Քամիչի գլխաւոր մասերն են՝ վերևի կամ երեսի տախտակ, փոսիկներով գլանանիւ (рубочатый валъ) և այն մասը, որով վերջինն ամրանում է սեղանին:

Միջակ մեծութիւն ունեցող քամիչի վերևի կամ երեսի տախտակի երկու հաւասար ուղիղ ձգուած կողմերի երկարութիւնն է 1 5/8 արշ., երրորդ՝ դէպի դուրս լայնութեամբ ընկած աղեղնաձեւ կողմի երկարութիւնը համարեա թէ նոյնքան է. նորահանդէպ ընկած նեղ կողմը 8 վերշու երկարութիւն է ունենում. տախտակի հաստութիւնը պէտք է լինի մի վերշու: Երեսի տախտակի շուրջը, եզրերից երկու մաս դէպի ներս թանը հարելու համար շինում են մի փոսիկ. վերջինը կարող է և չլինել: Երբեմն կողքերին շրջանակներ են շինում. այդպիսի շրջանակներ կամ բոլորովին չպէտք է անել, կամ անել կողքերից և 1 1/2—2 մատի հաստութիւնից ոչ աւելի: Տախտակը պէտք է ամրացնել ոտիկների վերայ փայտեայ մեխերով այնպէս, որ հեշտութեամբ կարելի լինի դուրս բերել լուանալու համար:

Քեանը կամ քառանկիւնի ձողը շինում է մի և նոյն նիւթից, ինչ նիւթից որ շինում է տախտակը: Նորահաստութիւնը լինում է 2 վերշու, լայնութիւնը 3 վերշու. երկարութիւնը տարբեր է լինում, նայած թէ ինչ կերպ է կպցրած սեղանին:

երբեմն քառանկիւնի ձողի երկարութիւնը հաւասար է լինում սեղանի երկարութեան: Չողի կոթը $2\frac{1}{2}$ —3 վերջով երկարութիւն է ունենում: Նորա ահօսաւոր փոսիկները հնար եղածին չափ պէտք է կանոնաւոր կիսաբոլորակաձև լինեն, կողերն ևս կիսաբոլորակաձև, բայց ոչ երբէք սուր:

Քառանկիւնի ձողն ամրացնում են սեղանին այսպէս. սորա նեղ ծայրի մէջ տեղում բաց արած անցքի մէջ տեղաւորում են ծղխնի (шарниръ) տախտակի ռախիլը: Քառանկիւնի ձողի յետևի մասում մի այնպիսի կտրուածք է լինում, որ ծղխնին կարողանում է ազատ կերպով մտնել նորա մէջ. ծղխնին ամրանում է ձողի հետ կողքից դրուած փայտեայ մեխի օգնութեամբ: Այսպիսի միացման օգուտն այն է լինում, որ գործիքն ազատ է մնում երկաթէ մասերից, և ձողին միջոց է տրւում շարժուել ամէն կողմ: Կարելի է և այլ կերպ միացնել. ամրացնում են երկաթէ մի օղակ, իսկ քառանկիւնի ձողին մի փոքրիկ կեռ-չանգալ. վերջինը մտնում է այդ օղակի մէջ, որն շնորհիւ և քեանը կարողանում է շարժուել ամենայն կողմ:

Սեղանի թեբութիւնը կանոնաւոր կլինի, եթէ յետևի ոտները առաջևի ոտներից $2\frac{1}{2}$ —3 վերջով կարճ լինեն:

Սեղանի բարձրութիւնը պէտք է լինի $1\frac{1}{4}$ արշին:

Այս տեսակ քամիչը ծախւում է մօտաւորապէս 7 ռուբ. եթէ տանը պատրաստեն՝ 3—4 ռուբ. ծախք հաղել լինի:

Մեծ գործարանների մէջ գործ են ածւում աւանձնապէս պատրաստած թրմող, զանգող մեքենաներ. դրանցից ամենից աւելի տարածուածն է Լեֆելդի քամիչ մեքենան (Датский маслообработчикъ Лефельда), որ բաղկացած է իւր առանցքի շուրջը պտտուող կտր սեղանից կամ տախտակից. տախտակի երեսը քիչ կոնաձև է և լուացող ջուրը վաղեցնելու համար եզերքի վերայ մի փոքրիկ կորի ունի: Էնց այս կտր տախտակի վերայ է դրւում կարագը երբ մեքենան սկսում է շարժուել, կարագը գալիս է գլանի տակ, ճմլւում, մաքրւում է թանից և վերջը վերևից վաղող ջրով լուացւում:

Լեֆելդի կարագ թրմելու, զանգելու գործիքներից՝

№ 0,	որ մի ժամում	50	գրվ. կարագ է քամում՝	արժէ	50	ռ.
№ I.	—	»	75	»	—	» 60
№ II.	—	»	$4\frac{1}{2}$	փուլթ.	»	» 90
№ III.	—	»	9	»	—	» 150

Ուրիշ գործարանների մի և նոյն տեսակի գործիքները համեմատաբար քիչ աւելի էժան են:

Կարագ պատրասելու այլեայլ պատկանելիքներ.

Կարագը քամելուց յետոյ որոշ ձև տալու համար աւելի լաւ է կաղապարների մէջ դնել, որոնք լինում են երկու տեսակ. մեծ քանակութեամբ կարագի համար պէտք է լինի քառանկատ, իսկ փոքրիկ կտորների համար կտրոք, երկարաւուն և այլ տեսակի կաղապարներ: Այդ բոլոր կաղապարները կարելի է շինել փայտից այլ և այլ մեծութեամբ և փորագրութեամբ. յարմար են ճանաչուած սպիտակ ցարատու (թխտենու—береза), արմաւենու, լօրենու, փեկոնու (հաճարի—буконья) փայտերից պատրաստածները: Ամենից լաւը արմաւենու պատրաստած կաղապարներն են, որոնց մի գրուանքանոցն արժէ 2 ռ. 50 կ., $\frac{1}{2}$ գրուանքանոցը՝ 2 ռ. 25 կոպ., $\frac{1}{4}$ գրուանքանոցը՝ 2 ռ. և այլն: Սպիտակ ցարատուց և միւսնոյն մեծութեամբ պատրաստած կաղապարների հատարակ տեսակն արժէ 35—65 կոպ:

Քառանկիւնաձև կաղապարները, որոնք բաղկացած են չորս տախտակներից, բաւական էժան են.

5	գրվ. կարագ	տանող կաղապարն	արժէ	75	կոպ.
10	գ.	»	»	»	» 85
20	գ.	»	»	» 1	ռուբ. »

Կաթնատնտեսութեամբ պարագող ամէն մի մարդ, ամէն մի գիւղացի կարող է տանը իւր միջոցներով պատրաստել կաղապարներ առանց դժուարութեան և ազատուել աւելորդ ծախքեր անելուց:

Կարագի նմիչ գործիք կամ մամուլ. Որքան լաւ և պինդ կերպով տեղաւորուած լինի կարագը, այնքան աւելի լաւ կարող է մնալ, պահել իւր ձևը և աւելի լաւ գին կունենայ շուկայում: Ահա այս նպատակով կարագին որոշ ձև տալուց յետոյ հարկաւոր է նաև ճնշել, սեղմել, որն համար կարագով կաղապարը պէտք է դնել սովորական պտտախաւոր ճնշարանի, ճմլչի տակ ու սեղմել, և այդ գրութեամբ թողնել մի քանի րոպէ: Այդպիսի մի ճնշարանն արժէ 10 ռուբլի:

Փոքրիկ թիակներ կարագի համար. Կարագի վերաբերեալ բոլոր աշխատութիւնները՝ խնոցուց դուրս բերելուց մինչև ձև տալը, ճմլող գործիքի տակ դնելը պէտք է կատարել փայտեայ փոքրիկ թիակներով. ոչ մի դէպքում չպէտք է ձեռքերով գործ ունենալ կարագի հետ: Թիակները պատրաստում են սարբեր ձևերով և մեծութեամբ, նայած աշխատաւորի սովորութեան և թէ ինչ տեսակ գործ պէտք է կատարել նրանցով: Եռանկիւնի թիակներն իրենց ձևով աւելի յարմար են ճանաչուած խնոցու միջից կարագը դուրս հանելու և քամիչի վերայ աշխատելու ժամանակ. այդպիսի թիակի սուր ծայրով շատ հեշտութեամբ

կարելի է կարագի մեջից դուրս հանել պատահաբար ընկած աղտեղութիւնը: Քառանկիւնաձև, հարթ և մանաւանդ երկաշութեամբ ախտաւոր փոսիկներ ունեցող թիակներն աւելի յարմար են կարագի փոքրիկ կտորներն ի մի հաւաքելու և ձև տալու ժամանակ: Թիակները շինում են արմաւենու, կաղնու, ոպիտակ հաճարի (СЫЛЫЙ СУКЪ), նմանապէս և ցարասի փայտից: Այդպիսի թիակները շատ էժան են՝ 25—50 կոպ:

Կարագի օսկառներ. Աղած կարագը սովորաբար պէտք է տեղաւորել երեք փթեանց փոքրիկ տակառների մէջ: Ցակառների միահաւասար մեծութիւնը խիստ կարևոր է, բայց աւելի կարևոր է, որ տակառները լաւ շինուած լինեն և որքան մատերը պինդ և հարթ կերպով կրար գրկած, միացած լինեն, այնքան աւելի նրանց մէջ լաւ կպահուի կարագը: Սովորաբար գործ են անում լաստենու (ОЛЬХОВЫЕ)՝ ցարասու և լորենու փայտից շինուած տակառներ¹:

Կարագին գոյն տալու ներկ. Կարագին գոյն տալու համար գործ է անում գործարաններում պատրաստած առանձին տեսակի ներկ: Զափրանով, գազարի հիւթով և կամ որևէ այլ բանով երեք չպէտք է ներկել կարագը: Կարագին գոյն տալու համար յատկապէս պատրաստած ներկը կոչուում է հրուկ (ОР-ПЕАНЬ): Ներկում են ոչ թէ կարագը, այլ այն կաթը և սերը՝ որ լցնում են խնցուկ մէջ կարագ պատրաստելու համար:

Ներկի քանակը, նայած տարուայ եղանակին, ըստ այնմ էլ որոշում են. այնքան պէտք է խառնել, որ կարագը յարգազոյն դեղին լինի: Որովհետև գարնանը և ամրանը անասունները կանաչ խոտ են ուտում և նրանց կաթից պատրաստած կարագը յարգազոյն դեղին է լինում, այդ պատճառով կամ կարելի չի լինում ներկել և կամ, հակառակ դէպքում, հարկաւոր է լինում շատ քիչ ներկ խառնել: Զմեռը որովհետև անասունները չոր խոտ են ուտում, կարագը լինում է սպիտակ. ահա այդպիսի կարագի հետ անհրաժեշտ է խառնել բաւականաչափ ներկ: Պանէմարքայում 25 լիտր սերի հետ խառնում են 5 գրամ հրուկ: Թէպէտ կարագի գոյնն իւր յատկութեան վերայ ոչ մի աղբեցութիւն չի ունենում, բայց որովհետև սպիտակագոյն կարագը յարգի չէ և պակաս արժէքաւոր, գորա համար էլ ներկում են: Հրուկ կոչուած այս նոր ներկը բոլորովին անվնաս է: Մախուում է գլխաւորապէս արտասահմանում պատրաստածները, մանաւանդ արածուած է Meyer & Henckel շշերով 1 1/4 գրովանքանոց, որոնց հատը մե

¹ Մեղանում գիւղերից կարագը խոլը ֆաղսի են բերում ծախելու ֆուդաներով, որ որոշ չափով յարմար կարեղի է անաւայել:

ուրջի է: Ռուսաստանում Վ. Գ. Վ. Մայերի և որոշ Բէլգիում ունեցած գործարանի պատրաստածը քիչ աւելի էժան է՝ շնչը 80 կոպ: Կարելի է ձեռք բերել եղբայր Բլանդովների մօտ: Այս ներկը պէտք է պահել զով և մութ տեղ:

Մագաղաք Մագաղաթը ծառայում է կարագը փաթաթելու համար՝ որպէս զի տաքութեան, օդի, լոյսի աղբեցութեան տակ շուտով չփչանայ, մանաւանդ երբ հարկաւոր է լինում հեռու տեղ ուղարկել:

Բուսական մագաղաթը պէտք է լինի թափանցիկ, փափուկ և ոչ դիւրաբեկ. վատ մագաղաթը լինում է կոպիտ կամ չափազանց բարակ, դիւրաբեկ. եթէ ձմրթներ, կիշրուի, ջրի մէջ կիփուի և կպատուի. այդ նշան է, որ նորա մէջ մեծ քանակութեամբ թթուներ կան: Գործածելուց առաջ մագաղաթը պէտք է լուսնալ տաք և սառը ջրով, որպէս զի այդպիսով հեռացուի նորա մեջից թթուի մնացորդները: Նախկին ֆամանակներում մագաղաթի փոխարէն կարագը փաթաթում էին քաթանով և մարլայով: Մագաղաթը ծախուում է քաշով, գրուանքան 30—40 կոպ. կամ փութը 11—12 ուր. սա կամ քաթանի նման փաթաթած, ծրարած է լինում (իւրաքանչիւր ծրարը քաշում է 5 գրով.) և կամ թերթ թերթ կարած և դաստաներ ու օգմաներ կազմած: Առաջին տեսակն՝ այսինքն քաթանի նման ծրարածն աւելի յարմար է և ձեռնտու, որովհետև զրանից մարդ ինչպէս ուղեւայ կարող է կտրատել: Ամենալաւը համարում է Գովարդի գործարանի մագաղաթը:

Կարագի պահելն ու աղելը. Կարագ ստանալուց յետոյ պէտք է լնամբ տանել և չթողնել բաց օդի տակ, լոյսի առաջ և տաք տեղ, հակառակ դէպքում կարագը կիչանայ, կկորցնէ իւր օսկեգոյն դեղին գոյնը և սպիտակ գոյն, ճրագուի համ կըստանայ, կ'իծուի, ծթրածի հոտ կառնի, իսկ այդպիսի կարագն անպէտք է գործածութեան համար: Քիչ քանակութեամբ կարագը կարճ ժամանակով պահելու համար պէտք է դնել նախ եռացրած և ապա սառեցրած ջրի մէջ և տեղաւորել զով ու մութ տեղ:

Նրբ հարկաւոր է լինում մեծ քանակութեամբ կարագը երկար ժամանակով պահել, անհրաժեշտ է նորա հետ որոշ քանակութեամբ աղ խառնել. չաղած կարագը երկար դիմանալ անկարող է. այդպիսի կարագը պէտք է աշխատել շատ շուտով գործ անել: Աղը խառնուելով կարագի հետ ազատում է նրան մէջը մնացած թանկից, դիմացիուն է դարձնում և որոշ համ է տա-

լին նրան: Աղբ չի թողնում, որ կարագը փչանայ, նորա մէջ բախտերիններ զարգանան:

Թէ ինչ քանակութեամբ աղ պէտք է խառնել կարագի հետ, այդ մասամբ կախումն ունի գործածողի ճաշակից, մասամբ էլ այն նպատակից, ինչի համար որ նշանակուած է: Սովորաբար ենթադրում են 2—50/0:

Որպէս զի կարագի վերայ աղ աւելացնելն իւր բոլոր նպատակներին ծառայէ, անհրաժեշտ է, որ աղը հնար եղածին չափ մաքուր լինի, այսինքն ազատ դառնահամ, անմաքուր խառնուրդներից, գոյնը լինի բոլորովին սպիտակ և վերջապէս ոչ շատ մանր և ոչ էլ չափազանց խոշոր մանրած լինի, այլ միջակ: Երբ աղը շատ մանր է լինում, թէպէտ համահաւասար կերպով է խառնուում կարագի հետ, բայց թանր բոլորովին չի զուրս գալիս: Խոշոր եղած գէպըում կանոնաւոր կերպով չի խառնուում կարագի հետ և ստացւում է ոչ միատեսակ գոյն ունեցող կարագ: Այս տեսակէտից ամենալաւը համարւում է Լիւնեբուրգի աղը (Պետերբուրգում Շտոլը և Շմիդտի մօտ՝ փութը մի ուրբ.), որ բաղկացած է փոքրիկ բերեղիկներից և բոլորովին ազատ է կողմնակի խառնուրդներից և դառն նիւթերից: Օգտակար է համարւում նաև Բախմուտի աղը (եղբ. Բլանդովներն մօտ՝ փութը 55 կոպ.), որ նոյնպէս մաքուր է և ազատ այլ և այլ խառնուրդներից:

Որպէս զի աղն օգտակար ազդեցութիւն ունենայ կարագի վերայ, անհրաժեշտ է, որ վերջինս բաւական երկար ժամանակ (12 ժամից ոչ պակաս) լաւ խառնուած մնայ աղի հետ: Իսկապէս այս ժամանակամիջոց որոշելը զանազան պայմաններից կախումն ունի. տաք եղանակներին փափուկ կարագի մէջ աղն աւելի արագութեամբ է հալչում, քան ձմեռը պինդ կարագի մէջ: շատ թան պարունակող կարագն աւելի երկար ժամանակ պէտք է աղի ազդեցութեան տակ մնայ, քան քիչ թան պարունակողը:

Աղած կարագը պէտք է պահել 10—12⁰ բարեխառնութեան մէջ. ձմեռն ևս նոյն պայմաններում պէտք է լինի և երբէք յիշեալ բարեխառնութիւնից ցած տեղ չպէտք է դնել կարագը:

Կարագ հալելը. Կան տեղեր, որ կարագը չեն աղում, դորա փոխարէն հալում են: Սովորաբար եթէ կարագը կատարեալ կերպով հալած է, աւելի երկար կարող է դիմանալ, քան աղածը: Կարագ հալելը երկու նպատակ ունի. 1) դուրս բերել միջից ջուրը, պանրածինը, կաթնաշաքարը և առհասարակ բո-

լոր ոչ ճարպային նիւթերը և 2) ստանալ մաքուր իւր, որն երկար ժամանակ չի վերլուծւում, չի փչանում: Հալած իւր պատրաստելու ամենալաւ եղանակը հետեւեալն է. անագից, թիթեղից կամ ձենապակուց պատրաստած ամանը պէտք է լցնել կարագով, միայն ոչ բոլորովին լեքք և դնել մօտաւորապէս 40° Ռ. բարեխառնութիւն ունեցող ջրով լեքք լցուած մի ուրիշ ամանի մէջ, միայն այնպէս, որ ջրի մակերևոյթն աւելի բարձր լինի, քան կարագինը: Կարագն անդադար պէտք է խառնել. երբ որ սկսում է հալուել, վերևում յիշուած նիւթերը (պանրածինը և այլն) տակն են իջնում և այդ ժամանակ կարագի երեսին վրժուր է գոյանում, որը հարկաւոր է զգուշութեամբ վերցնել: Այդ ժամ անցնելուց յետոյ կարագը դառնում է սկիւզոյն-դեղին, թափանցիկ մի գանգուած: Շատ չպէտք է թողնել, որ իւր պաղելով պնդանայ՝ հաստատուն մարմին դառնայ. հէնց որ սկսում է քիչ թանձրանալ, զգուշութեամբ պէտք է դատարկել ուրիշ փայտեայ կամ կաւեայ ամանների մէջ. միայն շատ զգոյշ պէտք է լինել, որ ամանի տակ եղած աղակաթիւնը, թանր չխառնուի հալած, մաքուր իւրի հետ և չլցուի նոր ամանի մէջ. աւելի լաւ է այսպիսի գէպըում քաթանով քամել:

Լաւ հալելուց կարագը կորցնում է իւր սկզբնական քաշից 17—20 0/0, այսինքն 100 մասից 17—20 մաս: Այս կերպ ստացուած հալած իւրը, որ պարունակում է իւր մէջ 98-99,50/0 մաքուր ճարպ, շատ երկար կարող է դիմանալ, մի տարուց աւելի, մանաւանդ եթէ հալելիս չի այրուել: Իւրն աւելի յաճախ այրւում է կրակի վերայ հալելիս: Եթէ աղ աւելացուի հալած իւրի վերայ, աւելի դիմացիուն կդառնայ:

Կաթից դուրս եկած կարագի ֆանակուրիւնը. Ամենքի համար հետաքրքիր է իմանալ, թէ իւրաքանչիւր վեղբօ կամ փութ կաթից որքան կարագ է ստացւում: Ամենից աւելի յարմար է որոշել, թէ քանի՞ գրուանքայ կաթից մի գրուանքայ կարագ է ստացւում կամ թէ չէ 100 գրուանքայ կաթից քանի՞ գրուանքայ կարագ է դուրս գալիս: Այսպէս օրինակ՝ «արդիւնքը 25 է», այդ նշանակում է, որ մի գրուանքայ կամ փութ կարագ ստանալու համար հարկաւոր է 25 գրվ. կամ փութ կաթ: Միևնոյնը կարելի է արտայայտել նաև այսպէս՝ «արդիւնքը=40/0». այդ նշանակում է թէ 100 մաս կաթից դուրս է գալիս 4 մաս կարագ: Կաթից ստացուած արդիւնքն այս եղանակով որոշելը շատ յարմար է:

Միևնոյն անտեսութեան մէջ կաթից ստացուած արդիւնքը կարող է տարբեր լինել այն պատճառներից, ինչ պատճառներից

որ տարբեր է լինում հաթի մէջ ճարպի քանակութիւնը (տես այն պայմանները, որոնք ազդեցութիւն են ունենում հաթի բաղադրութեան վերայ): Ռուսաստանում տարեկան միջին արգիւնքը Շվարցի եղանակով սեր քաշելու դէպքում հաւասար է 25-ի կամ 40/0-ի կամ մի վեդրո հաթից 1 1/3 գրվ. կարագ է ստացւում, իսկ սեպարատոր գործածած ժամանակ՝ 23 1/2 կամ 4, 250/0 կամ 12/7 գրվ. կարագ ստացւում է մի վեդրո հաթից: Տարուայ ընթացքում արգիւնքի մէջ խիստ մեծ տարբերութիւններ են տեղի ունենում. այսպէս օրինակ, մայիսին և յունիսին անասուններն արօտներում արածելով, կամ փետրուարին ու մարտին շատ նոր ծնած կովերի պատճառով հաթից ստացուած կարագի քանակութիւնը շատ է ընկնում. 28—30 գրվ. հաթից հազիւ մի գրվ. կարագ ստացուի (3, 33—3, 570/0). աշնանը, այսինքն հոկտեմբերին և նոյեմբերին, երբ կովերի կերը չոր է լինում, հաթը խիստ իւղոտ է լինում և 16—20 գրվ. հաթից ստացւում է մի գրվ. կարագ (5—6, 250/0): Ամառը երեկոյեան ստացուած հաթն (արօտներում արածելիս) աւելի քիչ կարագ է տալիս, քան առաւօտուանը, որ հաւաքւում է կարճ գիշերուայ ընթացքում, երբ կենդանին առանց ջրի և խոտի է մնում:

Կարագի արտադրութիւնը. Կարագի արտադրութիւնը, պահատուր լինելու պատճառները շատ են. անասունների վատ կերը, հիւանդոտ, արատաւոր կաթը, անմաքրութիւնը և այլն:

Որ կերը կարագի բաղադրութեան և յատկութեան վերայ մեծ ազդեցութիւն է ունենում և հէնց կարագի համից, պընդութեան աստիճանից և գոյնից մարդ կարող է իմանալ կերի տեսակը, դրանում ոչ մի կասկած չկայ: Բորբոսնած, փչացած կամ անձրևի տակ երկար մնացած կերը կարող է շատ վատ ազդել կարագի վերայ: Յաճախ նոյն իսկ սակաւ քանակութեամբ փչացած կերն անգամ անպէտք է դարձնում կարագը գործածութեան համար: Նրբեմն կարագի յատկութեան վերայ մեծ ազդեցութիւն է ունենում նաև անձրևաշատ ամառը, որովհետև նախ որ այսպիսի պարագաներում կերը խիստ ջրալի է լինում, որը որոշ չափով իւր ոչ բարերար ազդեցութիւնն է ունենում և երկրորդ, որ այսպիսի ժամանակ խոտը և դարմանը խոնավ հաւաքելով, վերջիններին մէջ բակտերիաներ կառաջանան. այդ պիտի խոտ անասուններն ուտելով կվարակեն հաթը զանազան սաղմերով:

Առաջ ենք բերում այստեղ կարագի պահատուր տեսակները և նրանց առաջանալու պատճառները:

Ճրագակալուած կարագ (մոմած իւղ). Սա ճրագուի և մի այլ տեսակ անհամոյ համ է ունենում. քսւում, մնում է լեզուի վերայ: Սորա առաջանալու պատճառներն են անասունների բակի և կաթնատան անմաքրութիւնը, վատ խմիչքը և փչացած կերը: Որպէսզէն այդպիսի պահատուր կարագ չստացուի, հարկաւոր է, որ կերը խմելիքը, կաթնատուները և ամանները բոլորովին մաքուր լինեն:

Փերուղ կարագ. Այս տեսակ կարագ է ստացւում այն ժամանակ, երբ հարը տեղը չի լինում, այսինքն երբ կատարելապէս չէ հարած և կամ խնոցուց դուրս բերելուց յետոյ կարագը չափազանց սառեցրած է: Այդպիսի կարագի մէջից դժուար է թանք կանոնաւորապէս դուրս բերել, նա անկանոն կերպով է լցւում, տեղաւորում տակառների և այլ ամանների մէջ, որի պատճառով և շուտով կորցնում է իւր լաւ յատկութիւնները:

Մարմարիոնակերպ կարագ. Նրբեմն հարկաւոր է լինում մի քանի օր շարունակ կարագ հաւաքել և ամաններում տեղաւորել. այդ կերպ տարբեր ժամանակներում հաւաքած կարագը տարբեր գոյներ է ունենում. շուտ պատրաստած կարագի երեսի գոյնը օդի ազդեցութեան տակ փոխւում է. նթէ այդ կերպ մաս մաս հաւաքած կարագի կտորները առանց նախապէս խառնելու լցնելը միևնոյն ամանի մէջ, վերջը կտացուի բժաւոր, շերտաւոր կամ մարմարիոնակերպ կարագ: Այս պահատութիւնից կարագն ազատ պահելու համար, նախքան ամանի մէջ լցնելը պէտք է իւրաքանչիւր տեսակից քիչ քիչ վերցնել և դնել քամիչի կամ ճմլիչի վերայ ու մի քանի անգամ ճղմել, ճմլել, որպէս զի լաւ խառնուի:

Դառը կարագ. Կարագը դառը կարող է լինել այն ժամանակ, երբ անասունների կերի մէջ դառը խոտ է լինում և կամ երբ կաթն անմաքուր է լինում: Վերջին դէպքում պահատութեան առաջ կարելի է առնել մաքրութեամբ: Դառը խոտերի հետ առաւել դժուար է կռիւ մղել: Այս դէպքում դառնութեան առաջ բաւականաչափ կարելի է առնել, եթէ սերը մշտապէս խառնելով տաքացնենք լայնաբերան ամանի մէջ և ապա որոշ բարձրութիւնից մի քանի անգամ թափենք մի ուրիշ ամանի մէջ ու այդպիսով սառեցնենք. ահա այս միջոցով տաք սերի միջից թռչող դառը նիւթերը կցնդեն:

Կաթի դառնութեան պատճառ կարող են լինել առանձին սուռիկեր, որոնց դէմ կռիւ մղելու համար, հէնց որ կաթն և սերը սկսում են դառնանալ, հարկաւոր է իսկոյն կովերի կանգնած տեղերի աղբն ամենայն օր հաւաքել և յետոյ կարբօլաթթւում

ցանել, իսկ ստինքն երկու անգամ լուանալ նախ դու և ապա մէջը կարբուլաթթուա լուծած ջրով: Երեք օրից յետոյ կաթի և սերի դառը համը բոլորովին կվերջանայ և սերից կարելի կլինի կրկին պատրաստել հիանալի կարագ:

Գառը կաթի առաջ կարելի է առնել նաև ստինքները սօդայի լուծուածքով (100 մաս ջրի մէջ 2 մաս սօդա լուծել), աղբահիւթի, մէզի օլուզները կրէօլինի 30% լուծուածքով լուանալով, իսկ պտուկներն անցքերը սրսկելով անասանալէ բարակաթթուաի (БОРНАЯ КИСЛОТА) 30% լուծուածքով:

Երբեմն հին կթուող կովերն մի քանի պտուկները դառնաողի կաթ են տալիս: Այդպիսի դէպքում հիւանդ կաթը պէտք է առանձին պահել և չխառնել առողջ կաթի հետ:

Սպիտակ պինդ կտրագ ստացում է յաճախ ցած, ճահճային կամ անտառային (կազնու անառն) արօտներում և մարգագետիններում արածող կովերի կաթից: Այդպիսի կարագը շատ թանձր և սպիտակ է լինում, թանր միջից դժուարութեամբ է քամում, անհամ է լինում և ճրագուի համ է ունենում: Պինդ կարագ է ստացում նաև այն ժամանակ, երբ կերը համարեա ամբողջապէս յարդից է բաղկացած լինում: Երբեմն այս պահասութիւնը թարմ կարագն մէջ այնքան էլ նկատելի չի լինում, բայց մի քանի շաբաթ անցնելուց յետոյ ճրագուի համ է ստանում: Այս պահասութիւնն ուղղելու համար անհրաժեշտ է արօտը փոխել, կամ անտառներում եղած արօտները մաքրել վնասակար բոյսերից, ճահճային տեղերը չորայցնել, իսկ ձմեռ ժամանակ յարդի վերայ աւելացնել նաև ճակնդեղ (տակ), հում կարթօֆիլ, նաև ալիւր, թեփ, կոպտոն և այլն:

Այլ եւ այլ հոս ու համ ունեցող կարագ. Այս կերպ վըջացած կարագ ստացում է այն ժամանակ, երբ կաթնատան մօտ եղած առուից, անձրևաջրով լեքը փոսից ներս է մտնում կաթնատուն անմաքուր, նեխուած օդ, կամ երբ միևնոյն տակառը, ամանը գործադրում է ինչպէս կաթնորանում, նոյնպէս և այնտեղից թանր և այլ հեղուկ նիւթեր մի այլ տեղ, օրինակ խոզնոց փոխադրելու համար և վերջապէս, երբ կարագը թթու կազամբի, վարունգի, ձկների և այլ սոյնանման նիւթերի հետ միասին է պահում:

Իճչպէս պէտք է լաւացնել փչացած կարագը կամ իւրը. Բորբոսը և այլ թթուեցնող նիւթերն ընկնելով կարագի խոնաւ մակերեսի վերայ, սխառմ են փչացնել նախ նորա երեսի և ապա միջի մասերը: Շատ անգամ այս կամ այն պատճառով փչացած քաղցր սերից պատրաստած կարագը ուղղակի գործ են ածում

կերակրել համար, բայց երբեմն թարմ ձեռով գործածելու համար նախ աշխատում են ուղղել:

Փչացած կարագն ուղղելու համար պէտք է գործ դնել հետևեալ միջոցը: Նախ և առաջ հարկաւոր է երեսից վերցնել այն շերտը, որն գոյնը նկատելի կերպով փոխուել է և աւելի կակղացել, թուլացել. կարագի այդ շերտը կարելի է հալել ու այնպէս գործածել, իսկ մնացածը վերայ պէտք է աղ ցանել և այդպէս 1/2 ժամ թողնել: Այդքան ժամանակն անցնելուց յետոյ կարագը պէտք է ջուրը գնել, որ աղը լուծուի: Առաջին ջուրը թափելուց յետոյ կարագի վերայ պէտք է նորից ջուր լցնել, միայն այս վերջին մէջը սօդա պէտք է լուծուած լինի (մի մեծ բաժակ ջրի մէջ մի թէյի գդալ սօդա): Այս ջրի մէջ կարագը 10 անգամ պէտք է շաղախել, ապա դուրս հանել և կրկին մաքուր ջրի մէջ երկու անգամ լուանալ: Սրանից յետոյ պէտք է կարագը քամել, չորայցնել, որից յետոյ արդէն գործածութեան համար պէտքեական համարուի: Սակայն աւելի լաւ է փորձել կարագի համը և եթէ նա դեռ իւր դառն համից և կողմնակի հատերից սոգատ չէ, այն ժամանակ լուացումը պէտք է կրկնել սօդա լուծած ջրում: Եթէ առաջուց կարագի երեսը վերցրած չլինէինք, ստիպուած կլինէինք շատ երկար լուանալ, որ, իհարկէ, ցանկալի չէ, որովհետև շատ արտրելով կարագը կարող է ճրագալուել, փչանալ:

Փչացած կարագը կամ իւրը ուղղել կարելի է նաև հալելով: Բայցը կամ թթուած սերից ստացուած փչացած կարագը կամ փչացած հալած իւրը պարսնակում է իւր մէջ բորբոս կամ մեկրօօրգանիզմներ, որոնք և կարագի կամ իւրը փչանալու պատճառ են դառնում: Հալելու նպատակը նախ այն է, որ մի կողմից սպանուեն, ոչնչանան և կարագից բաժանուեն այդ թթուեցնող նիւթերը, իսկ միւս կողմից լուծուեն և դուրս բերուեն տելուրը և վնասակար մասերը: Կարագը կամ իւրը բերուեն ժամանակ ջրի հետ եռացնելով՝ մենք այդպիսով սպանելու ժամանակ ջրի հետ եռացնելով՝ մենք այդպիսով սպանելու, ոչնչացնելու ենք թթուեցնող նիւթերը, որոնք եփուելով նում, ոչնչացնում են թթուեցնող նիւթերը, որոնք եփուելով խառնուում են փրփուրի հետ կամ տակն են լինում: Կարագի խառնուում են փրփուրի գոյացած նիւթերը մասամբ ցնդում են, վերլուծման ժամանակ գոյացած նիւթերը մասամբ ցնդում են, փրփուրը զի կարագի միջից բոլորովին հեռացուեն այդ խառնուրդները, պէտք է շատ ջուր վերցնել և փրփուրը երեսից բոլորովին մաքուր վերցնելուց յետոյ թողնել, որ իւրը հանդարտ սառչի, իսկ յետոյ այնպէս զգուշութեամբ դատարկել, որ տակը նստած ջուրը չխառնուի: Առաջին տառա փրփուրը վերցնելուց յետոյ իւրը երեսին պէտք է լցնել քիչ աղ, միայն մի բարակ շերտ:



Ազն անցնելով իւրի բոլոր շերտերով՝ իւր հետ ամանի յած տակն է իջեցնում իւրի մէջ եղած ջուրը և նորանում լուծուած նիւթերը՝ գլխաւորապէս թթու մասնիկները: Իւրաքանչիւր 10 գրվ. համար պէտք է գործածել մի բուռ աղ: Այս նկարագրած եղանակով ջուրը կարողից խլում, դուրս է բերում թթու և ուրիշ լուծուող խառնուրդներ. աղ աւելացնելն ևս օգնում է նորան այդ բանում:

Սակայն ջուրը նախ և առաջ ինքն անընդունակ է թափանցելու իւրի դանդուածի մէջ (իւրը ջրի հետ չի խառնուում), հեռակապէս և անկրորդ կլինի կատարելապէս մաքրել, լուանալ նորա բոլոր մասնիկները. երկրորդ, որ նա մասամբ մնում է իւրի մէջ, հեռակապէս և կթողնի նորանում այն խառնուրդներն մի մասը, որոնց լուծել է իւր մէջ իւրից զատելու համար: Ահա այս պատճառով փչացած կարագը հալելու համար գործ են դնում նաև սօդա, որը միանալով խառնուրդներն թթու մասերի հետ, նորանց ոչնչացնում է, չէզոքացնում է նորանց թթուութիւնը: Սօդա կարելի է դանդաղանակերպ գործադրել. այսպէս օրինակ, կարելի է լուծել այն ջրի մէջ, որ նախքան հալելը լցնում են կարագի վերայ. այն ժամանակ ջուրը եռալիս կուանայ և կմաքրէ կարագը և միաժամանակ դուրս կբերէ նորանից թթուութիւնը և չէզոքացնում վերջինս: Սօդա կարելի է լցնել նաև յետոյ, երբ կարագը սկսում է հալչել: Վերջապէս կարելի է նաև ցանցել աղի հետ խառնած: Ամէն կերպ պէտք է աշխատել քիչ սօդա գործածելով նպատակի հասնել. ահա այս պատճառով խորհուրդ ենք տալիս սօդան նախ խառնել աղի հետ և ապա, երբ փոփոքի մեծ մասը իւրի երեսից քաշած կլինի, ածել իւրի վերայ: Փոփոքն ինքը կտանի իւր հետ թթուներն մի մասը. հեռակապէս և թթուների միւս մնացած մասի համար աւելի քիչ սօդա կհարկաւորուի: Աւելի լաւ կլինի, որ բոլոր սօդան միանգամից չլցուի, մօտաւորապէս քառորդ մասը թողնել և երբ իւրով ամանը վերջնականապէս յետ կդրուի, թէթև կերպով ցանցել իւրի երեսին:

Իւրի համը կանոնաւորելու համար, բացի վերոյիշեալ եղանակներից, գործ են անում նաև մի քանի ուրիշ եղանակներ: Երբ իւրը փչանում է, բացի բորբոսի և այլ նիւթերի համից ու հոտից ընդունում է նաև ճարպի համ: Այդ հոտը վերջացնելու համար տանալիկները այսպէս են վարւում. երբ իւրը հալչում է, նորա մէջ ձդում են մի քանի դուրս սոխ կամ խնձոր կճեպով և թողնում են մէջը մինչև հալելու վերջը: Սոխը գործ են անում նաև ոչխարի ճարպ (դմակ) հալելիս, որն պատճառով և վերջինը իւրի համ է ստանում:



Փչացած իւրն ուղղելու մի այլ միջոց ևս կայ. երբ իւրը հալչում է այնքան, որ ջրալի մի զանդուած է դառնում, նորա վերայ աւելացնում են մի քիչ թարմ շիճուկ և լաւ խառնում: Իւրաքանչիւր 10 գրվ. իւրի հետ խառնում են 1—1½ գրվ. շիճուկ: Հալելու ընթացքում իւրի վերայ լցրած շիճուկը հետքահետէ բաժանւում է փոփոքրի ձևով և տակը նստում: Ե հարկէ այստեղ ևս հարկաւոր է աղ: Շիճուկի տեղ գործ են անում նաև մածուն, կաթ, որ նոյնպէս օգտակար է: Կարելի է խորհուրդ տալ նոյն իսկ, որ ջրի տեղակ հալելու համար վերցնել երես քաշած կաթ, որ այնքան էլ թանգ չի նստի: Թէ արդեօք մի եղանակին պէտք է առաւելութիւն տալ, միւս է նրանից աւելի լաւը, այդ արդէն կախուած է իւրի փչացած լինելու աստիճանից: Այն դէպքում, երբ բաւականաչափ նկատելի է իւրի փչացած լինելը, եթէ վառ է հալած, հարկաւոր է կրկին հալել մինչև իսկ ջրով կամ կաթով ու աղով: Եթէ իւրը փչացած է, թէպէտ և սուր հոտ ու դառնութիւն չի նկատուում, բայց ճարպի համ է ունենում, թթու կաթով, սոխով կամ խնձորով կրկին անգամ հալելն ևս կատարելապէս բաւական է, որովհետև այդ միջոցները բոլորովին կարող են փոխել իւրի համը և հոտը բայց եթէ իւրը դառնահամ է, նորանում նկատուում է մի ուրիշ անհամեմել համ և կծու սուր հոտ և կամ, եթէ իւրը բոլորովին փչացած է, պէտք է անպատճառ սօդա գործածել, որովհետև այդպիսով կարելի կլինի իւրի միջոց հեռացնել թթու նիւթերը:

Վերջապէս փչացած կարագը լաւացնելու համար կարելի է լուանալ կամ շաղուել նախ կրախառն և ապա պարզ ջրով: Կրախառն հեղուկ պատրաստելու համար մի լիտր ջրի հետ պէտք է խառնել 2 գրամ կիւր և թողնել հանդարտ. միայն գործածելուց առաջ պէտք է քամել: Այս կերպ պատրաստածը անվնաս է:

[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]

« Ազգային գրադարան



NL0288927

Գ. Ղազարեանի աշխատութիւնները.

1. Ճառասպելները ծառայ Ռոխը և Կորած բարեկամը (Թարգ.)	15 Կ.
2. Ֆարիդա (Թարգ.)	20 Կ.
3. Երկրագործ. անհրաժեշտ գիտելիքներ.	50 Կ.
4. Մեղու արու ծու թիւն.	50 Կ.
5. Կենդանիները վարակիչ հիւանդութիւնները մասին ընդհանուր հասկացողութիւն. II եղջիւրաւոր անասունների փանախաղ.	8 Կ.
6. Սերըրախա (Գր. Վ. Արծրունու հրատարակ.)	7 Կ.
7. Անամնապահութիւն և կաթնատնտեսութիւն.	40 Կ.